

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԱՐԻԱՄ ՎՌԱՄԻ

ՀՅՂ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԻՐ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1909-1915 ԹԹ. ԵՎ 1918-1923 ԹԹ.

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱԸԱՐ

142



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

142

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2016

ՀՅԴ 94(479.25):070
ԳՄԴ 63.3(5Հ)+76.02
Հ 872

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

**խմբագիր՝ պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Ալբերտ Ա. Խառատյան**

Հովսեփյան Մարիամ Վռամի

Հ 872 «ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերական մամուլը Օսմանյան Թուրքիայում 1909-1915 թթ. և 1918-1923 թթ.», Երևան, պատմության ինստիտուտ, 2016, 310 էջ :

Աշխատությունը ներկայացնում է 1909-1915 թթ. և 1918-1923 թթ. Օսմանյան Թուրքիայում հրատարակված ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերականները: Ներկայացված են նաև դաշնակցական ուղղվածություն ունեցող գավառահայ մամուլի օրգանների պատմությունը և խաղացած դերը հայ կյանքում:

Աշխատությունն ունի գիտագործնական կարևոր նշանակություն Հայոց ցեղասպանությունը մամուլի հրապարակումների միջոցով ուսումնասիրելու տեսանկյունից:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, հայ մամուլի պատմությունն ուսումնասիրողների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՅԴ 94(479.25):070
ԳՄԴ 63.3(5Հ)+76.02

ISBN 978-9939-860-25-1

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

19–րդ դարի վերջին հիմնվել և 20–րդ դարի սկզբին բուռն ծաղկում է ապրել Հայ հեղափոխական դաշնակցությունն կուսակցության (այսուհետև՝ ՀՅԴ) պարբերական մամուլը: Հաճախ միննույն պարբերականը տպագրվել է տարբեր անուններով, քանի որ ասենք՝ թուրքական կամ ռուսական կառավարական համապատասխան մարմիններն արգելել են դրանցից շատերի հրատարակումը: Մեկը մյուսին փոխարինելով, օրինակ՝ Թիֆլիսում լույս են տեսել «Հառաջը» (1905 թ.), «Ալիքը» (1906 թ.), «Երկիրը» (1906 թ.), «Զանգը» (1906 թ.) «Ժամանակը» (1906-1907 թթ.), 1907 թ.՝ «Փայլակը», «Խարիսխը», «Ժայռը», «Արորը», «Կովկասի առավոտը», «Նոր ալիքը», «Վտակը» (1907-1908 թթ.) «Զանգակը» (1908 թ.), «Գործը» (1908-1909 թթ.), «Հորիզոնը» (1909-1918 թթ.), «Նոր ուժը» (1914 թ.): «Գրոհ» (1906-1907 թթ.) և «Թռուցիկ» (1906 թ.) թերթերը հրատարակվել են Բաքվում, «Ժայռը» (1909-1911 թթ.)՝ Ալեքսանդրապոլում, «Ռազմիկը» (1905-1910 թթ.)՝ Ֆիլիպետում (այժմ՝ Պլովդիվ), «Հառաջը» (1909-1914 թթ.), «Ալիքը» (1914թ.) և «Երկիրը» (1914 թ.)՝ Կարինում, «Արորը» (1910-1911 թթ.)՝ Էրզրումում, «Պիծակը» (1911-1912 թթ.)՝ Տրապիզոնում, «Գոյամարտը» (1919-1920 թթ.)՝ Իզմիրում, «Այգը» (1912-1922 թթ.)՝ Թավրիզում: Կ.Պոլսում 1908-1909 թթ. լույս է տեսել «Ազդակ» շաբաթաթերթը, որը չի եղել ՀՅԴ պաշտոնաթերթ, այլ դաշնակցականների ուժերով է հրատարակվել¹: Շարունակելով դաշնակցական մամուլի ավանդույթները՝ Թուրքիայի մայրաքաղաք Կ. Պոլսում և բուն արևմտահայ գավառում ու գաղթավայրերում ՀՅԴ-ն հրատարակել է բազմաթիվ պարբերականներ:

¹ Վարանդեան Մ., «Հ.Յ.Դաշնակցության պատմություն», Երևան, 1992, էջ 396-398:
Վրացեան Ս., «Յուշապատում Հ.Յ.Դաշնակցության (1890-1950)», Բոստոն, 1950, էջ 562-579:

Կ. Պոլսի ՀՅԴ պարբերական մամուլի օրգանները 1909-1924 թթ. հրատարակվել են 2 փուլով. 1909-1915 թթ. և 1918-1924 թթ.: 1909-1915 թթ. հրատարակվել են «Ազատամարտ» օրաթերթը (1909-1915 թթ.), «Ուսանող» (1909-1914 թթ.) և «Երկունք» (1909-1914 թթ.) ամսաթերթերը, հասարակագիտական և գրական ուղղվածությամբ «Ազդակ» շաբաթաթերթը (1908-1909 թթ.), «Շանթ» (1911-1915 թթ.) ու «Մեհյան» հանդեսները (1914 թթ.), «Նավասարդ» տարեգիրքը (1914 թ.), «Ամենուն տարեցույցը» (1909-1914 թթ.), իսկ 1918-1924 թթ.՝ «Ճակատամարտ» օրաթերթը (1918-1924 թթ.), «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա (1919-1920 թթ.) և «Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա (1918-1920 թթ.) հավելվածները, «Շանթ» գրական-քաղաքական (1918-1919 թթ.) և «Հայ սկաուտ» մարզական(1919-1922 թթ.) հանդեսները:

Հրատարակության 1-ին փուլում ՀՅԴ Կ.Պոլսի պարբերականների նպատակը կուսակցության ծրագիրն ու գաղափարները, հասարակական-քաղաքական, գրական-մշակութային հիմնահարցերի նկատմամբ ունեցած մտտեցումներն ընթերցողներին ներկայացնելն էր: 2-րդ փուլում դրանց ուշադրության կենտրոնում կուսակցական և քաղաքական խնդիրները չէին, այլ՝ հայապահպանությունը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման համար սկսված գործընթացը, Հայաստանի 1-ին հանրապետության հետ կապեր հաստատելը և հնարավորության սահմաններում հայրենիքին օժանդակելը:

Հայ ժողովրդի համար վճռորոշ ու ճակատագրական 1909-1915 թթ. ՀՅԴ-ն կարևոր դեր է հատկացրել կուսակցական մամուլին ոչ միայն Թուրքիայի մայրաքաղաք Կ.Պոլսում, այլև արևմտահայ գավառում և գաղթավայրերում: Դրանք հրատարակվել են մի քանի գավառակենտրոններում և վաճառվել ու տարածվել են շրջակա հայկական կամ հայաշատ գյուղերում: Հիմնականում եղել են շաբաթաթերթեր կամ լույս են տեսել որ-

պես երկշաբաթաթերթ ու ամսաթերթ: Տիտղոսաթերթերի վրա թեև մեծ մասամբ չի նշվել ՀՅԴ պատկանելությունը, բայց ստորև ներկայացվող պարբերականները հրատարակվել են դաշնակցականների ուժերով կամ միջոցներով և կրել են ՀՅԴ գաղափարական ուղղվածությունը: Այդ պարբերականները լուսաբանել են ՀՅԴ գործունեությունը Կ.Պոլսում և արևմտահայ գավառում: Դրանց էջերում ամփոփված է 1909-1915 թթ. արևմտահայ գավառի կյանքն իր ինդիքներով, մտահոգություններով, առօրյա հոգսերով, համայնքային անցուղարձով, հարցադրումներով և պահանջներով:

ՀՅԴ գավառահայ մամուլը (1909-1915 թթ.), կարելի է ասել, որ գրեթե ուսումնասիրված չէ: Այն նույնիսկ չնչին մասով է հասել կամ պահպանվել Հայաստանի Հանրապետության մասնագիտական գրադարաններում ու գրապահոցներում, թեև ամբողջությամբ դեռևս պահպանվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության գրադարանում:

Եթե ՀՅԴ-ի ու նրա գործունեության վերաբերյալ կան բավականաչափ հարուստ գիտական գրականություն, ուսումնասիրություններ, գրքեր ու հոդվածներ, ապա նույնը չի կարելի ասել ՀՅԴ մամուլի մասին: «Մեր պայմաններին մեզ անհնար է ճշտորոշել ու լրիւ կերպով ներկայացնել ՀՅԴ պարբերական ու ոչ պարբերական հրատարակություններու ցանկը: Քաղաքական պայմաններու հետևանքով լոյս տեսած են թերթեր անկուսակցական անուան տակ, մինչդեռ իրապէս դաշնակցական հրատարակություններ են եղած», - գրված է Ս.Վրացյանի «Հուշապատման» մեջ²:

Մինչև օրս հստակ պատկերացում չկա ՀՅԴ պարբերականների մատենագիտության հարցում: ՀՅԴ մամուլը բավականաչափ պատշաճ է ներկայացված Գ.Լևոնյանի «Հայոց պարբերա-

² Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 562:

կան մամուլը» մատենագիտական աշխատության մեջ, թեև այստեղ կան անճշտություններ, բացթողումներ³: Իր որակով ու գիտական արժեքով Գ. Լևոնյանի մատենագիտությանը զիջում է Հովհ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան»⁴: Հեղինակը տուրք է տվել զուտ քաղաքական և գաղափարական թելադրանքներին՝ ՀՅԴ մամուլը գնահատելով բացառապես թշնամական դիրքերից: Հովհ. Պետրոսյանը շարունակել է նախորդ մատենագիտություններում թույլ տրված սխալները, վրիպումները՝ ավելացնելով սեփական սխալներն ու անփութությունները: ՀՅԴ մամուլը ներկայացված է նաև Ա. Կիրակոսյանի աշխատության մեջ⁵: Հեղինակը կրկնել է նախորդ մատենագիտությունների թերությունները (հիմնականում՝ խմբագիրների, հրատարակության թվականների հարցում), սակայն կատարել է դրական աշխատանք՝ մտցնելով իր ճշտումները: Նա հիմնականում հենվել է Հանրային (Ազգային) գրադարանի տվյալների վրա, որոնք ճշտության հետ հակասությունների տեղիք են տալիս, բայց կարևորն այն է, որ նրա մատենագիտությունը նորույթ է բերում իր տեսակի հրատարակությունների մեջ: Ցույց է տրվում, թե ո՛ր պարբերականը ո՛ր տեղի հավաքածուի մեջ է գտնվում, ինչն առհասարակ բարձր որակ է մամուլի մատենագիտությունների մեջ՝ ունենալով գործնական շատ արժեքավոր նշանակություն: Հետագոտական անաչառությունն արդեն զգացնել է տալիս Մ. Բաբլոյանի գրքում: Մ. Բաբլոյանը որոշ չափով ուղղել է հրապարակի վրա եղած մատենագիտական թերությունները՝ մասամբ կրկնելով դրանք⁶:

³ «Հայոց պարբերական մամուլը», կազմեց՝ Գ. Լևոնյանը, Երևան, 1934:

⁴ Պետրոսյան Հովհ., «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1794-1900 թթ.)», Երևան, 1956:

⁵ «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967 թթ.)», համահավաք ցանկ, կազմեց՝ Ա. Կիրակոսյանը, Երևան, 1970:

⁶ «Հայ պարբերական մամուլը (1794-1980 թթ.)», մատենագիտական համահավաք ցուցակ, կազմեց՝ Մ. Բաբլոյանը, Երևան, 1986:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի ՀՅԴ մամուլին խորհրդային շրջանի պատմագրության մեջ գրեթե չեն անդրադարձել, թեև վերաբերմունքը, բնականաբար, պիտի դրսևորվեր նույն բացասական միտումով, ինչը կուսակցության պատմագրության հանդեպ էր: Օրինակ՝ ՀՍՍՀ ԳԱ հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» 6-րդ հատորում ՀՅԴ-ն և նրա մամուլը շատ համառոտ գնահատվել են պրոլետարական հեղափոխության դիրքերից: ՀՅԴ-ն և մյուս ազգային կուսակցություններն այստեղ հորջորջվել են «բուրժուա-նացիոնալիստական» ու «մանր բուրժուական»: ՀՅԴ մամուլը մեղադրվել է այն բանում, որ նշված ժամանակաշրջանում «ազգայնական դիրքերից ջանացել է հայ ժողովրդի ազատագրական պայքարը շեղել հեղափոխական ճանապարհից, խանգարել է աշխատավոր զանգվածների դասակարգային ինքնագիտակցության գալուստը»⁷: Նույն ոգով են բնութագրվել ՀՅԴ-ն և նրա մամուլը խորհրդային շրջանի բոլոր պատմաբանների գրքերում⁸:

Խորհրդային շրջանի հրապարակումներից կարելի է առանձնացնել Լ. Խուրշուդյանի՝ «Դաշնակցություն կուսակցության սոցիալական էության լենինյան գնահատականի հարցի շուրջ» հոդվածը (ռուսերեն), որը պատմագիտական նորովի հայեցվածք էր ՀՅԴ-ն գնահատելու տեսակետից⁹: Պատմաբանի պնդմամբ՝ ՀՅԴ-ն ոչ թե հետադիմական, այլ մանրբուրժուական, ձախնարողնիկական կուսակցություն է: Խուրշուդյանն այս գա-

⁷ «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1981, հ.6, էջ 869-870:

⁸ Անանիկյան Բ., «Հոգեբանական պատերազմը և Դաշնակցությունը», Երևան, 1986, էջ 6, 63-66, 95, 152:

Սիմոնյան Հ., «Դաշնակցությունը հակակոմունիզմի ծառայության մեջ», Երևան, 1966, էջ 12, 30-38:

Համբարյան Ա., «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին», Երևան, 1990, էջ 210-240:

⁹ Хуршудян Л., «К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн» («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1988, թիվ 7, էջ 12-31):

ղափարն անցկացնում է՝ ելնելով ժամանակի հնարավորությունից իբրև լենինյան տեսակետի վերականգնում, որը խեղաթյուրվել էր խորհրդային հետագա շրջանի պատմության մեջ:

Վերջին տասնամյակին ՀՅԴ պատմությանն անդրադարձել են այս կուսակցության նշանավոր գործիչներ Հ.Տասնապետյանը, Էդ.Հովհաննիսյանը, նաև՝ Գ.Խուդինյանը, Գ.Վարդանյանը, Ա.Հակոբյանը, Ն.Մարտիրոսյանը և այլք: Հ. Տասնապետյանի՝ անգլերեն լույս տեսած աշխատության մեջ ՀՅԴ մամուլը դիտարկվել է միայն կուսակցության գաղափարական քարոզչության կտրվածքով: Հ. Տասնապետյանը նշել է, որ 1909 թ. օգոստոսեպտեմբերին Վառնայում գումարված ՀՅԴ 5-րդ համաժողովը, ուշադրության կենտրոնում պահելով տարածաշրջաններում կատարվող աշխատանքը, որոշել է թերթեր հրատարակել ինչպես երկրում, այնպես էլ՝ Կ. Պոլսում: Այս կերպ Կարինի «Հառաջի» և Թիֆլիսի «Հորիզոնի» հետ 1909 թ. Կ. Պոլսում սկսել է հրատարակվել «Ազատամարտը»՝ Ռ.Զարդարյանի խմբագրությամբ¹⁰: Այս հեղինակը չի անդրադարձել բուն «Ազատամարտի» գործունեությանը: Էդ.Հովհաննիսյանը ևս ամբողջովին անդրադարձել է ՀՅԴ պատմությանը՝ քննարկման առարկա չդարձնելով նրա մամուլը¹¹: Գ. Խուդինյանի աշխատության մեջ ՀՅԴ ձևավորման գործընթացը քննության է ենթարկվել ներազգային ու միջազգային կացության հենքի վրա՝ ընդգրկելով կուսակցության ակունքներից մինչև 1895 թ. վերջերն ընկած հատվածը: Գ.Խուդինյանը ՀՅԴ գաղափարախոսության հանգամանակից քննության միջոցով բացահայտել է այդ կուսակցության խաղացած դերը հայ քաղաքական ու փիլիսոփայական մտքի պատմության մեջ: Գ.Խուդինյանը չի անդրադարձել ՀՅԴ Կ. Պոլսի պարբերա-

¹⁰ Dasnabedian H., “History of the Armenian Revolutionary Federation Dashnaksutiun (1890-1924)”, Milan, 1989, page 91.

¹¹ Оганисян Э., “Век борьбы”, Мюнхен-Москва, 1991, в двух томах.

կան մամուլի օրգաններին¹²: Գ. Վարդանյանի մենագրությունը նվիրված է Հայաստանի 1-ին հանրապետության մշակույթի պատմությանը: Հեղինակը Հայաստանի 1-ին հանրապետության տարիներին հրատարակված ՀՅԴ պարբերականները քննարկել է մշակութային երևույթի կտրվածքով¹³: Ա. Հակոբյանի աշխատության մեջ 1-ին անգամ գիտականորեն համակարգված և համառոտ բնութագրված են Հայաստանի 1-ին հանրապետության տարածքում լույս տեսած ավելի քան 60 անուն պարբերական՝ ըստ իրենց բնույթի ու բովանդակության, ըստ ունեցած գաղափարաքաղաքական ուղղվածության և կուսակցական պատկանելության: Ա.Հակոբյանը ներկայացրել է Հայաստանի 1-ին հանրապետության շրջանի նաև դաշնակցական պարբերականների պատմությունը¹⁴: Ն.Մարտիրոսյանն 1920-1930-ական թվականների կտրվածքով անդրադարձել է հիմնականում Բոստոնի «Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությանը¹⁵: Բացի նշված հեղինակներից՝ ՀՅԴ մամուլի վերաբերյալ կան միայն ցաք ու ցրիվ գնահատականներ, կարծիքներ կուսակցության անվանի դեմքերի գրքերում, հուշերում ու հոդվածներում, սակայն դրանք հավաքելու, համադրելու և գիտականորեն վերլուծելու ուղղությամբ քիչ բան է ձեռնարկվել: ՀՅԴ տեսաբան Մ. Վարանդյանը փաստել է, որ արդեն 20-րդ դարի սկզբին դաշնակցական մամուլը տիրել էր հրապարակին և խեղդել մամուլի հինավուրց օրգաններին. «Մեր օրաթերթերը յաճախ կը փակւէին կառավարու-

¹² Խոլոդինյան Գ., «ՀՅԴ քննական պատմություն. ակունքներից մինչև 1895 թ. վերջերը», Երևան, 2006:

¹³ Վարդանյան Գ., «Մշակույթը Հայաստանի առաջին հանրապետությունում (1918-1920 թթ.)», Երևան, 2003, էջ 119-126:

¹⁴ Հակոբյան Ա., «ՀՀ պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.)», Երևան, 2005, էջ 27-43:

¹⁵ Մարտիրոսյան Ն., ««Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությունը (1920-1930-ական թթ.)», Երևան, 2001:

թեան կողմէ, բայց միշտ ալ կը վերսկսէին իրենց հրատարակութիւնը տարբեր անուններով»¹⁶:

«Ազատամարտը», «Ճակատամարտը», «Շանթը», «Ուսանողը» և «Երկունքը» ՀՅԴ պարբերական մամուլի ուրույն և արժանավոր հրատարակություններ էին: Հատկապէս «Ազատամարտից» շատ բան ունեն յուրացնելու և սովորելու ժամանակակից գրեթէ բոլոր պարբերականները: «Ազատամարտը» կարելի է համարել իր ժամանակի համար հասուն, լրագրողական վարպետության հասած մամուլի օրգան: Լրագրության բոլոր ժանրերն անխտիր կիրառվել են այս թերթում: «Ազատամարտը» չի դարձել միջկուսակցական պայքարի միջոց¹⁷: Հայ իրականության մեջ «Ազատամարտի» խաղացած դերին անդրադարձել են Մ. Վարանդյանը, Հ. Սիրունին, Գ. Լազյանը, Ռ. Դարբինյանը, Ռ. Չարդարյանը: «Թերթն ստացաւ իրեն արժանի դիրքն ու կշիռը պետական կեանքի մէջ: Կառավարութիւնը միշտ ուշադիր էր անոր ձայնին, հաշուի կ'առնէր անոր կարծիքները պետական կարեւորութիւն ունեցող այլ և այլ խնդիրներու շուրջ: «Ազատամարտ»ը կը գրաւէր մտաւորական բազմութիւնը իր անկախ ու անկողմնակալ խօսքով, քննադատական շիտակ կեցուածքով և իր ժողովրդավար ազատական ուղղութեամբ»¹⁸, - գրել է Մ. Վարանդյանը: Գ. Լազյանն «Ազատամարտը» համարել է «թրքահայ լրագրութեան ամենափայլուն օրկան», որը պոլսահայ մամուլի պատմության մեջ նոր շրջանի սկիզբը դրեց¹⁹: 1912թ. Ռ. Չարդարյանը Մ. Վրացյանին գրած նամակում հայտնում էր, որ թերթը Կ. Պոլսում անօրինակ և աննախընթաց հաջողություն էր գտել՝ տպաքանակը 1600-ից հասցնելով 6000-ի²⁰: «Ազատամար-

¹⁶ Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 396-397:

¹⁷ «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1909, թիվ 63, 71, 75, 81, 86, 93, 98, 142, 151:

¹⁸ Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 439:

¹⁹ Լազեան Գ., «Յեղափոխական դեմքեր», Գահիրէ, 1951, էջ 214:

²⁰ Նույն տեղում, էջ 213-214:

տի» և ընդհանրապես ՀՅԴ Կ.Պոլսի մամուլի մասին դրվատանքով, նույնիսկ չափազանցությամբ է արտահայտվել ՀՅԴ ճանաչված գործիչ և ուսումնասիրող Հակոբ Սիրունին: Նա իրավամբ նշել է, որ ՀՅԴ մամուլը նոր, թարմ շունչ էր բերել իր աշխարհում, բայց ծայրահեղության գիրկն էր ընկել՝ մերժելով մինչ այդ հրատարակված պարբերականների դրական արժանիքները: Որպես ասվածի ապացույց վկայակոչենք միայն հետևյալ պարբերությունը նրա հոդվածից. «1895-1896 թթ. յետոյ Պոլսէն մէկիկ-մէկիկ արտասահման հեռացեր էին թրքահայ լաւագոյն մտաւորականները: Ասպարէզը մնացեր էր հացկատակներուն և անոնց, որ լրագրութիւնը ապրուստի միջոց մը ըրած էին: 1908 յուլիսին, երբ Համիտ մարդոց լեզուները բացաւ, կփակուէր հայ մամուլի տարեգրութեանց ամենէն տխուր մէկ օրը: Շատ քիչ թերթեր, մանաւանդ վերջին քառորդ դարուն, այնքան ազդած են ապրող սերունդին վրայ, որքան «Ազատամարտ»ը իր գոյութեան վեց տարիներուն մէջ»²¹: Սիրունին այսպես էր բնորոշել «Ազատամարտի» դերը. «Երիտասարդութեան համար տեսակ մը սրբավայր էր «Ազատամարտ»ի շէնքը: Հոն էր, կերպով մը, հայ կեանքին բազկերակը: Ճիշտ է, գիտեմ մարդիկ ալ, որ մատներով չէին բռներ մեր թերթը: Ան Իթթիհատի և Դաշնակցութեան բարեկամութեան օրերուն անգամ հացկատակի մը դիրքը չառաւ, ընդհակառակը, իր խօսքն աւելի կծու, աւելի հատու եղաւ»²²: Իսկ Ռ.Դարբինյանը, փորձելով արժևորել ՀՅԴ մասնավորապես Կ.Պոլսի մամուլը, թվարկել է դրանցում նկատվող որոշ թերությունները, մեկը մյուսին կրկնօրինակելու միտումները՝ միայն «Ազատամարտը» համարելով նոր սերնդի խոսափող և նոր գաղափարներ ու ծրագրեր հնչեցնելու միջոց²³: Վերոհիշյալ ժամա-

²¹ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 6, էջ 65-72, 80-81 (Սիրունի 3., «Ազատամարտի» սերունդը):

²² Նույն տեղում, 1924, թիվ 11, էջ 104-115, թիվ 12, էջ 115-137:

²³ «Ազատամարտ», Կ.Պոլիս, 1912, թիվ 946:

նակահատվածում լույս տեսած ոչ դաշնակցական պարբերականները գրեթե թշնամական ու բացասական կարծիք ունեին ՀՅԴ մամուլի մասին²⁴: Բավական է թերթել ասենք՝ «Մուրճ», «Մշակ», «Հնչակ», «Ժամանակ», «Հայրենիք», «Բյուզանդիոն», «Օրագիր», «Ծիածան» թերթերի հավաքածուները, որպեսզի համոզվենք ասվածի ճշմարտության մեջ: Մեծ մասամբ այս լրագրային կուսակցական պայքարը վերածվում էր անձնական հարաբերությունները ճշգրտելու և նեղ-անձնային վեճ ու կռիվների, որոնք, կարծում ենք, պատիվ չէին բերում կողմերից և ոչ մեկին:

Եթե ընդհանրացնենք, պետք է եզրակացնենք, որ ինչպես ՀՅԴ մամուլն առհասարակ, այնպես էլ ՀՅԴ Կ.Պոլսի պարբերականները (1909-1915 թթ. և 1918-1923 թթ.) չեն ենթարկվել գիտական ուսումնասիրության: ՀՅԴ մամուլի, մասնավորապես Կ.Պոլսի պարբերականների մասին կան կցկտուր գնահատականներ, կարծիքներ, բայց՝ ոչ գիտական ուսումնասիրություններ: Այդ տեսակետները հիմնականում արտահայտված են դաշնակցական և ոչ դաշնակցական թերթերում, ամսագրերում, որոշ գրքերում: Թերևս կարող ենք հավաստիաբար պնդել, որ ՀՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլն առ այսօր չի ենթարկվել բազմակողմանի և խոր գիտական վերլուծության: Իսկ դա կնպաստեր այն բանին, որ գիտականորեն կվերլուծվեին ծայրահեղության հասնող երկուստեք կարծիքները: Միայլ է անվերապահորեն ճշմարտացի համարել ՀՅԴ մամուլը և մերժել մինչ այդ ու նաև նույն ժամանակահատվածում հրատարակված ոչ դաշնակցական թերթերն ու ամսագրերը: Միայլ է միայն վատը, մերժելին փնտրել ու մատնանշել ՀՅԴ մամուլում, ինչն անում են նրա հակառակորդ գործիչները: Ընդ որում, դաշնակցական մամուլի վերաբերյալ տեսակետները ՀՅԴ հակառակորդ հրատարակություններում ունեն բացառապես բանավիճալին, դեպքից դեպք հանդիպող և պատահական բնույթ, որը չի կա-

²⁴ Վարանդեան Մ., նշվ. աշխ., էջ 397:

րող համարվել օբյեկտիվ գնահատական: Այդ պատճառով էլ այստեղ ձեռնպահ ենք մնում այս բովանդակության նյութերից, որոնց ուղղվածությունը բացառապես կուսակցական և քաղաքական նկարագիր ունի (օրինակ՝ ռամկավարների վեճը ՀՅԴ մամուլի, նաև՝ հնչակյանների բանավեճը դաշնակցական լրագրողների, գործիչների հետ և այլն):

ՀՅԴ մամուլի մատենագիտական ցանկեր փորձել են կազմել ՀՅԴ հայտնի գործիչներ Սիմոն Վրացյանը (Մահակ Տեր-Թովմասյանի աջակցությամբ)²⁵, Դավիթ Փափագյանը²⁶, Հարություն Քյուրքյանը²⁷ և Արտաշես Տեր-Խաչատուրյանը²⁸: Թեև այս մատենագիտական ցանկերը կազմողները դաշնակցական գործիչներ էին, բայց հնարավորինս օբյեկտիվ են եղել իրենց աշխատանքը կատարելիս: Անճշտությունները, սխալները բացատրվել են աղբյուրների բացակայությամբ, համեմատական վերլուծություն կատարելու անհնարինությամբ, քանի որ 1905-1915 թթ. և մասամբ 1918-1923 թթ. հրատարակված արևմտահայ պարբերականների աշխատակիցներն ու խմբագիրները հիմնականում զոհ էին դարձել Հայոց ցեղասպանությանը: Վկաների և ժամանակակիցների գրեթե բացակայությունը ազդել էր ՀՅԴ մամուլի մատենագիտական ցանկերի ճշգրտության աստիճանի վրա: «Մեր պայմաններու մէջ անհնար է ճշտորոշել և լրիվ կերպով ներկայացնել ՀՅԴ պարբերական եւ ոչ պարբերական հրատարակութիւններու ցանկը: Գրեթէ ոեւէ տեղ գոյութիւն չունին հայ մամուլի և հրատարակութիւններու ամբողջական հաւաքածո-

²⁵ Վրացեան Ա., «Յուշապատում Հ.Յ.Դաշնակցութեան (1890-1950)», Բոստոն, 1950:

²⁶ «Յուսաբեր բացառիկ», Գահիրէ, 1954, 18 դեկտեմբերի, էջ 55-56 («Հ.Յ. Դաշնակցութեան վաթսուամեայ մամուլը», ցանկը կազմեց՝ Դ. Փափագեան, 1950, Թեհրան):

²⁷ Քյուրքճեան Յ., «ՀՅԴ մամուլ և մշակութա-գրական հանգանակ» («Ազդակ շաբաթօրեակ», Պէյրուք, 1985, թիվ 1-7):

²⁸ Տէր Խաչատուրեան Ա., «Հ.Յ.Դաշնակցութեան 100-ամեայ մամուլը (1890-1990)», Պէյրուք, 1990: (Տե՛ս նաև նույնի «Հայ մամուլի մատենագիտական գործեր», Պէյրուք, 2014):

ներ: Բացի այդ, քաղաքական պայմաններու հետեանքով, լոյս տեսած են բազմաթիւ թերթեր անկուսակցական անուան տակ, մինչդեռ իրապէս դաշնակցական հրատարակութիւններ են եղած: Եղած են եւ կան նաեւ անհատական նախաձեռնութեամբ կատարուած հրատարակութիւններ, որոնք իրապէս կուսակցական բնոյթ կը կրեն»,- այսպէս է բացատրել ՀՅԴ մամուլի մատենագիտական ցանկերի հնարավոր անճշտությունները կամ սխալները Սիմոն Վրացյանը²⁹: Նրա հետ համամիտ են եղել վերոհիշյալ 3 մատենագիտական ցանկերը կազմողները: Նրանք նշել են, որ իրենց պատրաստած մատենագիտական ցանկերը միայն մոտավոր կերպով են պատկերացում տալիս ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերականների և հրատարակությունների մասին: Այդ մատենագիտական ցանկերը ճշգրտվել են՝ հիմնվելով ՀՅԴ կենտրոնական Մատենադարանի հավաքածուների և նյութերի վրա, որոնց թերի լինելը ազդել է այդ ցանկերի օբյեկտիվության վրա:

Հ. Քյուրքչյանի կազմած պարբերականների ցանկը 20%-ի չափով ավելի է Ս. Վրացյանի կազմածի համեմատ³⁰: Նա հավատարիմ է մնացել Ս. Վրացյանի մատենագիտական ցանկի կազմման չափանիշներին: «Պաշտոնապէս օրկան յայտարարուած թերթերու կողքին նկատի ունեցանք քաղաքական հարկադրանքով, թէ այլ պատճառներով – մասնաւոր երեւոյթով ներկայացող թերթեր (անձնական, երբեմն՝ մշակութային և այլն), որոնց դաշնակցական պատկանելութիւնը սակայն եղած է ՇԵՇՏՈՒԱՄ, առնչութիւնը դաշնակցական գաղափարներու, կազմակերպական մտահոգութիւններու հետ՝ առավելագոյնս սերտ: Այլապէս կարելի էր ցանկը երկարել հարիւրեակ մը անուններով»,- այս պարզաբանումներն է

²⁹ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 562:

³⁰ Քիւրքճեան Յ., «Պլայուրներ և մատենագիտական տվյալներ» («Ազգակ շաբաթօրեակ», Պէյրուք, 1985, թիվ 4, էջ 77):

տվել իր կազմած մատենագիտական ցանկում ընդգրկված պարբերականների մասին Հ. Քյուրքչյանը³¹:

ՀՅԴ մամուլը համակարգելու փորձ է Արտաշես Տեր-Խաչատուրյանի «Հ.Յ.Դաշնակցության 100-ամյա մամուլը (1890-1990)» աշխատությունը: Այն հրատարակել է ՀՅԴ Լիբրանանի Կենտրոնական կոմիտեն: Այս գրքում առաջին անգամ ամփոփ կերպով բնութագրված է ՀՅԴ մամուլը 1890-1990 թթ. կտրվածքով: Տեր-Խաչատուրյանը հաճախ թույլ է տվել անճշտություններ, հատկապես պարբերականների՝ կուսակցական պատկանելության առումով³²: Այնուհանդերձ, նրա կազմած մատենագիտական ցանկը եղածների ընդհանրացումն է՝ դրված գիտական հիմքերի վրա և զուգորդված այդ պարբերականները հրատարակած երկրների, ժամանակաշրջանի, ՀՅԴ ծրագրային ու մարտավարական գործունեության վերլուծություններով: Դա, անշուշտ, նպաստում է, որ ոչ միայն առավել ամբողջական լինեն ՀՅԴ կուսակցական ու համակիր մամուլի և հրատարակությունների ցանկերը, այլև հասկանալի դառնան դրանց հիմնման, ընտրած թեմատիկ ուղղվածության, հրատարակության դժվարությունների ու տպագրության դադարեցման պատճառները: Ա. Տեր-Խաչատուրյանի կարծիքով՝ ՀՅԴ-ն ունեցել է

- մամուլի պաշտոնական օրգաններ, որոնք հիմնադրվել և խմբագրվել են կուսակցության կողմից,

- մամուլի անուղղակի օրգաններ, որոնք լույս են ընծայվել ՀՅԴ շարքային անդամների կողմից, իսկ կուսակցությունը հովանավորել է դրանց հրատարակությունը,

- մամուլի համակիր օրգաններ, որոնք հրատարակվել են ՀՅԴ ուղղակի կամ անուղղակի հովանավորությունը կրող կազմակերպությունների և հաստատությունների կողմից: «Անոնց

³¹ Նույն տեղում, էջ 80:

³² Տեր Խաչատուրեան Ա., «Հ.Յ.Դաշնակցութեան 100-ամեայ մամուլը (1890-1990)», Պէրոպ, 1990, էջ 10-18:

բովանդակութիւնը գուտ կուսակցական-տեսաբանական հարցեր կրնայ չպարունակել, սակայն հոն կը մէկտեղուին սովորաբար նոյն գաղափարաբանութեան դրօշակակիրներն ու համակիրները», - գրում էր Ա. Տեր-Խաչատուրյանը³³:

Հիշյալ մատենագիտական ցանկերից կարելի է եզրակացնել, որ արևմտահայ գավառում 1908-1915 թթ. ՀՅԴ-ն տպագրել է 2 տասնյակից ավելի կուսակցական և համակիր պարբերական: Վասպուրականում, օրինակ, դրանցից մի քանիսը հրատարակվել են թուրքալեզու («Սապահյուլ խայր»-ը)կամ հայերեն ու թուրքերեն էջերով: Ընդ որում, դրանք մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը տպագրվել են ընդհատակյա և հիմնականում եղել են խմորատիպ: Ա. Տեր-Խաչատուրյանի ուսումնասիրությունների համաձայն՝ 1896-1897 թթ. ՀՅԴ-ն Վասպուրականում տպագրել է «Թռուցիկ» թերթը, իսկ ՀՅԴ Վասպուրականի մամուլի հիմքը դրել է Իշխան Միքայելյանը՝ 1905 թ. այստեղ լույս ընծայելով «Արյան ձայն» թերթը³⁴:

ՀՅԴ մամուլի ուսումնասիրության ու մատենագիտական ցանկեր կազմելու, վերլուծելու տեսակետից ավելի ամբողջական և ամփոփ աշխատություն կարելի է համարել Արտաշես Տեր-Խաչատուրյանի «Հայ մատենագիտական գործեր» վերնագրով երկհատորյակը: Հեղինակը փորձել է մեկ առ մեկ ներկայացնել ՀՅԴ գավառահայ պարբերականներից առավել հայտնիները: Թեև այս աշխատությունը հիմնականում նկարագրական բնույթ ունի, իսկ վերլուծական կողմը թերի է, բայց պետք է արժանին հատուցել Ա. Տեր-Խաչատուրյանին, որովհետև նա առաջին անգամ մեկ գրքում ի մի է բերել արևմտահայ գավառում 1909-1915 թթ. հրատարակված ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերականներն ու դրանք ներկայացրել է՝ հղումներ կատա-

³³ Նույն տեղում, էջ 4:

³⁴ Տեր-Խաչատուրեան Ա., նշվ. աշխ., էջ 11:

րելով հիմնականում կամ առավելապես ՀՅԴ գործիչների, ուսումնասիրողների կազմած մատենագիտական ցանկերի ու աշխատությունների վրա:

Վերը նշված ՀՅԴ մամուլի մատենագիտական ցանկերը կազմողների կողմից ՀՅԴ առավել ազդեցիկ պարբերականների շարքում առաջին հերթին առանձնացվում էին Վանի «Աշխատանքը» (1910-1915 թթ.), Սեբաստիայի «Հողդարը» (1910-1914 թթ.), Կարինի «Հառաջը» (1909-1914 թթ.), Իզմիրի «Աշխատանքը» (1910-1914 թթ.), Նիկոմիդիայի «Բյութանիան» (1910-1912 թթ.), Տրապիզոնի «Խարիսիւր» (1909 թ.), «Գեղջուկը» (1909-1910 թթ.), «Շարժումը» (1910 թ.), «Պոնտոսը» (1910-1913 թթ.), Ամասիայի «Ապառաժը» (1911 թ.)³⁵: Դրանք և ՀՅԴ մյուս պաշտոնաթերթերը կամ համակիր պարբերականները դադարել են լույս տեսնել կամ 1914 թ., կամ 1915 թ.³⁶: «ՀՅԴ մամուլի շարժումը պիտի կասեցուի, սակայն, մեղմօրէն՝ Արեւելեան հատուածին համար, աւելի բիրտ՝ Արեւմտեան հատուածին՝ 1909-ին ու 1914-ին՝ յաջորդաբար Քենալական խուժումէն ետք, արեւմտահայ գոտիի դաշնակցական մամուլի մնացորդացը Արտերկրի դաշնակցական մամուլին պիտի տրամադրէ ենթակառոյցներու փաստօրէն ամբողջ տրամադրելին, ապա նաեւ՝ մարդուժի կարելոր մէկ մասը», - գրում էր Հ. Քյուրքչյանը³⁷: Ս. Վրացյանն իր հերթին վկայում էր. «Հայաստանի խորհրդայնացումով և Պոլսոյ քենալացումով Հ.Յ. Դաշնակցութեան մամուլը զարգացաւ արտասահմանի մէջ: Հ.Յ. Դաշնակցութեան մամուլի գլխաւոր կեդրոններ դարձան Փարիզը, Գահիրէն, Պոսթընը եւ Սիրիա-Լիբանանը»³⁸:

³⁵ Քիրքճեան Յ., «Աղբյուրներ և մատենագիտական տվյալներ» («Ազգակ շաբաթօրեակ», Պէրոյ, 1985, թիվ 2, էջ 80), Տէր Խաչատուրեան Ա., նշվ. աշխ., էջ 11, Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 567:

³⁶ Քիրքճեան Յ., նշվ. աշխ., էջ 31, Տէր Խաչատուրեան Ա., նշվ. աշխ., էջ 14:

³⁷ Քիրքճեան Յ., նշվ. աշխ., էջ 31, 81:

³⁸ Վրացեան Ա., նշվ. աշխ., էջ 568:

Ըստ տարբեր մատենագիտական ցանկերի և ուսումնասիրությունների՝ արևմտահայ գավառում և գաղթավայրերում 1909-1915 թթ. լույս են տեսել ՀՅԴ ուղղվածություն ունեցող հետևյալ պարբերականները.

- Վանում հրատարակվել են «Աշխատանք» շաբաթաթերթը (1910-1915թթ.), «Հորձանք» երկշաբաթաթերթը(1909-1910 թթ.), «Տեղեկատուն» (1915 թ.),

- Իզմիրում լույս են տեսել «Աշխատանք» պարբերականը (1910-1914թթ.) (նախ՝ որպես շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա թերթ) և «Մունետիկ» շաբաթաթերթը (1909 թ.),

- Ատարագարում տպագրվել է «Բյուրանիա» շաբաթաթերթը, որը հետո դարձել է եռօրյա թերթ (1910-1912 թթ.)³⁹,

- Սեբաստիայում ՀՅԴ-ն ունեցել է «Հողդար» շաբաթաթերթը (1910-1914 թթ.),

- Տրապիզոնում դաշնակցական ուղղվածություն են ունեցել «Խարիսխ» (1909 թ.), «Գեղջուկ» (1909-1910 թթ.), «Շարժում» (1910 թ.), «Պոնտոս» (1910-1913 թթ.), երգիծական «Պիծակ» (1911-1912 թթ.) շաբաթաթերթերը,

- Կիրասոնում լույս է տեսել «Փեթակ» հանդեսը (1910-1911 թթ.),

- Կեսարիայում հրատարակվել են «Հայեկ» (1910-1914 թթ.) և «Շեփոր» (1910-1915 թթ.) շաբաթաթերթերը,

- Կարինում տպվել է «Հառաջ» երկօրյա շաբաթաթերթը (1914 թ.), որը հետագայում հրատարակվել է նախ՝ որպես «Երկիր» երկօրյա շաբաթաթերթ (1914 թ.), հետո՝ որպես «Ալիք» օրաթերթ (1914 թ.),

- Ամասիայում լույս է տեսել «Ապառաժ» ամսաթերթը (1911 թ.),

³⁹ «Բյուրանիան» սկզբնապես լույս է տեսել Իզմիրում:

- Երզնկայում հրատարակվել են «Արդի» շաբաթաթերթը (1909-1911թթ.), «Օրոր» (1909-1910 թթ.), «Արոր» (1910-1914 թթ.) և «Արև» (1911-1914 թթ.) ամսագրերը,
- Եդեսիայում տպագրվել են «Ջանք» (1908-1915 թթ.), «Պայքար» (1908-1915 թթ.) և «Արև» (1910-1914 թթ.) ամսագրերը,
- Պարտիզականում հրատարակվել են «Մեղու» (1912-1914 թթ.) և «Պայքար» (1912-1914 թթ.) երկշաբաթաթերթերը,
- Գոնիայում լույս է տեսել «Հուշարձան» շաբաթաթերթը (1911թ.),
- Բաղեշում եղել է «Սալնո ձոր» խմորատիպ երկշաբաթաթերթը (1913 թ.),
- Խարբերդում ՀՅԴ-ն ունեցել է «Պատանի» խմորատիպ երկշաբաթաթերթը (1909 թ.):

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԳԱՎԱՌԻ ՀՅՂ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԻՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ 1909-1915 ԹԹ.

17-րդ դարի վերջերից հայկական տպագրության գործի զարգացումը Եվրոպայից տեղաշարժվում է Կ.Պոլիս, որտեղ կենտրոնացած էր արևմտահայ մտավորականության սերուցքը: Կ.Պոլիսը 18-րդ դարում դառնում է հայ տպագրության հիմնական կենտրոններից մեկը: Այստեղ նշված ժամանակաշրջանում լույս է տեսել 300 անուն հայերեն գիրք: Կ.Պոլիսն այս առումով զիջում էր Վենետիկին, որը երկրորդ տեղում էր իր հրատարակած 250 անուն հայերեն գրքերով⁴⁰: Կ.Պոլսում պարբերականների հրատարակության արտոնագիրը տրվում էր սուլթանական ֆերմանով, իսկ գավառներում այն տալիս էին վալիները: Ընդառաջ գնալով ժամանակի պահանջներին՝ սուլթան Մահմուդ 2-րդը Թանզիմաթին կամ բարենորոգումներին զուգընթաց՝ 1831թ. Կ. Պոլսում թույլ է տալիս հրատարակել թուրքերեն առաջին թերթը՝ «Թագվիհ-ի վազային», որից օգտվելով՝ հայերը ստեղծում են այդ թերթի թարգմանված տարբերակը՝ «Լրո գիր» պարբերականը (1832-1850 թթ.)⁴¹: Հրատարակիչ խմբագիրը Գալուստ Արապյանն էր: 1840-1843 թթ. Կ. Պոլսում հրատարակվում էր Խաչատուր Օսկանյանի «Ազդարար Բյուզանդյան» թերթը: Այս 2 թերթը տպագրվում էին Գ. Արապյանի՝ Կ. Պոլսում հիմնած տպարանում: Քանի որ Կ. Պոլսի մամուլը արևմտահայ գավառ էր հասնում մի քանի ամիս ուշացումով, Մկրտիչ վարդապետ Խրիմյանը 1855-1856 թթ. Կ. Պոլսում հրատարակում է «Արծուի Վասպուրականի» ամսագիրը, որը հետագայում՝ 1858-1864 թթ. տպագրում է արդեն Արևմտյան Հայաստանի ամենամեծ հայա-

⁴⁰ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 618:

⁴¹ «Հայ պարբերական մամուլի պատմություն», Գահիրե, 2006, էջ 110 (տե՛ս Ղուկասյան Վ., «Լրո գիր»):

բնակ նահանգներից Վասպուրականում՝ Վարազա վանքում⁴²: «Արծուի Վասպուրականի» ամսագիրը արևմտահայ առաջին պարբերականն էր: Ընդհանրապես արևմտահայ գրքերի և պարբերականների մեծամասնությունը հրատարակվել է ոչ թե բուն Արևմտյան Հայաստանում, այլ Կ.Պոլսում և Ջյուռնիայում: Ի դեպ, Կ. Պոլսում առաջին հայերեն գիրքը տպագրվել է 1567 թ., երբ Աբգար Թոքատեցին այստեղ հիմնել է հայկական 1-ին տպարանը (1567-1569 թթ.)⁴³, իսկ Երեմիա Քյումուրճյանը 1677 թ. Կ.Պոլսում հիմնել է հայկական 2-րդ տպարանը (1677-1678 թթ.)⁴⁴:

1863 թ. Մկրտիչ Խրիմյանը տպարան է հիմնել Տարոնի Սուրբ Կարապետ վանքում: Այստեղ Գարեգին Սրվանձտյանցը հրատարակել է «Արծուիկ Տարոնոյ» երկշաբաթաթերթը (1863-1865 թթ.): Տպարանը շուտով տեղափոխվել է Վան, որտեղ գործել է մինչև 1884 թ.⁴⁵:

Վանում 20-րդ դարի սկզբներին հիմնադրվել են մի քանի տպարաններ (օրինակ՝ Հովնանյանի, Ժամկոչյանի, Բարսեղյանի): Դրանք գործել են մինչև 1915 թ.: Հիշյալ տպարաններում է հրատարակվել տեղի պարբերական մամուլը:

Սեբաստիայում (Սվազում) հայտնի էին 1875 թ. Անդրանիկ Վարդանյանի, 1905 թ. Հայկ Վարդանյանի, 1909 թ. Կ. Ա. Պարսամյանի կողմից հիմնադրված տպարանները: Վերջին տպարանը 1913 թ. իր ձեռք բերած նորագույն տպագրական մեքենաներով առաջնակարգ տեղ էր գրավում Օսմանյան Թուրքիայում: Այստեղ է հրատարակվել «Հողդար» թերթը (1910-1914 թթ.)⁴⁶:

⁴² «Հայ պարբերական մամուլի պատմություն», Գահիրե, 2006, էջ 289 (տե՛ս Կոստանդյան Է., «Արծուի Վասպուրականի»):

⁴³ Գալստյան Թ., «Հայ գրատպությունը 500 տարեկան է», («Ազգ» օրաթերթ, Երևան, 2012, թիվ 25):

⁴⁴ www.wikipedia.am (Հայ տպագրիչների ցանկ):

⁴⁵ Իշխանյան Ռ., «Հայ գիրքը 1512-1920», Երևան, 1981, էջ 120:

⁴⁶ Թեղդիկ, «Տիպ ու տառ», Կ. Պոլիս, 1913, էջ 143:

Կարինում հայկական տպարան է հիմնադրվել 1909 թ.⁴⁷ հունիսի 4-ին, երբ այստեղ սկսել է գործել Շավարշ Միսաքյանի խմբագրությամբ լույս տեսնող «Հառաջ» թերթի (1909-1913 թթ.) տպարանը⁴⁸:

Մինչև 1915 թ. հայկական տպարաններ էին գործում Արևմտյան Հայաստանի ու Հայկական Կիլիկիայի մի շարք այլ վայրերում ևս՝ Արմաշում, Ադանայում, Ատաբազարում, Սամսունում, Երզնկայում, Եվրոկիայում, Խարբերդում, Ամասիայում, Մարաշում, Մարզվանում, Այնթապում, Տրապիզոնում և այլուր⁴⁹: Հիշատակենք, որ Մարզվանում և Տրապիզոնում գործել է երեք տպարան (առաջինում՝ «Ներսո և Արապյանենց», Լ.Ս.Միսածինյանի և «Գուտենբերգ»⁵⁰, երկրորդում՝ «Մերասի եղբայրների», «Ոսկինարի» և «Մեշվերեթ» տպարանները), իսկ Այնթապում եղել են երկու՝ «Կեդր. Թուրքիոյ Գօլէճի» և «Ավետիս Խանգեղյան և ընկ.» տպարան⁵¹: Կրոնաբարոյական բնույթի հրատարակություններին զուգահեռ՝ արևմտահայ տպագրիչները գրաբարով ու աշխարհաբարով տպագրել են գիտական, գեղարվեստական, ուսումնական գրքեր, այդ թվում՝ թարգմանական գրականություն:

Արևմտահայ գրահրատարակչական գործը նոր թափ ու մեծ ծավալ է ստացել հատկապես 1909-1913 թթ., երբ մասնավորապես Կ. Պոլսում հիմնվել են նոր տպարաններ, օրինակ՝ Ատոմ Շահենի, Օննիկ Արզումանի, Հայկ Թիրյաքյանի և այլոց կողմից բացվածները⁵²: Լույս են տեսել բազմաթիվ հայերեն գրքեր ու պարբերականներ: 1908-1915 թթ. Արևմտյան Հայաստանում հրատարակվել են

⁴⁷ Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 121:

⁴⁸ Թեղդիկ, նշվ. աշխ., էջ 145:

⁴⁹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 564:

⁵⁰ Թեղդիկ, նշվ. աշխ., էջ 145:

⁵¹ Նույն տեղում, էջ 146:

⁵² «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 6, էջ 65-72, 80-82:

ավելի քան 200 անուն հայերեն պարբերական ու 15 անուն տարե-
գիրք⁵³: Թեոդիկը, վերլուծելով 1908-1912 թթ. սնկի պես աճած
արևմտահայ պարբերականների գործելակերպը, դրանց մեջ ամե-
նից փայլունը, կարկառունը և անխախտը համարել է 1908 թ. նո-
յեմբերին բացված «Օսնիկ Արզուման» տպարանը: Այդ տպարանի
նշանաբանն էր՝ «մաքուր, արագ և առատ գործ»⁵⁴: «Ճաշակաւոր ու
մաքուր գործ արտադրելու տեսակետով» Թեոդիկը սակավաթիվ
լավ կազմակերպված տպարանների շարքին էր դասում 1909 թ.
փետրվարի մեկին Մերուժան Պարսամյանի և Նուբար Յազըճյանի
կողմից բացված «Շանթ» տպարանը⁵⁵:

Արևմտահայ գրաիրատարակչության պատմության մեջ յու-
րահատուկ էր 1913 թվականը, երբ աշխարհասփյուռ հայությունը
նշում էր հայ գրի 1500-ամյա և հայ տպագրության 400-ամյա հոբել-
յանները (հայտնի պատճառներով՝ իրական հոբելյանական թվա-
կանից (1912 թ.) մեկ տարի հետո): Արևմտահայ իրականության
մեջ դրանք մեկ այլ ցնծությամբ և ոգևորությամբ են տոնվել: Դրա
վկայությունն են 1913 թ. հոկտեմբերին արևմտահայ մամուլի էջե-
րում ամփոփված հրապարակումները: Անկախ կուսակցական
պատկանելությունից՝ արևմտահայ պարբերականները բացա-
ռիկ դեր են հատկացրել այս երկու կարևոր իրադարձություննե-
րին հայ կյանքում: Արևմտահայ մամուլի ներկայացուցիչներից
շատերը այդ հոբելյանների առիթով հրատարակել են դրանց
նվիրված բացառիկ համարներ: Բերենք օրինակ: «Հայ գրի տոնը»
վերնագրով խմբագրականում «Շանթ» հանդեսի աշխատակից-
ները մեծ պատիվ էին համարում, որ իրենց հրապարակումնե-
րով մասնակցում էին այդ կրկնակ տոներին. «Բախտաւոր ենք,
որ կ'ապրինք այն տեսակ շրջանի մը մէջ՝ երբ բազմաթիւ ճակա-
տագրական մտահոգութիւններու եւ աղէտներու մէջէն առիթը

⁵³ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, 1981, էջ 880:

⁵⁴ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 124:

⁵⁵ Նույն տեղում, էջ 130:

կ'ընծայուի մեզի ազատօրէն փառաւորելու Հայ Գիրքը եւ Հայ Տպագրութիւնը»⁵⁶: «Հայ հորիզոնէն» բաժնում անդրադառնալով այդ հորէլյաններին՝ նշում էին, որ հայրենիքում և աշխարհի տարբեր անկյուններում հանգրվանած հայ ժողովրդի համար չի եղել մի տոն, որն այդքան միահամուռ խանդավառությամբ և հանդիսավոր պայմաններում տոնված լինէր: Թվում էր, թէ էլեկտրական ընդհանուր «հոսանք մը բոլոր հայ սրտերը թրթռացուց Հոկտ. 13-ին, և երկրագունդին և է անկիւնը, ուր 4 հայեր գտնուեցան, անոնք առանց դաւանանքի, սեռի, տարիքի ու դասակարգի խտրութեան, իրարու քով եկան»՝ հայկական քաղաքակրթության ռահվիրաների հիշատակը երախտագիտորէն հարգելու նպատակով⁵⁷:

Իզմիրի «Աշխատանք» պարբերականը «Համագային մեծ տոն» վերնագրով խմբագրականում գրում էր հետևյալը. «Գրերու գիւտն ու տպագրութեան մուտքը հայերուն մէջ այն երկու ոսկեձոյլ դարագլուխներն են, որոնք Ազգը գօտեպնդում են անջնջելի գորութեան մը գրահներով՝ իր աչքերուն մէջ վառելով ապրելու անշիջանելի աստղը»⁵⁸:

Իր հերթին Վանի «Աշխատանք» շաբաթաթերթը «Մեր գոյության իրավունքը» խմբագրականում հայ գիրն ու տպագրությունը համարում էր հայ կյանքի խորհուրդը և այն անսասան պատվանդանը, որի վրա հենվելով՝ հայ ժողովուրդը գոյատևել էր դարերի ընթացքում: Դրանք հայ ժողովրդի առջև նորանոր ուղիներ բացող լուսավոր ջահեր էին, որոնք արտացոլում էին ազգային կյանքի լավագույն իդեալները: «Հայ գրի ու տպագրութեան շնորհիվ մենք ձեռք ենք բերել մեր ազգային գոյութեան իրավունքը», - գրում էր պարբերականը⁵⁹: «Հայ տպագրությունը՝

⁵⁶ «Շանթ», Կ. Պոլիս, 1913, թիվ 48, էջ 1:

⁵⁷ Նույն տեղում, 1913, թիվ 49, էջ 12:

⁵⁸ «Աշխատանք», Իզմիր, 1913, թիվ 32, էջ 2:

⁵⁹ «Աշխատանք», Վան, 1913, թիվ 48, էջ 1:

հիմնաքար հայ նոր պատմության» վերնագրով հոդվածի հեղինակ Վանիկը համոզված էր, որ հայ ժողովրդի՝ իբրև ազգություն գոյատևման ամենամեծ գործոնը տպագրությունն էր. «Առանց տպագրության անկարելի կ'ըլլար ազգային վերածնունդը: Շարունակենք պահպանել և զարգացնել այդ թանկագին աւանդը»⁶⁰: Հմայակ Սանուկյանը «Ազգայինն ու միջազգայինը» վերնագրով հոդվածում պատահական չէր համարում հայ գրերի գյուտի 1500-ամյակի համընկնումը հայ տպագրության 400-ամյակի հոբելյանին: Նրա կարծիքով՝ հայ տպագրությունը նպաստել է ազգային և համաշխարհային մտքի սերտ զուգակցմանը⁶¹:

«Ուսանող» ամսաթերթը գրում էր, որ հայ գիրն ու դպրությունը հայ ժողովրդի փրկության միակ խարիսխն ու լույսն էին⁶²: «Երկունք» ամսաթերթի խմբագրակազմը համոզված էր, որ այդ 2 իրադարձությունը հայ մտքի և մշակույթի վերազարթոնքի տոներն էին⁶³:

«Ազատամարտ» օրաթերթը գտնում էր, որ հայ գրերի գյուտն ու տպագրությունը հայի մտածողությանն ու զգացումին տվել էին ձև և կերպարանք, իսկ հայի հոգուն՝ մարմին, դրանք դարձնելով սերունդների սեփականությունը: Հայ գրերն ու տպագրությունը հնարավորություն էին տվել հաղորդակցվելու համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին՝ այդպիսով նպաստելով հայ ժողովրդի զարգացմանն ու առաջընթացին⁶⁴:

1915-1918 թթ. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի հայահոծ բնակավայրերում գործող հայկական տպարանները դադարեցին գոյություն ունենալուց⁶⁵: Հայ ժողովուրդը վերապրեց

⁶⁰ Նույն տեղում, էջ 3:

⁶¹ Նույն տեղում:

⁶² «Ուսանող», 1913, Կ. Պոլիս, թիվ 7, էջ 7-15:

⁶³ «Երկունք», Կ. Պոլիս, 1913, թիվ 4-5, էջ 74:

⁶⁴ «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1913, թիվ 1156:

⁶⁵ www.genocide-museum.am

և կրկին հոգևոր-մշակութային վերելք ունեցավ՝ Հայաստանում և Միյուտքում:

1918 թ. Մուղրուսի զինադադարից հետո արևմտահայության փրկված բեկորները հիմնականում կենտրոնացան Կ. Պոլսում և իրենց ընձեռված հնարավորությունների շրջանակներում վերակազմակերպեցին ազգային-մշակութային կյանքը՝ հրատարակելով հայկական պարբերականներ:

Այսօր ստամբուլահայ գրահրատարակչական կյանքում կարևոր դեր է խաղում «Արաս» հրատարակչությունը: Այն զբաղվում է հայերեն գրքերի հրատարակմամբ և հայ գրականության՝ թուրքերեն թարգմանությամբ տպագրությամբ⁶⁶: Ներկայումս առաջնայինը ստամբուլահայ համայնքի շարունակականությանը և ապագային սպառնացող խնդիրներն են: Մինևույն ժամանակ ստամբուլահայ համայնքի այսօրվա գրահրատարակչական գործընթացը համեմատության եզրեր անգամ չունի մինչև 1915 թ. արևմտահայ գրահրատարակչական գործընթացի հետ:

ՎԱՆԻ «ԱՇԽԱՏԱՆՔ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1910 – 1915 ԹԹ.)

1910-1915 թթ. Վանում լույս է տեսել «Աշխատանք» գրական, քաղաքական և տնտեսական շաբաթաթերթը: Այն ՀՅԴ Վասպուրականի Կենտրոնական կոմիտեի օրգանն էր: Այդ մասին վկայում է Բոստոնի «Հայրենիք» ամսագիրը. «Վասպուրականի Հ.Յ.Դ. Կ.Կ.-ն սկսել էր հրատարակել Աշխատանք թերթը, որ լույս տեսաւ մինչև 1915 թ., յուլիսեան մեծ նահանջը, երբ ռուս զինուորները վառեցին Հ.Յ.Դ. Ժողովրդական Տունը, որտեղ գտնուում էր Աշխատանքի տպարանը»⁶⁷: ՀՅԴ հայտնի գործիչ Օննիկ Մխիթար-

⁶⁶ Մելքոնյան Ռ., «Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը)», Երևան, 2010, էջ 94:

⁶⁷ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1946, թիվ 5, էջ 89-90:

յանը «Աշխատանքը» համարել է «մէկը երկրի ամենէն կարեւոր կուսակցական թերթերէն»⁶⁸:

«Աշխատանքի» հիմնադիր խմբագիրը ՀՅԴ անվանի դեմքերից մեկն էր՝ Իշխան Միքայելյանը, ով հետագայում մշտապես (մինչև իր մահը) վերահսկել է շաբաթաթերթի խմբագրական աշխատանքները:

Իշխան Միքայելյանը (Վանի Իշխան, Նիկոլ Պողոսյան) ծնվել է 1883 թ. Շուշիում⁶⁹: Հաճախել է Շուշիի, ապա Երևանի թեմական դպրոցները: Գործել է Ալեքսանդրապոլի և Կարսի շրջանների ՀՅԴ շարքերում: Մարտական մկրտությունն ստացել է 1903 թ. Ներուզի խմբում⁷⁰: «Զգալին բանաստեղծ եւ հպարտ ռազմիկ՝ ան անպատուութիւն, բարոյական մահ կը համարէր մէկ օր ուշանալ Երկիր մտնելէ եւ սրբազան վրէժխնդրութեան ու իրական նահատակութեան նւիրելէ», - իր հուշերում Իշխանի մասին գրում էր Սիմոն Վրացյանը⁷¹: 1904 թ. Նիկոլ Պողոսյանն արդէն Իշխան անունով ՀՅԴ կողմից ուղարկվում է գործելու Վան-Վասպուրականում: «Հազիւ 21 տարեկան, յեղափոխական Իշխանը կը գծէ իր աշխատանքի ուղին, որ կը ձգուէր դէպի Վանի հարաւ-արեւմտեան լեռնաշխարհը՝ Լեռնապար»⁷²: Շուտով այդ տարածաշրջանում անգամ նրա անունից էր սարսափում թշնամին: «Իրական իշխան մըն էր իր Լեռնապարի շրջանին մէջ՝ հայ գիւղացիութեան սրտին մէջ հաստատած իր գահը: Ամենքը, հարազատ, թէ թշնամի՝ կ'ակնածէին անկէ: Ամենքը գիտէին, որ աւագակը անպատիժ չէր կրնար մնալ, ոչ ալ դաւաճանը կրնար չահաբեկուիլ Իշխանի թագաւորութեան սահմաններուն մէջ... Կախարդիչ հրապոյր ունէր անոր անձնաւորութիւնը, եւ կ'երգուէր ան

⁶⁸ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927, թիվ 3, էջ 82:

⁶⁹ www.anunner.com

⁷⁰ «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան», հ. Գ, էջ 404:

⁷¹ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 470:

⁷² Նույն տեղում, էջ 470:

հայ եւ քիւրտ ժողովրդական երգերուն մէջ», - այսպէս էին բնորոշում Ի. Միքայելյանին նրա ժամանակակիցները⁷³:

Իշխանը դեմ էր ֆիդայական խմբերի կազմալուծմանը երիտթուրքական հեղաշրջումից հետո⁷⁴: Նա շարունակել էր ստեղծել մարտական խմբեր՝ ձգտելով բարձրացնել հայության ինքնապաշտպանական ոգին:

Իշխան Միքայելյանը կարևոր ներդրում ուներ Վանի կրթական-մշակութային կյանքի առաջընթացի գործում⁷⁵: Նա Աղթամարի միջնակարգ դպրոցը վերածել էր ուսուցիչներ պատրաստող կրթօջախի: Այգեստանում հիմնել էր մանկական քառաձայն երգչախումբ: Նրա նախաձեռնությամբ ու ջանքերով էր բացվել Վանի «Աշխատանք» շաբաթաթերթի խմբագրությունը: «Իշխան ինքը խմբագրեց թերթը մէկ ամբողջ տարի: Խմբագրականներ, քաղաքական տեսութիւններ, թարգմանութիւններ, գրական քննադատական յօդուածներ, արձակ բանաստեղծութիւններ՝ բոլորի հեղինակը ինքն էր: Սեփական տպարան ձեռք ձգեց, աջակցութիւն ցոյց տուաւ Աշխատանքի կուսակցական-ժողովրդական մեծ շէնքի կառուցման («Աշխատանքի տան»): Մեծ զարկ տուաւ Ազատութեան Լոյս մեծ գրադարանի կազմակերպման», - իր հուշերում այսպէս էր բնութագրել Իշխանին Օսնիկ Մխիթարյանը⁷⁶:

«Աշխատանքի» խմբագրությունը և տպարանը գտնվում էին Այգեստանի «Թութլուղի փողան» թաղամասում, «Աշխատանքի տուն» կոչվող շէնքում⁷⁷:

Վանի Իշխանն «անվերջ կարդացող մըն էր, պրպտող մը, ուսումնասիրող մը, ինքնատիպ եզրակացութիւններ հանող մը:

⁷³ Նույն տեղում, էջ 472:

⁷⁴ Տասնապետեան Հ., «Հ.Յ.Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհանուր ժողովը (1890-1924)», Աթէնք, 1988, էջ 241:

⁷⁵ www.mayrhayastan.am/.../ishxanfidayi.html

⁷⁶ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1927, թիվ 3, էջ 82-83:

⁷⁷ Փափագեան Վ., «Իմ յուշերը», հ. 2, Պէրթոս, 1952, էջ 288:

Դեռ պատանի հասակին՝ հրատարակած էր ինքնուրոյն բանաստեղծութիւններու հատորիկ մը, ուր զգալի էր տաղանդն ու ինքնատիպութիւնը: Ազդել, թելադրել, ներշնչել՝ Իշխանի խօսքի ու գրչի ակներեւ առանձնայատկութիւնն էր»⁷⁸: «Իշխանը մուտք ունէր թիւրքական քլիւսները: Միակ մարդն էր մեր մէջ, որ գիտէր, պաշտօնականէ դուրս, կապ պահել բոլոր խաւերու հետ՝ մէջը լինելով եւրոպացիներ: Կը վայելէր յանդուգն և անվախ մարդու յամբաւ: Իր բարեկամութիւնը կը փնտռուէր», - հուշերում գրել էր Վահան Փափագյանը⁷⁹: Հնայակ Մանուկյանը վկայել էր հետևյալը. «Այնքան անակնկալօրէն ու այնքան վայրկենական կատարուած Իշխանի եղեռնական մահը ստեղծեց պահանջուած մոմէնտը: Ամէնքը՝ յեղափոխականն ու պահպանողականը, ծերն ու երիտասարդը, կուսակցականն ու չէզոքը, կինն ու երեխան, բոլորը մէկ վայրկեանի մէջ, հոգեբանական զսպանակի մը ուժով զգացին, որ զէնք ի ձեռին պաշտպանուելէ զատ՝ չկայ ուրիշ միջոց: Իշխանի մահը եղաւ շաղկապող, զօդող օղակը հասարակական բոլոր ուժերու, հանրային բոլոր կարողութիւններու: Անիկա մեր դիմադրական ուժի բոլոր ակերը բացաւ մէկ կէտի վրայ: Իշխանի մահը եղաւ երկաթեայ այն հարուածը, որ դարբնեց բոլոր կարողութիւնները, անոնցմէ ստեղծեց կամք մը հզօր՝ Յեղի գոյութիւնը պահելու և յաղթանակելու անյողողող որոշումով մը»⁸⁰:

Իշխան Միքայելյանը Վանում բեղուն գործունէություն է ծավալել մինչև իր նահատակության օրը՝ 1915 թ. ապրիլի 3-ը⁸¹:

1910-1913 թթ. «Աշխատանքը» փոխեփոխ խմբագրել են Արմենակ Մաքսապետյանը (Մ. Հ.- նա 1910-1912 թթ. միաժամանակ եղել է պարբերականի տնօրէնը), Բարունակ Կապուտիկյանը և

⁷⁸ Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 475:

⁷⁹ Փափագեան Վ., նշվ. աշխ., էջ 293:

⁸⁰ www.azator.gr/yushatetr/2589-1883-1915

⁸¹ Ներսիսյան Ա., «Իշխան (Նիկողայոս Պօղոսեան-Միքայելեան)» («Դրօշակ», Երևան, 2000, թիվ 6, էջ 20-24):

Հայկակ Կոստյանը: 1913-1915 թթ. (մինչև 1915 թ. հուլիս ամիսը կամ մինչև վերջին համարը) շաբաթաթերթի գլխավոր խմբագիրը Հմայակ Մանուկյանն էր: 1911-1915 թթ. պարբերականի խմբագրական քարտուղարը և օգնական խմբագիրը Օննիկ Մխիթարյանն էր: Նա մինևույն ժամանակ Վանի «Ազատության լույս» գրադարանի վարիչն էր⁸²:

«Աշխատանք» շաբաթաթերթը թեև ՀՅԴ պարբերական մամուլի տեղական օրգանն էր, բայց չունեւր խիստ ընդգծված կուսակցական դիմագիծ: Այն լուսաբանում էր Վանի վիլայեթի հիմնախընդիրները, ներքին կյանքն ու առօրյան, նաև փորձում էր համախըմբել ընթերցողներին՝ հանուն հայապահպանության, ազգային նպատակների իրականացման: Սկզբնական շրջանում, ինչպես բնորոշ էր Թուրքիայում այդ ժամանակաշրջանում հրատարակվող հայկական թերթերին ու ամսագրերին, «Աշխատանքը» տարված էր համընդհանուր բարեփոխումների հովերով: Սկսած 1913 թվականից՝ շաբաթաթերթի խմբագրակազմն աստիճանաբար հասկացել է, որ երիտթուրքական կառավարությունը շարունակում էր Արդուլ Համիդի հայասպան ու հակահայ քաղաքականությունը: «Աշխատանքը» տեղային խնդիրներ վերհանող պարբերականից աստիճանաբար վերածվել է համահայկական մտահոգություններով ապրող և շնչող շաբաթաթերթի: Քաղաքականապես հասունացել է և չի հավատացել թուրքական իշխանությունների երկդիմի քաղաքականությանը հայերի հանդեպ:

Հրատարակության վերջին ամիսներին «Աշխատանքը» դարձել է 1915 թ. Վանում տեղի ունեցած պատմաքաղաքական դեպքերի վավերագիր փաստաթուղթ: Շաբաթաթերթի էջերում «Օրը օրին» խորագրի ներքո արձանագրված են Վանի հերոսական ինքնապաշտպանությունը, վանեցիների հաղթանակը, քաղաքի ինք-

⁸² Տե՛ր Խաչատուրեան Ա., «Հայ մամուլի մատենագիտական գործեր», Պէրուօ, 2014, էջ 610-614:

նավարությունը, Վանի վերջին օրերի իրադարձությունները և այլն:

«Աշխատանքը» հրատարակության տարիներին պաշտպանել է ազգերի իրավահավասարության սկզբունքը, որը հատկապես 1908-1909 թթ. տարվա համարում էր Թուրքիայում: Յուրաքանչյուր ազգ Թուրքիայում ուներ ազգային դիմագիծը պահպանելու սահմանադրական իրավունք, որն այդպես էլ մնում էր միայն թղթի վրա: «Մեր նպատակը» խմբագրականում շաբաթաթերթը գրում էր, որ կողմնակից էր «լայն ազգայնական իրաւունքի տեսակետին», բայց միանգամայն հակառակ էր «նեղ ազգայնական ու կրօնական ձգտումներին, որոնք կը հասնին շովետութեան: Թերթը հնարավորութեան ոյժերի ու պայմանների թոյլատրութեան չափով պիտի արձագանք տար հասարակական բոլոր խնդիրներին՝ միշտ առաջադիմական, լայն-ազատական տեսակետից առաջնորդելով»⁸³: «Աշխատանքը», սակայն, հավակնոտ չէր և համոզված էր, որ չէր կարող նպաստել իր հրապարակումներում, հողվածներում ու վերլուծականներում բարձրացված խնդիրների լիարժեք լուծմանը, քանի որ «գավառական թերթից այդքան պահանջելն անելորդ էր»: Շաբաթաթերթը համոզված էր, որ անկախ ամեն ինչից՝ ամեն պարագայում հավատարիմ էր մնալու դավանած սկզբունքներին՝ «հաւատալով, որ պետական, հասարակական կազմաւորման, նոր մտածողութեան մէջ կաւելացնի մի հաստատուն անկիւնաքար»⁸⁴:

1910 թվականին «Աշխատանքը» գրում էր, որ իբրև գավառական պարբերական ինքն անկարող էր խորությամբ ներկայացնել Բալկանյան կնճիռն ու Հայկական հարցի զարգացումները, բայց նաև ինչ-որ չափով պաշտպանում էր Բալկանյան ժողովուրդների անկախացման ձգտումների նկատմամբ թուրքական

⁸³ «Աշխատանք» շաբաթաթերթ, Վան, 1910, թիվ 1, էջ 6:

⁸⁴ Նույն տեղում:

պետության մոտեցումը: Այսինքն՝ «Աշխատանքը» զգուշավոր քաղաքականություն էր որդեգրել Հայկական հարցն արժարժե-լու առումով: «Վերջին ժամանակներս Բալկաններից ապստամ-բությունների լուրեր ենք ստանում: 100 տարուց ավել է այդ ճգնաժամն ու հարստահարած ազգերն ու ժողովուրդները զենքի ու ապստամբության միջոցին են դիմում, յանուն իրենց իլլաժնու բռնաբարւած իրաւունքի... Եւ այդ բոլորը մի այնպիսի ժամա-նակ, երբ մենք կարօտ ենք խաղաղութեան, նւիրելու ստեղծա-գործիչ աշխատանքի և շինիչ գործի», - գրում էր «Բալկանյան կն-ճիռներ» հոդվածի հեղինակը՝ Անցորդը⁸⁵: Հողվածագիրը հավա-տում էր Հայկական հարցի լուծմանը՝ համաթուրքական բարե-փոխումների շրջանակներում. «Կամաց-կամաց կը վերանան այդ ցնցող ու Թուրքիայի նօրմալ զարգացմանը խոչընդոտ հան-դիսացող երեւոյթները, եթէ առաջնորդ են միայն Օսմանեան հայրենիքի, նրա բաղկացուցիչ մասնիկների առաջդիմութեան, վերջնական երջանկացման տեսակէտից»⁸⁶: Այս մոտեցումն էր ընկած «Աշխատանքի» քաղաքական վերլուծությունների և ներ-քին ու արտաքին տեսությունների հիմքում: Այն բխում էր ՀՅԴ մարտավարությունից և Արևմտյան Հայաստանի համար կու-սակցության որդեգրած ծրագրային դիրքորոշումից: Մինչև արևմտահայերի զանգվածային ջարդերն «Աշխատանքը» շարու-նակում էր չդավաճանել կուսակցական պատգամներին և դրան-ցից բխած սեփական տեսակետներին:

Սկսած 1913 թվականից, երբ երիտթուրքական կառավա-րությունն ավելի պարզորոշ էր դարձրել իր հավատարմությունը նախկին վարչակարգերի վարած քաղաքականությանը մասնա-վորապէս հայ ժողովրդի նկատմամբ, «Աշխատանքն» ավելի հա-ճախ է հանդես եկել ի շահ և ի պաշտպանություն սպանվող, թա-

⁸⁵ Նույն տեղում, 1910, թիվ 3, էջ 14:

⁸⁶ Նույն տեղում, էջ 15:

լանվող, հողագուրկ դարձող իր ազգակիցների: Չէր ընդունում խորհրդարանական ընտրությունների պետական քաղաքականությունը, ըստ որի ընտրական օրենսդրության մեջ կատարված փոփոխություններով արևմտահայերին չէր թույլատրվում իրենց թվին համեմատ ունենալ պատգամավորներ: «Աշխատանքը» գրում էր, որ Թուրքիայի նահանգային նոր օրենքը բացառում էր ազգային փոքրամասնությունների քաղաքացիական իրավունքները. «Օսմանացի անորոշ յորջորջումը կը փոխարինէ ազգութեանց կոչումին: Իրաւանց ընդարձակում իբրեւ «չարագուշակ» հասկացողութիւն աղճատուած է, և փոխանակ տեղական ընտրովի մարմինները իրաւանց այդ ընդարձակումէն օգտուելու, ընդհակառակ, ամեն բան վերապահուած է նշանակովի պաշտօնեաներուն»⁸⁷:

Մի շարք հոդվածներում «Աշխատանքը» պարզաբանում էր, թե ինչու Վանի հայ ընտրագանգվածը չէր մասնակցել Վանի վիլայեթի նահանգային ժողովի անդամների ընտրությանը: Հիմնական պատճառն այն էր, որ Թուրքիայի նահանգային նոր օրենքը դեմ էր հատկապես հայ ժողովրդի շահերին: Բացի այդ՝ շարաթաթերթը նշում էր, որ Թուրքիայի ազգային փոքրամասնությունները թեև պայքարում էին իրենց ազգային դիմագծի պահպանման համար, բայց նրանց ցանկանում էին դարձնել մեկ «ազգություն»՝ օսմանացի⁸⁸: 1913 թ. խորհրդարանական նոր ընտրությունների առիթով Պատրիարքարանը կուսակցությունների, հարանվանությունների հետ համախորհուրդ կառավարությանն էր դիմել թագրիքով, որով պահանջում էր ապահովել հայերի համար համեմատական և ազգային ընտրությունների իրավունք: Խնդրանքը մերժվել էր: «Կառավարութեան ընթացքը նախատինք մըն է ուղղուած ամբողջ հայ Ազգի հասցէին և անոր

⁸⁷ Նույն տեղում, 1913, թիվ 30 (126), էջ 1:

⁸⁸ Նույն տեղում, 1913, թիվ 29 (125), էջ 1-2:

արդար ու յառաջադէմ պահանջներուն... Հայ Ազգը հաստատապէս որոշած է ապրիլ և չնահանջել իր պահանջներէն, ո՛չ մերժումներու և ո՛չ ալ ջարդի ու կոտորածի սարսափներուն առջեւ, եւ ապրիլ ուրիշներու հետ հաւասար իրաւունքներով և հաւասար պարտականութիւններով: Անոր պահանջներէն եւ ոչ մէկը հակառակ եղած է օսմանեան պետութեան շահերուն և կամ դպած է սահմանադրութեան սկզբունքներուն: Ընդհակառակը, անոնք բոլորն ալ ուղղուած են դէպի մէկ նպատակ, այն է՝ հայ Ազգի բարգաւաճումը օսմանեան բարգաւաճ Հայրենիքի մէջ»,- գրում էր «Աշխատանքը»⁸⁹: Անդրադառնալով այս դեպքերին՝ կարծում էր, որ Թուրքիայում անհրաժեշտ էր ազգային համերաշխություն⁹⁰: «Աշխատանքը» ներկայացնում էր այդ համերաշխությանը խանգարող 2 պատճառ.

- «Թուրքերը կը մեղադրէին Հայերը, թէ ասոնք քաղաքական անջատման նպատակ ունին, թէ կը ձգտեն օտար տիրապետութեան մը ենթարկելու Հայաստանն ու իր սահմանակից գաւառները,

- Հայերը տակաւին կամբաստանեն Թուրքերը, թէ ասոնք պարզապէս ջնջել կուզեն Հայ ցեղը Փոքր Ասիայէն, միակրօն և ապա տակաւ միատարր պետութիւն մը ձուլելու համար ոչ հայ տարրերէն»⁹¹:

«Աշխատանքը» գրում էր, որ հայ ժողովուրդը ոչ թէ ուզում էր անջատվել Թուրքիայից, այլ ցանկանում էր իր «բնակած հայրենիքին մէջ քաղաքական ազատ կարգեր ստեղծել, ո՛ւն է պայմանով չկաշկանդուած անկախ զարգացում մը իրենց ազգային մշակոյթին և տնտեսական կեանքին»⁹²:

⁸⁹ Նույն տեղում, 1913, թիվ 5 (151), էջ 1:

⁹⁰ Նույն տեղում, 1913, թիվ 4 (150), էջ 1:

⁹¹ Նույն տեղում, 1913, թիվ 33 (129), էջ 1:

⁹² Նույն տեղում:

1913-1914 թթ. «Աշխատանքը» քննարկման առանձին նյութ էր դարձրել հայկական վեց նահանգների հանդեպ եվրոպական վերահսկողության հաստատման հարցը: Թերթը վերլուծում էր Հայկական հարցին առնչվող բոլոր իրադարձությունները՝ ներկայացնելով Թուրքիայում այդ կապակցությամբ ծավալված քննարկումներն ու հայ և թուրք հասարակությանը մտահոգող խնդիրները: Այն տեսակետն էր առաջ քաշում, որ Թուրքիան «մերժողական ու խիստ լեզու՝ կը բանեցնէ Եւրոպայի առաջարկած ծրագիրի ու քօնթօլի սկզբունքին դէմ: Օսմանեան կառավարութիւնը որոշած է բացարձակապէս մերժել ու և է ծրագիր կամ առաջարկ, որ կը ձգտի քօնթօլ հաստատել իր բարենորոգչական գործառնութեանց վրայ և դպչիլ իր անկախութեան»⁹³: Միննույն ժամանակ հայերի վստահությունը թուրքական պետության նկատմամբ կվերականգնվեր, եթէ կամ Եվրոպայի վերահսկողություն հաստատվեր Թուրքիայի նկատմամբ, կամ իրագործվեր փոխադարձ վերահսկողություն հայ ժողովրդի և թուրքական իշխանությունների կողմից: Սա էր «Աշխատանքի» մոտեցումը: Ազգային համերաշխության հասնելու նպատակով շաբաթաթերթը պահանջում էր հաշվի առնել մի շարք առաջարկներ, որոնց իրականացումը կբացառեր եվրոպական վերահսկողությունը թուրքերի վրա: Ստորև ներկայացնում ենք դրանք առանց փոփոխությունների, որպեսզի հստակ պատկերացում կազմենք շաբաթաթերթի քաղաքական ծրագրի մասին:

«Ահա քանի մը պահանջներ.

- ազգային համեմատական ներկայացուցչություն Խորհրդարանին և նահանգային ժողովներուն մէջ,
- հայ նահանգներու սահմաններու սրբագրում, զատելով անոնցմէ քրտաբնակ կէտերը կամ բուն Քիւրտիստանին վերաբերող գաւառները, որպէսզի իւրաքանչիւր ցեղ իր բարքերուն և

⁹³ Նույն տեղում, 1913, թիվ 4 (150), էջ 2:

իր քաղաքակրթության աստիճանի և պետքերուն համեմատ կարենայ առաջդիմել՝ առանց խոչընդոտ եւ արգելք դառնալու իր դրացիին,

- հայ նահանգներուն մեջ հայ ժողովուրդի թիւն համաձայն հայ տարրին մասնակցունը կառավարական բոլոր ճիւղերուն՝ դատարան, ժանտարմ, ոստիկանութիւն, զօրք, պաշտօնէութիւն,

- Հայաստանի զօրքը խաղաղ ժամանակ չպիտի հանւի հայ գաւառներէն դուրս: Պատերազմի ատեն կամ ո՛ր և է առթիւ հայ զինուորներու քանակը Հայաստան գտնուող զինուորական ուժերու 100-ին 50-էն նւազ չպիտի լինի»⁹⁴:

Հիշատակենք ևս մեկ հոդված՝ «Գրական ակնարկներ» վերլուծականը: Հոդվածագիր Օրիոնի կարծիքով՝ 1908 թ. հուլիսի 10-ի պատմական մեծ օրվանից արևմտահայերի համար վերածննդի շրջան էր սկսվել բոլոր բնագավառներում, օրինակ՝ մամուլի և գրականության ասպարեզում. «Այլևս հնարաւոր է միտքը, գրականութիւնը մօտեցնել ժողովրդին, այնտեղից ստանալու կենսական սնունդը՝ լինելով հայելի թիւրքահայերիս հասարակական-մտաւորական կեանքին: Մինչեւ հոս եւրոպական մտքերի վերջնական յաղթանակունը, Ասիական Տաճկաստանում մենք կուզենք ապրել իբրեւ մարդ եւ իբրեւ մի հին կուլտուրա ունեցող ազգութիւն: Պիտի հիմնապէս ըմբռնել նոր ժամանակները»⁹⁵:

Ամեն տարի հուլիսի 10-ին «Աշխատանքը» գրում էր առաջնորդող հոդվածներ, որոնցում չէր կորցնում Հայկական հարցի լուծման չարդարացված հույսը, որը մարում էր օրեցօր, բայց չէր զգաստացնում ոչ արևմտահայ կուսակցություններին, ոչ էլ շաբաթաթերթի աշխատակազմին: Դրանցից մեկում «Աշխատանքը» նշում էր, թե 3 տարի էր անցել, ինչ քանդվել էր «Օսմանեան

⁹⁴ Նույն տեղում, 1913, թիվ 34 (130), էջ 3:

⁹⁵ Նույն տեղում, 1910, թիվ 1, էջ 16:

պասթիլը», ինչ «Համիտեան բռնութիւնը վախճան էր գտեր»: Ու թէն «նոր կեանքի ծիլերը կը նշմարին», սակայն հայերը հուլիսի 10-ի տոնին մասնակցում էին հիասթափված ու սրտաբեկ. «Եթէ որեւէ ուրախութիւն զգանք, ուրեմն ինքնախաբեութեամբ ենք զբաղում: Բայց մենք լաւատես ենք և ասում ենք. «Կեցցէ Յուլիս 10-ը, կեցցէ Ազգերու իրաւահասարութիւնը»»⁹⁶:

Անկախ պատմաքաղաքական հանգամանքների թելադր-
րանքով կանխորոշված մոտեցումից՝ «Աշխատանքը» «Պետա-
կան կյանք» խորագրի ներքո, հիմնադրման օրվանից մինչև մեզ
հասած վերջին համարները, հանդես է եկել պետական կառա-
վարման համակարգում եղած բացերի, թերությունների և սխալ-
ների, որևէ հարցի կամ որևէ ազգի նկատմամբ դրսևորվող կան-
խակալ կամ ծրագրված անարդար քաղաքականության դեմ:
«Խօսելով Իթթիհատի (կամ ներկայ կառավարութեան) մասին,
իբրև միակ անկեղծ սահմանադրական և հայրենասէր տարր
թուրքերի մէջ, չենք կարող չը մատնանշել այն բոլոր ծրագրային
պակասութիւնները, որոնց պատճառով այդ կուսակցութիւնը չը
կարողացաւ լիովին կատարել իր պատմական միսիան», - գրում
էր Անցորդը «Բալկանյան կնճիռներ» հոդվածաշարում⁹⁷:

Թերթի վերլուծականներին բնորոշ է այն, որ եզրահանգում-
ներն արվում էին տեղային (Վանի և Վանի վիլայեթի) բնույթի
խնդիրների ածանցմամբ, համադրմամբ և ընդհանրացմամբ: Բե-
րենք օրինակ: Վերոհիշյալ շարքի պատասխանատու Միրապոն
հոդվածներից մեկում թէն անդրադառնում էր թուրքերի տեղա-
կան դատարանների գործունեությանը, բայց, ընդհանրացնելով
դրանցում առկա հիմնահարցերը, պահանջում էր կառավարութ-
յունից գտնել ընդհանրական լուծում: Նա փաստում էր այն, որ
քայքայված տնտեսություն ունեցող Թուրքիայում նյութապես և

⁹⁶ Նույն տեղում, 1911, թիվ 23, էջ 2:

⁹⁷ Նույն տեղում, 1911, թիվ 7, էջ 15:

բարոյապէս միշտ տուժել էին ծայրագավառները. «Հոն կապրին ժողովուրդները՝ գրեթէ բաղդին թողւած, հոն ժողովուրդը ստրուկ է եւ ո՛չ ազատ քաղաքացի»⁹⁸: Հողվածագիրը հանդէս էր գալիս դատարանների կայացրած անարդար վճիռների դեմ և գտնում էր, որ հարկավոր էր բարեխղճությամբ վարել դատական գործերը՝ առանց կրոնական, ազգային կամ այլ կարգի խտրականությունների: «Աշխատանքն» անգամ բաց նամակ է հղել Վանի վերաքննիչ աստանի ընդհանուր դատախազ Խայրե-տիին, որտեղ քննադատել է նրա ղեկավարած հաստատության աշխատանքը և հայերի հանդէպ եղած ապօրինություններն է թվարկել: Նշվում էր, որ մեկ տարուց ավել էր, ինչ ձգձգվում էր ալջավազցի 6 հայի սպանության առիթով սկսված դատական գործընթացը: Այն դեռ «կ'սպառնայ մեկ տարիի չափ ալ ձգձգել. ինչո՞ւ է ձգձգում կամ ինչո՞ւ Անուշաւանի եւ Մարգիսի դատը 6 ամիսէ ի վեր քնանալու դատապարտուած է»⁹⁹:

Պետական կյանքում կարևոր դեր ու դիրք ունեցող դատարանները վերածվել էին քարացած հաստատությունների, որոնք չէին վայելում ոչ միայն հայ, այլ ընդհանրապէս թուրքահպատակ բոլոր ժողովուրդների վստահությունը. «Քանի՜ քանիներ՝ ամիսներ եւ գուցէ տարիներ շարունակ մաշեր են այդ հաստատութեան շէմքերը՝ իրենց հալալ իրաւունքը վաստակելու համար և դուրս ելած են սգալով»¹⁰⁰: Բարեփոխումների ճանապարհը «բռնած» թուրքական պետությունը պետք է արմատապէս լուծում տար տարաբնույթ խնդիրներին: Բռնութեան շրջանի դատարանները շաբաթաթերթը բնորոշում էր մեկ բառով՝ կամայականություն, բայց «մի թէ այդ թոյնը այժմ էլ պետք է թունաւորէ մեր պետական օրգանիզմը: Ո՞ւր է չարիքի արմատը: Կա՛մ

⁹⁸ Նույն տեղում, 1910, թիվ 2, էջ 6:

⁹⁹ Նույն տեղում, 1910, թիվ 5, էջ 9:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 5:

գործ, կա՛մ հրաժարական», - այսպես էր ամփոփում իր վերլուծությունը Միրապոն¹⁰¹:

Կենտրոնական կառավարությունն էր չարիքների արմատը. սա էր շաբաթաթերթի հիմնական եզրակացությունը: Եթե Թուրքիայի վիլայեթների պաշտոնատար անձինք (օրինակ՝ Վանի բոլոր կաղաները, նահյանները, գայմագամները, մյուստորները, ժանդարմները) չէին վայելում կառավարության վստահությունը, էթե նրանք «անկարող էին ու ապիկար, ինչո՞ւ համար կեղրոնական կառավարութիւնը չէ՛ր բռնում նրանց թևից, չէ՛ր շարտում դուրս կառավարական օղակից, որպէսզի ո՛չ վարկաբեկէին կառավարութեանը, ո՛չ խաբէին իրանք իրանց և թէ ժողովուրդին»¹⁰²: «Ավագակությունները» կոչվող խմբագրական-հոդվածներից մեկում բերվում էին նաև ասվածն ապացուցող թվային տվյալներ: 1910 թ. դրությամբ միայն Վանի նահանգը ժանդարմներին պահելու համար հատկացնում էր 80.000 լիրա, բայց թե՛ այս վիլայեթում, թե՛ Թուրքիայում ընդհանրապես շարունակվում էին անօրինությունները: «Աշխատանքը» հարց էր ուղղում կառավարությանը. «Եթէ 80.000-անոց ժանտարմերիան անկարող է մի քանի տասնեակ աւագակները ոչնչացնելու, ապա ուրեմն ի՞նչն է արդարացնում նրանց գոյութիւնը»¹⁰³: Շաբաթաթերթը նման գործելակերպն որակում էր որպես պետական ոճիր: Պարբերականի կարծիքով՝ իրավիճակից դուրս գալու ելքը ավագակների շահույթից իրենց բաժինն ունեցող և կաշառակեր պաշտոնյաների փոխարեն պետական մտածողության տեր մարդկանց պաշտոններ տալն էր: Իհարկէ, սա խոցելի տեսակետ էր, քանի որ որոշ չափով անտեսվում էր հայերի հանդէպ պետական գրեթէ բոլոր կառույցների և օղակների կողմից իրագործվող հայահալած ծրագիրը: «Պետական կյանք» խորագրի

¹⁰¹ Նույն տեղում, էջ 7:

¹⁰² Նույն տեղում, 1910, թիվ 3, էջ 3:

¹⁰³ Նույն տեղում, էջ 4:

մեկ այլ հրապարակման մեջ «Աշխատանքը» բերում էր պետական գանձարանի գումարների աննպատակահարմար իրացման փաստեր: Խոսքը մասնավորապես վերաբերում էր հանրագուտ շինությունների կառուցման կամ վերանորոգման աշխատանքների համար պետությունից հատկացվող գումարներին: Կոնկրետ նշվում էր, թե պետական այս օղակի «յանցանքը աւելի մեծ էր», որովհետև Վանի վիլայեթում չէին բարեկարգվում, չէին վերանորոգվում ճանապարհները, կամուրջները և «վերջապես Խառակոնիս ու Խորգոմ եւ ընդհանրապես ծովափնեայ և լճափնեայ գիւղերը»¹⁰⁴: Այդ բնակավայրերի բնակչությունն ստիպված լքում էր իր տուն ու տեղը: Պատճառների թվում «Աշխատանքը» նշում էր կամ «ջրաբշաւէն ազատուելու» հանգամանքը, կամ անջրդի ու ջրագուրկ դարձած գյուղերում ապրուստի բացակայությունը, կամ գրում էր, թե «ծովը կը լափէ գիւղի արօտատեղիները և անասունները կը մնան առանց խոտի»: Կամուրջների քանդվելու հետևանքով անանցանելի էին դարձել ճանապարհները և անհնար էր ապրանքափոխադրում կատարել: Վատացել էին փոստային փոխանցումները: Պատճառների շարքում շաբաթաթերթը հիշատակում էր անտառներից ծովափ կամ ծովափնյա գյուղեր գնացող կանոնավոր ճանապարհների չգոյությունը: Դրանով էր պայմանավորված այն, որ փայտը չէր բավարարում ժողովրդի կարիքները: «Աշխատանքը» վկայակոչում էր, որ կամուրջների և ճանապարհների շինարարության համար պետությունը Վանի վիլայեթին 1910 թվականին հատկացրել էր 15.000 դուրուշ: Գումարը փոխանցվել էր տեղական գանձարանին: 9 ամիս անց պարզվել էր, որ կառուցվել էր ընդամենը հողե նավահանգիստ, որը մեկ տարի անց չէր ծառայելու իր նպատակին, քանզի ջուրն այն քանդելու էր շատ շուտով: Այդ ձեռնարկի վրա ծախսվել էր 1200 ոսկի: Ստացված բողոքները լուծելու հա-

¹⁰⁴ Նույն տեղում, 1910, թիվ 3, էջ 5:

մար կազմված վերաքննիչ մարմնի աշխատանքների վրա լրացուցիչ ծախսվել էր 768 ոսկի, որը նույնպես շաբաթաթերթը համարում էր «ջուր ձգած ոսկի», իսկ Թուրքիայի հանրօգուտ շինությունների հաստատության, ինչպես և կառավարական մյուս հաստատությունների գործունեությունը՝ հանցավոր և դատապարտման արժանի¹⁰⁵: «Ավագակությունները» վերնագրով հաջորդ խմբագրականում «Աշխատանքը» գրում էր, որ կառավարությունը «աչք է գոցում» իր աշխատակիցների գործած անարդարությունների վրա. «Վանի պաշտօնէութեան հարիւրին 70-ը «մարհամաթի» կապերի վրայ է հիմնւած: Պաշտօնեան աւագակ է դառնում, երբ դադարում է իւր պաշտօնին մօտենալ բարեխղճութեամբ: Կառավարական շրջանակում տիրում է կեղծիքը, պաշտօնի անբարեխղճութիւնը: Ահա թէ ո՛ւր է թաղւած շան գլուխը»¹⁰⁶: Շաբաթաթերթը կառավարությունից այս հանցավոր գործելակերպի համար հաշիվ էր պահանջում. «Թող արդարացնի ինքն իրան»¹⁰⁷:

«Աշխատանքի» քննադատությունները կառուցողական էին իրենց բնույթով և արվում էին հանուն համապետական շահերի և հանուն կառավարության վարած քաղաքականության համակարգային փոփոխությունների: Թեև շաբաթաթերթը գնահատում էր Վանի վիլայեթի մի շարք պաշտոնյաների կատարած լավ գործերը, բայց գրում էր, որ նրանց բացասական գործերի մասին լռելը թշնամություն էր երկրի նկատմամբ: «Աշխատանքն» անբարոյական էր համարում այն երևույթը, որ Թուրքիայում պետական բարձր պաշտոններ էին շնորհվում բոլորի կողմից իբրև հանցագործ ճանաչված մարդկանց: «Ներկայիս կառավարութիւնը դարձեալ ընդունում է ժողովրդին ինչպէս մի անկամ գերոյի հաւասար զանգւածի: Ինչո՞ւ չէ. դափն էլ ձերն է,

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 6:

¹⁰⁶ Նույն տեղում, թիվ 2, էջ 4:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 5:

գունան էլ, չալէ՛ք ու խաղէ՛ք: Աստված սիրէ՛ք, ո՞ւր են տանում մեր պաշտօնեաները. դէպի լեռնե՛ր», - այս եզրահանգմանն էր գալիս թերթը¹⁰⁸:

Իր էջերում «Աշխատանքը» պարբերաբար թուրքական կառավարությանը կոչ էր անում ժողովրդին չհասցնել այն վիճակի, որ նա ոտքի կանգնի և պայքարի իր իրավունքների պաշտպանության համար: Հակառակ դեպքում՝ թուրքական կառավարությունն ուժային կառույցներին պիտի ներգրավեր այդ գործընթացում. «Իթթիհատականները ստիպւած են նրանց հետ խօսել թնդանօթների լեզուով»¹⁰⁹: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար «Աշխատանքն» առաջարկում էր լուծել Թուրքիայի առջև ծառայած 3 խնդիր.

- կյանքի և ունեցվածքի ապահովագրության հարցը,
- հողային հարցը,
- ճանապարհային և այլ կարգի հաղորդակցության հարցը:

«Մեր երկրի բարելաւման ու առաջդիմութեան իրական պայմանները նախ՝ սոքա են», - գրում էր «Աշխատանքը»¹¹⁰: Չկա շաբաթաթերթի որևէ համար, որում չլինեն հրապարակումներ վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ:

Առանձնահատուկ էր «Աշխատանքի» մոտեցումը հողային հարցի նկատմամբ: Հողային հարցը շաբաթաթերթը ներկայացնում էր որպէս ոչ միայն արևմտահայերին մտահոգող կենսական նշանակություն ունեցող ազգապահպան կարևոր հիմնախնդիր, այլև որպէս մի հարց, որի լուծմամբ շահագրգիռ էին Թուրքիայում բնակվող բոլոր ազգերի հողի աշխատավորները: «Աշխատանքը» համոզված էր նաև, որ Թուրքիայում հողային հարցի լուծմանը սպասում էին առաջին հերթին հայ և քուրդ ժո-

¹⁰⁸ Նույն տեղում, 1910, թիվ 4, էջ 9:

¹⁰⁹ Նույն տեղում, 1911, թիվ 7, էջ 15:

¹¹⁰ Նույն տեղում, 1911, թիվ 21, էջ 4:

դովորդները¹¹¹: Բնորոշ է «Քրդերը» վերնագրով վերլուծականը: Այս հոդվածում այն միտքն է արտահայտված, որ ժողովուրդը ցանկանում էր ունենալ իր սեփական հողը և դրա վրա ստեղծված տնտեսությունը, հող, որի վրա կորացած իր աշխատանքի արդյունքը կարողանար վայելել: Մեջբերենք ասվածը հիմնավորող հետևյալ հատվածը նշված հոդվածից: «Հող պետք է նրան: Հող տե՛ք նրան: Ազգային հարցը ոչ մի ազգային բնոյթ չունի. դա ամբողջ Անատոլուի գրկածների, կեղեքածների հարցն է», - գրում էր շաբաթաթերթը¹¹²:

«Աշխատանքը» կառավարությունից պահանջում էր հիմնովին և արդարության սկզբունքով վերջնականապես լուծել այս հարցը. «Պետութիւնը պարտաւոր է կանգնել Թուրքիայի ողջ գիւղացիութեան հոծ մեծամասնութեան հողային իրաւունքի պաշտպանութեան կողմը, վերջ տալու այդ դարաւոր անարդարութեանը, որը շարունակուում է եւ հիմա իր ամենալայն չափերով: Կառավարութիւնը պիտի դիմի արմատական միջոցների, արդարութեամբ վերջ տալու խնդրին: Կարկատանները, ժամանակաւոր ձգձգումները անօգուտ և միանգամայն վտանգաւոր քայլեր են: Թող երբէ՛ք չը կարծի կառավարութիւնը, որ ժողովուրդը պիտի զիջի եւ կամ անվերջ խափւի իւր երկդիմի և անորոշ կարգադրութիւններից: Հողային հարցը գոյութեան ու մահւան խնդիր է, լինել, թէ չը լինելու հարց»¹¹³: «Հայ երկրագործին պահանջը» հոդվածում փաստվում էր, որ կառավարությունը 1908 թ. հուլիսի 10-ից հետո «ոչինչ ըրաւ» հողային հարցին լուծում տալու առումով: Հայ գյուղացիության մեծամասնությունն իր պատմական բնօրրանում գուրկ էր հողից. «Նորա հողերը, իւր հայրենական կալուածները բռնապետական օրերից ի վեր յափշտակուած են: Հո՛ղ...այս է մեր արդար պահանջը, այս է մեր

¹¹¹ Նույն տեղում, 1910, թիվ 1, էջ 13:

¹¹² Նույն տեղում:

¹¹³ Նույն տեղում:

բողոքի ձայնը այսօր էլ, վաղն էլ, եւ քանի դեռ մեր իրաւունքները, մեր հողերը կը յափշտակուին, քանի մեր սոված երեխաները, արիւն արցունքոտ աչերով ձեռք կը պարզեն դէպի մեզ եւ «հա՛ց» կը պօռան, մենք էլ կառավարութեան օձիքից պինդ բռնած պիտի պահանջենք մեր իրաւունքը - հո՛ղ: Տէ՛ք մեզ մեր արդար իրաւունքներից մեր հողը, որով ապրինք և ապրեցնենք»¹¹⁴:

«Աշխատանքն» արյունոտ վճիռ էր համարում 1911 թվականին Թուրքիայի խորհրդարանի կողմից ընդունված հողային օրինագիծը: «Այդ վճռով նոր բեժիւրը, նոր մարմինները քաղաքացիութիւն են տալիս Աբդուլ Համիտեան արնոտ քաղաքականութեան ու հիացմունք յայտնում նախկին բեժիմի Հայահալած ու Հայասպան ուղղութեան: Եւ մարդ ակամայ յոռետես է դառնում դէպի նոր կարգերի ներկայացուցիչները և կասկածում նրանց քաղաքական շիտակութեան, նրանց համասօսմանեան համերաշխութեան ու ազգային իրաւունքների մասին մեծահնչուն ճառերի վրայ», - գրում էր շաբաթաթերթը¹¹⁵: «Աշխատանքը» հետագա տարիների ընթացքում հողային հարցի հետ կապված մանրամասներ է տպագրել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում տիրող իրավիճակների մասին: 1913 թ. նույնիսկ կոչով դիմել է ընթերցողներին, որ նրանք տեղեկություններ ուղարկեն խմբագրություն՝ իրենց գյուղում կամ քաղաքում հողային խնդրի հետ կապված խնդրահարույց իրավիճակների մասին: Եվ թղթակցությունների հոսք է սկսվում: Դրանք հիմնականում զետեղվում էին «Հողային վեճ» կամ «Հողային հարց» խորագրերի ներքո: 1913 թ. նոյեմբերի 16-ին շաբաթաթերթը հայտարարում էր, որ շարունակելու էր տպագրել հայերից կատարված հողային բռնագրավումների վերաբերյալ բազմաթիվ փաս-

¹¹⁴ Նույն տեղում, 1911, թիվ 13, էջ 15-16:

¹¹⁵ Նույն տեղում, 1911, թիվ 4, էջ 2:

տեր, որոնք «ոչ կրնան հերքուիլ պաշտօնական կամ անպաշտօն հեռագիրներով և ոչ ալ աննպատակ յայտարարութիւններով»¹¹⁶:

Հոդային հարցին զուգահեռ՝ «Աշխատանքը» գրում էր կրթամշակութային խնդիրների լուծման անհրաժեշտության մասին: Թերթը կրթական թեմաներով հոդվածներում անդրադառնում էր Վանի վիլայեթի գյուղական դպրոցների խնդիրներին և կրկին հանդես էր գալիս դրանց լուծման առաջարկներով: Այդ հոդվածները զետեղվում էին «Կրթական գործը գավառներում մեջ» շարքում: Շարքի պատասխանատուն Բարունակն էր:

Շաբաթաթերթին հատկապես մտահոգում էր Վանի կեդրոնական վարժարանի ճակատագիրը, որը, չունենալով համայնքի ֆինանսական աջակցությունը, կանգնած էր փակվելու վտանգի առջև: Թեև «Աշխատանքն» ընթերցողներին տեղեկացնում էր, որ հեղաշրջումից հետո Թուրքիայում հնարավորություններ ստեղծվեցին և հիմնվեցին հայկական դպրոցներ, գրադարան-ընթերցարաններ, նաև նշում էր, որ մասնավորապես Վասպուրականում գործում էին 120-130 հայկական դպրոց, իսկ «Մշոյ դաշտում և Սասունում Առաջնորդարանի և Դաշնակցական ընկերների ջանքերով բացել էին 78 վարժարան և նոյն բանն էր նկատում նաև Կարինի, Տիարպեթիի, Վանայ և այլ վիլայեթներում», բայց վանեցիները չէին կարևորում երկրորդական դպրոցի անհրաժեշտությունը¹¹⁷: Թերթում բազմաթիվ հոդվածներ կան այս խնդրի առնչությամբ գրված: Դրանցում փաստերով հիմնավորվում էր երկրորդական վարժարանի անհրաժեշտությունը: «Կեդրոնականը պետք է ապրի» հոդվածում, օրինակ, հեղինակն՝ Ասպետը, հռետորական հարցեր էր տալիս. «Ո՞րն է աւելի անհրաժեշտ Վանի համար. Կեդրոնական երկրորդական վարժարանն մը, թե՞ վարժապետանոց մը, որը պիտի

¹¹⁶ Նույն տեղում, 1913, թիվ 3 (149), էջ 1:

¹¹⁷ Նույն տեղում, 1911, թիվ 10, էջ 6:

պատրաստի ուսուցիչներ»¹¹⁸: Հոդվածագիրը նաև փորձում էր պատասխանել այդ հարցերին. «Վարժապետանոցէն առաջ և նոյնիսկ անոր գոյութիւնը արդիւնաւոր դարձնող, նախակրթարաններ եւ երկրորդական դպրոց մը անհրաժեշտ է»¹¹⁹: Շաբաթաթերթն այնքան էր կարևորում կրթական հարցի լուծումն արևմտահայության համար, որ գրում էր, թե այդ հարցը «պէտք է որոշէ Թիւրքիոյ Բաղկացուցիչ մասերի դիրքը ընդհանուր Օսմանեան հայրենիքի մէջ: Ցաւալի է, որ Երիտասարդ Թուրք կառավարութիւնը կամաց-կամաց լայնացնելով ազգային խորթութեան անջրպետը, աջ ու ձախ ազգային պոռթկումների և հրաբխային ցնցումների դուռն է բանում եւ մասնավորապէս կրթական հարցի վերաբերմամբ»¹²⁰: 1913 թ. դեկտեմբերի 14-ին «Աշխատանքն» առաջարկում էր հետևել եվրոպական զարգացած այդ երկրների փորձին (դրանցում կային ազգային երկրորդական դպրոցներ.- Մ.Հ.) և հարց էր բարձրացնում՝ ստեղծել 2 ընկերություն, որոնք գումար կներդնեին Վանի Սանդուխտյան և Կեղրոնական վարժարանների կարիքները հոգալու համար: «Ժամանակն է, որ հաւաքական ձեռնարկներով ամրապնդենք հայ կրթութիւնը, ազգային դաստիարակութեան գործը: Ահա գործունէության ասպարէզ մը, ուր կրնան մեծ գործ կատարել հասարակութեան բոլոր խաւերը հաւասարապէս», - գրում էր շաբաթաթերթը¹²¹: Տեղին է հիշատակել, որ 1913 թվականին, ամփոփելով անցնող ուսումնական տարին, «Աշխատանքը» ներկայացնում էր թվային տվյալներ Վանի վիլայեթի կտրվածքով: Ըստ այդմ, 1912-1913 ուսումնական տարեշրջանում Վանի վիլայեթի դպրոցներն ունեցել էին 4033 աշակերտ և աշակերտուհի, 150 ուսուցիչ-ուսուցչուհի, 91 ընթացավարտ: Վանի վիլայեթում այդ

¹¹⁸ Նույն տեղում, 1911, թիվ 17, էջ 3:

¹¹⁹ Նույն տեղում, էջ 5:

¹²⁰ Նույն տեղում, 1911, թիվ 7, էջ 3:

¹²¹ Նույն տեղում, 1913, թիվ 7 (153), էջ 1:

ուսումնական տարեշրջանում գործել էին 1 վարժապետանոց, 4 միջնակարգ դպրոց (որոնցից մեկն՝ իգական), 5 իգական բարձրագույն նախակրթարան, 2 արական բարձրագույն նախակրթարան, 1 նախակրթարան, 3 մանկապարտեզ: 1912-1913 թթ. ուսումնական տարում Վանի անհատական դպրոցներից Վարժապետանոցն ունեցել էր 503 լիրայի բյուջե, 46 աշակերտ, 5 ուսուցիչ, 2 կարգ, իսկ Երամյան վարժարանը՝ 1100 լիրայի բյուջե, 370 աշակերտ, 5 աշակերտուհի, 18 ուսուցիչ, 11 կարգ, 12 ընթացավարտ: Նույն ուսումնական տարում Վանի ազգային ծխական 9 դպրոցներն ունեցել էին 1467 լիրայի բյուջե, 1537 աշակերտ-աշակերտուհի, 62 ուսուցիչ-ուսուցչուհի, 19 ընթացավարտ և 11 ընթացավարտուհի¹²²:

Կրթական հարցին նվիրված հոդվածներում «Աշխատանքը» մատնաշում էր ոլորտում առկա թերությունները, բացերն ու սխալները: Ասենք՝ այն, որ կոնկրետ Վանի վիլայեթի դպրոցներում կրթական գործը լիովին և ըստ հարկի չէր վերահսկվում ուսումնական խորհրդի, թաղական մարմինների, հոգաբարձուների և խնամակալների կողմից: «Ուսումնական նոր շրջանը» հոդվածում առաջարկվում էր վերակազմել ազգային կրթական համակարգը և դպրոցների ուսումնական գործընթացը, որոնք միշտ «երեսէ ձգւած, անուշադիր մնացեր էին, եւ ատով տուժեր էր մեր դպրոցական սերունդը այս կամ այն հանգամանքով»¹²³: Հոդվածագիրը պատասխանատու մարմիններին առաջարկում էր ուշադրություն դարձնել հետևյալ ուղղությունների վրա, որպեսզի բարվոքվեր հայկական դպրոցների կացությունը.

1. «Վանի և արւարձաններու հետ մէկտէղ ուշադրութեան առնել թեմական շրջաններու գավառական դպրոցներու խնդիրը,

2. մեր ներկայ ուսուցչութեան թւական եւ բարոյական որակը,

¹²² Նույն տեղում, 1913, թիվ 37 (133), էջ 3-4:

¹²³ Նույն տեղում, 1913, թիվ 33 (129), էջ 4:

3. դպրոցներու ուսումնական ծրագրի հարցը,
4. դպրոցական պիւտճէ և հոգաբարձուներ,
5. ուսումնական ընդհանուր դասախօսությունները,
6. ուսումնարաններու առողջապահական վիճակը»¹²⁴:

Ազգային դպրոցների բարեփոխման ծրագրերի քննարկումներից բացի՝ «Աշխատանքը» փորձում էր նպաստել աճող սերնդի հոգևոր-մշակութային մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով իր էջերում շաբաթաթերթը զետեղում էր թե՛ ճանաչողական ու գիտահանրամատչելի հոդվածներ, թե՛ գրույցներ արվեստի ու գրականության տարբեր խնդիրների վերաբերյալ: «Աշխատանքը» տպագրում էր ոչ միայն արևմտահայ և արևելահայ, այլև օտարազգի անվանի գրողների լավագույն ստեղծագործությունները: «Գրական ակնարկներ» շարքում թերթը բանավեճի հնարավորություն էր տալիս ժամանակի գրողներին՝ նրանց հուզող այն հարցերի վերաբերյալ, որոնք առնչվում էին մշակույթի ու գրականության զարգացման ուղիներին: Շարքի պատասխանատուն Օրիոնն էր:

«Աշխատանքը» համոզված էր, որ աշխարհաքաղաքական հանգամանքների բերումով երկու հասվածի բաժանված հայ ժողովրդին միայն գրական-մշակութային վերածնունդը հնարավորություն կտար, որ արևելահայն ու արևմտահայն ապրեին նույն ձգտումներով: «Մենք հաւատում ենք, որ մի գեղեցիկ օր հեռու ապագայում նոր սկսած կեանքը, նոր գրական վերածնունդը մեզ պիտի միացնէ, խորտակելով և լեցնելով բոլոր բաժանող անջրպետները», - գրում էր Օրիոնը¹²⁵: Նա բացեիբաց խոսում էր ցավոտ այն գրական երևույթի մասին, որ ի տարբերություն արևելահայ գրականության՝ արևմտահայ գրականությունը չէր արտացոլել արևմտահայ կյանքն իր բոլոր կողմերով: Արևմտահայ

¹²⁴ Նույն տեղում:

¹²⁵ Նույն տեղում, 1910, թիվ 2, էջ 14:

գրականությունն իրականում պոլսահայ գրականությունն էր. «Մեր գաւառը՝ Կարին, Մուշ, Պիթլիզ, Վասպուրական, Տիգրանակերտ, Խարբերդ, աւա՞ղ, չեն ունեցել իսկական մտքով, գրական, մտաւորական կեանք: Եւ Պօլսի ստեղծածը չի ժողովրդականացել, խորունկ արմատ չի ձգել: Մա փաստ է, կենդանի իրողութիւն»¹²⁶: Հողվածագիրը, սակայն, ծայրահեղ էր իր տեսակետում, երբ գրում էր, թե Կ. Պոլսում ստեղծված գրական ստեղծագործությունները չեն արտացոլել ժողովրդի կյանքը, նրա իդէերն ու ձգտումները, թե դրանք կտրված են մայր գրականության ակունքներից: Արևմտահայ գրականության զարգացումը շաբաթաթերթը կապում էր գավառում առկա կապերը սերտացնելու և գավառի կյանքն արտացոլելու հետ. «Ահա նորագոյն գրականութեան կեանք տուղ մեծ կեդրոնը, որի շարժումը արձանագրելը պիտի լինի մեր գրական կեանքի իսկական նպատակը: Ահա թէ նա իր կենսունակութիւնը որտեղից պիտի ստանայ»¹²⁷:

«Աշխատանք» շաբաթաթերթը գտնում էր, որ արևմտահայությանը մտահոգող հողային, կրթական և այլ կարգի հիմնահարցերը լուծելու համար հարկավոր էր ուժեղացնել հայ համայնքը, հարկավոր էր կապել գավառը Կ. Պոլսին, հարկավոր էր համախմբել արևմտահայ սերուցքը և համատեղ ուժերով փորձել Թուրքիայում իրենց ընձեռված հնարավորությունների սահմաններում նախ՝ փնտրել, գտնել դրանցից ձերբազատվելու միջոցները, ապա՝ աշխատել գործնական լուծում տալ դրանց: Թերթը հասկանում էր, որ դա գուցե և անհնար էր այն օրերի աշխարհաքաղաքական հանգամանքներում, բայց հրապարակումներում անընդմեջ անդրադառնում էր հիշյալ խնդիրներին: «Աշխատանքն» իրատես էր և իրերն անվանում էր իրենց անուններով՝ ի տարբերություն Թուրքիայում այդ շրջանում հրատարակ-

¹²⁶ Նույն տեղում, էջ 9:

¹²⁷ Նույն տեղում, էջ 15:

վող մի շարք այլ պարբերականների: «Բաժանիր, որ տիրես» քաղաքականության հետևանքով Թուրքիայում վաղուց ի վեր խզվել էին կապերը արևմտահայ վիլայեթների (գավառի) և մայրաքաղաք Կ. Պոլսում կենտրոնացած մտավոր ներուժի միջև: Այս հարցերին էր նվիրված «Պոլսահայ կյանք» վերլուծական - հոդվածաշարը: «Պոլիս գոյություն չունէր գաւառներու հայութեան համար, նա խորթացած մէկ հատուած միայն կը նկատուէր, որ ի վիճակի չէր միանալու, նոյնանալու հայկական տանջանքներուն հետ: Բայց պայմանները այժմ փոխուած են, գաւառացի հայը անհրաժեշտաբար պէտք է, որ հետաքրքրի Պոլսահայերու գործերովն, որովհետև ասոնք կապ ունեն իր ազգային կեանքին հետ: Պոլիս իբրև ազգային գործերու կեդրոն, իր ձեռք առած է նաեւ դէկը ազգային բոլոր գործերուն, որոշումներ, կարգադրութիւններ կընէ, առանց նկատի ունենալու գաւառի իրականութիւնը, անոր բազմաթիւ կարիքները: Հետեւաբար անմտութիւն կը լինէր գաւառացի հայութեան կողմէն ցոյց տրուելիք նախկին անտարբերութիւնը, որ ներկայիս իր գոյութեան իրաւունքէն զրկուած է», - գրում էր հոդվածագիրը՝ Ասաֆը¹²⁸: Նրա կարծիքով՝ պոլսահայ մտավորականները կամ «ազգային ջոջերն» իրականում շահագրգիռ էին ոչ թե ազգային խնդիրների լուծմամբ, այլ՝ «անձնական շահերու ցանցով մը պատուած» հարցերի շահարկմամբ¹²⁹: Այդպիսի ազգասերը թույլ չէր տալիս ազգի հասցեին որևէ վիրավորական բառ ասեին, բայց սրտխառնուք էր զգում գավառացու անունը լսելուն պես. «Երբ աշխատաւոր գիւղացիութեան, գաւառի հայութեան թշուառութեան մասին կուգես խօսել, նա քայլերը կ'արագացնէ, երբ հարիւրաւոր որբերու վիճակը կը նկարագրես, «ազգը սաղ մնայ» կըսէ ու խօսքը կը փոխէ: Բայց եթէ հարցնես՝ ո՞վ է ազգը, նա պիտի պապանձէր կամ

¹²⁸ Նույն տեղում, 1911, թիվ 2, էջ 8:

¹²⁹ Նույն տեղում, էջ 10:

շատ-շատ «ազգ»-ին քով պիտի կցեր «հայ» բառն ալ, գոր երբեմն կը մոռնայ: Թերեւս ոչ մէկ տեղ «ազգ» բառը այնքան չէ յեղեղուած ու այլանդակուած, որքան Վօսփորեան այս ավերումն վրայ, և կը շարունակուի այդ բառի շահագործումը՝ «ի սեր» մըն ալ առջեւ անկնցնելով իբրեւ անբաժան նախդիր», - այսպիսի խտացված գույներով էր արտահայտվում պոլսահայ մտավորականության ու ազգային գործիչների հասցեին «Աշխատանքը»¹³⁰: Նույնիսկ ազգային ուժերի պառակտման մեջ էր մեղադրում պոլսահայ մտավորականներին. «Ուրիսը խորթ, դաւաճան մայրն է հայութեան: Նա չի ծառայում իւր զաւակներին և մեր ազգային կեանքի առաջացման ճանապարհի վրայ ընկել է որպէս խանգարիչ հսկայ քար»¹³¹:

Ազգային կառույցների ու գործիչների հասցեին «Աշխատանքի» էջերում հնչող տեսակետներն անհիմն չէին, թեև ունեին հաճախ անհարկի խստություն և պահանջկոտություն: Թերթի մոտեցումը պատճառաբանված էր արևմտահայ իրականության ներքին բարդ հանգամանքներով, բայց առաջին հերթին՝ բռնագավթված հայրենիքում պետականություն կամ ինքնավարություն ձեռք բերելու տենչով ու թուրքական պետության կողմից իրականացվող հայահաւած քաղաքականությամբ, որը 1908 թ. հեղաշրջումից հետո ավելի վտանգավոր էր, քանզի պարուրված էր կեղծիքով ու խաբէության երկդիմի գործելակերպով: Եվ պատահական չէր, որ «Աշխատանքը» մի կողմից՝ ներկայացնում էր ազգային կյանքը կառավարող մարմինների աշխատանքներն իրենց դրական ու բացասական կողմերով, մյուս կողմից՝ պարզաբանում էր դրանց հակասությունները և բախումները Թուրքիայի համապատասխան պետական օղակների հետ, ինչի արդյունքում վիժման էին դատապարտված նրանց գրեթէ բոլոր կարևոր ձեռ-

¹³⁰ Նույն տեղում, էջ 11:

¹³¹ Նույն տեղում, էջ 6:

նարկներն ու ազգի հոգևոր առաջընթացն ապահովող ծրագրերը: Յուրաքանչյուր տարեվերջին գրվող խմբագրականներում արտահայտվում էին այս մտահոգությունները: Դրանցից մեկում «Աշխատանքը» գրում էր. «Մտածեցինք, որ սահմանադրական ազատ կարգերը հայի վերածնունդի և բուռն թափով առաջդիմելու համար նոր-նոր հորիզոններ բաց արին, սակայն այսօր՝ մեր կեանքը մաշող, մեր ազգային երջանկությունը թունաւորող հարցերից եւ ո՛չ մէկը լուծւած եւ ո՛չ մէկը ցանկալի դրութեան»¹³²:

Թերթի հրապարակումների համաձայն՝ հայկական գավառների ազգային հաստատություններն, սկսած Երեսփոխանական ժողովից, Առաջնորդարանից և վերջացրած հոգաբարձություններով ու թաղականություններով, աչքի էին ընկնում անբարեխիղճ և անկանոն գործելակերպով¹³³: Վանի Քաղաքական ժողովն ու թաղականությունները վերածվել էին իշխանությունների ձեռքին նախող մուրացկանների: «Հավիտենական մուրացկանները» հողվածի հեղինակ Ա.Մարմարյանի կարծիքով՝ հայոց ազգային հաստատությունների ղեկավար մարմինները պիտի պաշտպանեին հայության շահերը¹³⁴:

Իր ամենշաբաթյա թողարկումներում շաբաթաթերթը լուսաբանում էր թե՛ օսմանյան խորհրդարանի (Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթից կատարված արտատպումների միջոցով), թե՛ Վանի Ազգային կենտրոնական ժողովի, թե՛ ազգային կյանքը կառավարող մնացած կառույցների աշխատանքները:

1913 թ. 29-րդ համարից սկսած՝ խմբագրականները տպագրվել են զուգահեռաբար թուրքերենով՝ թուրք ընթերցողների համար: Բացվել են նոր խորագրեր՝ «Հողագրավումներ», «Գավառի և Վանի կյանք», «Վիճակագրական», «Եվրոպա և Հայկական հարցը», «Երեսփոխանական ժողով» և այլն: Ուշագրավ և հե-

¹³² Նույն տեղում:

¹³³ Նույն տեղում, 1911, թիվ 9, էջ 8:

¹³⁴ Նույն տեղում, թիվ 3, էջ 13:

տաքրքիր են Ազգային կենտրոնական ժողովի աշխատանքների վերլուծությունները, որոնք ոչ միայն պատկերացում էին տալիս 1910 -1915 թթ. Վանի վիլայեթի ազգային ներքին խնդիրների մասին, այլև հնարավորություն էին ընձեռում ընթերցողներին ծանոթանալ «Աշխատանքի» տեսակետներին ու առաջարկներին: Ըստ այդմ, 1913–1914 թթ. Վանի Ազգային կենտրոնական ժողովում քննարկվող հասարակական ամենամեծ հնչեղություն ունեցող հարցը ժողովրդի արտագաղթն էր իր բնօրրանից: «Արտագաղթը» վերնագրով հողվածաշարի հեղինակ Իշխան Միքայելյանը ներկայացնում էր արտագաղթի հիմնական պատճառները.

- աշխատանքի բացակայությունը,
- քաղաքական անորոշ կացությունը և անապահովությունը,
- հաղորդակցական միջոցների պակասը,
- Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական տագնապը:

Հողվածագիրը գրում էր, որ արևմտահայության 100-ից 70-ն ապրում էր գյուղերում՝ զբաղվելով երկրագործությամբ, իսկ քաղաքներում կենտրոնացած մնացած մասն իր օրվա հացը վաստակում էր առևտրի և արհեստների միջոցով: Երկրագործությունը շատ դժվարությամբ էր ապահովում բնակչության կարիքները. «Հայ գիւղացիութեան արդիւնաբերութեան սպառումը տեղական է: Նա ոչ միայն հնարաւորութիւն չունի արտաձելու օտար երկիրներ, այլեւ՝ մի նահանգէն միւսը: Մշոյ դաշտ, Պուլանըիս, Արձէշ և Ալջաւազը եթէ ունենային արտաձման հնարաւորութիւն, գուցէ անոր ներկայ արդիւնաբերութիւն իւր քանակով մէկէն ութ անգամով աւելնար»¹³⁵: Ճանապարհների չգոյությունը կամ դժվարանցանելիությունը, թալանի վտանգը հայ գյուղացուն խանգարում էին իրացնել իր աշխատանքի արդյունքները (յուղը, պանիրը, բուրդը և այլն), իսկ բարձր լեռնային շրջան-

¹³⁵ Նույն տեղում, 1913, թիվ 36 (132), էջ 13:

ներում ապրողներն զբաղվում էին նահապետական աստիճանի վրա գտնվող տնայնագործությամբ: Սոցիալական վատ վիճակում էին գտնվում նաև առևտրով կամ արհեստներով զբաղվող արևմտահայերը: Ի. Միքայելյանը կոնկրետացնում էր խոսքը. «Վան վիլայեթը, որու բնակչության թիւը չի հասներ 400.000-ի, Կեդրոնով եւ գաւառակներով միասին ունի 3500-4000 առևտրական խանութներ, որոնցմէ մեծ մասը կամ ողորմելի եւ արհամարհելի դրամագլուխ ունին, կամ անվստահութեամբ է, որ գործ կը դարձնեն»¹³⁶: Արտաքին քաղաքական հանգամանքներն ստիպում էին, որ այդ խանութները կամ փակվեին կամ վնասով աշխատեին: Իրենց արտադրանքի իրացման համար լայն շուկա չունեին նաև արհեստավորները: Առաջանում էր լրացուցիչ աշխատանք փնտրելու պահանջ՝ կարիքների բավարարման նպատակով: Թուրքիան, սակայն, «չի մատակարարեր անոր աշխատանք, ու հայ գիւղացին կը բռնէ Կովկասի եւ Ամերիկայի ճանապարհը»¹³⁷: Հայրենիքը հիմնականում լքում էին երիտասարդները: Մխիթարական հանգամանք էր հողավաճագիրը համարում այն, որ «հայերու՝ օտար երկիր մեկնիլը, զոնէ Վասպուրականի մէջ, ո՛չ թէ գաղթի, այլ զուտ պանդխտության բնոյթ ունի»¹³⁸:

«Աշխատանքն» ազգային մարմիններից ու կառույցներից պահանջում էր լիարժեք գործունեություն, թեև հասկանում էր, որ Թուրքիայում ամեն քայլափոխի արգելքներ էին դրվելու՝ այդ աշխատանքը խափանելու համար: «Այսօր հայ ժողովուրդը միաբերան ամեն տեղից, ամեն վայրից իւր ցավերի, իւր հսկայ տանջանքի մասին է բարբառում, իսկ այդ ազգային կոչւող մարմինները...Ի՞նչ են անում նրանք: Ոչինչ ու ոչինչ: Զգուշացէ՛ք, մեծ պիտի լինի գաւառի ժողովրդի ցասումը, ինչպէս մեծ է նրա համ-

¹³⁶ Նույն տեղում, 1913, թիվ 38 (134), էջ 3:

¹³⁷ Նույն տեղում, 1913, թիվ 36 (132), էջ 4:

¹³⁸ Նույն տեղում:

բերողութիւնը և տանջանքը»¹³⁹: Օտարները չէին օգնելու հայ ժողովրդին. «Հայութեան տանջանքը և շահերը ծնւել ու ծառայել են գաւառում, և նրա դարմանումը պիտի սկսի ինքը՝ գաւառը»¹⁴⁰: Անհրաժեշտ էր «ազգային ընդհանուր շահերի և ընդհանուր խնդիրների վերաբերմամբ համերաշխութեամբ ու միասնութեամբ գործ կատարել: Լաւ է ուշ, քան երբեք», - եզրակացնում էր «Աշխատանքը»¹⁴¹:

Արդէն 1913 թվականի վերջերին և 1914 թվականի սկզբներին, գիտակցելով հանդերձ, որ եվրոպական դիվանագիտությունն իր շահն էր հետապնդում, «Աշխատանքը» գրում էր, որ ամեն դեպքում պիտի շարունակվեր պայքարը՝ հայկական նահանգների բարենորոգման ծրագրի իրականացման համար¹⁴², իսկ հայ ժողովուրդն, անցյալի դառն ու արյունոտ փորձերից հետո, իրավունք ուներ չհավատալու թուրքական իշխանությունների անկեղծությանը. «Չեղաւ օր մը պատմութեան մէջ, որ թուրք կառավարութիւնը խօստանար ու կատարեր, չեղաւ օր մը, որ անոր խօսքին անմիջապէս յաջորդէր գործը»¹⁴³: Ցավալի փաստ էր այն, որ 1915 թվականի փետրվարին Վանի երեսփոխան Օննիկ Դերձակյանը (Արշակ Վռամյան) Թուրքիայի ներքին գործերի նախարարությունն ուղարկած նամակում դեռևս չէր կորցրել հույսը, թե հնարավոր էր համերաշխություն հաստատել և վստահության ոգի ներարկել հայ ժողովրդի մեջ իր կյանքի ապահովության համար: Նա այդ նամակում գրում էր. «Ոչ մէկ կողմը բան մը կրնայ շահիլ, եթէ ծածկուի սա իրողութիւնը, թէ հայ զինուորներու զինաթափումը, հայ անզեններու ստրուկի նման աշխատացուիլը, տեղական իշխանութեանց անհարկի

¹³⁹ Նույն տեղում, 1910, թիվ 5, էջ 5:

¹⁴⁰ Նույն տեղում, 1911, թիվ 2, էջ 6:

¹⁴¹ Նույն տեղում:

¹⁴² Նույն տեղում:

¹⁴³ Նույն տեղում:

խստութիւնները եւ տեղի ունեցած ջարդերն ու թալանները ակամայ կուգան նորոգել յուշերը 1895-1896-ի համիտեան սև օրերուն: Ատանայի ջարդը, հողային և այլ կարգ մը խնդիրներու առկախ մնալը այն կասկածը ներշնչեցին հայերու մէջ, թէ դժոխսային նպատակ մը կը սնուցուի հայ ժողովուրդի բուն իսկ գոյութեանը դէմ»¹⁴⁴: Առաջարկում էր բավարարել հայ ժողովրդի համար մի քանի պահանջ.

- «օսմանեան խորհրդարանի մէջ համեմատական ներկայացուցչութիւն և ազգային ընտրութիւն հայոց համար,
- հայաբնակ վեց նահանգներու ամեն կարգի պաշտօնէութեան մէջ 50 առ հարիւր հայ,
- հայաբնակ վեց նահանգներու սահմանադրական ժողովներու եւ վարչական խորհուրդի (էնջումէնի) 50 առ հարիւր հայ,
- հայերէն լեզուն թուրքերէնի համազօր նոյն վեց նահանգներու պետական բոլոր ճիւղերուն մէջ,
- հայ վարժարանները պետական վարժարաններուն համահասար իրաւունք վայելեն, հայ առաջնորդարաններու կրթական տուրքը հայ համայնքէն գանձուի պետութեան միջոցով, կրթական բաժինը Առաջնորդարաններուն,
- բանակի հայ զինուորներու թւին համեմատութեամբ հայ սպաներ հասցնելու համար որոշ թուով հայ աշակերտներ տարուէտարի ընդունիլ բարձրագոյն Զինուորական վարժարանը,
- հայ ազգային կալուածները իբրեւ հայ ժողովուրդի անվիճելի սեփականութիւն ճանչնալ, միանգամայն վերջ դնելով էվզաֆի ոսնձգութիւններուն,
- հողավէճը լուծել իր բոլոր փուլերուն մէջ, հայ օրինական տէրերուն վերադարձնելով անոնցմէ յափշտակուած հողերը»¹⁴⁵:

¹⁴⁴ Նույն տեղում, 1915, թիվ 23 (222), էջ 2:

¹⁴⁵ Նույն տեղում:

Այսօր դժվար է հասկանալ, թե ինչն էր դրդել Ա. Վռամյանի պես քաղաքական գործչին նման նամակ ուղարկել Ջևեթ փաշային այն ժամանակաշրջանում, երբ բովանդակ հայության գլխին կախված էր ֆիզիկական բնաջնջման վտանգը: Եվ տպագրելով այս հեռագիր 1915 թ. հունիսի 10-ին՝ «Աշխատանքի» խմբագրությունը կարծես ցանկացել էր թուրքական իշխանություններին ասել, որ հայ ժողովուրդն անընկճելի էր ու չէր հրաժարվում իր նպատակներից և ազգապահպան ծրագրերից նույնիսկ այն դեպքում, երբ Ցեղասպանություն էր իրագործվում իր հանդեպ:

«Աշխատանքը» լուսաբանել է նաև 1915 թվականին Հովհաննես Թումանյանի այցը ազատագրված Վան: Թումանյանը փորձում էր հուսադրել ու ոգևորել Վանում իր հետ շփվող հայությանը՝ բարձր պահելու համար նրանց մարտական ոգին: Նա ոգեշնչվել էր վանեցիների ինքնապաշտպանությամբ և ժամանակավոր ինքնավարությամբ: Անգամ 2 բանաստեղծություն էր գրել Աղթամարի կղզում և Վան քաղաքում: Այդ ոտանավորներն 1-ին անգամ տպագրվել են «Աշխատանք» շաբաթաթերթի 1915 թ. հունիսի 24-ի համարում¹⁴⁶: Հովհ. Թումանյանի հետ հանդիպմանը սրտի թրթիռով էին սպասել վանեցիները: «Աշխատանքը» նյութեր է գետեղել բանաստեղծի այցի կապակցությամբ¹⁴⁷: Դրանցում արտահայտված են վանեցիների սերն ու մեծարանքը Թումանյան մարդու և գրողի հանդեպ: «Աշխատանքից» տեղեկանում ենք, որ 1915 թ. հունիսի 18-ին ՀՅԴ երիտասարդական կառույցը թեյասեղան էր կազմակերպել «կովկասահայ յայտնի» բանաստեղծի պատվին, և այդ հանդիպման ժամանակ էր Թումանյանն ընթերցել վերոհիշյալ 2 բանաստեղծությունը¹⁴⁸: Հունի-

¹⁴⁶ Այդ բանաստեղծություններն էին՝ «Ախթամարի կղզում» և «Շուռ է գալիս ծանր քարը» (տե՛ս «Աշխատանք», Վան, 1915, թիվ 27):

¹⁴⁷ Այդ նյութերը գետեղված են Վանի «Աշխատանքի» 1915 թ. 26, 27 և 28 համարներում:

¹⁴⁸ «Աշխատանք», Վան, 1915, թիվ 26:

սի 24-ին «Աշխատանքը» տպագրության էր պատրաստել Թումանյանի հետ հանդիպումների տպավորության ազդեցությամբ գրված 2 հոդված, բայց չէր կարողացել դրանք գետեղել այդ օրվա համարում՝ նյութերի շատ լինելու պատճառով: Խմբագրակազմը տեղեկացնում էր ընթերցողներին, որ այդ հոդվածները տպագրելու էր թերթի հաջորդ համարում¹⁴⁹: Այդպես էլ արել են:

«Աշխատանքի» 1915 թ. 28-րդ համարում տպագրված են Հովհ. Մխիթարյանի «Բանաստեղծը մեզ հետ» և Հովհ. Ավագյանի «Բանաստեղծը՝ որ մեկնեցավ» հոդվածները: Հովհ. Մխիթարյանը վկայում էր, որ Վանի երիտասարդությունը երջանիկ թույլներ էր ապրել, երբ թեյասեղանի մոտ շփվել էր իրենց պայքարի առաքյալի և հայ մտքի ռահվիրաներից մեկի՝ Հովհ. Թումանյանի հետ: Հոդվածագրի կարծիքով՝ Թումանյանն այն ամուր և շքեղ սյունն էր, որի վրա ապահով կոթնած էր հայ գրականության գեղեցիկ և հոյակապ շենքը: Ինքն ու իր ընկերները մանկության տարիներից ոգևորվել և հիացել էին Թումանյանի բանաստեղծություններով: Դպրոցներում աշակերտներին սովորեցրել էին «Շունն ու կատուն», «Պողոս-Պետրոսը», «Գիքորը»: Իրենց սաներին ավարտական հանդեսներից հասարակական-քաղաքական կյանք էին ուղարկել Թումանյանի բանաստեղծության տողերով հյուսված աղոթք-բարեմաղթանքով. «Ապրիք երեխեք, բայց մեզ պէս չապրիք»¹⁵⁰: Վանի պայքարի և հուսահատ կովի օրերին, երբ գնդակները սուլում էին Հովհ. Մխիթարյանի և նրա մարտական ընկերների 4 կողմը, երբ տների, դպրոցների և եկեղեցիների հրդեհի կրակների լույսը լուսավորում էր խավար գիշերները, ցուրտ խրամատներում հայ քաջորդիները մրմնջում էին Հով. Թումանյանի խոսքերը.

«Հայի գիշեր, անհուն գիշեր

¹⁴⁹ Նույն տեղում, 1915, թիվ 27:

¹⁵⁰ Նույն տեղում, 1915, թիվ 28:

Խաւար մի ծով ահագին»¹⁵¹:

Երբ հուսահատված նայում էին լեռներին, նրանց հուսադրում էր Ամենայն հայոց բանաստեղծը.

«Բայց մեր աչքերը նայում են կարօտ

Հեռու աստղերին երկնքի ծերին,

Թէ ե՞րբ կը բացւի պայծառ առաւօտ

Հայոց լեռներում, կանանչ լեռներում»¹⁵²:

Հովհ. Թումանյանը իր հետ Վանում հանդիպման եկած երիտասարդներին կոչ էր անում.

«Հէ՛յ ջա՛ն տղերք, ու՛ս տւէք, ու՛ս ,

Միահամուռ, միաբան,

Հէ՛յ ջա՛ն տղերք, ոյ՛ժ, տւէք, ոյ՛ժ

Քարը մօտ է գլորման»¹⁵³:

Վանեցի երիտասարդները բախտավոր էին համարում իրենց, որ Վանում էր մեր գրականության, մեր «Յեղի արգանդէն ծնած Հանճարը՝ Թումանեանը, քիչ մը ծերացած, բայց պայծառ աչքերով, կենդանութեամբ, շարժունութեամբ լի, զուարթ ու մեղմ, մանուկ հոգիով, հոգիով սուրբ»¹⁵⁴:

Հովհ.Ավագյանը «Բանաստեղծը՝ որ մեկնեցավ» հողվածում նշում էր, որ նախապես իրենց թվում էր, թէ պիտի Թումանյանի սիրտը մաշված լինէր ժողովրդի կոտորածը և տանջանքները տեսնելուց հետո: Թումանյանը, սակայն, թեյասեղանի ներկաներին զարմացնում էր իր եռանդով և կուռիմաստ ուղերձով, որ «ամեն բանէ առաջ, իրա՛ւ, որ հայ կը բուրէր ծայրէ ծայր: Նա ինքն էր, Թումանեանը, որ ժպիտը դէմքին, համեստ մարդու իր նայուածքը կը պտտեցնէր չորս կողմ»¹⁵⁵: Նրա երգն այս անգամ

¹⁵¹ Նույն տեղում:

¹⁵² Նույն տեղում:

¹⁵³ Նույն տեղում:

¹⁵⁴ Նույն տեղում:

¹⁵⁵ Նույն տեղում:

ավելի ուժեղ ու կայտառ էր, ավելի ուրախ և առողջ էր, լի էր հայրության վաղվա օրվա նկատմամբ ուժեղ հավատքով:

«Շուտ է գալիս ծանր քարը» բանաստեղծությամբ¹⁵⁶ Թումանյանը կարծես տեսնում էր, թե ինչպես էր հայ կամավորների քաջարի գունդը գլորում ճնշող քարը, որի տակից փյունիկի պես արթնանում էր անկենդան համարված հայությունը, իսկ քարի տակ գտնվող գերեզմանից դուրս էր սահում հաղթանակի դիցուհին: Նրան էր դիմում Թումանյանը.

«Թռչում են երգերս նրան ընդառաջ,
Ցնորքներս աշխոյժ պարում են իր շուրջ,
Թռչում եմ եւ ես իմ բաղդից հարբած,
Ու կեանքը թեթեւ թւում է անուրջ»¹⁵⁷:

Հովհ.Ավագյանը Թումանյանին համարում էր ժողովրդի ծոցից ծնված բանաստեղծ, ով սնվել էր նրա երգերով, ով պանծացրել էր նրա ավանդությունները, ով մոռացության դամբարանից վեր էր հանել հայ դյուցազներգությունը՝ այն հասցնելով խոսքի գագաթնակետին:

«Աշխատանքի» ոչ բոլոր տարեթվերի հավաքածուներն են ամբողջապես մեզ հասել: Մեր ձեռքի տակ եղած նյութը, սակայն, հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել պարբերականի դերի ու նշանակության մասին, եթե նկատի առնենք, որ 1915 թ. ապրիլի 3-ի լույս 4-ի գիշերը թուրքերը ծուղակ են լարում ու դավադրաբար սպանում են իրենց խնդրանքով ապստամբած այգեստանցիների հետ հաշտության բանակցությունների գնացած Բշխան Միքայելյանին և նրա 3 ընկերներին՝

¹⁵⁶ Վանի «Աշխատանքի» 1915 թ. թիվ 27-ում այս բանաստեղծությունը 32 տողից է բաղկացած և տարբերվում է 1958 թ. տպագրված Հովհ. Թումանյանի երկհատորյակի 1-ին հատորում (էջ 129-130) գետեղված նույնանուն բանաստեղծությունից (այն այստեղ 20 տող է):

¹⁵⁷ «Աշխատանք», Վան, 1915, թիվ 28:

Պողոս Թուրունջյանին (Քոթոթ), Միհրան Տեր-Մարգարյանին, Վահան Խոանյանին¹⁵⁸:

Իշխան Միքայելյանի նահատակությունից հետո «Աշխատանքի» խմբագիրն է դարձել ՀՅԴ հայտնի գործիչ Հմայակ Մանուկյանը, իսկ պարբերականը հրատարակվել է շաբաթը 2 անգամ՝ չորեքշաբթի և շաբաթ օրերին:

Հմայակ Մանուկյանը ծնվել է Վանում: 1915 թ. նա Վանի ինքնապաշտպանական կոմիտեի ժամանակ նշանակվել է Զինվորական մարմնի օժանդակ տեղեկատու ղիվանի անդամ: 1919 թ. ընտրվել է Հայաստանի 1-ին հանրապետության Խորհրդարանի պատգամավոր: Հայաստանի խորհրդայնացումից հետո տեղափոխվել է Փարիզ, որտեղ «Վեմ» հանդեսի էջերում 1937 թվականից սկսել է հրատարակել իր հուշերը Վանի ինքնապաշտպանության մասին¹⁵⁹:

Հ. Մանուկյանի խմբագրությամբ լույս տեսած «Աշխատանքը» հիմնականում անդրադառնում էր հայ ժողովրդի Եղեռնին՝ նորաբաց «Կացությունը գավառների մեջ» խորագրի ներքո: Օրագրային հրապարակումների ձևով ներկայացնելով Վանի 30-օրյա ինքնապաշտպանությունը՝ «Աշխատանքը» կարծես ձգտում էր ինքնապաշտպանական և ազատագրական պայքարի ոգի ներարկել ընթերցողների մեջ, որոնց շրջանակն արդեն սահմանափակվում էր միայն Վան քաղաքով: «Աշխատանքը» վրեժի էր կոչում ամենքին. «Այսօր Հայաստանն է արիւնաներկ, որ ՎԸԷԺ կը գոռայ: Այսօր հայկական արիւնազանգ բարձրավանդակի վրայ սրախողխող հագարաւոր հայ դիակներ, յօշոտուած մարմիններ, բռնաբարուած կիներ, պղծուած աղջիկներ ՎԸԷԺ կը պօռան: Կը լսե՞ք, վասպուրականցիներ՝ ր, կը լսե՞ք»¹⁶⁰:

¹⁵⁸ www.arfd.info

¹⁵⁹ «Յուշամատեան ՀՅԴ, Ալբում-ատլաս, 1890-1990», հտ. Ա (1890-1914), Լոս Անճելըս, 1992, էջ 75:

¹⁶⁰ «Աշխատանք», Վան, 1915, թիվ 22 (221), էջ 1:

«Աշխատանքը» կոչ էր անում նաև համախմբվել ինքնապաշտպանական մարմնի կամ, իրենց խոսքերով ասած, Վանի կառավարության շուրջ՝ վերականգնելու համար քաղաքը, դիմադրելու համար թուրքերի հարձակումներին և ջարդերից փրկելու համար շրջակա գյուղերի ու քաղաքների հայ ազգաբնակչությանը: Թե՛ «Աշխատանքի» խմբագրակազմի, թե՛ Վանի ինքնապաշտպանության հետևանքով փրկվածների հայրենաշեն ցանկությունները չիրականացան: Նրանք չէին պատկերացնում, որ Թուրքիան ծրագրել էր իրականացնել հայ ժողովրդի հայրենագրկամաբ ուղեկցվող Ցեղասպանություն: Բայց Թուրքիայի նկրտումները հոգս ցնդեցին: Հայ ժողովուրդը ոտքի կանգնեց, վերստեղծեց իր պետականությունը և սկսեց պայքարը հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման և պատմական արդարության վերականգնման համար: Թուրքիան փոխհատուցելու է մեր ժողովրդի կրած նյութական և հոգևոր կորուստները, իսկ Հայաստանը լինելու է ազատ, անկախ ու միացյալ:

ՆԻԿՈՄԻԴԻԱՅԻ «ԲՅՈՒԹԱՆԻԱ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1910 - 1912 ԹԹ.)

Նիկոմիդիան Օսմանյան կայսրության հայկական գաղթավայրերից մեկն էր: 1878 թ. դրությամբ Նիկոմիդիա գավառում հայերի թիվը հասնում էր 70.000-ի¹⁶¹: Թեև հայերն ապրում էին Նիկոմիդիայի տարբեր բնակավայրերում, բայց հիմնականում կենտրոնացած էին Նիկոմիդիայի գավառակենտրոն Իզմիտում, Պարտիզակում, Ատաբազար քաղաքներում, Օվաճրզ գյուղում: Նիկոմիդիա գավառում հայերը կարևոր տնտեսական լծակներ ունեին: Բավական է ասել, որ Իզմիտի կենտրոնական քարակերտ 2 շուկայի տերերը հայեր էին, իսկ Պարտիզակում պաշտոնավարում էին ոչ թե թուրք, այլ հայ պաշտոնյաներ, և այդ քա-

¹⁶¹ Գասպարյան Մ., «Հայերը Նիկոմիդիո գավառին մեջ», Պարտիզակ, 1913, էջ 24

դաքը հիմնադրման օրվանից մնում էր զուտ հայկական բնակավայր¹⁶²:

Իզմիտում 20-րդ դարի սկզբին գործում էին հայկական 8 դպրոց: Դրանցից մեկը՝ Ազգային մեծ վարժարանը, տալիս էր միջնակարգ կրթություն: Պարտիզակում կար հայկական 4 դպրոց, որոնցից մեկը՝ ամերիկյան միսիոներների հիմնած վարժարանը, ապահովում էր միջնակարգ կրթություն: Ատաբազարում կար հայկական 5 դպրոց: Դրանց թվում էր միջնակարգ ուսումնական հաստատություն համարվող Հայուհյաց դպրոցը՝ հիմնված ամերիկյան բողոքականների կողմից: Օվաճրզը հայտնի էր Վարդուհյան ազգային վարժարանով, իսկ Արմաշ գյուղը համարվում էր Նիկոմիդիայի մշակութային կարևոր կենտրոններից մեկը մասնավորապես իր Դպրեվանքով: Այն ուներ տպարան և դպրոց: Առնվազն մեկ դպրոց ունեին Նիկոմիդիայի գրեթե բոլոր հայաշատ գյուղերը՝ Քուրդբեկեն (ուներ 2 դպրոց), Օրթագյուղը կամ Միջագյուղը (ուներ 1 դպրոց), Ապանբեկը, Կեյվեն (Գեյվեն), Խասկալը:

Նիկոմիդիա գավառում հրատարակվել են մի շարք պարբերականներ, օրինակ՝ Իզմիտում՝ «Երկիրը», «Սուրհանդակը», «Հայրենասերը», «Բյութանիան», Օվաճրզում տպագրվել է «Քնարիկ» թերթը, իսկ Արմաշում՝ «Հույս» հանդեսը:

«Բյութանիան» լույս է տեսել 1910-1912 թթ. նախ՝ Կ.Պոլսում (1910 թ. թիվ 1), հետո՝ Իզմիտում (1910 թ. թիվ 2 – 1911 թ. թիվ 9), ապա՝ Ատաբազարում (1911թ. թիվ 10 (ապրիլի 20-ից մինչև վերջ): Սկզբում տասնօրյա պարբերականությամբ էր տպագրվում, իսկ 1911 թ. թիվ 22-ից մինչև հրատարակության վերջին շրջանը լույս է տեսել շաբաթը 2 անգամ:

«Բյութանիան» ազգային-գրական, քաղաքական-տնտեսական շաբաթաթերթ էր: Ծրագրային զեկույց-խմբագրականում

¹⁶² «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1974, հ. 5, էջ 535:

նշվում էր պարբերականի ուղեգիծը: Այն ձգտում էր դառնալ անկողմնակալ մամուլի օրգան, որի շուրջ կհամախմբվեին Նիկոմիդիա գավառի երիտասարդ մտավորականները: «Բյութանիան» ցանկանում էր համախմբել նրանց և դառնալ «բեմ մը, ուրկէ անոնք իրենց անկաշկանդ խօսքը կ'ըսեն հասարակական գործերու եւ երեւոյթներու մասին, ըլլալ շրջանի կեանքին եւ առհասարակ աշխատաւոր ժողովուրդի ցաւերուն ու շահերուն անկեղծ արձագանգը»¹⁶³: Տեղական խնդիրներին զուգահեռ՝ պարբերականը պիտի անդրադառնար նաև պետական կյանքի կարևոր հիմնահարցերին: Խմբագրությունը հիմնականում կատարել է իր առջև դրված նպատակները՝ վերածվելով հայ ժողովրդին մտահոգող և ժամանակի համար առաջնահերթ խնդիրների լուծմանը հետամուտ գավառաթերթի:

«Բյութանիայի» պատասխանատու-տնօրենը Հակոբ Ղ. Սարգիսյանն էր, իսկ արտոնատերը՝ Սիմոն Ղ. Սարգիսյանը: Թերթի խմբագրությունը գտնվում էր Իզմիտում, բայց այն գրասենյակներ էր հաստատել Կ.Պոլսում, Իզմիրում, Կալկաթայում, Գատը գյուղում: Այդպիսիք ուներ նաև Ատաբազարի շրջանում (Ատաբազարում, Սապանձայում, Արմաշում, Խասկալում), Պարտիզակի շրջանում (Պարտիզակում, Տեննկելում, Օվաճըզում, Արսլանպեկում), Կեյվեի շրջանում (Կեյվե-Սթասիոնում, Ագ-Հիսարում, Քուրդբեյում, Էշմեում, Միջագյուղում), Գարամուրսալի շրջանում (Մերտեկեոզում, Եալակ-Տերեում), Եալովայի շրջանում (Մեծ Նոր-գյուղում, Միջագյուղում): Հիմնական աշխատակիցներն էին Աշոտ Պազպազյանը, Հակոբ Մելիտոսյանը, Հովհաննես Փիլիկյանը, Հակոբ Խաչերյանը, Միհրան Փափազյանը, Արշավիր Բեիսյանը, Թորոս Սոֆյանը, Անդրանիկ Չալգյանը, Կարապետ Զիլյանը, Մանասե Տոնիկյանը, Հարութ-

¹⁶³ «Բյութանիա», Կ.Պոլիս, 1910, թիվ 1, էջ 1:

յուն Մանթաշյանը, Կարապետ Սերբեթյանը, Հակոբ Քյուֆեճյանը, Ադասի Մկրտայանը և այլք:

«Բյութանիայի» գավառային թղթակիցներից էին Ա. Բաշուկյանը (Մերտեկեոզ), Մհերը և Օշինը (Գընճըլար), Մի-Սակը (Ատաբազար), Ա. Բասը (Եալակ-Տերե), Արազը (Քարցի), Վահան Ժամկոչյանը (Միջագյուղ), Սովերը և Վահանը (Չենկիլեր), Սարոբդին (Խաչ գյուղ), Սուրհանդակը (Ալմալու), Հրայրը (Տերիննե), Դարբինը (Արմաշ), Արզուրը (Ֆերիզլի), Գիսակը (Կեյվե-Էշմե), Ժանգը (Պարտիզակ), Վաղարշակը (Գլըճ), Քիսակը (Էշմե) և այլք:

«Բյութանիայի» հիմնական բաժիններն ու խորագրերը անփոփոխ էին ու կայուն: Դրանցից էին՝ «Խմբագրական», «Այժմեություններ», «Մեր գավառը», «Գյուղի ցավերեն», «Թղթակցություններ», «Ազատ բեմ», «Փաստաթղթեր», «Գրական», «Մատենադարան», «Մանրանկարներ», «Ստացված գրքեր», «Նիկոմիդյան գործեր», «Լրատու», «Շրջանի լուրեր», «Տեղական», «Հողային գրավումներ», «Առևտրական կյանք», «Նոթեր ու փոթեր», «Բաց նամակ», «Նամակ խմբագրության», «Երկրագործական» և այլն:

«Բյութանիան» չի եղել ՀՅԴ պաշտոնաթերթ, սակայն այն ՀՅԴ ուղղվածություն ունեցող պարբերական էր, որը յուրաքանչյուր պատեհ առիթով ներկայացնում էր այդ կուսակցության տեսակետները այս կամ այն հարցի շուրջ, նաև անդրադառնում էր ազգային կյանքի տարբեր ոլորտներում ՀՅԴ-ի իրականացրած ծրագրերին: «Բյութանիան» բանավիճային հոդվածներով հանդես էր գալիս մասնավորապես հնչակյան կուսակցության և նրա օրգան «Երկիր» թերթի դեմ: Հրատարակության վերջին ամիսներին «Բյութանիան» հիմնականում քաղաքական թեմաներ էր վերհանում իր էջերում՝ լուսաբանելով օսմանյան խորհրդարանական ընտրությունների ընթացքը և հայ ժողովրդի դիրքորոշումը իր քվեների տնօրին-

ման կամ բաշխման խնդրում: Թերթի՝ մեր ձեռքի տակ եղած համարները թույլ են տալիս պնդել, որ հենց այս շրջանում (1912 թ. վերջին համարներում) «Բյութանիան» դարձել էր անկախ պարբերական և վեր էր կանգնել կուսակցական շահը պաշտպանելուց: «Բյութանիան» դեմ էր դուրս գալիս բոլոր այն քաղաքական ուժերին (այդ թվում՝ ՀՅԴ-ին), որոնք խորհրդարանական ընտրություններում համագործակցում էին Իթթիհատի հետ և աջակցում էին այդ կուսակցությանը նույնիսկ իրենց հայ թեկնածուներով: «Բյութանիան» չէր ընդունում նաև այս ոլորտում ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերի նկատմամբ իրականացվող պետական այն քաղաքականությունը, որի հետևանքով հայերը իրենց ազգաբնակչության թվի համեմատ պատգամավորներ չէին կարողանում ունենալ խորհրդարանում: Բացի այդ՝ «Բյութանիան» բարձրացնում էր մի քանի կարևոր հարց: 1-ինը վերաբերում էր Ազգային երեսփոխանական ժողովում գավառահայերի քվեներին: «Այսօր մենք ունինք Ազգ. Երեսփ. Ժողով մը, որ իր կազմութեան գրեթէ երեք չորրորդով կը ներկայացնէ Պօլսահայուն ձայնը և հազիւ մէկ չորրորդի տեղ մը տուած է գաւառին: Կա՞յ աւելի ըմբոստացուցիչ անարդարութիւն մը, որ գործի Ազգին համար և Ազգին անունով: Այսօր կարելի չէ՛ այլևս, որ Պօլսական ժողով մը՝ ինչպիսին է ներկայիս մեր Երեսփ. Ժողովը, իրեն տայ Ազգային Ժողովի հանգամանք և տնօրինէ ամբողջ Հայութեան ճակատագիրը», - գրում էր «Բյութանիան»¹⁶⁴: Պահանջում էր վերաքննել ու բարեփոխել Ազգային սահմանադրությունը, որը պետք է սահմաներ հավասար ներկայացուցչություն. «Պէտք է վերջապէս մեր Ազգ. Սահմանադրութիւնը քալէ ԴԷՊԻ՝ ԳԱԻԱՌ: Ազգ. Կեդր. ժողովի մի՛շտ մեծամասնութեան մը անունով խօսող երեսփոխանները թող մտաբերեն անգամ մը, որ Գաւառի Հայութիւնը կը կազմէ մեծամասնութիւնը, և հետեւա-

¹⁶⁴ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 10, էջ 402:

բար իսկական մեծամասնութիւնը կը ներկայացնեն միայն այն երեսփոխանները, որոնք գաւառահայի ցաւերուն, պէտքերուն ու փափաքներուն թարգմանը կը հանդիսանան»¹⁶⁵: «Բյութանիան» պահանջում էր, որ «Գաւառի Հայը Պօլիսի Հայուն հետ հաւասար ձայն ունենայ, որ համեմատական բաշխում կատարւի հայ ազգաբնակչութեան ձայնատուրեան համար»¹⁶⁶: Պնդում էր, որ ժողովուրդն ուղղակի ընտրէր իր երեսփոխաններին, ընդ որում կղերական պատգամավորները նույնպէս «ընտրուին ժողովուրդէն և ոչ թէ Պօլսոյ կղերէն»¹⁶⁷: Գավառաթերթը պնդում էր, որ հայ կանայք ևս ընդգրկվեին «ազգային կրօնային-մշակութային բոլոր ձեռնարկներուն մէջ»¹⁶⁸: Պահանջներից մեկը վերաբերում էր Ազգային սահմանադրության աշխարհականացմանը: «Մենք չենք ուզեր մնալ այլեւս իբրեւ կրօնական համայնք մը՝ որպէս դարձուց և ճանչցուց մեզ Համիտը, այլ իբր Հայ Ազգութիւն», - գրում էր գավառաթերթը¹⁶⁹: Դրանից բացի՝ «Բյութանիան» առաջարկում էր Ազգային սահմանադրության մէջ կատարել այնպիսի փոփոխություն, որը հնարավորություն կտար «Հայ Բողոքական և Կաթոլիկ հասարակութիւններէն ևս անհատներ կամ մարմիններ կարենան մասնակցիլ մեր կրթական կամ մշակութային գործերուն մէջ»¹⁷⁰: «Բյութանիան» նշում էր, որ ներկայացվող պահանջները ո՛չ որոշ խմբակի մը պահանջքն են միայն և ո՛չ ալ որ և է թերթի մը. անոնք պահանջքն են ամբողջ գաւառի հայութեան, անոնք հասունացած պահանջքն են այսօր բովանդակ հայ կեանքին, հետևաբար անկարելի է անտեսել զանոնք, և եթէ Պօլիսը կը մնայ ձեռնպահ, Գաւառը պիտի շարժի»¹⁷¹:

¹⁶⁵ Նույն տեղում:

¹⁶⁶ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 15, էջ 443:

¹⁶⁷ Նույն տեղում:

¹⁶⁸ Նույն տեղում:

¹⁶⁹ Նույն տեղում:

¹⁷⁰ Նույն տեղում:

¹⁷¹ Նույն տեղում:

Խմբագրակազմը համոզված էր, որ մամուլը հանրային գործերի վրա մեծ ազդեցություն ուներ և կարող էր հզոր զենք լինել ժողովրդին հանուն ազատության առաջնորդելու կամ ազատ և ինքնավար կյանքով ապրելու համար¹⁷²: Թերթի անցած ուղին և որդեգրած քաղաքականությունը պարզորոշ երևում է 1911 թ. դեկտեմբերի 24-ին «Անցնող տարին» խմբագրականից¹⁷³: Թերթը փաստում էր, որ համիդյան բռնապետության շրջանում հայերը դժգոհում էին, թե «ազատութիւն չ'ունինք, ձեռքերնիս կապած է. բան մը չենք կրնար ընել»: «Բյութանիան» հարց էր տալիս, թե 1908 թ. հեղաշրջումից հետո անցած 4 տարվա ընթացքում, երբ «ազատութիւն ունէինք, ի՞նչ ըրինք»¹⁷⁴: 1-ինը խանդավառության տարի էր: Կազմվեցին ազգային միություններ, որոնք ավելի շատ խոսքով էին բարեկարգում ազգային դպրոցներն ու հաստատություններն, ուստի դրանց մեծ մասի անունն իսկ չ'մնաց դեռ տարին չբոլորած: 2-րդ տարում ջանքեր էր գործադրվում մշակութային հաստատությունների բարեկարգման համար, բայց միջկուսակցական պայքարը խանգարում էր այդ գործընթացին: 1911 թվականը «Բյութանիան» համարում էր անցման շրջան, երբ կոնկրետ Նիկոմիդիայի գավառում չէին հանդիպում որևէ «աչքառու երեւոյթի մը, որ ծառայեր լուսաւորութեան և զարգացման, իսկ միութիւնները... գացած են դէպի ետ, դէպի կազմալուծում»¹⁷⁵: Շաբաթաթերթի կարծիքով՝ միակ դրական երևույթը «Բյութանիայի» խմբագրության նախաձեռնությամբ Ատաբազարում կազմված Ուսուցչական միությունն էր, որի կանոնագիրը չէր վավերացվել ազգային վարչությունների կողմից: Ընթերցողներին առաջարկում էր նոր տարում աշխատել բուն կերպով, որպեսզի լուծվեին տարբեր բնագավառներում կուտակված

¹⁷² Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 2, էջ 2-3:

¹⁷³ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 32, էջ 533-534:

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 533:

¹⁷⁵ Նույն տեղում:

խնդիրները¹⁷⁶: Պարբերականը, միևնույն ժամանակ, թերահավատորեն էր մոտենում ազգային մարմիններին, քանի որ նրանք գործառույթները թերի էին կատարում և հեռու էին «մամուլին դերը և քննադատության արժեքը ըմբռնելէ»¹⁷⁷: Նիկոմիդիայի թաղային խորհրդի և գավառային երեսփոխանական ժողովի անդամներին համարում էր պաշտոնի մուրացկաններ ու կեղծ «ազգայինճիներ», որոնց կոչ էր անում լինել բարեխիղճ. «Ձեր ներկայացուցած զանգուածը, որ ազգ կը կոչուի՝ այնպիսի կարիքներ ունի, որոնց արդիւնաւոր լուծումը այս ընթացքով չէ, որ վերջ պիտի գտնայ»¹⁷⁸: Ազգային մարմինների խոտոր գործելակերպը «Բյութանիան» պայմանավորում էր գավառահայության՝ իրենց իրավունքների չիմացությամբ և ազգային կրթության նկատմամբ դրսևորվող անտարբերությամբ: Հայաշատ Նիկոմիդիա գավառը լճացած կյանքով էր ապրում: «Տգիտութիւնը, անտարբերութիւնը, անհետաքրքրութիւնը իսպառ կասեցուցած են փտած անիւր մեր գաւառի յառաջդիմութեան: Որպէս զի բուժուի՝ տարիներու ճիգը պէտք է», - գրում էր «Բութանիան»¹⁷⁹: Թերթի կարծիքով՝ գավառին այս վիճակից կարող էին հանել կրթօջախներն ու վարժարանները, որոնք, սակայն, նույնպես դոփում էին տեղում և վերանորոգման կարիք ունեին¹⁸⁰:

19-րդ դարի 60-70-ական թվականներին եվրոպական պետությունների ազդեցության տակ Թուրքիայում քայլեր էին ձեռնարկվում կրթական ոլորտն օրենսդրորեն կարգավորելու և բարեփոխելու նպատակով: Ֆրանսիական օրենսդրության օրինակով արդեն 1869 թ. կյանքի էր կոչվել Թուրքիայի կրթական նոր օրենքը, որի դրույթներից շատերն այդպես էլ մնացել էին գրանց-

¹⁷⁶ Նույն տեղում:

¹⁷⁷ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 3, էջ 1:

¹⁷⁸ Նույն տեղում:

¹⁷⁹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 12, էջ 140:

¹⁸⁰ Նույն տեղում:

ված միայն թղթի վրա: Կրթական բարեփոխումների արդյունքն անբավարար էր, իսկ Թուրքիայի բնակչության մեծամասնությունն անգրագետ էր¹⁸¹: Թուրքիայի ազգային փոքրամասնությունները (այդ թվում՝ հայերը) օգտվում էին իրենց ազգային դպրոցները ղեկավարելու ինքնավար իրավունքից: Դա նրանց մոտ բավական հաջող էր ստացվում: 1863 թ. Ազգային սահմանադրության հաստատումից հետո նույն թվականին Կ.Պոլսում ընտրված Ուսումնական խորհուրդը լուրջ գործունեություն էր ծավալել կրթական ծրագրերի մշակման, դասագրքերի ստեղծման և դպրոցական ցանցի հաստատման ուղղությամբ: 1864 թ. Ուսումնական խորհուրդն ընդունում է Ստ. Փափագյանի մշակած ազգային վարժարանների բարեկարգման ընդհանուր կանոնադրությունը: Ըստ այդմ, հայկական դպրոցներն ունեին 2 կարգ. նախակրթական կամ տարրական դպրոց և երկրորդական կամ միջնակարգ դպրոց՝ համապատասխանաբար հինգական տարի ուսուցման ժամկետով: Մեկ տարի էլ տրամադրվում էր ավարտական քննություններին պատրաստվելու համար: Հետագա տարիներին ուսումնական գործընթացի տևողությունը վերանայվել էր՝ կազմվելով ընդհանուր թվով 9 տարի:

Դպրոցաշինությանը զարկ էր տրվում ողջ ժողովրդի ջանքերով: Հատկապես ազգային կրթական ընկերությունների և ազգանվեր անհատների ուժերով հիմնվում էին հայկական բազմաթիվ արական և իգական դպրոցներ ու վարժարաններ ոչ միայն Կ. Պոլսում, այլև գավառում: 20-րդ դարի սկզբին Թուրքիայում կար ավելի քան 800 հայկական դպրոց՝ չհաշված Կ.Պոլսի դպրոցները, որտեղ սովորում էր 82000 աշակերտ, ի թիվս որոնց 22000 աղջիկ: 28 գավառներում կազմակերպվել էին Ուսումնական խորհուրդներ¹⁸²: Գործում էին ուսուցիչ-ուսուցչուհիների

¹⁸¹ «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1981, հ. 6, էջ 770:

¹⁸² Նույն տեղում, էջ 773-774:

պատրաստման նպատակով հիմնված մի քանի վարժապետանոցներ և վարժուհիանոցներ, ասենք՝ 1879 թ. Կ. Պոլսում բացված վարժուհիանոցը կամ 1910 թ. Կարինի Հոփսիսիմյան վարժարանին կից գործող վարժուհիանոցը, նաև 1886 թ. Ղալաթիայի Կեդրոնական վարժարանը և այլն:

Համեմատաբար բարձրակարգ դպրոցներ (այդ թվում Մխիթարյանների դպրոցներ) էին գործում Նիկոմիդիա գավառում: Դրանց շարքում աչքի էր ընկնում 1909 թ. Ատաբազարում հիմնված Կեդրոնական վարժարանը: Չկա «Բյութանիայի» որևէ համար, որում 2-3 հրապարակում չլիներ՝ նվիրված կրթական հիմնախնդիրներին: Ընդ որում, թերթը ոչ միայն վերլուծում էր ոլորտի առջև ծառայած խնդիրները, փորձելով գտնել դրանց առաջացման պատճառները և լուծման ուղիները, այլև իր թղթակիցների միջոցով ամբողջական պատկերացում էր տալիս Նիկոմիդիա գավառի քաղաքների ու գյուղերի դպրոցներում տիրող իրավիճակի մասին: Այդ թղթակցություններն ու վերլուծական-հոդվածները զետեղված են «Մեր Գավառը», «Պոլիսեն դուրս», «Նիկոմիդիան գործեր», «Ակնոցիս տակեն. ատաբազարյան նոթեր» խորագրերի ներքո: «Բյութանիան» տպագրում էր կրթական հիմնահարցերի շուրջ հասարակության ունեցած տարբեր կարծիքներն ու տեսակետները: Դա հնարավորություն էր ստեղծում հասարակական քննարկումների համար: Այդ ճանապարհով էր, կարծես, թերթն ուզում կրթական որևէ հարցի համար այնպիսի լուծում գտնել, որը կգոհացներ հասարակության բոլոր շերտերին: Օրինակ բերենք Ատաբազարի Կեդրոնական վարժարանի կրթական ծրագրի ու մեթոդների, ուսուցիչների որակավորման և վճարման կարգերի վերաբերյալ «Բյութանիայի» էջերում ծավալված քննարկումները, թերևս և դեմ, հաճախ իրարամերժ կարծիքների բախումը, երբ կողմերը փաստերով էին

փորձում դիմացինի տեսակետի սխալ լինելն ապացուցել¹⁸³: Կրթական խնդիրների վերաբերյալ բանավիճային հոդվածները հիմնականում տեղ էին գտնում «Ազատ բեմ» խորագրի ներքո: Այս նյութերը փաստում էին 3 բան.

1. Նիկոմիդիա գավառում ազգային դպրոցներն ու վարժարանները մեծ մասամբ բարձիթողի վիճակում էին, իսկ դրանց աշխատակազմին մտահոգում էին ոչ թե համակարգային խնդիրներն ու դրանց լուծման ուղիների փնտրտուքը, այլ այն, թե ինչպես կարգավորեին նյութական խնդիրները, թեև իրենց աշխատանքը լիարժեք չէին կատարում,

2. գավառի կրթօջախների խնդիրների լուծման հարցով զբաղվող ազգային մարմինները, թաղական խորհուրդները լըրջորեն չէին պատկերացնում ու զբաղվում կրթական խնդիրներով, քանի որ ազգային կրթությունը չէին համարում ազգապահպանության կարևոր բաղադրիչ,

3. գավառի հայ ազգաբնակչությունը հիմնականում անտարբեր կեցվածք ունեւր կրթական հիմնախնդիրների նկատմամբ, ինչը պայմանավորված էր բռնազավթված հայրենիքում նրանց իրավագուրկ ու վտանգված լինելու հանգամանքով:

Կրթական հարցերն ինչ-որ առումով մղվել էին հետին պլան, սակայն գավառի մտավորականության մի ստվար զանգված գտնում էր, որ ազգապահպանության առումով Թուրքիայում առաջնահերթ էին կրթական խնդիրները լուծելը և դրանք համայնքի ուշադրության կենտրոնում պահելը: Այս առումով առաջամարտիկ կարելի է համարել «Բյութանիա» թերթը, որն իրեն համարում էր Նիկոմիդիայի խնդիրներն օբյեկտիվորեն ներկայացող պարբերական¹⁸⁴: «Բյութանիան» համոզված էր, որ միայն հոգևոր վերածնունդը և կրթական խնդիրների լուծումը

¹⁸³ «Բյութանիա», Իզմիտ, 1910, թիվ 3, էջ 2-3, 1910, թիվ 4, էջ 39-40, 1910, թիվ 9, էջ 93, 1910, թիվ 5, էջ 55:

¹⁸⁴ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 8, էջ 85:

կարող էին նպաստել ազգապահպանությանը. «Հա՛րկ է ուժգին փարումով մը վերածնցնել մեր կրթական վայրահակ գործունեութիւնը՝ ուրկէ պիտի բղիւնին արևափայլ խարտեաշ գլուխներով խիզախ սերունդներ, որ գէթ կարող ըլլային մեր թողած աներներուն վրայ արշալոյսներ և ծաղիկներ բողբոջեցնել»¹⁸⁵:

Կրթական ոլորտի բարեփոխումներին նպաստելու նպատակով «Բյութանիան» առավելապէս թղթակցությունների միջոցով էր ներկայացնում որևէ քաղաքի կամ գյուղի դպրոցի ձեռքբերումները և բացթողումները: Գոհացուցիչ էր համարում, ասենք՝ Պարտիզակի¹⁸⁶ կամ Մերտեկեոզի¹⁸⁷ վարժարանների վիճակը, բայց չէր հանդուրժում Օվաճրզի դպրոցների անբարեկարգ ու անխնամ կացությունը¹⁸⁸: «Օվաճրզին գինետուն ունենալը գիտեմ, սակայն կրթական ըսուածը ուրիշին հարցուցէք: Օվաճրզը նախ թող իր վարժարան-շէնքն ունենայ: Եւ չունի: Դպրոցը չորս սինին վրայ կեցած՝ բանջարանոցի խրտուիլակի պէս հովերուն դեմ կը դողդողայ: Փարա չկայ, որ աւարտի: Օվաճրզցին դրամ չի տար, այլ կ'ըսէ. «Եթէ տալու ըլլամ, այս իրիկուն գինիիս փարան ո՞վ պիտի տայ»: Ամօ՛ր: Իր հո՞գն է, թէ զուակը կը սորւի կամ չի սորւիր, իր ինչու՞ն պէտք է, թէ վարժարանը կը վերաշինեն եղեր: Ի՞նչ ըսել է վարժարան, գինիի մը տեսա՞կն է արդեօք: Վա՛խ, օվաճրզցիներ, ձեր տգիտութեամբ սպանեցիք գիւղն ու իր նոր սերունդը», - գրում էր «Բյութանիան»¹⁸⁹: Թերթը դիմում էր օվաճրզցիներին, որոնց աղջիկներն ու կանայք չգիտեին հայերեն տառերը, որ նրանք ուշքի գային և երեխաներին տային

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 86:

¹⁸⁶ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 14, էջ 161:

¹⁸⁷ Նույն տեղում, էջ 164:

¹⁸⁸ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 15, էջ 171:

¹⁸⁹ Նույն տեղում:

հայեցի դաստիարակություն: Միայն այդ ճանապարհով նրանք կկարողանային արդարացնել իրենց ապրելու իրավունքը¹⁹⁰:

«Բյուրթանիան» արձանագրում էր այն փաստը, որ թեև Նիկոմիդիա գավառի հայաբնակ գյուղերից յուրաքանչյուրում կար դպրոց, բայց դրանցից շատերը գրեթե «անգործածելի և բոլորովին անյարմար» էին¹⁹¹: Այդ կրթօջախների ուսումնական ծրագրերը մեծ մասամբ կախված էին ուսուցիչների քմահաճույքից կամ նախասիրություններից: Ուսուցիչները հիմնականում ավարտել էին նախակրթարաններ և իրենց աշխատանքը կազմակերպում էին՝ անգամ ձեռքի տակ չունենալով Ուսումնական կրթական խորհրդի ծրագիրը: Դժվար էր գտնել պատրաստված ուսուցիչներ գյուղական դպրոցների համար, որովհետև չնչին էր նրանց աշխատավարձը (տարեկան 20-25 ոսկի): Թերթը նշում էր 2 պատճառ, որոնք քայքայման էին հասցրել գյուղական դպրոցները.

- դպրոցների աղքատիկ բյուջեն,
- գործին քաջատեղյակ ուսուցչական կադրերի պակասը:

Իրավիճակը շտկելու նպատակով «Բյուրթանիան» Նիկոմիդիա գավառի Ուսումնական կենտրոնական խորհրդին առաջարկում էր նախ՝ մշակել գյուղական դպրոցների համար հատուկ ուսումնական ծրագիր, ապա՝ դպրոցներին ապահովել այդ ծրագրի համեմատ դասավանդել կարողացող ուսուցիչներով: Բացի այդ՝ գյուղերի ազգային մարմինները պիտի աշխատանք տանեին ազգաբնակչության շրջանում, որ նրանք ուսուցիչների աշխատավարձի համար տարեկան հատկացնեին առնվազն 36 ոսկի: Բավարար աշխատավարձի դեպքում միայն ուսուցիչները չէին լքի գյուղական դպրոցները¹⁹²: «Ուսուցիչները պետք չէ նկատուին միայն դասախօսներ: Անոնք իրենց կեան-

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 172:

¹⁹¹ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 24, էջ 503:

¹⁹² Նույն տեղում, էջ 504:

քովն ու համոզումներովը պետք է ըլլան տիպար. շինելու համար աշակերտութիւնը: Թող չըսուի, թէ չունինք պետք եղած ոյժերը. ունինք և կը կարծենք՝ բաւականին չափ: Հարկ է փնտռել և օգտագործել: Երբ ձեռք կը բերուին, պետք է ճանչնալ ու գնահատել», - գրում էր թերթը¹⁹³: Երբ կրթական խնդիրների լուծմամբ շահագրգիռ ատաբազարցի մի խումբ երիտասարդներ բարձրացնում են կրթաթոշակը կրթական տուրքով փոխարինելու հարցը, «Բյութանիան» պաշտպանում է այդ առաջարկը: Թերթը գտնում էր, որ անհրաժեշտ էր հաստատել ազգային կրթական ընդհանուր տուրք, որը պիտի բաշխվեր «խրաքանչիւր տունի վրայ, անոնց կարողութեան համեմատութիւններով և որոշ աստիճանով»¹⁹⁴: Աշոտ Պազպազյանի կարծիքով՝ այս առաջարկի շնորհիվ հնարավոր էր իրականացնել ձրի և պարտադիր ուսուցման գաղափարը¹⁹⁵: Ձրի և պարտադիր ուսուցման ծրագիրը հնարավորություն կտար դպրոցներում ընդգրկել նաև աղքատ ընտանիքների զավակներին, որոնցից շատերն արդեն 10-12 տարեկանում կամ համալրում էին փողոցային մուրացկանների շարքերը, կամ ենթարկվում էին աշխատանքային շահագործման որևէ արհեստավորի կողմից¹⁹⁶: 1910 թ. թիվ 23-ում «Բյութանիան» հայտնում էր լուր այն մասին, որ հայ ուսուցիչների շրջանում սկսվել էր շարժում՝ ուսուցչական ընկերակցություն ստեղծելու նպատակով¹⁹⁷, իսկ 1911 թ. մայիսի 10-ի խմբագրականում «Բյութանիան» կոչով դիմում էր ուսուցիչներին, որ քննարկեին և կազմեին Ուսուցչական միություն¹⁹⁸: Այդ միության կորիզը պիտի լինեին զավառի գլխավոր 2 կենտրոնի՝ Պար-

¹⁹³ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 18-19, էջ 474:

¹⁹⁴ Նույն տեղում, Կ. Պոլիս, 1910, թիվ 1, էջ 2:

¹⁹⁵ Նույն տեղում:

¹⁹⁶ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 3, էջ 2:

¹⁹⁷ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 23, էջ 244:

¹⁹⁸ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 12, էջ 418:

տիզակի և Ատաբազարի վարժարանների «հոյլ մը պատուական ուսուցիչները, որոնք թե՛ գաւառին և թե՛ շրջանակներուն մէջ գնահատելի անձնւիրութիւնով կ'աշխատին»¹⁹⁹: Թերթի կոչին անմիջապէս արձագանքել էին 27 ուսուցիչ-ուսուցչուհիներ: 1911թ. մայիսի 15-ին Ատաբազարի Արամյան վարժարանի սրահում տեղի էր ունեցել քաղաքի Ուսուցչական միության խորհրդակցական 1-ին ժողովը, որն ընտրել էր դիվան և հանձնախումբ: Վերջինը մշակել և ուսուցիչներին էր ուղարկել միության կանոնագիրը և ընդհանուր ժողով գումարելու հրավերը²⁰⁰: Ատաբազարի Ուսուցչական միությունը արագ տեմպերով վերածվել էր գործող մարմնի: Այն պարբերաբար ուսուցիչների համար կազմակերպում էր մանկավարժական դասընթացներ, որոնց ժամանակ ավանդ ունեցող ուսուցիչները հանդես էին գալիս դասախոսություններով և գործուն աջակցություն էին ցուցաբերում դրական փորձի փոխանցման առումով²⁰¹: Քննարկվում էին դպրոցների կրթական ծրագրերն ու դասավանդման մեթոդները:

«Բյուրանիան» խմբագրականների միջոցով ներկայացնում էր Ուսուցչական միության կողմից բարձրացվող պահանջները: Ուսուցիչները պահանջում էին մշակել կրթական միօրինակ ծրագիր բոլոր նախակրթարանների համար. «Ատաբազարի բոլոր թաղային նախակրթարանները թե՛ դասագիրքերու, թե՛ դասաւանդութեան ընդհանուր ուղղութեան տեսակէտով պէտք է ըլլան միօրինակ, այնպէս որ նախակրթարաններու Միջին Բ. կարգերէն ետք, Բարձրագոյն Ա. կարգերը համապատասխանեն Կեդր. Վարժարանի Ա. դասարանին»²⁰²: Պահանջում էին միօրինակ դարձնել աշակերտների տարիքը յուրաքանչյուր կարգի համար: Այդ ձևով կկարողանային պետական վարժարանների

¹⁹⁹ Նույն տեղում:

²⁰⁰ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 13, էջ 429:

²⁰¹ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 18-19, էջ 476-477:

²⁰² Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 14, էջ 433:

ծրագրին համահունչ կազմակերպել ուսումնական գործընթացը: Ուսուցիչներն առաջարկում էին միացնել թաղային նախակրթարանների բյուջեն²⁰³: Կրթական ծրագրերի բարեփոխումը թերթի կարծիքով՝ պետք է իրականացվեր կրթական ոլորտի աշխարհականացման ճանապարհով՝ այն զերծ պահելով կղերականությունից²⁰⁴:

«Բյութանիան» արծարծել է իգական սեռի կրթության և դաստիարակության խնդիրները: Խմբագրությունը շեշտում էր «իգական սեռին համար բարձրագույն կրթութեան մը» անհրաժեշտությունը²⁰⁵: Այդ նպատակով առաջարկում էր գոնե Ատաբազարում հիմնել «Աղջկանց Երկրորդական կամ Կեդրոնական վարժարան մը»²⁰⁶: «Բյութանիան» կոչ էր անում քաղաքի կանանց համախմբել իրենց ուժերը և ստեղծել այնպիսի կրթասիրաց միություն, որը կֆինանսավորեր իգական սեռի համար բացվելիք կեդրոնական վարժարանը²⁰⁷, քանի որ մինչ այդ՝ 1909 թ. գործող նմանատիպ միությունը դրական ոչինչ չէր արել²⁰⁸: 1910 թ. Նիկոմիդիա գավառում արդեն գործում էին կանանց միություններ (օրինակ՝ Ատաբազարի և Պարտիզակի Լսարանական միությունները, Պարտիզակի և Իզմիտի «Կարմիր խաչի» ընկերակցությունները, Եկեղեցասիրաց հանձնախմբերը, Ատաբազարի Ս. Կարապետ թաղի Կանանց Դպրոցասիրաց և Ս.Հրեշտակապետաց թաղի Սանուհյաց միությունները և այլն)²⁰⁹: «Բյութանիան» գտնում էր, որ իրենց իրավունքների պաշտպանության համար կանայք առաջին հերթին պիտի կիրթ լինեին: Այդ գոր-

²⁰³ Նույն տեղում, էջ 433-434:

²⁰⁴ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 18, էջ 206:

²⁰⁵ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 14, էջ 433:

²⁰⁶ Նույն տեղում:

²⁰⁷ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 13, էջ 426:

²⁰⁸ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 13, էջ 425:

²⁰⁹ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 16, էջ 451:

ծում նրանց պիտի օգնեին կրթական միությունները²¹⁰: «Կան մայրեր, որ կը յայտարարեն, թե իգական սեռը պետք չունի բարձր դաստիարակութեան մը: Կան, որ կը կոչեն, թե կինը չէ կրնար մարսել բարձր ուսումը, չի կրնար մտաւոր ծանր աշխատանք վերցնել, հետևաբար պետք չունի մտաւոր լայն զարգացումի: Սակայն այդ տրամաբանութենէն աւելի անտրամաբանական բան չկայ: Ինչպէս արու անհատ մը իրաւունք ունի կրթւելու, զարգանալու, աղջիկն ալ նոյնքան իրաւունք ունի զարգանալու», - գրում էր «Բյութանիան»²¹¹: Իգական սեռի դաստիարակության և կրթության ավագ կարևորությունը պարբերականը հիմնավորում էր այն հանգամանքով, որ կանայք դաստիարակում էին աճող սերնդին: Այնպես որ, ցանկացած ազգի առաջադիմությունը կախված էր մայրերի կամ կանանց կրթությունից: Միննույն ժամանակ շաբաթաթերթը փաստեր էր վկայակոչում առ այն, որ մի շարք գյուղերի ղեկավար մարմինները չէին կարողանում գյուղացիներին բացատրել աղջիկների կրթության ու դաստիարակության անհրաժեշտության կարևորությունը: Օրինակ՝ 250 տուն ունեցող Մերտեկեոզի բնակիչները չէին ցանկանում տարեթոշակի գումար հատկացնել 85-90 աղջկա համար մեկ վարժուհի ունենալու նպատակով: Բնական էր, որ այդ պատճառով փակվել էր գյուղի աղջիկների համար նախատեսված նախակրթարանը²¹²: Հիշատակենք նաև հետևյալ փաստը: Պարբերականի հրապարակումներից պարզ էր դառնում, որ մեկ տարուց ավել էր, ինչ Նիկոմիդիայի կրթասեր հասարակության կողմից հատկացված գումարները չէին ծառայում իրենց նպատակին՝ չէր կառուցվում Ազգային երկսեռ վարժարանի շէնքը²¹³: «Բյութանիան», սակայն, բերում էր նաև հաջողությունների հա-

²¹⁰ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 20-21, էջ 486:

²¹¹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 14, էջ 164:

²¹² Նույն տեղում:

²¹³ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 19, էջ 225:

սած իզական վարժարանների օրինակներ: Ասենք՝ Ատաբազարի Հայուհյաց վարժարանը համարում էր առողջ պատվար հայ աղջիկների դաստիարակության գործի համար: «Բյութանիան» հիշեցնում էր, որ 1909 թ. Ադանայի կոտորածից մազապուրծ հայ որբերն ու որբուհիները հացի հետ գիրք էին խնդրում իրենց օգնություն բաժանող Զաբել Եսայանից և տիկին Թեոդիկից²¹⁴: Ըստ «Բյութանիայի»՝ կանանց մեջ էր հատկապես դրսևորվում մեր ազգային ոգին. «Հայը արինահեղուրթեան հետևյալ օրն իսկ կը շարունակէ անողոքօրէն ընդհատել տրւած իր ճամբան»²¹⁵: Մինչև վերջին համարը «Բյութանիան» անդրադարձել է կրթական հիմնախնդիրներին, նաև լուսաբանել է Նիկոմիդիայի կրթական ոլորտի կարևոր իրադարձությունները:

1912 թ. թերթն ավելի շատ քաղաքական հովերով էր տարված և փորձում էր իր հրապարակումներով արտահայտել ՀՅԴ տեսակետները այդ տարի անցկացվելիք օսմանյան խորհրդարանական ընտրություններում հայ երեսփոխանների ընդգրկվածության աստիճանի, Ազգային ժողովում հայ պատգամավորների ունեցած տեղի, դերի և հարակից հարցերի վերաբերյալ: Խմբագրական կազմի «տկարութեան», գործակալների և բաժանորդների անփութության պատճառով առաջացած նյութական դժվարությունները, տպագրության ծանր պայմանները թույլ չէին տալիս, որ «Բյութանիան» լիարժեք իրականացներ իր ծրագրերը²¹⁶: «Գավառով և գավառի համար» նշանաբանով էր առաջնորդվում «Բյութանիան» և անում էր այն, «ինչ-որ կարելի էր, թելադրում՝ ինչ որ օգտակար էր, և մատնանիջ էր անում՝ ինչ-որ կեղծ էր և վնասակար»²¹⁷: Հայ ժողովուրդը պարտավոր էր անել նոր քայլ՝ լուծելու համար իր առջև ծառայած խնդիրները,

²¹⁴ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 10, էջ 109:

²¹⁵ Նույն տեղում:

²¹⁶ Նույն տեղում, Իզմիտ, 1911, թիվ 1, էջ 325:

²¹⁷ Նույն տեղում:

ի թիվս որոնց մասնավորապես կրթական հիմնահարցերը: Հայր կամ պիտի կործանվեր, կամ՝ քայլեր առաջ: «Ուրիշները սկսած են շարժիլ ու դիմել առաջ: Պէտք է շարժինք և մե՛նք. ժամանակը եկած, անցած իսկ է», - համոզված պնդում էր «Բյութանիան»²¹⁸:

«Բյութանիան» անմասն չէր գրական-մշակութային անցու-դարձից: Թեև պարբերականի «Գրական բաժինը» ոչ բոլոր համարներում կար, բայց «Բյութանիայի» էջերում առնվազն մեկ բանաստեղծություն մշտապես գտնում էր իր տեղը: Այստեղ Միամանթոյի, Դ.Վարուժանի, Շահան Նաթալիի, Հակոբ Սիրունու, Վահան Թոթովենցի, Լևոն Էսաճանյանի, Հրանտ Նազարյանի (Հ. Ալվիար), Ատրուշանի բանաստեղծությունների կողքին կարող ենք գտնել գավառահայ ոչ այնքան հայտնի բանաստեղծների, ի թիվս որոնց՝ Արտեմ Շահնուրի, Զարեհ Բլբուլի, Խաչիկ Գավալճյանի, Ղ.Մելոյանի, Հրացայտի, Մշակի, Վրույրի, Էս-Մեի և այլոց ոտանավորները: «Գրական բաժնում» զետեղվում էին նաև պատմվածքներ ու նովելներ հիմնականում գավառահայ արձակագիրներից (օրինակ՝ Սուրեն Միսքճյանից (Սրենց), Բ. Ազրայելից, Ծիրկաթինից, Մելքոն Հովսեփյանից): Ամեն պարագայում, գրական-մշակութային կյանքը այնքան էլ չի հետաքրքրել շաբաթաթերթի խմբագրակազմին: Այս գրական քաղաքականությունն առավել ցայտուն է դրսևորվել 1912թ. օսմանյան խորհրդարանական ընտրությունների շրջանում, երբ պարբերականը հիմնականում աչքի է ընկել քաղաքական ուղղվածությամբ: «Բյութանիան» միայն ընդհանուր պատկերացում է փորձել տալ Նիկոմիդիայի մշակութային ոլորտի անցուդարձի մասին: Ասենք՝ «Մատենադարան» և «Ստացված գրքեր» բաժիններում լուրեր էին տպագրվում նոր լույս տեսած պարբերականների մասին: Հաճախ այդ լրատվությունը գովազդային բնույթ ուներ. խմբագրությունը խորհուրդ էր տալիս գնել այս կամ այն գիրքը, պարբերականը՝

²¹⁸ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 15, էջ 433:

նշելով դրանց գները և ձեռքբերման հասցեները: 1910 թ. 7-րդ համարում լուր կար այն մասին, որ լույս էր տեսել Դ. Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածուն. «Ճոխ հատոր մը. Օ. Արզուման մաքուր տպագրութեամբ՝ փայլուն թուղթի վրայ: Հատորը բաժնուած է 3 մասերու, Բագինին վրայ, Կրկեսին մէջ, Դիւցազնավէպեր, կը պարունակէ 42 քերթուածներ ու բանաստեղծութիւններ: Գինն է 9 դրուշ: Կեդրոնատեղի՝ «Արծիւ» գրախանութ, Մարբուճըլար, 22»²¹⁹: Կամ ընթերցողներին տեղեկացնում էր, որ Ա. Պիպեռճյանի աշխատասիրութեամբ հրատարակվել էր «Ճաշակ արդի հայ մատենագրության» երկհատորյակը, յուրաքանչյուրը 450 էջով: Դրանցում զետեղված էին 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի արևելահայ ու արևմտահայ հանրաճանաչ գրողներից արձակ և չափածո ստեղծագործություններ: «Ա հատորը կը ծախուի 10 դրշի, հակառակ իր ծաւալին ու մաքուր տպագրութեան-շատ աժան գնով: Կեդրոնատեղին է՝ հեղինակին քով, Պապը- Ալի Ճատտեսի թիվ 12», - գրում էր «Բյութանիան»²²⁰:

Գրական ստեղծագործությունների արժեք ունեն «Ակնոցիս տակեն» շարքում Սուրեն Սրենցի և «Մանրանկարներ» շարքում Կռողի երգիծական դիմանկարային նովելները Նիկոմիդիայի «ազգային ջոջերի» մասին: Դրանցից մեկում Ս. Սրենցը ծաղրում էր Ատաբազարի հայտնի մեծահարուստ Դիոկղետիանոս աղային, ով «ամեն առտու և իրիկուն ֆալուխայ կը քաշէ իր խիղճին, որպէս զի լուռ կենայ»²²¹: Նիկոմիդիայի մշակութային կյանքն այնքան էլ հազեցած չէր միջոցառումներով: Կազմակերպվող միջոցառումները (դպրոցների, վարժարանների, մանկապարտեզների տարեվերջյան հանդեսներ, կուսակցությունների կողմից անցկացվող բանախոսություններ, համերգներ) լուսաբանվում էին «Բյութանիայի» թղթակիցների կողմից: Օրինակ՝ լուր կար

²¹⁹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 7, էջ 74:

²²⁰ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 9, էջ 107:

²²¹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 6, էջ 65:

այն մասին, որ մեկ ամիս շարունակ թաղապետական պարտեզում հանդես էր եկել ամերիկյան կրկեսի 30 հոգանոց երկսեռ խումբը. «Ուրախ ենք, որ քաղաքիս միօրինակ կեանքը գոնե ժամանակի մը համար այս խումբին շնորհիւ կը ստանայ անօրինակ կենդանութիւն մը: Գիները կը կազմեն 3-5-10 դուրուշ, ինչ որ ամեն քսակի ալ մատչելի է»²²²: 1911թ. մարտի 29-ին Ատաբազարում մի քանի ներկայացում տալուց հետո Իզմիտ էր ժամանել Հայ դրամատիկ թատերախումբը, որի ներկայացումներին մասնակցում էին նաև Վահրամ Փափագյանն ու Ենովք Շահենը: Իզմիտից հետո նրանք մեկնել էին Կ.Պոլիս: Այս լուրին «Բյութանիան» կցել էր «Թեաթըր» իտալական թերթից Վ. Փափագյանին նվիրված հոդվածի թարգմանությունը, որտեղ ամփոփված էին օտարազգի անվանի թատերագիրների կարծիքները Հայ դրամատիկ թատերախմբի «լուսաւոր աստղի» մասին²²³: Թատերական աշխարհի անցուդարձին անդրադառնում էր Հեթանոսը: Վերլուծական նյութերից կարելի է առանձնացնել Հ. Պուլուտյանի «Կորադոն ի պատիվ մամուլին» հոդվածը: Հեղինակն անդրադառնում էր Նիկոմիդիայում Հ.Աբելյանի և «Զարիֆյան» թատերախմբի «Օթելլո» ներկայացմանը, որի ավարտին Աբելյանը հանդիսատեսին խոստացել էր կրկին ներկայացումներ տալ այդտեղ՝ Պարտիզակում հյուրախաղերով հանդես գալուց հետո: Նա դա անելու էր ի պատիվ «Բյութանիայի»՝ որպէս «քաջալերութեան առհաստիցէս մը ըլլալու համար գավառական մամուլին»²²⁴: Հիշատակում էր Իզմիտում լույս տեսած 1-ին հայկական պարբերականը՝ «Հայրենասերը»²²⁵, որը հրատարակվել էր Նիկոմիդիայում 1850-1853 թթ. հայտնի Մուրադ վարժապետի

²²² Նույն տեղում, Իզմիտ, 1911, թիվ 9, էջ 398:

²²³ Նույն տեղում:

²²⁴ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 10, էջ 117:

²²⁵ Կարինյան Ա., «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», հ. 2, Երևան, 1960, էջ 478-479:

ավագ որդու՝ Աբրահամ Մուրադյանի կողմից սկզբում իբրև շաբաթաթերթ, հետո՝ երկշաբաթաթերթ: «Խորհեցայ այն 17-18 տարեկան պատանիին ձեռներեցութեան, կորովին և աշխատասիրութեան վրայ, որ տպարանական արհեստին շատ անկատար կերպով տեղեակ, ինքն էր ոչ միայն խմբագիրը, այլև գրաշարը, տպագրիչը իր սիրական թերթին. այդ ամեն աշխատութիւնք իր ձեռքով միայն կը կատարուէին համեստ և աղքատ իր բնակարանին մէջ»²²⁶, - գրում էր Հ. Պուլուսյանը:

«Բյութանիան» մի քանի խմբագրական էր նվիրել արվեստի զարգացման խնդիրներին: Դրանցից առանձնացնենք Նորայրի «Քննադատությունը» վերնագրով եռագրությունը: Հեղինակը կարևորում էր առողջ քննադատության դերը մշակույթի առաջընթացի գործում: Անդրադառնում էր գավառում սկսված գրական-մշակութային շարժմանը. «Գաւառը պիտի արտադրէ այն տարրերը՝ որ հարկաւոր են ստեղծելու համար ինքնուրոյն հայ կեանք մը՝ մամուլով, դպրոցով, գեղարուեստով, գրականութիւնով»²²⁷: Գավառահայ մշակութային շարժման լավագույն դրսևորումը հեղինակը համարում էր Ատաբազարի «Ադամյան» սիրողական թատերախմբի գործունեությունը: Այստեղ համախմբված էր գավառական բեմի վրա 1-ին անգամ հանդես եկող երկսեռ դերասանական խումբ²²⁸: Դերասաններից շատերին (Զարեհ Բլբուլ, Գրիգոր Տատուրյան) Նորայրը տաղանդավոր և խոստումնալից էր համարում²²⁹: Այս թատերախումբը ներկայացրել էր Ղ. Մելոյանի «Անառակ որդին» դրաման: Ղ. Մելոյանը Ատաբազարի Կեդրոնական վարժարանի ավագ ուսուցիչ էր. «Գաւառի հարազատ զաւակն է և մէկը այն սակաւաթիւներէն, որ նորաստեղծ հայ գրականութեան մէջ կը բերէ հայկական հզօր

²²⁶ «Բյութանիա», Իզմիտ, 1910, թիվ 10, էջ 117:

²²⁷ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 15, էջ 166:

²²⁸ Նույն տեղում:

²²⁹ Նույն տեղում, էջ 165:

գրականութեան մը ատաղձները, և որուն արդարեւ վիճակուած է փառաւոր տեղ մը մեր գրական կրկեսին մէջ, եթէ իր աշխատութիւնները շարունակէ այն թափով՝ որով որ արդէն սկսած ու արտադրած է այնքա՛ն հուժկու պատկերներ, ինչպէս են իր Հողի մարդիկը, Դաւաճան կինը, Մարդիկ արածում են»²³⁰:

Գրաքննադատական հողվածների շարքում ուշագրավ է Դանիել Վարուժանի «Պատգամավորներ» ստեղծագործության առիթով Մելքոն Հովսեփյանի գրած հոդվածը: «Գեղեցկագէտ բանաստեղծի իր հոյակապ քերթուածներէն կը բուրէ իր ցեղակիցներուն արիւնին հոտը: Ու հերոսութիւնները տակաւին, որոնք գեղեցիկ ու լուսատու փարոսներ են, որո՛նց բանաստեղծը յանի՛լ կը ստիպէ ներկայ թշուառացած իր եղբայրները, աներեր մնալու համար բոլոր մրրիկներուն մէջ, որպէս զի հակառակ բոլոր չարաղետ դէպքերուն՝ ցեղին հոգիին մէջ չմեռնի ապրելու իղձը, և նորանոր յոյսերու կառչած՝ ուժգնօրէն ցցուի և վազէ դէպի նպատակը, դէպի Ազատութիւն»²³¹, - գրում էր հեղինակը: Այս կտրվածքով վերլուծելով Վարուժանի պոեզիան՝ նաև զուգահեռներ էր անցկացնում նրա և Ավետիս Ահարոնյանի միջև:

«Բյութանիան» անմասն չէր մնացել գրական կարևոր իրադարձություններին և անդրադարձել էր դրանց լուրի, թղթակցության, հողվածի տեսքով: Հիշատակենք 1910 թ. հուլիսի 5-ը, երբ լրացավ անվանի հայագետ, իմբագիր, բանաստեղծ Գրիգոր Բալասանյանի գրական գործունեության 50-ամյակը: «Բյութանիան» լուսաբանել էր այդ հոբելյանական իրադարձությունը՝ նախապէս գրախոսականներ գրելով Գ. Բալասանյանի գրական վաստակի մասին: Այդ հողվածների թվում յուրահատուկ ամփոփիչ ուսումնասիրություն էր 50-ամյակի առիթով Վիեննայում տեղի ունենալիք հոբելյանական հանդիսությունները կազմա-

²³⁰ Նույն տեղում, էջ 166:

²³¹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 18, էջ 207:

կերպող հանձնաժողովի նախագահ Ե.Դավթյանի հողվածը²³²: Գրական անդաստանում ողջունելի ծնունդ էր Բոստոնում Շ. Նաթալիի «Շանթ» հանդեսի հրատարակությունը, որին բաժանորդագրվելու պայմաններն էր իր ընթերցողներին ներկայացրել շաբաթաթերթը²³³: «Բյութանիան» ընթերցողներին տեղեկացրել էր մեկ այլ հիշարժան երևույթի՝ հայ տպագրության 400-ամյա հոբելյանի կապակցությամբ լույս տեսած քառահատոր «Հիշատակարանի» առաջին հատորի մասին, որտեղ ամփոփված էին հայ 55 երևելի անձանց կենսագրականներ, լուսանկարներ, ձեռագրեր: Այն ստանալու համար հարկավոր էր «դիմել խմբագրութեանս և կամ հրատարակիչներուն. Կ. Պոլիս, Վ. Պ. Ջարդարեան Գրատուն, Չագմագճըլար թիվ 24-25»²³⁴: Թերթը ազգային տոն էր համարում Վարդանանց պատերազմը, որին նվիրված Օ. Շահինյանի «Քաջ Վարդան Մամիկոնյան կամ Ավարայրի արծիվը» ներկայացման ազդն էր տեղադրել վերջին էջում: Այն ներկայացվելու էր Իզմիտի Ազգային թատրոնում «մեծաշուք հանդիսաւորութեամբ» 1911 թ. փետրվարի 21-ին. «Կը վայելէ որպէս զի ամեն հայ անձամբ գայ և տեսնէ այս պատմական ողբերգութիւնը», - գրում էր պարբերականը²³⁵:

Համամարդկային գրական-մշակութային մեծություններին նույնպես, այս կամ այն առիթի դեպքում, անդրադարձել էր «Բյութանիան»: Օրինակ բերենք Ու. Չերքեզովի հողվածը Լ. Տոլստոյի մահվան կապակցությամբ²³⁶:

«Բյութանիայի» համար կարևոր էին գրական իսկական արժեքները: Պատահական չէր, որ իր թերթնում տպագրել էր թուրք հանրաճանաչ բանաստեղծ Նամըզ Քեմալի «Երագ» վի-

²³² Նույն տեղում, էջ 212:

²³³ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 26, էջ 280:

²³⁴ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 27, էջ 300:

²³⁵ Նույն տեղում, Իզմիտ, 1911, թիվ 6, էջ 380:

²³⁶ Նույն տեղում, Իզմիտ, 1911, թիվ 1, էջ 330:

պակը Ս. Թապազյանի հայերեն թարգմանությամբ: «Նամըզ Քեմալ թուրք գրագետ-բանաստեղծներուն մէջ ամենէն մեծը, ժողովրդականը և գրական վերանորոգման պարագլուխներուն ամենէն կորովին եղած է», - գրում էր Ս. Թապազյանը առաջաբանում²³⁷:

Հայ ժողովուրդը բոլոր բնագավառներում ուներ տաղանդավոր, ազգասեր ու իրենց գործին նվիրյալ զավակներ, որոնք նպաստավոր պայմաններում ի գորու էին ստեղծել համամարդկային արժեքներ, ի գորու էին շենացնել ու հզորացնել սեփական հայրենիքն ու երկիրը: Գրականության ասպարեզում, օրինակ՝ «Սիամանթօ, Դ. Վարուժան, Ջարդարեան, Ահարոնեան, Սուրեն Պարթեւեան, «Ազդակը» և իր նորահաւատ ու նորօրինակ առաքեալները և ուրիշ մէկ քանի ճշմարիտ կոչուածներ՝ իրենց տաղանդներով եկան աստղահիւսել մեր գրական նոր դարագլուխը»²³⁸: Գրականության և մշակույթի առաջընթացին նպաստելու նպատակով պարբերականը գործնական քայլ էր արել՝ 1910 թ. մարտի 14-ին Իզմիտի կայարանին հանդիպակաց գտնվող սրճարանի պարտեզապատ սրահում բացելով «Բյութանիա» անունով լսարան-ընթերցարան: Այնտեղ ընթերցասեր հանրությանն էին անվճար տրամադրվում Արևմտյան Հայաստանում և հայկական գաղթօջախներում լույս տեսնող 40 անուն պարբերական, հայերեն և օտար լեզուներով գրականություն²³⁹:

1908 թ. հեղաշրջումից հետո արևմտահայության սոցիալ-տնտեսական վիճակը մնաց անփոփոխ: Գավառում և հայկական գաղթավայրերում դրությունը առավել սրված էր, քանի որ հիմնախնդիրներին ականջալուր եղող չկար Օսմանյան կայսրության գավառակենտրոններում: Արևմտահայությանը մտահոգող և լուծման սպասող հիմնահարցերն արծարծվում էին

²³⁷ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 18, էջ 210:

²³⁸ Նույն տեղում, Իզմիտ, 1911, թիվ 1, էջ 326:

²³⁹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 8, էջ 96:

հիմնականում տեղական ազգային մարմինների ժողովների ժամանակ: Դրանք ուշադրության էին արժանանում գավառական մամուլի օրգանների կողմից, որոնք պարբերաբար կոչերով դիմում էին թե՛ կառավարական շրջանակներին, թե՛ ազգային կառույցներին՝ խնդրելով և պահանջելով բարելավել ժողովրդի կենսապայմանները: Հատկապես աչքի էր ընկնում «Բյութանիան», որը տնտեսական բաժնին մեծ տեղ էր հատկացնում բոլոր համարներում: Այլ հարց է այն, որ գավառի թերթերի հրապարակումները մատնվում էին անուշադրության և մնում էին անտեսված: «Բյութանիան», սակայն, շարունակում էր հետևողականորեն անդրադառնալ ու ներկայացնել Թուրքիայի տնտեսական քաղաքականությունը, որը հատուկ մշակված ծրագիր ուներ՝ հայության ձեռքից տնտեսական լծակները խլելու, հայ ժողովրդին ունեզուրկ և աղքատ դարձնելու, հացի խնդիրը լուծելու նպատակով հայությանն իր հայրենիքից արտագաղթեցնելու համար: Շաբաթաթերթը արձարծում էր հողային հարցը, իրենց տները վերադարձող հայ գաղթականների հանդեպ Թուրքիայում իրականացվող այն քաղաքականությունը, երբ պետական համապատասխան օղակներն ընդունում էին այնպիսի որոշումներ, որ հայրենադարձվող հայերը չկարողանային ետ ստանալ նախորդ կոտորածների ժամանակ իրենցից խլված հողերը, տները և կորցրած ունեցվածքի փոխհատուցումը: «Բյութանիան» փաստեր էր բերում նաև այն մասին, որ Թուրքիայում այլ երկրներից (Բոսնիայից, Ռումինիայից, Ռուսաստանից) վերաբնակվող և իսլամ դավանող գաղթականների համար բոլորովին այլ ծրագիր էր իրագործվում, որով նրանց համար ապահովվում էին լավագույն պայմաններ «Անատոլիայում» վերաբնակվելու և բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Պարբերականը հարցապնդմամբ էր հանդես գալիս. «Արդեօք միայն իսլամ գաղթականներն են, որ օտար հորիզոններու տակ կը տուայտին, և այդ ճակատագիրը աւելի դժնդակ կերպով չիշխէ՞ր նաև հայ և

ընդհանրապես քրիստոնեայ ուրիշ գաղթականներու վրայ, որոնք առաւելութիւնը ունին մանաւանդ այս երկրի հարագատ գաւակները ըլլալու, և որոնք հայրենիքի, հայրենի հողի սուրբ գաղափարովը տոգորուած՝ անկէ կը սպասեն կարկառուն ձեռքի մը, որ չի գար իրենց օգնութեան»²⁴⁰: «Տնտեսական բարգաւաճում և գաղթական հարց» հոդվածի հեղինակ Աշոտ Պազպազյանը հանգում էր այն եզրակացության, որ թուրքական կառավարությունը ձևականորեն ցուցադրում էր, թէ իբր փորձում էր բավարարել հայրենիք վերադարձած հայ գաղթականների արդարացի պահանջները, այնինչ մինչև կառավարական խոստումները կյանքի կկոչվեին, գաղթական հայը դատապարտված էր մնալու անտուն և անհող: Ինչպէ՞ս կարելի էր հավատալ, թէ Թուրքիայում հավասարություն և արդարություն էր տիրում²⁴¹:

Հողային հարցը Թուրքիայում²⁴² «հայկական հարց նկատուեցաւ»²⁴³: Այդ կենսական խնդիրը լուծելու համար «քննիչ յանձնախումբեր եկան, գացին, ծրագիրներ մշակուեցան, վճիռներ տրուեցան, բայց մնացին չգործադրուած»²⁴⁴: Հողային հարցը «Բյութանիան» «Ո՛ւր է արդարությունը» խմբագրականում համարում էր տնտեսական խնդիրների հիմնաքարը և դրա անլուծելի մնալու հետ էր կապում երկրում ծայր առած դժվարությունների վերաճումը քաղաքական պայքարի, ինչը կարող էր հանգեցնել թուրքական պետության փլուզմանը²⁴⁵: Հողային հարցին են նվիրված «Բյութանիայի» 1911 թ. հրապարակումների մեծ մասը: 1912 թ. հունվարի 5-ի «Անցնող տարին» խմբագրականն ամբողջությամբ

²⁴⁰ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 26, էջ 277:

²⁴¹ Նույն տեղում, էջ 278:

²⁴² Թուրքիայում լուծում պահանջող հողային հիմնահարցին առավել հանգամանորեն անդրադարձել ենք սույն աշխատության «Ազատամարտ» օրաթերթին նվիրված հատվածում:

²⁴³ «Բյութանիա», Իզմիտ, 1910, թիվ 26, էջ 191, նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 15, էջ 442:

²⁴⁴ Նույն տեղում:

²⁴⁵ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 17, էջ 457-458:

անցած՝ 1911 թ. տնտեսական տարվա վերլուծությունն էր: Բերվող փաստերը վերցված էին Նիկոմիդիա գավառի տնտեսական կյանքից: Թերթը հիմնականում աննպաստ էր համարում տնտեսական տարին, ինչը պայմանավորում էր Թուրքիայի սոցիալ-քաղաքական իրավիճակով, պատերազմական կացությամբ, հայ ժողովրդի հանդեպ կիրառվող տնտեսական ճնշիչ քաղաքականությամբ և այլն²⁴⁶: «Բյութանիան» համոզված էր, որ անգամ համիդյան բռնապետության շրջանում Նիկոմիդիայի հայ ազգաբնակչությունը կարողացել էր տնտեսական առաջընթաց ունենալ, բայց երիտթուրքական կառավարությունն այնպիսի իրավիճակի մեջ էր դրել նրանց, որ նրանք, աստիճանաբար մնալով անգործ, վերածվել էին աղքատացող, տարիների ընթացքում կուտակված ունեցվածքի հաշվին գոյատևող զանգվածի: Թերթը որպես օրինակ էր բերում Իզմիտի շրջանը, որտեղ տարիներ շարունակ մարդիկ ապրում էին ծխախոտի մշակությամբ և վաճառքով: Սահմանադրական հռչակված Թուրքիան մենաշնորհ էր հաստատել, և «Ծխախոտի ԲԷԺԻ» կոչվող ընկերությունը ոչ միայն խլում էր աշխատանքը ժողովրդի ձեռքից, այլև շահագործում էր մարդկանց՝ հաստատելով չնչին աշխատավարձ, ծխախոտի բարձր գներ ու անմշակ թողնելով հսկայական հողատարածքներ: «Բյութանիան» հակասություն էր տեսնում ստեղծված իրավիճակում. «Յանուն ինչի՞ են այդ մենաշնորհները, յանուն Պետական Գանձի շահու՞ն: Պետական շահ կը նշանակե ժողովուրդի շահ: Այնտեղ, ուր ժողովուրդը կը վնասուէ, անհնար է, անկարելի է մտածել, որ պետութիւնը կը շահի, որքան ալ լեցուին պետական գանձարանները»²⁴⁷: «Բյութանիան» իր վերլուծությունը հավաստի դարձնելու նպատակով վկայակոչում էր Կ.Պոլսի «ժողովրդային իրաւունքներու ակներեւ պաշտպան»

²⁴⁶ Նույն տեղում, Ատաբազար, 1912, թիվ 1, էջ 537:

²⁴⁷ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 11, էջ 123:

ՀՅԴ «Ազատամարտ» օրաթերթում «Ծխախոտի ԲԷԺԻ» ընկերության մասին գրված հոդվածը: Այդտեղ «ԲԷԺԻ» համարվում էր հողագործի նյութական շահերի համար վնասակար ընկերություն: «Բյութանիայի» կարծիքով՝ «ԲԷԺԻ» գլխավոր նպատակն էր «մեծագոյն շահ մը ձեռք ձգել իր բաժնետերերուն, հոգ չէ թէ իր գործելու պայմաններն ու եղանակը նպաստաւոր թէ աննպաստ ըլլան ծխախոտի մշակին կենսական շահերուն»²⁴⁸: «Բյութանիան» ժողովրդին առաջարկում էր համախմբված ձևով իրենց պատգամավորների միջոցով օսմանյան խորհրդարանում քննարկման առարկա դարձնել «Ծխախոտի ԲԷԺԻ» ընկերությանը մենաշնորհից գրկելու հարցը: Չէ՞ որ հակառակ դեպքում «ԲԷԺԻՆ» պիտի «առ նուազն քառորդ դար եւս երկրագործ տարրին ԾՈՒԾԸ քամի»²⁴⁹:

Թուրքիայի շոգեկառքի ընկերությանը տրված մենաշնորհով էլ բարձրացվել էին Իզմիտի և շրջակա հայկական գյուղերի համար նախատեսված տոմսերի սակագները, և այդպիսով դժվարացել էր ապրանքափոխանակումը: Նման քայլերը նպաստելու էին Իզմիտի տնտեսական մահվանը. սա էր «Բյութանիայի» եզրակացությունը²⁵⁰: Իզմիտին նվիրված վերլուծական հոդվածում ահա թէ ինչ էր գրում թերթը. «Իզմիտը փայլում էր իր վաճառականութեամբ հին րեժիմին ժամանակ: Ան աչալրջութիւնն ունեցաւ իր ուժերը հաւաքելու նուազ հալածական գետնի մը վրայ, որ էր տնտեսական գետինը: Իզմիտի ոսկիին շողը եթէ հաճեր իսկ մինչեւ Հայաստան հասնիլ՝ արեւը նոյն օրը տասն անգամ մարը մտած կըլլար: Բայց երկար չտեսց: Ահա Սահմանադրութեան արեգակը: Իզմիտի վաճառականութիւնը չղջիկի պէս քարանձաւը մտաւ: Պատճառ՞: Շոգեկառքի Ընկերութիւնը իր ծա-

²⁴⁸ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 16, էջ 186:

²⁴⁹ Նույն տեղում:

²⁵⁰ Նույն տեղում, էջ 122:

նօթ արարքով զուլումի մատնեց իզմիտցի վաճառականը»²⁵¹: Իսկ «Ընկերային և տնտեսական կյանքը Իզմիտի մեջ» հողվածում «Բյութանիան» Կ.Պոլսից ամեն տեսակետով մեկ տարով ետ մնացած էր համարում Իզմիտը, որը ժամանակին համարվում էր Թուրքիայի մայրաքաղաքի արվարձաններից մեկը²⁵²: «Նահանգին զիւղերուն մեջ կեանքը մեռածի պէս բան մըն է: Իզմիտի նահանգին թէ ընկերային եւ թէ տնտեսական կեանքը յոյժ ողբալի վիճակ մը ունի: Նահանգին ոչ մէկ կողմը տնտեսական գործունէութիւն չի տեսնուիր»,- կարդում ենք վերլուծականում²⁵³:

«Բյութանիան» վկայակոչում էր Թուրքիայի տնտեսական քաղաքականության բացերից ևս մեկը, որի պատճառով հարյուրավոր հայ մարդիկ էին մահանում: Պետությունն անուշադրության էր մատնում այն հանգամանքը, որ մի շարք հայկական գյուղերի մոտակայքում առաջացել էին ճահիճներ: Դրանք չէին չորացվում: Բնական էր, որ հեկտարներով բերրի հողեր էին վերածվում ճահիճների՝ մնալով անմշակ, իսկ ճահճահողերն այդ գյուղերի բնակիչների մոտ առաջացնում էին զանազան մահաբեր հիվանդություններ: Օրինակ էր բերվում Մարմարաձրգ գյուղը, որտեղից ստացված թղթակցությունից պարզվում էր, որ 300 տուն ունեցող գյուղում 2 ամսվա ընթացքում 107 մարդ էր մահացել ճահճային տենդից: Թերթի կարծիքով՝ Թուրքիայի մի ծայրից մյուսում ցրված այսպիսի ճահիճների պատճառով «երկիրը կը տուժէ այնչա՛փ կեանքեր ու ահագին արժէքով բերք, որը պիտի արտադրէին ասոնք մաքրուելով ու մշակուելով»²⁵⁴:

«Բյութանիան» մի կողմից՝ կառավարության ուշադրությունն էր հրավիրում հայկական գավառում տարիներ ի վեր գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական խնդիրների վրա, մյուս

²⁵¹ Նույն տեղում, էջ 126:

²⁵² Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 27, էջ 294:

²⁵³ Նույն տեղում, էջ 295:

²⁵⁴ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 11, էջ 409:

կողմից՝ հանդես էր գալիս հիմնահարցերի լուծման տարբեր առաջարկներով: Դրանք հիմնականում զետեղվում էին շաբաթաթերթի էջերում ամփոփված «Գյուղատնտեսական թերթին» բաժնում: Հիշատակության է արժանի Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթից արտատպված Անդրանիկ Պոտուրյանի «Երկրագործական պայմաններ» հոդվածաշարը, որի 1-ին հոդվածը լույս էր տեսել «Բյութանիայի» 1910 թ. 11-րդ համարում: Նույն հեղինակի մեկ այլ՝ «Մունդ» հոդվածաշարում «Երկրագործական գիտելիքներ» խորագրի ներքո հանրամատչելի ձևով ներկայացվում էին անասուններին կերակրելու գաղտնիքները: Այս շարքի 1-ին հոդվածը տպագրվել էր «Բյութանիայի» 1911 թ. 2-րդ համարում: Անդրանիկ Պոտուրյանը այս հոդվածաշարը գրել էր հատուկ «Բյութանիայի» համար: Հիշյալ հոդվածաշարերով շաբաթաթերթը փորձում էր հարստացնել ընթերցողների երկրագործական գիտելիքները:

Ընթերցողներին ոգևորելու նպատակով խորագրերի ու բաժինների նյութերը ներկայացնում էին նաև տնտեսության այս կամ այն ոլորտում հայերի ձեռքբերումները: Հոդված կար Իզմիրի շերամաբուծական հաջողությունների մասին²⁵⁵: Նշվում էր, որ եթե Ատաբազարում արհեստագործությունն էր զարգացած, իսկ Պարտիզակը, Օվաճրգը և դրանց շրջակա գյուղերը մշակում էին ծխախոտ, ապա Իզմիրի սանձագում զարկ էր տրված թթենիի մշակության գործին և շերամաբուծությանը: Թերթը շերամաբուծությունը համարում էր «արդիւնաւոր գործ» և ցանկանում էր, որ այն օր օրի զարգանար ու տարածվեր, և «չարքաշ ու բազմակարօտ երկրագործը օգտուէր անոր բարիքներէն»²⁵⁶:

Տնտեսական խնդիրները լուծելու համար «Բյութանիան» առաջարկում էր հիմնել հասարակական միություններ, որոնք

²⁵⁵ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 13, էջ 429:

²⁵⁶ Նույն տեղում:

պիտի գիտելիքներով, գործիքներով ապահովելին ժողովրդին: Բացի այդ՝ ժողովուրդն իր հերթին պիտի ակտիվ լիներ և պետությունից պահանջեր պաշտպանել օրենքով սահմանված իր իրավունքները: «Այսօր հիւանդ է Անատոլուն: Բժիշկը-Սահմանադրական Կառավարութիւնը: Թուրքիոյ ապագան Անատոլուն է. Անատոլուն եթէ խաղաղի, Թուրքիան փրկուած է», - ահա սա էր պարբերականի համոզմունքը²⁵⁷: «Բյութանիան», իհարկէ, հասկանում էր, որ հայ ժողովուրդը գործ ուներ թուրքական բռնապետության հետ, որտեղ սոցիալ-տնտեսական հիմնահարցերը սերտորեն կապված էին քաղաքական խնդիրների, մասնավորապէս Հայկական հարցի լուծման հետ:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ մշակութային, տնտեսական կամ ընդհանուր առմամբ ազգային կյանքի առաջընթացը «Բյութանիան» կապում էր Թուրքիայում առկա ազգային խնդիրները սահմանադրական ճանապարհով լուծելու հետ:

ԻԶՄԻՐԻ «ԱՇԽԱՏԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ (1910 - 1915 ԹԹ.)

Իզմիրի «Աշխատանք» պարբերականը լույս է տեսել 1910-1915 թթ.: Տպագրվել է չորեքշաբթի և շաբաթ օրերին քաղաքի «Քեշիշյան» տպարանում: Հիմնական աշխատակիցներն էին՝ Է.Ակնունին, Ամիրան, Ավետիս Ահարոնյանը, Մկրտիչ Պարսամյանը, Մարգպետը, Օննիկ Մխիթարյանը, Մելիք Հովսեփյանը, Խաչքարը, Հ. Համբարձումյանը, Վահե Տիճյանը, Ասպետը, Տարագիրը և այլք:

«Աշխատանքը» գործակալներ ուներ Կ.Պոլսում (Վահրամ Արծրունի), Տարսնում (Խաչիկ Քարուկյան), Երզնկայում (Համբարձում Պ. Բայան), Տենիզլիում (Ղազար Ս. Ղազարյան), Էտիր-

²⁵⁷ Եւոյն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 15, էջ 442:

նեում (Գևորգ Աբրահամյան, Ստեփան Պարոնյան), Գրքագաճում (Դավիթ Էյլիդարյան)²⁵⁸:

Պարբերականի տերը և տնօրենը Ս.Թոքաճյանն էր:

«Աշխատանքը» դաշնակցական ուղղվածություն ունեցող կամ ՀՅԴ համակիր մամուլի օրգան էր: Այստեղ տպագրվում էին ՀՅԴ Իզմիրի մարմնի հայտարարությունները, լուսաբանվում էր այդ կառույցի գործունեությունը, քննարկվում էին դրա ընդունած որոշումները և համագործակցությունը տեղի մյուս հայ կուսակցությունների հետ, ակնարկների միջոցով ներկայացվում էին հայտնի դաշնակցական գործիչները և հատուկ համարներ էին թողարկվում նրանց մահվան կապակցությամբ (օրինակ՝ Սիմոն Չավարյանի կամ Վահան Սրվանձտյանցի (Յուլակի), Սարգիս Կուկունյանի, Պետրոս Յազըճյանի և այլոց անժամանակ մահերի կամ մահվան տարելիցների առիթներով): Թուրքիայում և մասնավորապես Իզմիրում տեղի ունեցող իրադարձությունները թերթը վերլուծում էր՝ ՀՅԴ տեսակետների համաձայն: Վերլուծականները և ծրագրային հոդվածները զետեղվում էին 2-րդ էջում որպես խմբագրական:

«Աշխատանքի» հիմնական բաժիններն էին՝ «Ազգային», «Բալկանյան նամականի», «Բալկանյան քրոնիկ», «Մամուլի տեսություն», «Կանանց հարց», «Նամակ խմբագրության», «Նվիրատվություն», «Հեռագիր», «Ստացանք», «Զվարճալիք», «Շնորհակալիք», «Ազդ», «Փոքր ծանուցումներ»: Ուներ «Թերթոն» բաժինը, որտեղ հատվածաբար տպագրում էին ժամանակի հայ և օտարազգի հայտնի գրողների ստեղծագործությունները:

«Ս. Թոքատյան գրատուն» բաժինը կայուն տեղ ուներ 4-րդ էջում: Այստեղ տեղեկացնում էին այդ գրատան ստացած նոր գրքերի մասին (հիմնականում ՀՅԴ գործիչների)՝ ներկայացնելով նաև դրանց գները:

²⁵⁸ «Աշխատանք», Իզմիր, 1910, թիվ 11 (միկրոֆիլմ):

Իզմիրի ներքին խնդիրներն ու հայ համայնքի կյանքի մանրամասներն ամփոփված էին «Ազգային» բաժնում: Օրինակ՝ բոլոր համարներում այս բաժնի ներքո հանգամանորեն անդրադառնում էին գավառի Ազգային վարչության Քաղաքական, Գավառային ժողովների և Ուսումնական խորհրդի նիստերին:

Չկա որևէ համար (նույնիսկ 1915 թ.), որտեղ խմբագրությունն առնվազն 2 հոդված չնվիրեր կրթական հարցերին: Թերթի համար ռազմավարական նշանակություն ունեին ազգային կրթության և աճող սերնդի հայեցի դաստիարակության խնդիրները: Անգամ 1915 թ. Հայոց ցեղասպանության բուռն շրջանում թերթը կրկին դրանք առաջնային էր համարում: Ի տարբերություն ժամանակի արևմտահայ այլ պարբերականների՝ «Աշխատանքը» ոչ թե քննարկում էր ուսուցիչների ցածր աշխատավարձին կամ նյութական անձուկ կացությանն առնչվող խնդիրներ, այլ՝ ազգային կյանքում ուսուցիչների դերի ու պատասխանատվության հարցեր: Կարևորում էր ուսուցչական միությունների անհրաժեշտությունը, որոնք պիտի բժշկեին ուսուցիչների բարոյական ու մտավոր վերքերը²⁵⁹: «Գավառի ուսուցչության շուրջ» թղթակցության հեղինակ Վահե Տիճյանի կարծիքով՝ սոցիալությունը, անսկզբունքայնությունը և ուսուցչի կոչմանն անարժանությունն էին գավառի ուսուցիչների արգահատելի դիրքի պատճառները²⁶⁰: «Դպրոցէն կերպով մը իյնալու վախէն ահաբեկ, չգէտ Թաղական կամ Ուսումնական խորհուրդներու և Հոգաբարձուներու բերանէն կախուող, քծնող ուսուցիչներու չափազանց շատ գոյութիւնը գաւառու մէջ ամենամեծ պատճառն է այս բարոյական ողբալի սնանկութեան», - գրում էր Վ. Տիճյանը²⁶¹: Չարեհ Գնունին իր ուղարկած թղթակցության մեջ տեղեկացնում էր, որ Էտիրնեի երկսեռ վարժարանի ուսուցիչների և

²⁵⁹ Նույն տեղում, 1913, թիվ 2:

²⁶⁰ Նույն տեղում:

²⁶¹ Նույն տեղում:

տեսուչ Խորթումյանի գործելակերպից ծնողներն այնքան դժգոհ էին, որ նրանց մեծ մասն իրենց երեխաներին տեղափոխում էր այլ կրթօջախներ²⁶²: Ուսուցիչների մեջ կային նաև լրտեսությամբ զբաղվող անձինք, որոնց դեմ ընդվզում էին աշակերտները: Տարտանի թղթակից Խաչիկ Քարուկյանը գրում էր, որ տեղի հայկական քոլեճի ուսուցիչ Գևորգ Տամլամյանը լրտեսի համբավ ուներ, իսկ պատմության ու թուրքերենի ուսուցիչ Սիմոն Քյուփեյանը դասաժամերին անարգում էր հայոց լեզուն և հայ գրականությունը²⁶³: Ուսուցիչ-ուսուցչուհիները, եթե համարձակվում էին ընդվզել տիրող անառողջ մթնոլորտի, դպրոցներում կիրառվող կամայականությունների և անօրինությունների դեմ, ապա ենթարկվում էին անարգանքի ու հալածանքի: Ուսուցիչ բառը շատ վայրերում հոմանիշ էր համարվում ստրուկ կամ հալածանքների և զրկանքների առարկա բառերին²⁶⁴: «Աշխատանքը» բերում էր փաստեր, երբ ուսուցիչները պատժվում էին իրենց համարձակ պահվածքի համար: Այդ առումով աչքի էր ընկնում Մեսրոպյան արական վարժարանը: Այնտեղի տեսչության ցուցումով Ուսումնական խորհուրդը աշխատանքից ազատել էր 2 ուսուցչի և նույնիսկ ավարտական դասարանի ազատամիտ աշակերտներից մեկին՝ Հովհ. Ղազարյանին, տեղեկանք չէր տվել առ այն, որ նա սովորել և ավարտել էր վարժարանի 7-րդ դասարանը՝ դրանով զրկելով նրան գտած հարմար աշխատանքից²⁶⁵: Մեսրոպյան արական վարժարանում հետապնդում էին ուսուցչի կոչմանը հավատարիմ անձանց. «Դպրոցի մեջ լրտեսութիւնը պաշտօնական հանգամանք ունի, դուրս ամեն կողմ»²⁶⁶: Այդ քաղաքականությունը թելադրված էր վերևից՝ տեսուչ-տնօրեն Գ. Բարունակյանի կողմից: Նա իրեն շրջապատում

²⁶² Նույն տեղում, 1910, 11/24 սեպտեմբեր (միկրոֆիլմ):

²⁶³ Նույն տեղում, 1911, 9/22 ապրիլ (միկրոֆիլմ):

²⁶⁴ Նույն տեղում, 1913, թիվ 2:

²⁶⁵ Նույն տեղում:

²⁶⁶ Նույն տեղում, 1913, թիվ 15:

Էր այնպիսի մարդկանցով, որոնցից «ոչ մեկը կարելի է բառին բուն իմաստովը իսկական ուսուցիչ նկատել»²⁶⁷: Աշակերտները նրա դեմ գանգատ էին ներկայացրել Ուսումնական խորհուրդ՝ բողոքելով ոչ միայն կովազան բնավորությունից, այլև նշելով, որ դպրոցական «ռազմադաշտի վերջին բաղխումը պատճառ եղաւ, որ դպրոցի ամենէն փայլուն դասարանը փակուի»²⁶⁸: Թերթից տեղեկանում ենք, որ Գ. Բարունակյանը Իզմիրի հոգևոր Առաջնորդ Մատթեոս Ինճեյանի ծանոթն ու մտերիմն էր, և միայն այդ հանգամանքն էր նրան բերել Մեսրոպյան արական վարժարանի տեսչի պաշտոնին:

Մատթեոս ծայրագույն վարդապետ Ինճեյանը ծնվել էր 1878 թ. Կ.Պոլսում: Նախնական կրթությունն ստացել էր պատրիարքարանի վարժարանում, ապա՝ Ղալաթիայի ազգային կեդրոնական վարժարանում: 1904 թ. նա դոկտորի աստիճանով ավարտել էր Փարիզի իրավաբանական համալսարանը: 1909 թ. Մատթեոս կաթողիկոսի կողմից ձեռնադրվել էր կուսակրոն արքեպիսկոպոսի օգնականի պաշտոնում դառնալով ծայրագույն վարդապետ²⁶⁹:

«Աշխատանքը» ոչ միայն Մեսրոպյան, այլև Իզմիրի մյուս վարժարանների ու դպրոցների «ընկած» վիճակի համար պատասխանատու էր համարում Մատթեոս Ինճեյանին, ով ամեն ինչ անում էր, որ կրթօջախներից անձնական շահույթ ունենար²⁷⁰: Թերթը 1913 թ. 3 խմբագրական էր նվիրել այդ հիմնախնդրին՝ դրանք վերնագրելով «1912-1913 թթ. դպրոցական տարին. հաշվեհարդար»²⁷¹: Դրանցում փաստարկված օրինակներով պատկերացում էր տրվում, թե ինչպես էին Մատթեոս Ինճեյանը և Իզմիրի Մեսրոպյան ու Հոփսիսիմյան վարժարաններում պաշտոնավարող նրա դրածո տնօրենները հաշվեհարդար

²⁶⁷ Նույն տեղում, 1913, թիվ 3:

²⁶⁸ Նույն տեղում:

²⁶⁹ «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Ը, Երևան, 2001, էջ 951:

²⁷⁰ «Աշխատանք», Իզմիր, 1913, թիվ 3:

²⁷¹ Նույն տեղում, 1913, թիվ 3, 4, 5:

տեսնում առաջադեմ ուսուցչական և աշակերտական կազմերի հետ: Այս 2 վարժարանում 1913-1914 թթ. կտրվածքով ուսումնական մակարդակը ցածր էր: «Աշխատանքի» կարծիքով՝ առհասարակ Իզմիրի վարժարանները նախակրթարաններից «աւելի բան մը չեն արժեր»²⁷²: Թերթը անընդունելի էր որակում Հռիփսիմյան օրիորդաց վարժարանի ուսուցչուհիների պահվածքը այն տեսանկյունից, որ նրանց համար սովորական և ընդունված երևույթ էր այն, որ ավարտական քննությունների ժամանակ աշակերտուհիներն իրարից արտագրում էին հանձնարարությունների պատասխանները: «Հռիփսիմեանը իր ամբողջ ուսուցչական կազմին մէջ մէկ հատիկ վարժուհի իսկ չունի՝ Իզմիրի համար զարգացած հայուհիներ պատրաստելու կարող», - գրում էր «Աշխատանքը»՝ փաստելով, որ Հռիփսիմյանի վարչությունը հանձնված էր իզական սեռի դաստիարակության մասին գաղափար չունեցող անձանց, որոնք «զայն ուղիղ ճամբէն գատ՝ ամեն կողմ կը քաշքշեն՝ բերելով ազգային վարժարաններու անկեալ վիճակին»²⁷³: Այնինչ կանանց դաստիարակությունը և կրթությունը այն ներուժ կռվանն էին, ըստ «Աշխատանքի», որոնց վրա բարձրանում էր ազգի գոյության վերնաշէնքը: Թերթն առաջարկում էր ստեղծել խառը կամ երկսեռ վարժարաններ: Դրանք ձեռնտու էին 2 տեսանկյունից.

1. Ֆինանսական, քանի որ ազգային բյուջեից հավաքված գումարը կբաշխվեր մեկ ուղղությամբ,

2. հոգևոր-դաստիարակչական, քանի որ երկսեռ կրթական համակարգը կնպաստեր արական ու իզական սեռերի ներդաշնակ զարգացմանը, իսկ ապագայում՝ նաև ամուր ընտանիքներ կազմելուն²⁷⁴:

²⁷² Նույն տեղում, 1913, թիվ 5:

²⁷³ Նույն տեղում:

²⁷⁴ Նույն տեղում, 1914, թիվ 60:

Տեսուչների չհամակարգված գործունեության հետևանքով Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարաններն անկերպարանք էին դարձել²⁷⁵: Ուսուցչական միությունը միայն կկարողանար պաշտպանել թեմական առաջնորդների, Թաղական և Ուսումնական խորհուրդների կողմից ուսուցիչների հաճախակի ունահարվող իրավունքները: «Գաւառի մեջ այս մարմինները շատ քիչ անգամ իրենց վերին հսկողի դիրքին և պատասխանատու թեան գիտակցութիւնը ունին», - գրում էր «Աշխատանքը»²⁷⁶: Բերվող օրինակներով հիմնավոր էր Իզմիրի Քաղաքական և Ուսումնական խորհուրդների նախագահ Մատթեոս Ինճեյանի հանդեպ թերթի ունեցած դիրքորոշումը: Ինճեյանը հակադարձում էր Իզմիրի «Դաշինք» թերթում հրապարակվող պատասխան հոդվածներով, որոնք, սակայն, որևէ լուրջ բացատրություն իրականում չէին պարունակում և գաղափարական հակառակորդների նկատմամբ ցեխով էին շաղախված:

«Աշխատանքի» կարծիքով՝ Ուսուցչական միությունը ուսուցիչների մեջ կարթնացներ ու կամրապնդեր ստրկային լուռ ու մունջ կեցվածքի դեմ պայքարելու ոգին: Այն ուսուցիչներին կհամախմբեր մտահոգող խնդիրները միասնական ուժերով լուծելու նպատակով²⁷⁷: Թերթի՝ Կ.Պոլսի թղթակից Վահրամ Արծրունին առաջարկում էր միավորել գավառի ուսուցիչների ուժերը Ուսուցչական միության մեջ: Առաջարկում էր նաև, որ նրանք իրենց կազմակերպության կանոնադրությունը մշակելիս հաշվի առնեին և օգտվեին Փարիզի ուսուցիչների փոխադարձ օգնության ընկերության և Սենի ուսուցչական միության ծրագրերից²⁷⁸:

Կրթական հիմնախնդիրները կարելի էր վերացնել՝ մշակելով համալիր և համապարփակ ծրագիր: «Աշխատանքը» համոզ-

²⁷⁵ Նույն տեղում, 1914, թիվ 55:

²⁷⁶ Նույն տեղում, 1913, թիվ 3:

²⁷⁷ Նույն տեղում:

²⁷⁸ Նույն տեղում, 1911, 7/20 ապրիլ, (միկրոֆիլմ):

ված էր, որ այդ ծրագրում միայն Ուսուցչական միության ստեղծման առաջարկը բավարար չէր: Այդ միությունից բացի՝ թերթն առաջարկում էր.

- հիմնել մանկավարժական ուղղվածություն ունեցող պարբերական²⁷⁹,

- կազմել նոր ուսումնական ծրագրեր (մասնավորապես «Հայ ժողովրդի պատմություն» առարկայի համար),

- թարմացնել կամ գրել նոր դասագրքեր²⁸⁰ («Աշխատանքը» նշում էր, որ գավառի վարժարաններում օգտագործվում էին «Աշխարհագրություն» և «Հնագիտություն» առարկաների 10-12 տարի առաջ հրատարակված դասագրքեր²⁸¹),

- կիրառել ժամանակակից կրթական սկզբունքներ դասավանդման մեթոդներում և ուսումնական գործընթացում²⁸²:

«Աշխատանքը» կրթական հիմնախնդիրների պատճառների շարքում նշում էր ուսուցիչների աշխատանքային կարճաժամկետ պայմանագրերը (ամենաշատը 2 տարի տևողություն ունեին դրանք) և ցածր աշխատավարձը: Սրանք խոչընդոտում էին ուսուցիչների առաջխաղացմանը և մասնագիտական առաջընթացին: Ուսուցիչներն իրականում պաշտպանված չէին ո՛չ նյութապես, ո՛չ բարոյապես: «Ինչո՞ւ համար այդքան չարաչար աշխատութիւններէ վերջ՝ օր մը անօթի մնալու հեռապատկերին առջեւ պիտի դողդողայ ա՛ն, որ մատաղ սերունդը ծաղկեցնելու գերագոյն պարտականութիւնը կը ստանձնէ: Ինչո՞ւ համար ուսուցչութիւնը դեռ պիտի ուշանայ կեանքի ո և է առաջնակարգ ասպարեզի մը պէս յարգելի գործ մը դառնալու», - այս հարցերն

²⁷⁹ Նույն տեղում, 1913, թիվ 2:

²⁸⁰ Նույն տեղում, 1913, թիվ 5:

²⁸¹ Նույն տեղում:

²⁸² Նույն տեղում, թիվ 3:

էր հնչեցնում թերթը և դրանց վրա էր հրավիրում հայ հասարակության ուշադրությունը²⁸³:

Կրթական հիմնախնդիրների արծարծման տեսակետից կարևոր է Մելքոն Հովսեփյանի «Մի ձեռքը ծափ չի տար. մանկավարժական հարցեր» երկմասանի հոդվածը²⁸⁴: Հովսեփյանը գրում էր, որ թեև ուսումնական մարմինների կողմից կիրառվում էին ջանքեր Իզմիրի վարժարանների ուսումնական գործընթացը լավ հիմքերի վրա դնելու նպատակով, բայց, միևնույն է, դեռ սպասված պտուղները չէին կարողանում քաղել: Հեղինակը թվարկում և ներկայացնում էր խանգարող հանգամանքները. հայկական դպրոցներում կարգուկանոնի և բարեկրթության բացակայությունը, ծնողների անտարբեր կեցվածքը, հնացած ուսումնական ծրագրերն ու դասագրքերը, ուսուցիչների ցածր աշխատավարձը և այլն²⁸⁵: Մ. Հովսեփյանը իրավիճակը շտկելու ուղիներ էր մատնանշում. «Ով որ կրթական գործին յառաջդիմութեան համար նախանձախնդիր է ու հետաքրքրուած անով, ստիպուած ու պատրաստ է ընդունիլ Ծնողական ժողովներու անհրաժեշտութիւնը»²⁸⁶: Դպրոցն, առանձին վերցրած, ոչինչ չէր կարող անել: «Մէկ ձեռքը ծափ չի տար», և անհրաժեշտ էր ընտանիքի աջակցությունը²⁸⁷: Դպրոցը և ընտանիքը պետք է ձեռք ձեռքի տային և միասին զբաղվեին երեխաների կրթության ու դաստիարակության գործով:

«Հաշվեկշիռ մը» հոդվածի հեղինակ Բ. Միլտոնյանը, անդրադառնալով իզմիրյան հայ կրթօջախների առաջընթացին խոչընդոտող հանգամանքներին, համեմատություն էր անցկացնում վերջին 4 տարվա կտրվածքով կրթական կյանքում տեղի ունեցած անցնուարձի և փոփոխությունների միջև: «Կրնա՞նք ըսել, թե

²⁸³ Նույն տեղում:

²⁸⁴ Նույն տեղում, 1913, թիվ 25, թիվ 26:

²⁸⁵ Նույն տեղում, 1913, թիվ 25:

²⁸⁶ Նույն տեղում, 1913, թիվ 26:

²⁸⁷ Նույն տեղում:

ներկայիս դպրոցները աւելի բարձր մակարդակ մը ունին, քան անցեալինը, կրնա՞նք ըսել, թէ նախորդ 1500 ոսկի պիտո՞ւնէին վրայ եղած մօտաւորապէս 1000 ոսկիի այժմու յաւելումը բերած է իր հետ 1000 փարայի արդիւնք: Բացարձակապէս ոչ, ո՛չ, ո՛չ», - եզրակացնում էր հողվածագիրը²⁸⁸՝ ավելորդությունն համարելով գիշերօթիկ հաստատությունները փակելը և դրանց սաներին առանց ուսման թողնելը: Այնինչ, ըստ հեղինակի, կրթական ոլորտը ցանկացած հասարակության բարոյական և քաղաքակրթական աստիճանի չափանիշն էր²⁸⁹: Կրթական կյանքը բարվոքելու պարտականությունը կրող Ուսումնական խորհուրդը, «Աշխատանքի» կարծիքով, «ոչ ըրածին գիտակցութիւնը ունի, ոչ ալ արժանապատվութեան մասին գաղափարը»²⁹⁰:

Խմբագրականներից մեկը կարգախոսային էր՝ «Զորավոր Ուսումնական խորհրդի մը պետքը»²⁹¹: 1914 թ. Իզմիրի Ուսումնական խորհուրդը կազմալուծվել էր, իսկ Քաղաքական ժողովը գրեթէ մեկ ամիս չէր կազմակերպում դրա անդամների ընտրությունը: «Աշխատանքը» գրում էր, թէ անհրաժեշտ էր հրաժարվել անտարբեր պահվածքից, քանզի կրթությունը կենսական հարց էր հայության համար, իսկ Ուսումնական խորհուրդը ազգային պաշտոնների շարքում էական էր²⁹²:

Կրթական հիմնահարցերի լուծման համալիր ծրագրում «Աշխատանքը» ներառում էր գավառի՝ հաջողության հասած ազգային վարժարանների ու կրթօջախների փորձի յուրացումը: Իբրև այդպիսին մատնանշում էր Վանի Մանդուխտյան օրիորդաց դպրոցի 40-ամյա փորձառությունը²⁹³:

²⁸⁸ Նույն տեղում, 1913, թիվ 15:

²⁸⁹ Նույն տեղում:

²⁹⁰ Նույն տեղում, 1913, թիվ 11:

²⁹¹ Նույն տեղում, 1914, թիվ 55:

²⁹² Նույն տեղում:

²⁹³ Նույն տեղում, 1914, թիվ 52:

Ծրագրային առաջարկներ ներկայացնելուն զուգահեռ՝ թերթը գործնական քայլ էր անում՝ Իզմիրի հայկական վարժարանների ու կրթօջախների համար ներկայացնելով «վկայուած և կարող ուսուցիչ-ուսուցչուհիներ մեր ապագայ սերունդին օգտակար ըլլալու բարեմասնութիւններով օժտուած»²⁹⁴: Խմբագրությունն այս ձեռնարկով փորձում էր կամուրջ դառնալ Թաղական խորհուրդների, Հոգաբարձությունների և ուսուցիչների միջև:

«Աշխատանքը» մինչև վերջին համարը անդրադարձել է Իզմիրի կրթօջախների հիմնահարցերին: 1915 թ. բոլոր համարներում վերլուծական հոդվածներ կան այս թեմայով: Դրանցից տեղեկանում ենք, որ արդեն 1915 թ. մարտի վերջերին Իզմիրի Ուսումնական խորհրդի անդամները հրաժարական էին ներկայացրել Քաղաքական ժողովին: Վերջինս հանձնարարել էր, որ այդ խնդրով զբաղվեր Տնտեսական խորհուրդը: «Աշխատանքը» իրավացիորեն գրում էր, որ այդ հարցը չէր լուծվելու, որովհետև նախ՝ դա Տնտեսական խորհրդի իրավասությունների մեջ չէր մտնում, ապա՝ այդ խորհրդի գործունեության ժամկետը վաղուց սպառվել էր²⁹⁵: Նման իրավիճակում, երբ հայ ժողովրդին սպառնում էր ցեղասպանության վտանգը, իսկ հայկական կրթօջախները բարձիթողի վիճակում էին, բնական էր, որ Ուսումնական խորհրդի պարտականությունները պիտի փորձեր ստանձնել կամ կատարել ազգային մեկ այլ կառույց՝ Իզմիրի Տիկնանց խնամակալությունը: «Աշխատանքը», անդրադառնալով այդ կազմակերպության ծավալած գործունեությանը, գրում էր, որ դա դեմ էր Ազգային Սահմանադրությանը: Թեև ողջունելի էր այն հանգամանքը, որ Տիկնանց խնամակալությունը հանգանակում էր գումարներ հայկական վարժարանների համար, բայց

²⁹⁴ Նույն տեղում, 1913, թիվ 10:

²⁹⁵ Նույն տեղում, 1915, թիվ 101:

այդ կառույցը զբաղվում էր հիմնականում կրթական երկրորդական նշանակություն ունեցող խնդիրներով: Այս պայմաններում թերթը առաջնային էր համարում վերընտրված և գործող Ուսումնական խորհուրդ ունենալու հարցը: «Ուսումնական խորհուրդը պետք է», - պնդում էր «Աշխատանք»²⁹⁶:

Իզմիրի «Աշխատանք» պարբերականը չի ունեցել ընդգծված քաղաքական ուղղվածություն: Այն հայ ժողովրդին կամ, ավելի ճիշտ, Իզմիրի շրջակայքի հայությանը մտահոգող հասարակական-քաղաքական հիմնահարցերին անդրադարձել է հարևանցիորեն ու հիմնականում այլ թեմաների (առավելապես՝ կրթական) քննարկման շրջանակներում: «Աշխատանքը» չունի անգամ խմբագրականներ քաղաքական խնդիրների վերաբերյալ: Պարբերականը այդ հիմնախնդիրների առնչությամբ վերլուծական հոդվածներ է արտասույել «Դրոշակից», և դրանք մեծ մասամբ նվիրված էին Հայկական և Արևելյան հարցերին: 1913 թ. թերթի՝ Լոնդոնի սեփական թղթակից Մ. Փափազյանը փաստում էր հետևյալը. «Այժմ քիչեր մնացած են այնքան ծայրայեղորեն լաւատես, որ հաւատան, թէ Թուրքիա պիտի կրնայ վերափոխուիլ կենսունակ երկրի մը»²⁹⁷: Պարբերականի որդեգրած այս տեսակետը հիմնավոր է դառնում 1913-1914 թթ.: Այս շրջանում «Աշխատանքի» էջերում գավառից ստացված թղթակցությունների միջոցով ներկայացվում էին թե՛ տեղեկություններ հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող անօրինական ձեռնարկների, սպանությունների, կողոպուտի, բռնարարքների, թե՛ ՀՅԴ համագումարների, ժողովների որոշումների, հայության ուժերը միավորել փորձող գործողությունների ու քայլերի մասին:

Գավառի թղթակցությունների մեջ արծարծվող թեմաներից առանձնանում էր Նահանգային ժողովի ընտրություններում

²⁹⁶ Նույն տեղում, 1915, թիվ 99:

²⁹⁷ Նույն տեղում, 1913, թիվ 2:

հայերի մասնակցել-չմասնակցելու խնդիրը: Վանից ստացված այդպիսի թղթակցություններից մեկում ասվում էր, թե Վանում, Գավառում, Կարճկանում, Մոկսում և Բերձորում բնակվող հայերը չէին մասնակցել Նահանգային ժողովի ընտրություններին, քանի որ Թուրքիայի նահանգային նոր օրենքը չէր երաշխավորում ազգային փոքրամասնությունների քաղաքական իրավունքների պաշտպանությունը: Անարդար սկզբունքով էին բաժանում կամ որոշում ընտրական շրջանները, և ըստ այդմ՝ հայ ազգաբնակչությունը Նահանգային ժողովում չէր կարողանում ունենալ իր թվին համապատասխան ներկայացուցիչներ²⁹⁸: «Այս անարդարութիւնը ամեն գաւառի մէջն ալ կայ: Կուսակալը արդէն մտադիր է մեծամասնութիւն չկազմող պատուիրակներով Նահանգային ժողովը բանալ: Վան քաղաքը, ուր հարիւրին 70-ը Հայերն են, տւաւ 11 հոգի Բ. կարգի ընտրողներ, մինչ Թուրքերը՝ 12, Արճէշ, ուր բնակչութեան հարիւրին 60-ը քիւրտերն են ու 40-ը՝ Հայեր, քիւրտերը տւած են 17 և Հայերը՝ 2 Բ. կարգի ընտրողներ», - գրում էր Վանից Օննիկը²⁹⁹:

Վանից ստացված թղթակցությունների մեջ բազմաթիվ փաստեր կային վանեցիների հանդեպ թուրքերի հակաօրինական արարքերի մասին: Կրկին Օննիկը ներկայացնում էր, որ երբ Խառակոնիսի հայերն իրենց զենքերով և ուժերով փորձել էին գյուղ վերադարձնել թալանված ավարը, ճանապարհին Արճակի թուրք ոստիկանները կանգնեցրել, զինաթափել և ձերբակալել էին նրանց³⁰⁰: Դատի ժամանակ կուսակալը նրանցից երեքին դատապարտել էր մեկամսյա բանտարկության, իսկ մնացածներից մեկական ոսկի տուգանք էին գանձել՝ արգելված զենք կրելու համար: Թղթակիցն իր արդարացի բողոքն էր արտահայտում այդ դեպքի առիթով դատարանի կայացրած որո-

²⁹⁸ Նույն տեղում, 1913, թիվ 5:

²⁹⁹ Նույն տեղում:

³⁰⁰ Նույն տեղում, 1913, թիվ 9:

շումների դեմ: «Օրէնքը քիւրտերուն համար գոյութիւն չունի կարծես... Նոյն Արճակի ոստիկանները քանի մը օր առաջ դաշտին մէջ կը ձերբակալեն հրացանաւոր 4 քիւրտեր, որոնք 2 օր բանտ մնալէ վերջ, դարձեալ իրենց զենքերով կ'արձակուին», - վկայում էր Օննիկը³⁰¹:

Քաղաքական խնդիրների շարքում «Աշխատանքի» հրապարակումների մէջ առանձնանում են Ռոդոսթոյի աղետը և դրա շուրջ ծավալված քննարկումները: Ռոդոսթո քաղաքում կատարված իրադարձությունները կարծես «Ադանայի դէպքին մանրանկարը» լինեին³⁰²: Ռոդոսթոյից ուղարկված թղթակցությունները ներկայացնում էին տեղի հայ ազգաբնակչության ջարդի մանրամասները: Դրանցից մեկում, օրինակ՝ նշվում էր, որ «օսմանեան զինուորները կը յարձակին շուկան գտնուող հայերուն վրայ և կը սպաննեն ութը հայեր, իսկ քաղաքէն դուրս դաշտին մէջ չարաչար սպանուողներու թիւը 100-էն աւելի է, որոնք այլանդակուած վիճակի մէջ անթաղ կը մնան»³⁰³: «Աշխատանքը» օբյեկտիվ պատկերացում տալու նպատակով Ռոդոսթո էր գործուղել Հ.Մ.Համբարձումյանին³⁰⁴: Նա հստակ պատկերներով էր նկարագրել Ռոդոսթոյի ջարդերը: Համբարձումյանի կարծիքով՝ Ռոդոսթոյի անհետ կորած հայերից շատերը հնարավոր էր, որ թուրքերի կողմից սպանված ու գաղտնի թաղված լինեին: Բերում էր օրինակ, երբ թաքուն թաղված հայեր էին գտնվել³⁰⁵: «Ռոդոսթոյի ոճիրները. հայկական խնդրի շուրջ» հոդվածի հեղինակ Մ. Փափազյանը անգլիական մամուլից այդ կոտորածին առընչվող նյութերի վերլուծականում մեջբերում էր «Դէյլի Նյուզից» հետևյալ հատվածը. «Թուրքիոյ այս ընթացքը յստակօրէն կ'ա-

³⁰¹ Նույնտեղում:

³⁰² Նույնտեղում, 1913, թիվ 6:

³⁰³ Նույն տեղում:

³⁰⁴ Նույն տեղում, 1913, թիվ 8:

³⁰⁵ Նույն տեղում:

պացուցանե, թէ ինք բնա՛ւ տրամադիր չէ Հայաստանի բարեկարգութեան գործին ձեռնարկելու և մինչեւ այսօր ըրած խօսքերն ու խօստումները, անցեալիիններուն նման, ունայն էին և ժամանակ շահելու պատրուակներ»³⁰⁶:

Ռոդոսթոյում և Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող կոտորածները, «Աշխատանքի» համոզմամբ, պետական հատուկ մշակված քաղաքականության բաղադրամասն էին: Թուրքական հայաջինջ քաղաքականության մյուս բաղադրամասը արտագաղթն էր: Այս թեմային հիմնականում անդրադառնում էր Մարգալետը: Հողվածներից մեկում նա հանգամանորեն վերլուծում էր արևմտահայերի արտագաղթի պատճառները:³⁰⁷ Դրանք 2-ն էին՝ քաղաքական և տնտեսական: Մարգալետը թվարկում էր արևմտահայության տնտեսական «ավերմունքի» պատճառները.

* պետական ծանր տուրքերը,

* քուրդ բեկերի կողմից ճնշիչ միջոցներով և զենքի ուժով հայերից գանձվող ապօրինի տուրքերը,

* սալաֆ կոչվող տուրքը, որը հայ ժողովրդին հասցրել էր ճորտությանը հավասար վիճակի,

* Թուրքիայի երկրագործական բանկը չէր վերադարձնում հայ գյուղացիների կողմից գրավադրված հողերը (նույնիսկ այն դեպքում, երբ նրանք գումարը վերադարձնում էին)՝ սպառնալով սպանել. «Հողերէդ ետ կեցիր կամ կը սպաննուիս»³⁰⁸:

Մարգալետը տեղեկացնում էր, որ այդ սպառնալիքները երկրագործական բանկի թուրք տերերը կյանքի էին կոչում, եթէ հայերը տեղի չէին տալիս: Բացի այդ՝ բանկը հայի գրավադրած հողերը վաճառում էր հարուստ թուրքերին³⁰⁹: Արտագաղթի տնտե-

³⁰⁶ Նույն տեղում, 1913, թիվ 11:

³⁰⁷ Նույն տեղում, 1913, թիվ 10:

³⁰⁸ Նույն տեղում:

³⁰⁹ Նույն տեղում:

սական պատճառները ներկայացնելուց հետո Մարգպետն առաջարկում էր այդ երևույթի դեմն առնելու միջոցներ.

- հիմնել փոքրիկ վարկային ընկերություններ կամ բանկեր, որոնք հայ գյուղացիներին վարկեր կտրամադրեին բավական ցածր տոկոսադրույքով՝ հաշվի առնելով հրեաների և լեհերի փորձը իրենց ազգային ինքնությունը պահպանելու համար,

- գյուղերում ստեղծել աշխատելու հնարավորություններ «Օգնենք Մասունին» հանձնախմբի օրինակով, ինչի շնորհիվ Մասունում զարգանում էր մեղվաբուծությունը,

- Բացել երկրագործական դպրոցներ հայկական գյուղերում և ժողովրդին հողի մշակման, պանրագործության, զինեգործության, ջրաբաշխության միջոցների նոր մեթոդներ սովորեցնել,

- բացել վարժապետանոցներ և զարկ տալ կրթական գործին, որով «թե՛ սերունդ հասցնել, թե՛ մտաւորական ոյժերով հարստացնել երկիրը, որմէ հիմա շատ աղքատ է»³¹⁰:

Մարգպետը գտնում էր, որ արտագաղթի տնտեսական պատճառների չեզոքացմանը զուգահեռ՝ անհրաժեշտ էր աշխատել դրա քաղաքական պատճառներն ուսումնասիրելու և վերացնելու ուղղությամբ: «Հայ ժողովուրդը ենթարկուած է քաղաքական անլուր ճնշումներու, հայահալած ու ջնջող վարչութեան մը, իրաւագրկութեան ամենէն գռեհիկ տեսակին, ասոնք մէկ կողմէն, իսկ միւս կողմէն քիւրտական զինուած հրոսակներու դէմ ան կանգնած է բոլորովին անպաշտպան և անզէն», - գրում էր Մարգպետը³¹¹: Նա դիմում էր ժողովրդին, որ գործադրեին բոլոր միջոցները արտագաղթից խուսափելու և հայրենիքը չլքելու համար:

Արտագաղթի և բնօրրանի դատարկման կործանարար հետևանքների դեմ պայքարելու նպատակով էր, որ 1913 թ. ամռան վերջերին Իզմիրի հայ քաղաքական 3 կուսակցությունները

³¹⁰ Նույն տեղում:

³¹¹ Նույն տեղում:

(«Դաշնակցութեան Իզմիրի Կօմիտէն, Հնչակեան Իզմիրի մասնաճիւղը, Սահմանադիր-Ռամկավար ակումբը»³¹²) մի շարք խորհրդակցական ժողովներից հետո ստեղծում են միջկուսակցական համերաշխության մարմին՝ «Հայկական դատի շուրջ միասնաբար պայքարելու համար»³¹³: Նրանք դա հիմնավորում էին «քաղաքական ներկայ բացառիկ կացութեամբ և մանաւանդ խրատուած այն դառն փորձերէն, որոնք անցեալին մէջ այնքան ոյժեր վատնել տւին»³¹⁴: «Աշխատանքը» տպագրել էր իզմիրահայության համերաշխության մարմնի ծրագիրը³¹⁵, որտեղ մանրամասն շարադրված էին նաև նպատակները: Այդ մարմինը ձգտելու էր հաշտարար եղանակով լուծել տարածաշրջանում ծագող ազգային վեճերը, նպաստել համերաշխության մթնոլորտի պահպանմանը և այդ կերպ օգտակար լինել ազգի կենսական շահերին³¹⁶: Թերթը լուսաբանել է հիշյալ միջկուսակցական համերաշխության մարմնի աշխատանքները: Հրապարակումներից պարզ է դառնում, որ անպտուղ էին մնում ազգային ուժերը համախմբելու ջանքերը, և այդ կառույցը դատապարտված էր անգործության³¹⁷:

«Աշխատանքը» հողվածներ է տպագրել Թուրքիայի ներքաղաքական լարված հարաբերությունների վերաբերյալ: Հատկանշական է այն, որ անդրադառնալով Բալկանյան թնջուկին, թուրք-բուլղարական, հույն-թուրքական ռազմական գործողություններին և բանակցային գործընթացին՝ խուսափել է բացահայտ ձևով ներկայացնել հայ ժողովրդի ակրնկալիքները, իսկ եթե խոսել է դրանց մասին, ապա՝ շատ ընդ-

³¹² Նույն տեղում, 1913, թիվ 19:

³¹³ Նույն տեղում:

³¹⁴ Նույն տեղում:

³¹⁵ Նույն տեղում, 1913, թիվ 28:

³¹⁶ Նույն տեղում:

³¹⁷ Նույն տեղում, 1913, թիվ 23:

հանուր ձևով, պահպանել է չեզոք կեցվածք և չի պաշտպանել կողմերից որևէ մեկին³¹⁸: Խմբագրակազմը գիտակցում էր, որ թեև Հայկական հարցի լուծման համար նպաստավոր (մինևսյն ժամանակ վտանգավոր) պայմաններ էին ստեղծվել, բայց կառավարող «Իթթիհատ վե թերագգ» կուսակցությունը չէր հանդուրժում այլախոհությունը և ազգերի ինքնավարությունը, առաջնորդվում էր «միատիրական անյագ ախորժակով»³¹⁹: «Դրոշակից» արտատպված հոդվածներից մեկում հայությանը կոչ էր արվում լինել աչալուրջ³²⁰, որովհետև բարդ գործընթաց էր Հայկական հարցի լուծումը. տարբեր պետություններ այստեղ հետապնդում էին իրենց շահերը: Հոդվածագրի կարծիքով՝ հայ ժողովրդին մնում էր ապավինել իր իսկ ուժերին և ինքնօգնության դիմել³²¹: Այս տեսակետից կարևոր է կրկին «Դրոշակից» արտատպված «Հոգնած ենք» երկմասանի հոդվածը (հեղինակ՝ Տարագիր)³²²: Հոդվածագիրն անդրադառնում էր բալկանյան պետությունների՝ Օսմանյան Թուրքիայի լծից ազատագրվելու փաստին՝ նշելով, որ արևմտահայությունն անմասն մնաց այդ ազատագրական շղթայից: «Յոգնած ենք: Ու փառք Աստուծոյ, որ յոգնած ենք ստրկութիւնից, աշխարհի նենգ, կեղծ կարեկցութիւնից, գթութեան ու օգնութեան ունայն աղաղակներից, եղբայրութեան կոչերից, աղերսողի մեր բազուկները չորացան: Գուցե վերջապէս մենք մեզ ապաւինենք», - գրում էր Տարագիրը³²³:

1913 թ. կեսերին Է. Ակնունին վերլուծական հոդվածներից մեկում հանրության ուշադրությունը հրավիրում էր այն մտահոգիչ հանգամանքների վրա, որոնք բարդացնում էին Հայկական հարցի լուծման գործընթացը: «Այժմ մի կողմից՝ թիւրքական սահմանների

³¹⁸ Նույն տեղում, 1913, թիվ 21:

³¹⁹ Նույն տեղում, 1913, թիվ 25:

³²⁰ Նույն տեղում, 1913, թիվ 29:

³²¹ Նույն տեղում:

³²² Նույն տեղում, 1913, թիվ 6, 7:

³²³ Նույն տեղում, 1913, թիվ 7:

նուազեցումը և պետական քաղաքականության ձախողանքը, իսկ միս կողմից՝ երոպական շահերի նոր դասաւորումը հայկական դատը դարձրել են օրվան մեծ խնդիրը, այն կենտրոնական կէտը, դէպի որը իր հայեացքն է սեւեռած ոչ միայն հարեւան Ռուսիան, այլև հեռաւոր Գերմանիան, մի հարց, որ իր համեստութեամբն հանդերձ երոպական շահերը շօշափելու գաղտնիքն ունի», - կարծում էր Է.Ակնունին³²⁴: Նա առաջարկում էր աշխարհաքաղաքական այդ կարևոր ժամանակահատվածում ուժերը չվատնել մանր-մունր կենցաղային խնդիրների վրա, այլ՝ համախմբվել և փորձել նպաստել Հայ դատի լուծմանը³²⁵: Թերթում ազգային համախմբման անհրաժեշտությունը հատկապես շեշտվում էր՝ 1913 թ. կեսերից սկսած: Այս շրջանում ամենքին մտահոգում էին օսմանյան հերթական խորհրդարանական ընտրությունները և հայ պատգամավորների թվի հետ կապված հարցերը: Հոդվածագիրներից մեկը՝ Ամիրան, ընտրությունները ձևական էր համարում, որովհետև երկրում չկային ոչ ընդդիմադիր կուսակցություններ, ոչ ընտրապայքար: Հրապարակի վրա երևում էր մեկ, այն էլ պետական քաղաքական կուսակցություն՝ Իթթիհատը, իսկ ընդդիմադիրները ոչ միայն «կարելիութիւն չունին կազմակերպուելու և ընտրական փրօփականտ մղելու, այլև չեն կրնար իրենց ընդդիմադիր ըլլալը յայտնել հրապարակաւ՝ առանց վտանգելու իրենց ապահովութիւնը»³²⁶: Հոդվածագրի համոզմամբ՝ այդ պայմաններում Իթթիհատը կազմելու էր մեծամասնություն, և անհնար էր մտածել անգամ, որ Օսմանյան Թուրքիայում կապահովվէր ազգերի համեմատական ներկայացուցչություն: Հայ քաղաքական կուսակցությունները որոշել էին, թե ինչ դիրք էին բռնելու. «Իրենց պահանջքը պիտի ըլլան հաստատուն երաշխիքներ՝ Հայերու համեմատական ներկայացուցչու-

³²⁴ Նույն տեղում, 1913, թիվ 17:

³²⁵ Նույն տեղում:

³²⁶ Նույն տեղում, 1913, թիվ 32:

թիւնը ապահովելու համար նոր Երեսփոխանական Ժողովին մէջ. այլապէս պօյքօ՞թ ընտրութիւններու դէմ»: Ամփոփելով իր վերլուծությունը՝ Ամիրան հայ կուսակցություններին առաջարկում էր չդավաճանել որդեգրած սկզբունքներին և լինել միասնական³²⁷:

«Երեսփոխանական ընտրությունները և հայերը» հարցազրույցում³²⁸ Է. Ակնունին Տիգրան Զավենի հետ քննարկում էր Բ. Դուռ Պատրիարքարանի ներկայացրած թագրիրում երեսփոխանական ընտրությունների վերաբերյալ արևմտահայության պահանջները. «Մենք պահանջած էինք համեմատական ներկայացուցչութիւն և Հայ երեսփոխաններու ընտրութիւնը Հայ ժողովուրդին կողմէն: Կառավարական կուսակցութիւնը հայերու թիւին համաձայն երեսփոխաններ չկրնալով ապահովել, ասոր պատասխանատուութիւնը ձգած է իսլամ ընտրողներուն վրայ: Այս դեպքում ցնորք մը պիտի ըլլայ ընտրական իրավունքը», - փաստում էր Ակնունին³²⁹: Նա իրավացիորեն պնդում էր, որ Իթթիհատի կողմից նշանակված հայ երեսփոխանները կլինեին ա՛յդ կուսակցության և ոչ թէ հայ ժողովրդի ներկայացուցիչները Թուրքիայի խորհրդարանում: Բնական էր, որ հայերը պահանջում էին իրենց ձայներով կատարել հայ պատգամավորների ընտրությունը: Քանի որ Թուրքիայում 1913 թ. մէկ երեսփոխանը 50.000 անձի ներկայացուցիչն էր, իսկ «Աշխատանքի» տվյալներով՝ այդ օրերին այդ երկրում 2.000.000 հայ էր ապրում, հայերը պահանջում էին 20 երեսփոխան օսմանյան խորհրդարանի համար³³⁰: Արևմտահայությունն իր քաղաքական պայքարը կազմակերպել էր քաղաքակիրթ եղանակներով՝ Թուրքիայի խորհրդա-

³²⁷ Նույն տեղում:

³²⁸ Այս հոդվածը «Աշխատանքը» արտատպել էր Կ.Պոլսի՝ ֆրանսերենով հրատարակվող «Ստամբուլ» օրաթերթից (տե՛ս «Աշխատանք», 1913, թիվ 46):

³²⁹ Նույն տեղում:

³³⁰ Նույն տեղում:

բանում պատգամավորներ ունենալու, թուրքական կուսակցությունների հետ համագործակցելու և տարածաշրջանում հետաքրքրություններ ունեցող պետությունների հետ բանակցելու միջոցով: Անգամ պայքարի այս ճանապարհը արևմտահայության դեմ ավելի էր գրգռել թուրքական իշխանություններին, որոնք 1913-1914 թթ. արդեն բացահայտ սպառնում էին հայերին, ընդ որում՝ ոչ միայն խոսքով, այլև կոնկրետ ջարդերով: «Աշխատանքում» այդ կարգի սպառնալիքների բազմաթիվ օրինակներ կային: Օրինակ՝ թերթի Վանի թղթակից Ա. Հրահատը տեղեկացնում էր, որ Հայոց ձորի Անգղ գյուղի մոտակայքում 2 հայի և 2 քրդի միջև ծագած զինված միջադեպից հետո թուրք ոստիկանները ազատ էին արձակել քրդերին և ձերբակալել էին ոչ միայն այդ 2 հային, այլև Անգղ գյուղի ևս 17 հայ բնակչի: Երբ անգղցիները բողոքով դիմել էին Հայոց ձորի թուրք մյուտիբին, նա պատասխանել էր սպառնալիքով. «Հայե՛ր, ձեր բոլոր ջանքն է, որ Ռուսիան միջամտե, բայց գիտցե՛ք, որ այդ պարագային ձեզմե ոչ մեկը ողջ չպիտի թողունք»³³¹: Խուճապի մթնոլորտ էր ստեղծված Արևմտյան Հայաստանում՝ 1913 թ. վերջերից սկսած: Թերթը վկայում էր, թե ինչպես էին արևմտահայերը «գլուխն առած խուճապով խոյս տալիս հայրենի աշխարհից»³³²: Հայրենիքը ճգնաժամի մեջ էր, իսկ նրանք հեռանում էին, լքում էին հայրենի աշխարհը, երբ անհրաժեշտ էր համախմբել ուժերը. այսպես էր կարծում հողվածագիրը՝ Տարագիրը: Նա համոզված էր, որ այս դեպքում հայրենիքն իրավունք ուներ ասել. «Փախեք դուք, բոլոր անարիներդ, բոլոր վատերդ: Հայ աշխարհի փրկութեան մեջ դուք դեր չունիք: Փախե՛ք, միայն զգոյշ, մի՛ անցեք այն նուիրական վայրերով, ուր հանգչում են Պետոսներն ու Մարտիկները, Աւետիսեաններն ու Վազգէնները, Սերոբ ու Գեորգ Չաուշ, Ա-

³³¹ Նույն տեղում, 1913, թիվ 15:

³³² Նույն տեղում, 1913, թիվ 20:

րաբօ ու Տարօնի Առիծ Մերոք իր գոյգ կորիւններով ու բոլոր նրանք՝ անյայտ ու յայտնի, որոնք մի օր ընկան ձեզ համար, ձեր ճակատից ստրկութեան ամօթը, ձեր թիկունքից բռնութեան անարգ բեռը վերցնելու համար»³³³: Հայրենիքը ծանր պահին լքողներին Տարագիրը դասալիք էր համարում: Միևնույն ժամանակ «Արտագաղթի առիթով» հողվածում Է. Ակունին դիմում էր տարագրված հայերին. «Հայրենիքը ձեզ է սպասում, վերադարձէք: Դարձը կեանքն է Վաթանի, փախը՝ սկիզբը նրա մահուան»³³⁴: Քաղաքական նման հայացքներ ունեցող խմբագրակազմը, պարզ է, որ 1915 թ. նույնպես պիտի շարունակեր պնդել, թե հայրենիքը չպիտի լքել, եթե այնտեղից թուրքական իշխանությունները քեզ բռնի չէին տեղահանել կամ կոտորել:

1915 թ. «Աշխատանքը» կոչ էր անում Իզմիրի գավառի բնակիչներին օգնել Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած իրենց հայրենակիցներին ամեն տեսակետով: Հողվածներից մեկում նշվում էր, որ Իզմիրի «Աղքատխնամ» կազմակերպությունը չէր մտածում օգնության ձեռք մեկնել գավառի հեռավոր անկյուններում թաքնվող անտեր-անտիրական հայերին, որոնցից շատերը մի կերպ գոյատևում էին սարերում ու ձորերում³³⁵: «Աշխատանքը» «զո՞վ մեղադրենք» հարցով էր դիմում ընթերցողներին՝ ներկայացնելով նրանց անտարբերությունը և խստասրտությունը, քանի որ նրանք մի կտոր հաց չէին տալիս սոված որբերին ու այրիներին³³⁶:

1915 թ. վերջին համարներում «Աշխատանքը» բարձրացնում էր ազգային դիմագիծը չկորցնելու և հայրենիքում հայ մնալու խնդիրները:

³³³ Նույն տեղում:

³³⁴ Նույն տեղում, 1913, թիվ 21:

³³⁵ Նույն տեղում, 1915. թիվ 96 (միկրոֆիլմ):

³³⁶ Նույն տեղում:

ՄԵԲԱՍՏԻԱՅԻ «ՀՈՂԴԱՐ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1910 - 1914 ԹԹ.)

«Հողդար» շաբաթաթերթը լույս է տեսել Մեքսատիա քաղաքում 1910-1914 թթ.: Հրատարակվել է շաբաթ օրը և ունեցել է 4 էջ ծավալ: Հիմնադիր խմբագիրը և արտոնատերն ու տնօրենը Կ.Ա. Պարսամյանն էր (1914 թվականին՝ Հ. Մ. Փոլադը): Պարբերականը Հողդար էր անվանվել Մեքսատիայի Հողդար կոչվող բլրակի ստորոտում գտնվող համանուն թաղի անունով:

1910 թ. հոկտեմբերի 27-ի առաջնորդող խմբագրականում հավաստիացվում էր, որ թերթը խորհրդանշելու էր սվազցիների հողը և հայության դարը³³⁷: Դա պիտի լիներ մի դարաշրջան, երբ հայը «գլուխ մը տխի փոխարեն» չպիտի տար իր հողը և փարելով արորին՝ պիտի շենացներ հայրենիքը³³⁸: «Հողդարը» փորձելու էր գտնել և ընթերցողներին ներկայացնել նախորդ բռնապետական շրջանում իրենց ազգօգուտ ձեռնարկներով աչքի ընկած հայերին: Թերթը պիտի աշխատեր ստեղծել «քաղքիս մէջ գէթ, երիտասարդութիւն մը՝ կեանքո՛վ, գործունէութիւնով առլի: Ան պիտի փարի՛ հողին մշակին հետ, պիտի փառաբանէ՛ գործը ու գործաւորը:

«Ան Վօյթէդի հետ պիտի երգէ՛

«Իմ աստուածս վաստա՛կն է,

Որ այս աշխարհը կը վարէ»³³⁹:

Խմբագրակազմը ցանկանում էր «Հողդարը» դարձնել այնպիսի պարբերական, որի էջերում յուրաքանչյուր հայ կգտներ իր համար օգտակար որևէ նյութ: Խմբագրակազմը նաև հավատում

³³⁷ «Հողդար», Մեքսատիա, 1910, թիվ 1:

³³⁸ Նույն տեղում:

³³⁹ Նույն տեղում:

էր, որ կարողանալու էր հաղթահարել դժվարությունները և արգելքները, քանի որ լցված էր պայքարի մեծ կորովով³⁴⁰:

«Հողդարը» ՀՅԴ համակիր պարբերական էր՝ գրեթե պաշտոնաթերթի կարգավիճակով: Չկա որևէ համար, որտեղ չլինի որևէ նյութ ՀՅԴ Սեբաստիայի կոմիտեի այս կամ այն ձեռնարկի, որոշումների կամ որևէ հայտնի դաշնակցական գործչի մասին: 1914 թ. թերթի դաշնակցական ուղղվածությունն ակնառու էր, և օսմանյան խորհրդարանի ընտրությունների շրջանում պարբերականը բացահայտ պաշտպանում և գովազդում էր ՀՅԴ թեկնածուներին:

Հրատարակության 4 տարվա ընթացքում «Հողդարը» կարողացել է պահպանել ազգային թերթի դիմագիծը և ունեցել է կրթական-մշակութային ուղղվածություն՝ գրելով արևմտահայ դպրոցների թերությունների մասին ու հայեցի դաստիարակությունը և ազգային կրթությունը համարելով ազգապահպանության հիմնական միջոց: Այդ հիմնահարցերին նվիրված խմբագրականների մեծ մասն իրենց կայուն տեղն էին գտնում 1-ին էջում:

«Հողդարը» 1-ին և 2-րդ էջերում զետեղում էր գավառահայ գրողների գրական-գեղարվեստական ստեղծագործությունները կամ տպագրում էր վերլուծական հոդված, որում քննարկում և անդրադառնում էր որևէ մշակութային միջոցառման: Քանի որ Սեբաստիայում բավական ակտիվ էր թատերական կյանքը, բնականաբար, պարբերականն անտարբեր չէր ներկայացումների և դերասանական խաղի հանդեպ: 3-րդ էջում տպագրում էին ազգային կյանքի այս կամ այն ոլորտից լուրեր, «ուր կը դատափետուլին սխալներ, ուղիղին մարմաջը արթնցնելու համար ընթերցողին մեջ, կամ նոր կարգադրութիւն մը կը տարփողուի, կամ գիւղացիի մը ցավը կը պատկերագրուի»³⁴¹: 4-րդ էջում անդրադառնում էին կառավարական ու հասարակական-քաղաքական ան-

³⁴⁰ Նույն տեղում:

³⁴¹ Նույն տեղում, 1911, թիվ 1:

ցուղարձին լուրերի և հրապարակախոսական հոդվածների միջոցով:

«Հողդարի» խմբագրությունը կարևորում էր արևմտահայության սոցիալ-տնտեսական խնդիրների արծարծումը, թեև հասկանում էր, որ հրապարակումներով ձգտելու էր նպաստել սերաստահայերի հիմնահարցերի լուծմանը: «Չենք ուզեր կեղոռնական կառավարութեանը դեմ պռռալ: Մենք կուզենք գրել այնպիսի սխալի մը վրայ՝ որուն փոփոխութիւնը կախում ունենայ կուսակալէն», - գրում էր թերթը³⁴²:

«Հողդար» շաբաթաթերթն ուներ հիմնական բաժիններ և խորագրեր: Դրանք էին՝ «Թաղային դպրոցներ», «Կյանքը շրջանին մեջ», «Հայ գեղերեն», «Տնտեսական կյանք», «Քաղաքապետարան», «Լուրեր», «Մանրալուրեր», «Թղթակցություններ», «Պոլիսեն հեռագրեր», «Տեղական լուրեր», «Ազգային լուրեր», «Քրոնիկ», «Շշուկներ», «Ստացված գրքեր» և այլն:

Թղթակցություններն ու լուրերը ներկայացնում էին «Հողդարի» սեփական թղթակիցները: Նրանց նյութերում ամփոփված էին 1910-1914 թթ. արևմտահայ գավառում և մասնավորապես Մերաստիայում կատարվող դեպքերը, ազգային կյանքի պատկերը, արևմտահայերին մտահոգող խնդիրները և նրանց ակնկալիքները «սահմանադրականացած» Թուրքիայում: «Շշուկներ» բաժնում թերթը տպագրում էր քաղաքային կամ գավառական անցուղարձի չձգգրոված լուրեր, բայց ոչ բամբասանքներ կամ սենսացիա պարունակող տեղեկություններ:

Այդ շրջանի արևմտահայ քաղաքական մյուս թերթերից տարբերվում էր հատկապես իր գույժերով կամ մահախոսականներով: Դրանք ամփոփված էին «Տխրունի» խորագրի ներքո և ունեին երգիծական շեշտադրումներ, երբ գրվում էին «ազգային» գործիչների մահվան առիթներով: «Քաղաքապետարան» բաժնի վերլուծական

³⁴² Նույն տեղում, 1910, թիվ 1:

հողվածներն աչքի էին ընկնում լրագրողական վարպետությամբ: Ներկայացվում էին քաղաքապետարանի աշխատանքներում նկատված թերությունները և պաշտոնատար անձանց չարաշահումները: Այս բաժնում օպերատիվ կերպով ժողովրդին ծանոթացնում էին կառավարության և քաղաքապետարանի ընդունած նոր օրենքներին, որոշումներին: Ազգային կյանքի համար էական իրադարձության կամ երևույթի մասին լուրը «Հողդարը» տպագրում էր «Կարևոր» խորագրի ներքո: Արևմտահայ հասարակական-քաղաքական, գրական-մշակութային կյանքի լուրերը ներկայացվում էին «Քրոնիկ» բաժնում թղթակցությունների, ռեպորտաժների և վերլուծական հոդվածների միջոցով: Ուշագրավ էր «Ցիր ու ցան հայրենակիցներ» բաժինը, որը ներկայացնում էր այն սեբաստացիներին, ովքեր տարիներ առաջ հեռացել էին հայրենիքից, բայց կապված էին նրան և պատվաբեր արարքներ էին գործում հանուն ծննդավայրի: Հետաքրքրությամբ էր ընթերցվում քաղաքական լրաքաղը, որտեղ ընդգրկված տեղեկություններն ամփոփված էին հիմնականում մեկ նախադասությամբ: Նյութերի մատուցման առումով սա նույնպես նորություն էր այդ շրջանի արևմտահայ գավառական մամուլի համար: Խմբագրակազմը փորձում էր անել ամեն հնարավորը՝ հանրության ուշադրությունը գրավելու և այդպիսով՝ նրան համազգային հիմնախնդիրները լուծելու նպատակով համախմբելու համար:

«Հողդարն» իր նպատակները կյանքի էր կոչում նվիրյալ աշխատակիցների ջանքերով: Հրապարակումներով հանդես էին գալիս Փայլակը, Պողոս Մոզյանը, Դ.Վարուժանը³⁴³, Վահան Մոսկովյանը, Ա. Շահնուրը (Թոքատի թղթակիցն էր), Կարապետ Գաբիկյանը, Գ.Գ-ն (Միվասի թղթակիցն էր), Ա.Ալիսյանը,

³⁴³ Դ.Վարուժանը «Հողդարի» խմբագրության «անձնական բարեկամն էր» (տե՛ս «Հողդար», 1910, թիվ 1):

Հուսը, Գևորգ Տերոյենցը (Գ.Տ.-ն), Չ. Միհրանը, Հ. Բալուցյանը, Միհրան Չուգասյանը:

«Հողդարին» մտահոգում էին Սեբաստիայի հայության սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրները, նրանց բարոյական և ազգային հոգեկերտվածքի խաթարման երևույթները, հոգևոր հովիվների՝ իրենց կոչմանն անհարիր կեցվածքն ու պահվածքը և ազգային կրթօջախների հիմնահարցերը:

Տնտեսական խնդիրների մեջ առանձնահատուկ էին արևատահայ գյուղացիների հողագուրկ և շահագործված իրավիճակը ներկայացնող նյութերը: Ընդ որում, չէր թաքցվում, որ նրանք կրկնակի շահագործման էին ենթարկվում, բայց ցավալին այն էր, որ հայ մեծահարուստներն ու Առաջնորդարանն էին տնտեսապես վատ կացության մեջ գցում գյուղացիությանը: Բերենք մեկ-երկու օրինակ: «Քրոնիկ» բաժնի հեռագրերից մեկում Զարա գյուղի բնակիչ Միհրան Վարդանյանը տեղեկացնում էր, որ տարիներ առաջ 65 ոսկի էր տվել Առաջնորդարանին, որ կարողանար օգտագործել Քարհատի մեջ գտնվող ջրաղացը: Մ. Վարդանյանը բողոքում էր, որ ո՛չ ջրաղացն էին իրեն հանձնում, ո՛չ էլ տված գումարն էին վերադարձնում: «Գործելակերպնիդ բռնակալական է», - գրում էր նա³⁴⁴: «Հայ գեղերեն» բաժնում տպագրված էր Եարսարենի քահանա Գրիգոր Տոստուրյանի հողվածը: Նա գրում էր, որ հայությունը 1908 թ. հեղաշրջումից հետո չէր կարողանում դրամով տիրանալ իրենից մինչև այդ գրավված արտերին, թեև դա կառավարության որոշմամբ արդեն թույլատրվում էր³⁴⁵: Ընդ որում, գրավված «ջրջանին մեջ՝ կալուածատուրքն անգամ խեղճ հայէն կը գանձուէր»³⁴⁶: Տեսնելով, որ գրավված հողերի հայ սեփականատերերը «սիրայօժար» վճարում էին պահանջվող գումարները՝ թուրք պաշտոնյաները սկսել էին դրամով էլ չվերա-

³⁴⁴ Նույն տեղում, 1911, թիվ 32:

³⁴⁵ Նույն տեղում, 1911, թիվ 19:

³⁴⁶ Նույն տեղում:

դարձնել նրանց պապենական հողերը: Հողվածագիրը Առաջնորդարանի ուշադրությունն էր հրավիրում այդ թնջուկի վրա³⁴⁷՝ մոռանալով, որ այդ հոգևոր կառույցը Թուրքիայում չուներ նման հարցեր լուծելու իրավասություններ: «Հողդարը» ծայրահեղության գիրկն էր ընկնում, երբ գրում էր, թե Առաջնորդարանը շատ հեռու էր գյուղացիների իսկական բարիքը հասկանալուց³⁴⁸: Այդ մեղադրանքը տեղին էր Սեբաստիայի ազգային մարմինների գործելակերպի կապակցությամբ: «Ժողովրդին մոտենանք» խմբագրականում նշվում էր, որ հայ պաշտոնյաների մեծամասնությունը ապրում էր՝ չշփվելով ժողովրդի հետ և չիմանալով գյուղացիության խնդիրները: Շաբաթաթերթը դիմում էր կոչով, թե ժողովրդին ծառայելու համար անհրաժեշտ էր ապրել նրա հետ՝ շոշափելով նրա վերքերը, լսելով նրա ձայնը, և «այն ատեն ձեր վարձքը առած պիտի ըլլաք»³⁴⁹: «Գյուղացուն ցավերը» խմբագրականում արտահայտված էր «Հողդարի» այն համոզմունքը, որ գյուղացիության ցավերը միայն անձնվիրությամբ կարելի էր դարմանել: Պահանջվում էին սրտացավություն, եղած հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրություն ու դրանց լուծման անհրաժեշտության գիտակցում: Հիմնական բողոքն այն էր, որ սոցիալապես վատ վիճակում գտնվող գյուղերի անունով հավաքված նպաստները ազգային մարմինների կողմից հատկացվում էին այն գյուղերին, որոնց թաղականները Սեբաստիայի թաղականների «քիթը կը սրբեն»՝ անուղղակի կերպով կաշառելով և հիրասսիրելով զանոնք»³⁵⁰: «Հողդարն» առաջարկում էր կարգել քննիչներ, որոնք, գյուղեգյուղ պտտվելով, ստուգումներ կանցկացնեին համայնքային բյուջեներում և վիճակագրություն

³⁴⁷ Նույն տեղում:

³⁴⁸ Նույն տեղում:

³⁴⁹ Նույն տեղում, 1910, թիվ 4:

³⁵⁰ Նույն տեղում, 1910, թիվ 2:

կանցկացնեին գյուղացիների կարիքների վերաբերյալ³⁵¹: Եթե Սեբաստիայի հայկական 30 գյուղից յուրաքանչյուրի համար դժվար էր մեկ ոսկի տրամադրել քննիչին որպես աշխատավարձ, ապա Սեբաստիա քաղաքի հոգաբարձուների մեջ գուցե կգտնվեր ազգասեր անձնավորություն, ով կփակեր այդ գումարային ճեղքվածքը: «Հողդարի» կարծիքով՝ հարցի լուծման առաջարկվող տարբերակը հնարավոր էր կենսագործել³⁵²:

Որպես ՀՅԴ համակիր մամուլի օրգան՝ «Հողդարը» ներկայացնում էր Սեբաստիայի բանվորների և հատկապես բանվորուհիների տնտեսական անձուկ կացությունը, շահագործված վիճակը, որոնք անդրադառնում էին նաև նրանց առողջության ու արտաքինի վրա: Շաբաթաթերթը լուսաբանում էր հոգուտ բանվորների ՀՅԴ-ի կազմակերպած միտինգները և կոչ էր անում դիմել գործադուլի՝ իրավունքները պաշտպանելու համար: Եենիխան գյուղի բնակիչներին տեղեկացնում էր, որ «Արևելյան գորգի» ընկերությունը այդ բնակավայրում բացելու էր մասնաճյուղ, և խորհուրդ էր տալիս գյուղացիներին, նախքան աշխատանքի ընդունվելը, ծանոթանալ աշխատանքային պայմաններին ու հաշվի առնել «բանւորուհիների առողջական պարագան և նիւթական շահը»³⁵³: Մեկ այլ լուրով տեղեկացվում էր, որ ՀՅԴ Սիվասի Կոմիտեն Սեբաստիայի կուսակալին բողոքագիր էր ներկայացրել գորգի գործարանատերերի դեմ առ այն, որ նրանք «անլուր չարչարանքի» էին ենթարկում բանվորներին: Նշվում էր, որ մասնավորապես 6-9 տարեկան աղջիկներին չնչին աշխատավարձով աշխատեցնում էին օրական 12-16 ժամ: Լուրի վերջում Կ.Պարսամյանը ողջունում էր ՀՅԴ-ի հիշյալ ձեռնարկը. «Ուրախ եմ սրտովին, որ այսօր կուսակցութիւն մը վրան կ'առնէ

³⁵¹ Նույն տեղում:

³⁵² Նույն տեղում:

³⁵³ Նույն տեղում, 1911, թիվ 43:

այս խիստ կարեւոր խնդիրը»³⁵⁴: Մեկ այլ նյութում ներկայացվում էր ռեպորտաժ ս. Նշանի վանքի անտառում ՀՅԴ գումարած միտինգից, որը կազմակերպվել էր ի պաշտպանություն բանվորուհիների իրավունքների և հոգուտ նրանց արվող գործադուլների: Ելույթներում ՀՅԴ գործիչներ Վահան Վարդանյանը և Վահան Մոսկովյանը մատնանշում էին ցածր օրավարձը, գործարանատերերի ամբարտավանությունը, բանվորների ու բանվորուհիների զրկանքները: Շահագործման հետևանքով քայլող կմախքների էին վերածվել բանվորուհիները, որոնց մատները մոմացել էին, դեմքերը գունաթափ էին, իսկ շրթունքներն՝ անարյուն: Կ. Պարսամյանը այդ միտինգի առիթով շնորհավորում էր ՀՅԴ-ին «որ ընկերվարական ըլլալու ձգտումը ունի՝ գեթ»³⁵⁵:

Բանվորական թեմային զուգընթաց՝ «Հողդարը» երկրի զարգացման գործում կարևորում էր երկրագործության դերը: «Սոռացված անհրաժեշտություն» երկմասանի հողվածում Ա.Ալիսյանը գրում էր, որ երբ գյուղացիությունը պատկառելի դիրք ունենար, լիներ արտադրող ու իր արտադրանքը շահավետ կերպով իրացնող խավ, այդ ժամանակ հայ աշխարհը կարող էր չվախենալ զանազան քաղաքական կռիվներից, քանզի կարող էր ապահովել իր հաղթանակը: Սա էր «Հողդարի» տեսակետը³⁵⁶: Շաբաթաթերթը դրական էր համարում Թուրքիայի երկրագործական նախարարության որոշումը, որով Սեբաստիայի մոտ գտնվող «Տիպար ագարակը» վերափոխվել էր երկրագործական գործնական դպրոցի: Այդտեղ կարող էին սովորել մինչև 30 տարեկան թե՛ հայերը, թե՛ թուրքերը³⁵⁷: Դպրոցի տնօրեն Հակոբ Մինասյանը «Հողդարի» էջերում պնդում էր, թե գյուղացիներին անհրաժեշտ էր սովորել այդ կրթօջախում, որովհետև երկ-

³⁵⁴ Նույն տեղում, 1910, թիվ 5:

³⁵⁵ Նույն տեղում, 1911, թիվ 29:

³⁵⁶ Նույն տեղում, 1914, թիվ 42:

³⁵⁷ Նույն տեղում, 1911, թիվ 46:

րագործական և գյուղատնտեսական գիտելիքները հարստացնելով՝ հողից ավելի արդյունք կստանային³⁵⁸: «Հողդարը» փորձում էր մասնագետների միջոցով նյութեր տպագրել անասունների խնամքի և գյուղատնտեսական մթերքների պատրաստման մասին՝ այդպիսով հարստացնելով ընթերցողների գիտելիքները: Հանրամատչելի-ուսուցողական հոդվածներից մեկում «Տիպար ագարակ» դպրոցի տնօրեն Հ. Մինասյանը սովորեցնում էր ինչպես պատրաստել «Գաշար» կոչվող պանրի 2՝ դաշտային և լեռնային տեսակները³⁵⁹:

«Հողդարը» ողջունում էր ՀՅԴ Սեբաստիայի «Կարմիր խաչ» կար ու ձևի դպրոցում աշակերտուհիներին արհեստ սովորեցնելու նախաձեռնությունը: «Ահա 2-3 տարի է, որ ՀՅԴ այս ձեռնարկը կը պտղաբերի, կը յառաջանայ տարուէ տարի», - գրում էր շաբաթաթերթը³⁶⁰: 1911թ. մարտի 5-ին «Հողդարի» տպագրած լուրերից տեղեկանում ենք, որ ՀՅԴ կար ու ձևի «Կարմիր խաչ» արհեստանոցի 18 շրջանավարտուհի ստացել էին ավարտական վկայագրեր, իսկ Ս.Դ. Հնչակյան կուսակցության կար ու ձևի «Արաքս» արհեստանոցը 11 շրջանավարտուհու էր հանձնել նույնատիպ վկայագրեր³⁶¹: 1911 թ. հոկտեմբերի 8-ին Սեբաստիայի Ազգային լսարանում ավարտական վկայականներ էին ստացել ՀՅԴ կար ու ձևի «Կարմիր խաչ» արհեստանոցի 10 շրջանավարտուհի: Վարպետուհին Սողոմե Շահբազյանն էր: «Ամեն տեսակետով կարժէ շնորհաւորել խնամակալութեանը ու դաշնակցութեանը», - կարդում ենք այդ մասին տեղեկացնող լուրում³⁶²: Այս կարգի նյութերում շաբաթաթերթը բացահայտ քարոզում էր կար

³⁵⁸ Նույն տեղում:

³⁵⁹ Նույն տեղում, 1912, թիվ 20:

³⁶⁰ Նույն տեղում, 1911, թիվ 43:

³⁶¹ Նույն տեղում, 1911, թիվ 15:

³⁶² Նույն տեղում:

ու ձևի արհեստին տիրապետելու անհրաժեշտությունը հայ օրիորդների համար:

«Հողդարի» հրապարակումներից պարզորոշ երևում է, թե որքան մեծ է եղել հայ մեծահարուստների և աղքատների ֆինանսատնտեսական բյուջեի տարբերությունը: Երբ 1911 թ. հունվար-փետրվարին անսովոր ցրտի պատճառով բազմաթիվ հայ մանկիկներ էին օրորոցներում սառելով մահանում, մեծահարուստների տներում բարեկեցիկ կյանքը շարունակվում էր ընթանալ նույն հունով³⁶³: «Տնտեսական վիճակը» հողվածում բարոյական անկում էին համարում այն, որ հարուստների հոգը չէր, որ իրենց հարևան աղքատ ընտանիքները «ճեղ մը փայտ չ'ունին տաքնալու», այնինչ նրանց «վառարանին ծուխը չընդհատիր օրն ի բուն»³⁶⁴: «Երբեմնի բարեկենդանք» խմբագրականում հիշատակվում էր այն փաստը, որ ժամանակին Մեքաստիայում հայ բնակչությունը եղբայրացած էր, միասին էին նշում տոները, իրար հյուրասիրում էին. «Որո՛ւն պատառը դիր վար կերթար՝ երբ մօտերնին ըլլար ընտանիք մը, որ բարեկենդանքին փայտ չունենար, եղ չունենար, գինի չունենար»³⁶⁵: Այս ֆոնի վրա հեղինակի համար անընդունելի էր, որ ժողովուրդն անզգա էր դարձել աղքատի ցավի ու կարիքի հանդեպ: Այնինչ, հեղինակի կարծիքով, երբ հարուստը սեղանակցում էր աղքատի հետ, նրան ցույց էր տալիս, թե «ինք ալ մարդ է, ու դրամը մեծկակ խրամ մը չէ իրենց յարաբերութեան միջև»³⁶⁶: Ազգային նկարագրի խաթարման ու փոփոխության խնդիրը եղել է «Հողդարի» մտահոգությունների կիզակետում, երբ մանավանդ անդրադարձել է ժողովրդի տնտեսական ծանր վիճակին: «Ամուսնությունները» խմբագրականում, օրինակ, ընթերցողների ուշադրությունն էին

³⁶³ Նույն տեղում, 1911, թիվ 14:

³⁶⁴ Նույն տեղում, 1910, թիվ 5:

³⁶⁵ Նույն տեղում, 1911, թիվ 14:

³⁶⁶ Նույն տեղում:

հրավիրում այն հիմնահարցի վրա, որ քչացել էր կարիքավորին օգնող, հանրային շահով ու ցավով ապրող մարդկանց թիվը³⁶⁷: «Ուրիշին ցաւովը չենք համակուիր, հոգովը չենք տապկուիր: Երբ թշուառութիւն կը տեսնենք, կըսենք. «Աստուած ինք ողորմի», այսինքն՝ «կը ցաւիմ, բայց չեմ կրնար օգնիլ», - գրում էր թերթը³⁶⁸:

Աղքատներին սպառնում էր ոչ միայն սովից, ցրտից մահանալը, այլև այս աշխարհից թաղման ծեսով չհեռանալը: «Հողդարը» ներկայացնում էր, թե ինչ բարոյական անկում էին ապրել քահանաներից շատերը, ովքեր չէին գնում աղքատների թաղման ծեսը կատարելու, որովհետև դիմացը չէին վարձատրվելու: Ժողովուրդը ծեծում էր նման քահանաներին: «Իրաւունք ունի ժողովուրդը: Այլ անտանելի են դարձած սա՛ քահանաները», - կարդում ենք թերթում³⁶⁹: «Հողդարը» տեղեկացնում էր, որ Սեբաստիայի հոգևոր Առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսը իր պահվածքով վատ օրինակ էր տալիս թեմի հոգևորականներին: Նա 8 ամիս լքել էր իր թեմը՝ Սանասարյան վարժարանի մասնաճյուղը Սեբաստիայում բացելու խնդրի լուծման հարցով զբաղված լինելու պատճառաբանությամբ³⁷⁰: Դրա հետևանքով բարձիթողի էին մնացել թեմի գործերը: Գավառական երեսփոխանական ժողովում բարձրացրել էին Թորգոմ եպիսկոպոսի աշխատանքի թերացման ու հրաժարականի հարցը³⁷¹: Փաստենք, սակայն, որ թերթը ազգային-եկեղեցական գործերի աննախանձելի վիճակի համար միայն Թորգոմ եպիսկոպոսին մեղադրելը սխալ էր համարում, թեև գտնում էր, որ նա հարկ եղած դեպքում պահանջ-

³⁶⁷ Նույն տեղում, 1911, թիվ 13:

³⁶⁸ Նույն տեղում:

³⁶⁹ Նույն տեղում:

³⁷⁰ Նույն տեղում, 1912, թիվ 25:

³⁷¹ Նույն տեղում, 1912, թիվ 22:

վող վճռականությամբ հանդես չէր գալիս³⁷² և «աղայական հոսանքէ քշուած կ'երելի»³⁷³:

Առկա տնտեսական խնդիրների լուծումը «Հողդարը» կապում էր մի կողմից՝ արևմտահայերի քաղաքական իրավագուրկ վիճակի, մյուս կողմից՝ ազգային և պետական կառույցների չգործելու և ամեն ինչ ականջի ետև գցելու հանգամանքների հետ: Օրինակ՝ Սեբաստիայում 1910-1912 թթ. դաժան, ցուրտ ձմեռներ էին, բայց վերոհիշյալ մարմինները ոչինչ չէին ձեռնարկում աղքատ կամ կարիքավոր ընտանիքների համար գոնե կեցության տանելի պայմաններ ապահովելու ուղղությամբ: Այս թեմայով նյութերը տեղադրվում էին «Քաղաքապետական» բաժնում: Դրանցից մեկը ներկայացնում էր ժողովրդի «տաժանելի» դրությունը³⁷⁴: Ցուրտը չէր կոտրվում, վառելափայտը կրակի գին ուներ, իսկ Սեբաստիայի քաղաքապետությունը չէր ընդունում այն առաջարկը, որ հայկական Պաղչեճիկ գյուղի մոտ գտնվող հանքահորից ժողովրդին թույլ տային հանքածուխ փորել-հանել և այն օգտագործել իրենց տները տաքացնելու համար: «Քաղաքապետութիւնը միշտ անտարբեր՝ ո՛չ նպաստաւոր առաջարկները կ'ընդունի, ո՛չ ալ ինք ձեռներեցօրէն կը հայթայթէ ածուխը», - գրում էր թերթը³⁷⁵: «Հողդարի» կարծիքով՝ եթե քաղաքապետությունը և ազգային մարմիններն ընտրվում էին ժողովրդի կողմից, ուրեմն պիտի ծառայեին նրան, իսկ կոնկրետ դեպքում քաղաքապետությունը պիտի որոշում կայացներ հանքածուխի գործածության ժողովրդականացման ու քաղաքատիպ ավանների փողոցներում լուսավորության ցանց անցկացնելու մասին: Թերթը հիշատակում էր Սիվասը, որը դարձել էր «մթնցած քաղաք. ո՛չ մէկ կանթեղ, ո՛չ մէկ ճրագ՝ բանուկ փողոցին մէջ իսկ»,

³⁷² Նույն տեղում:

³⁷³ Նույն տեղում, 1911, թիվ 29:

³⁷⁴ Նույն տեղում, 1910, թիվ 7:

³⁷⁵ Նույն տեղում:

և դա այն դեպքում, երբ լույսի ու լուսավորության դար էր քաղաքակիրթ աշխարհում³⁷⁶:

«Հողդարը» չի ներկայացրել այս կամ այն բնագավառի միայն թերություններն ու բացերը, այլև արձագանքել է յուրաքանչյուր ազգագուտ ձեռնարկի և պետական կյանքում կատարվող ցանկացած դրական տեղաշարժի: Թերթը լուսաբանել է երկրի տնտեսությունը զարգացնելու միտումով հանրագուտ շինությունների նոր թափով սկսված աշխատանքները և արձանագրել է Սեբաստիայում ճանապարհաշինության գործում գրանցվող արդյունքները: Պարբերականից տեղեկանում ենք, որ 1911 թ. Սեբաստիայի տարածաշրջանում տնտեսության առաջընթացին նպաստելու նպատակով «աւագ» կարևորություն էին տալիս երկաթգծերի շինարարությանը Սամսոն-Սիվաս, Խարբերդ-Սվազ, Սամսոն-Ամասիա ուղղություններով³⁷⁷:

«Հողդարը» բերում էր մի շարք օրինակներ, որոնցով կարծես ձգտում էր ընթերցողներին հավաստիացնել, որ ազգային դիմագծից շեղումները և բարոյական անկման դրսևորումները տեսակարար կշիռ չէին կազմում, ու քրիստոնեական վարքագիծը մնում էր բնորոշ մեր ժողովրդի համար: Այս առումով բնութագրական է թերթի՝ Ջիլեի մասնավոր թղթակցի լուրը, որը զետեղված էր 1911 թ. փետրվարի 19-ի համարի «Թղթակցություններ» բաժնում³⁷⁸: Պարզվում էր, որ մեկ ամիս էր, ինչ անտանելի ցուրտ էր, և օրորոցներում ցրտից սառել էին տղա երեխաներ, իսկ քուրեշից 7-8 մանկիկ էր օրական զոհ գնում: Այս պայմաններում գովելի էր թաղապետական բժիշկ Արմենակ Մերայտարյանի պահվածքը: Նա անվճար էր բուժում աղքատներին: Քաղաքի անձնվեր մեծահարուստներից մահտեսի Հովակիմ Չալազյանը, Ղազար Ասատուրյանը և մի քանի «ուրիշներ ալ» հանգանա-

³⁷⁶ Նույն տեղում:

³⁷⁷ Նույն տեղում, 1911, թիվ 34:

³⁷⁸ Նույն տեղում, 1911, թիվ 14:

կություն էին արել, փայտ, ածուխ, ուտելիք էին գնել ու բաժանել Ջիլեի կարոտյալ ընտանիքներին: «Երբ Ազգային օգտակար մեկ ձեռնարկին համար իրենց դիմում ըլլայ՝ քսակնին լայն կը բանան, անձնուիրութիւնով կ'օժանդակեն», - վկայում էր թղթակիցը³⁷⁹: Բարեգործություններով Մեքաստիայում հայտնի էին քաղաքի ամերիկյան հիվանդանոցի բժիշկ Լևոն Սյունին և նույն հիվանդանոցի դեղագործ Արտաշես Այվազյանը: Նրանք գնում էին գյուղեր և անվճար բուժում աղքատներին³⁸⁰: Թերթը տեղեկացնում էր, որ բժիշկ Լևոն Թորգոմյանը 3 դարմանատուն էր բացել. 1-ը՝ Մեքաստիայի ազգային հիվանդանոցում, 2-ը՝ Բրզնիկ, 3-ը՝ Դավոթա գյուղերում³⁸¹:

Բարեսիրական ձեռնարկներով աչքի էին ընկնում հասկապես Մեքաստիայի ազգային հիվանդանոցի ղեկավարությունն ու աշխատակիցները: Բուժքույրերից մեկը՝ Հասմիկ Թոփալյանը, վարակվել էր իր կողմից խնամվող տիֆով հիվանդից և մահացել էր³⁸²: Թերթը գրում էր, որ ազգային հիվանդանոցը «անտերներու տերը, աղկաղկներու ապաստանը է եղած»³⁸³: Աղքատիկ բյուջեն հնարավորություն չէր տալիս 2 բժիշկ ունենալ հիվանդանոցում: Այդ պայմաններում հաստատության միակ բժիշկ Արթին Շիրինյանը, անգամ 30 հիվանդ լինելու պարագայում, հասցնում էր բուժել թե՛ նրանց, թե՛ հիվանդանոցից դուրս գտնվող հիվանդներին: Հիվանդանոցն ուներ դեղատուն և դեղագործ՝ Սահակ Էֆենդին: 1910 թ. հուլիսի մեկից մինչև 1911 թ. մայիսի 31-ը ազգային հիվանդանոցում խնամվել ու բուժվել էին 521 հիվանդ, որոնցից 370-ը աղքատ մարդիկ էին³⁸⁴: 521 հիվանդից

³⁷⁹ Նույն տեղում:

³⁸⁰ Նույն տեղում, 1912, թիվ 4:

³⁸¹ Նույն տեղում:

³⁸² Նույն տեղում, 1912, թիվ 5:

³⁸³ Նույն տեղում, 1911, թիվ 35:

³⁸⁴ Նույն տեղում:

բուժվել էին 373-ը, 67-ը կիսաբուժված էին, 42-ը համարվել էին անբուժելի, իսկ 39-ը ննջել էին: Հիվանդների թվում էին նաև շրջակա քաղաքներից ու գյուղերից Սեբաստիայում գտնվող պանդուխտները, որոնց հիվանդանոցում խնամել ու բուժել էին ընտանեկան հոգածությամբ: Հիվանդանոցից հեռանում էին՝ օրհնելով բուժանձնակազմին. «Միշտ աւելի փարինք հիւանդանոցին: Դպրոցէն աւելի ու է հայ սիրո՛ւ վ կը նւիրէ իր լուման հիւանդանոցին»³⁸⁵:

«Հողդարը» գրում էր, որ Սեբաստիայում սիրահոժար էին գումար հատկացնում դպրոցական գործին զարկ տալու նպատակով: «Դպրոցական ֆոնդ հանուն Զավարյանի» թղթակցության մեջ տեղեկացվում էր, որ ՀՅԴ «Օգնենք Սասունին» հանձնախումբը հիմնել էր Զավարյանի անունով հիմնադրամ, որը նպաստելու էր Սասունի ու Տարոնի գյուղերի կրթական մակարդակի բարձրացմանն ու գյուղացիների աշխատանքային պայմանների բարելավմանը³⁸⁶: Միևնույն ժամանակ պարբերականը ներկայացնում էր կրթական ոլորտում նկատվող բացերը: Հիմնականում դժգոհություններն ուղղված էին Ուսումնական խորհրդի գործունեությանը և ազգային կրթական կառույցների անբարեխիղճ աշխատանքը շտկելու նպատակն էին հետապնդում: «Խմբագրական խնդրանք» նյութում դիմում էին այդ մարմիններին և Ուսումնական խորհրդին, որ իրենց հարափոփոխ ծրագրերով ազգային դպրոցները «խառնշտկելէ» դադարեն³⁸⁷:

«Հողդարը» պնդում էր, որ Ուսումնական խորհրդը պիտի ունենար գիտակ և «ազգին հոգովը իրապէս տապկուող» անդամներ, որոնք ազգային վարժարաններին պիտի տային «անանկ ուղղութիւն մը, որ տոհմային ըլլար»³⁸⁸: Այնինչ, թերթի

³⁸⁵ Նույն տեղում:

³⁸⁶ Նույն տեղում, 1914, թիվ 42:

³⁸⁷ Նույն տեղում, 1910, թիվ 1:

³⁸⁸ Նույն տեղում, 1911, թիվ 11:

հրապարակումների համաձայն, նույն օրերին Մեքաստիայի ազգային մարմինները իրենց ժողովներում զբաղված էին անձնական շահերի բախումներով. «Կզբաղին նիւթերով, որոնք ունենաւ առնչութիւն չունին ազգին իրական կարիքին հետ»³⁸⁹: «Հողդարը» զգաստացման կոչով էր դիմում նրանց, որ այդ «սուկումի պահին», երբ օսմանյան խորհրդարանում քննարկում էին հայոց ազգային վարժարանները Պատրիարքարանի իրավասություններից հանելու և պետական համապատասխան մարմինների հսկողության տակ դնելու հարցերը, նրանք չզբաղվեին կեղծ ազգասիրությամբ³⁹⁰: Զիլեի մասնավոր թղթակիցը գրում էր, որ իրենց դպրոցը վատ վիճակում էր. «Գիտութիւն՝ գրեթէ չկայ, մաթեմատիքը՝ տկար: Ձեւագիտութեան պէս կարելոր դաս՝ չ'ունին: Տղաքները գաւազանով կը պատժուին: Աշակերտները շատ ծանրաբեռնուած են»³⁹¹: Կրթօջախը չունէր հոգաբարձություն: Չէին գումարվում ուսուցչական ժողովներ: Տեսուչն ասում էր, թէ ինքն էր դպրոցի «կենդանի ծրագիրը»³⁹²: Այսպիսի վիճակ էր տիրում Մեքաստիայի տարբեր կրթօջախներում: «Հողդարն» առաջարկում էր, որ ազգային վարժարաններն իրենց ծրագրերով և նպատակներով տարբերվեին օտար վարժարաններից և յուրաքանչյուր սանի մեջ զարգացնելով անհատականությունը՝ կազմակերպեին ուսումնական գործընթացն այնպես, որ աշակերտների մեջ «հայը շեշտուի»³⁹³: «Տոհմային դաստիարակություն» խմբագրականում նշում էին ևս մեկ բաց. Մեքաստիայի ազգային վարժարանները խախուտ հիմքերի վրա էին դրել մայրենի լեզվի ուսուցումը և լավ չէին սովորեցնում «տոհմային լեզուն՝ հայերե-

³⁸⁹ Նույն տեղում:

³⁹⁰ Նույն տեղում:

³⁹¹ Նույն տեղում, 1911, թիվ 16:

³⁹² Նույն տեղում:

³⁹³ Նույն տեղում, 1911, թիվ 9:

նր»³⁹⁴։ Կիլիկիայից ստացված թղթակցություններից մեկում տեղեկություն կար այն մասին, որ տեղի հայկական մի քանի գյուղում (Եսփալթուն, Լեսանլը, Ղարակեոլ, Պուրհան, Տենտիլ, Թեքմեն, Չեպտնի և այլն) կարոտ էին կրթական տեսչի և Առաջնորդի, իսկ կոնկրետ Սարը-Օղլան հայկական գյուղում կային մանուկներ, որոնք «տակաւ կը մոռնան Սայրենի լեզուն»³⁹⁵։ Այդ գյուղի քահանան ծնողներին հանգստացնում էր՝ ասելով, թե կարիք չկար, որ նրանց զավակները սովորեին հայերեն գրել-կարդալ³⁹⁶։ Նույն թղթակցության մեջ բերվում էր նմանատիպ մեկ այլ՝ Պյունյան-Համիդ գյուղի օրինակը։ Այստեղ բնակվում էին 50-60 տուն հայեր, բայց դպրոցը գտնվում էր նկուղում, չունեի սեղան-աթոռներ, իսկ աշակերտները, հողե հատակին նստած, մեկ դասագրքից 4-5 հոգով օգտվելով էին սովորում դասերը³⁹⁷։ Թերթը Կիլիկիայի հայկական այդ և մի շարք այլ գյուղերի դպրոցների «անկերպարան, անմեթոդ» վիճակի համար պատասխանատու էր համարում թաղականներին և վեղարավորներին, ովքեր «ոչի՛նչ կընէին կրթական տեսակետով»³⁹⁸։ Օրինակ էր բերվում հայաշատ Կեմերեկ գյուղը, որը տարիներ շարունակ չուներ Առաջնորդ և հարևան հայկական գյուղերի հետ ապրում էր մեկուսացած ու լճացած կյանքով³⁹⁹։

Կրթական ոլորտի թերությունները և բացերը մատնանշելու գործում «Հողդարն» առաջամարտիկ էր։ Հողվածներից մեկում այնքան սուր էին Սեբաստիայի Ուսումնական խորհրդի ատենապետ Պայտար Մյուֆետտիճիի հակակրթական գործունեությունը մերկացնող դիտողությունները, որ վերջինս խուլիզանական

³⁹⁴ Նույն տեղում։

³⁹⁵ Նույն տեղում, 1911, թիվ 10։

³⁹⁶ Նույն տեղում։

³⁹⁷ Նույն տեղում։

³⁹⁸ Նույն տեղում, 1911, թիվ 9։

³⁹⁹ Նույն տեղում։

հարձակում էր կազմակերպել շաբաթաթերթի խմբագիր Կ. Պարսամյանի վրա⁴⁰⁰: «Քոյ անձին և ազատ խօսքի և գրչի օրկանի խմբագրի վրայ կատարուած այս վայրենի ու կոպիտ ընթացքը անորակելի է»⁴⁰¹, - գրում էր Փայլակը: Նա պնդում էր, որ Մյուֆետտիշիի արարքը «համիտավայել» էր⁴⁰²: «Հողդարի» հրապարակումներից երևում էր, որ Ուսումնական խորհուրդն իր ղեկավար կազմով կարծես խրախուսում էր «տերթողիկյան» մեթոդը: Օրինակ՝ այդ կառույցի ատենապետներից Այվազյանը գանակոծել էր Արամյան վարժարանի սանուհի Աննա Բասամաջանին նրա դասընկերուհիների ներկայությամբ: Այդ միջադեպի առիթով «Հողդարի» թղթակիցը գրում էր. «Մատներս ալ դողողալ սկսան: Մարդ կրնայ եղեր ա՛սչափ անզգայանալ, եւ եթէ ա՛ս ալ նկատի չառնէ՛ Քաղաքականը, զինքն ալ մեղսակից պիտի նկատենք աս արարքին ԱՊՕԲԻՆԻ, ԱՆԿԻՐԹ Ու ԱՆՄԱՐԴԱՎԱՅԵԼ»⁴⁰³:

«Հողդարի» հրապարակումները ինչ-որ չափով նպաստում էին կրթական ոլորտի բարեփոխումներին, նաև՝ Սեբաստիայի կրթօջախներում դրական տեղաշարժերին: 1911թ. «Քրոնիկ» բաժնում պարբերականը տեղեկացնում էր, որ հաշվի առնելով 1911 թ. թիվ 27-ում իրենց բերած այն փաստերը, թե զեղծարարությունների հետևանքով ամիսներ շարունակ չէին վճարվում ուսուցչական կազմի աշխատավարձերը, Քաղաքական ժողովը կազմալուծել էր Վանական խորհուրդը, թեև ոչ բոլոր անդամներին էր հեռացրել⁴⁰⁴: Թերթը կարծում էր, որ ձեռնարկված միջոցները բավական չէին: «Մենք կը պահանջենք անուններ, մենք կը պահանջենք թիւեր, մենք կը պահանջենք պատիժներ», - գրում էր

⁴⁰⁰ Նույն տեղում:

⁴⁰¹ Նույն տեղում:

⁴⁰² Նույն տեղում, 1911, թիվ 11:

⁴⁰³ Նույն տեղում, 1910, թիվ 2:

⁴⁰⁴ Նույն տեղում, 1911, թիվ 32:

«Հողդարը»⁴⁰⁵: Քաղաքական ժողովից պահանջում էր լինել խիզախ և չքողարկել վերքերը, ապա թե ոչ՝ պահանջելու էր, որ Քաղաքական ժողովի անդամներն անեին հանգանակություն և հավաքված գումարով վճարեին ուսուցիչների աշխատավարձերի պարտքը⁴⁰⁶:

«Հողդարը» կողմ էր հոգուտ դպրոցների ազգային հանգանակության անցկացմանը: «Կրթական երևույթներ» խմբագրականում պարբերականը հիշեցնում էր, որ Գաբրիել քահանայի կազմակերպած հանգանակության շնորհիվ էր ժամանակին կառուցվել Արամյան վարժարանի շենքը⁴⁰⁷: «Գերագոյն ճիգ մը չենք ընէր՝ քաղաքիս կրթական գործին համար: Չենք ձեռնարկէր հանգանակութիւն մը ի նպաստ դպրոցին», - գրում էր «Հողդարը»⁴⁰⁸: Նաև տեղեկացնում էր, որ Սեբաստիայի Ազգային դպրոցում կայացած արհեստավորների ներկայացուցիչների ժողովում այդ կրթօջախի բյուջեի բացը փակելու նպատակով հաստատվել էր կրթական տուրք, քանի որ մինչ այդ դպրոցը չունէր «միօրինակ և է պիտաճէ»⁴⁰⁹: Հանգանակությունից բացի՝ «Հողդարը» առաջարկում էր ազգային վարժարաններում կրթությունը դարձնել ձրի: Չէր ընդունում Արամյան վարժարանի դեկավարության պահանջը, որով եռօրյա վերջնաժամկետ էր տրվել աշակերտներին ամսավճարը մուծելու և վարժարանից չհեռացվելու համար⁴¹⁰: «Աշխատինք կրթութիւնը ՁՐԻ տալ հայ աշակերտներին. աս թող ըլլայ մեր մտածումը, մեր ձգտումը: Անչափ կարօտ ենք մենք ուսման, առաջացման, զարգացման: Ըլլային նաև ձրի հրատարակութիւններ, որ հայը գէթ ինքնաբերաբար ընտե-

⁴⁰⁵ Նույն տեղում:

⁴⁰⁶ Նույն տեղում:

⁴⁰⁷ Նույն տեղում, 1911, թիվ 37:

⁴⁰⁸ Նույն տեղում:

⁴⁰⁹ Նույն տեղում, 1910, թիվ 6:

⁴¹⁰ Նույն տեղում, 1911, թիվ 49:

լանար կարդալուն», - գրում էր թերթը⁴¹¹: Մեկ այլ՝ «Կիրակնօրյա վարժարանի վարիչներու դեմ» հոդվածում «Հողդարն» առաջարկում էր ուսումը ոչ միայն ձրի դարձնել, այլև՝ պարտադիր⁴¹²: Այս խնդրի լուծումը շաբաթաթերթը համարում էր իր «աւագ պարտականութիւնը»⁴¹³: «Աս առանցքին վրայ բեռեռելու ենք մեր ամբողջ եռանդը, մեր ուժը, մեր գոհողութիւնը», - գրում էր «Հողդարը»⁴¹⁴: Ձրի և պարտադիր ուսուցումը շաբաթաթերթն առաջարկում էր իրականացնել համատեղ ջանքերով մշակված միօրինակ ուսումնական ծրագրով շրջանի բոլոր հայկական դպրոցների համար: Այդ գաղափարը թերթում հրապարակած իր բաց նամակում պաշտպանում էր նաև Կովտունի Ազգային վարժարանի տնօրեն Ա. Երանոսյանը⁴¹⁵: Նա պնդում էր, որ ծրագրի կատարման ընթացքը պետք է վերահսկվեր շրջիկ տեսչի կողմից⁴¹⁶: Պարբերականի էջերում Ա. Ալիսյանն իր հերթին առաջարկում էր նոր ուսումնական ծրագրում մեծ տեղ հատկացնել ֆիզիկական կրթությանը. «Առողջ մտքի հետ առողջ բազուկ պետք է»⁴¹⁷: 1914 թ. «Հողդարը» գրեթե բոլոր համարներում բարձրացնում էր Սեբաստիայում կրթական ընդհանուր վերատեսուչ ունենալու խնդիրը: Պարբերականը դա համարում էր օրվա այժմեական հարցերից մեկը, որի լուծման գործում պիտի ընդգրկվեր Սեբաստիայի ողջ համայնքը⁴¹⁸:

«Հողդարը» կրթական խնդիրների լուծման գործում Ուսումնական խորհրդի և ազգային պատկան կառույցների աշխատանքը բարելավելուն զուգընթաց՝ կարևորում էր ազ-

⁴¹¹ Նույն տեղում:

⁴¹² Նույն տեղում 1912, թիվ 31:

⁴¹³ Նույն տեղում:

⁴¹⁴ Նույն տեղում:

⁴¹⁵ Նույն տեղում, 1914, թիվ 41:

⁴¹⁶ Նույն տեղում:

⁴¹⁷ Նույն տեղում:

⁴¹⁸ Նույն տեղում, 1914, թիվ 42:

գանվեր անհատների, այդ թվում՝ հոգևորականների և հոգևոր Առաջնորդների գործունեությունը: Շաբաթաթերթում բազմիցս հանդիպում ենք ազգային դպրոցներին հատկացվող դրամական նվիրատվությունների մասին տեղեկացնող նյութերի: Օրինակ՝ «Քրոնիկ» բաժնում հայտնում էին, որ թիֆլիսաբնակ Թամարա Ղուկասյանը մահվան շեմին 1,5 միլիոն ռուբլի էր կտակել Կ.Պոլսի Պատրիարքարանին, որ իր հայր Ավետիս Ղուկասյանի հիշատակին Արևմտյան Հայաստանում հիմնվելու հայկական համալսարան⁴¹⁹: Թերթը հանդես էր գալիս հարցադրումով, թե ե՞րբ պիտի ցանկություն արթնանար փոքրիկ նվիրատվություններից բացի՝ «մէլ-մէկ չո՛ր տուն կամ խանութ կտակել կրթական գործին»⁴²⁰:

Կրթական խնդիրների կանոնակարգման և այդ ոլորտի հովանավորման խնդիրներով զբաղվող հոգևորականներից «Հողդարը» առանձնացնում էր երկուսին՝ Սեբաստիայի հոգևոր Առաջնորդի փոխանորդ Սահակ վարդապետ Օդաբաշյանին և Թոքատի նորընտիր «գործունեայ, խիզախ» հոգևոր Առաջնորդ Շավարշ ծայրագույն վարդապետ Սահակյանին⁴²¹: Հոգեշնորհ հայր Սահակը իր փոխանորդության տարիներին Սեբաստիայում հիմնել էր «Ձևագիտական» դպրոց-լսարան: Նա այդտեղ ցանկանում էր բացել ընթերցարան, բայց Քաղաքական խորհրդրդի «ստորին պայքարը գանեցուց զինքը, ու ձգեց պաշտօնը»⁴²²: Սահակ վարդապետ Օդաբաշյանը մկների կրծոցներից փրկել էր Սեբաստիայի վանքի նկուղներում պահվող բազմաթիվ ձեռագրեր: Դրանք նա Կարապետ Գաբրիկյանի հետ կանոնավոր կերպով դասավորել էր վանքի գրադարանում⁴²³: Հոգեշնորհ

⁴¹⁹ Նույն տեղում, 1911, թիվ 13:

⁴²⁰ Նույն տեղում:

⁴²¹ Նույն տեղում, 1911, թիվ 40:

⁴²² Նույն տեղում, 1911, թիվ 9:

⁴²³ Նույն տեղում:

հայր Շավարշը հիմքերի վրա էր դրել Խորսանայի 200 երկսեռ աշակերտություն ունեցող դպրոցական գործը և լուծել էր դպրոցի կառուցման հարցը⁴²⁴: Խորսանայի թղթակիցը դիմում էր այլ վայրերում գտնվող խորսանացի պանդուխտներին, որ նրանք հանգանակեին 200 ոսկի՝ գյուղի նոր դպրոցի կառուցմանն օժանդակելու համար. «Մենք որ 150 տնուոր գեղ մ'ենք, դպրոց մը չ'ունենալ ամօթ է»⁴²⁵:

«Հողդարը» կրթական գործին խթանելու մեջ առաջնային էր համարում հայ համալսարանական ուսանողների միության գործունեությունը⁴²⁶: Թերթը տպագրել էր այդ կազմակերպության կանոնադրությունը և ծափահարելի ձեռնարկ համարելով միության հիմնումը՝ ձգտել է, ամեն կերպ աջակցել⁴²⁷: «Հողդարը» ուշադրության կենտրոնում էր պահում նրանց միջոցառումները և առիթը բաց չէր թողնում այդ միությանը խրախուսելու համար: Օրինակ՝ «Հայրենակից ուսանողները» խմբագրականում շաբաթաթերթը բարի երթ էր մաղթում հայրենիք վերադարձող արդեն շրջանավարտ դարձած սեբաստացի ուսանողներին, ովքեր իրենց պարծանքն էին. մեկը դեղագործ էր, մյուսն՝ անասնաբույժ, երրորդը՝ երկրագործ, չորրորդն՝ իրավաբան, հինգերորդը՝ բժիշկ և այլն: Նրանք «այժմեն իսկ սկսած են մեր մտաւորականներուն մէջ փողփողիլ»⁴²⁸:

«Հողդարը» կարևորում էր կրթական խնդիրների լուծման գործում Սանասարյան վարժարանի մասնաճյուղը Սեբաստիայի Ս.Նշան մայրավանքում բացելու հանգամանքը⁴²⁹: Խմբագրության կարծիքով՝ այդ կրթօջախը կկարողանար օգ-

⁴²⁴ Նույն տեղում:

⁴²⁵ Նույն տեղում:

⁴²⁶ Նույն տեղում, 1911, թիվ 10:

⁴²⁷ Նույն տեղում:

⁴²⁸ Նույն տեղում, 1912, թիվ 27:

⁴²⁹ Նույն տեղում, 1912, թիվ 26:

նել դուրս գալ կրթական հետամնաց վիճակից⁴³⁰: «Հողդարը» մաղթում էր, որ նորաբաց Սանասարյան դպրոցի ուսումնական ծրագրերը կազմվեին ազգային և եվրոպական լավագույն դպրոցների օրինակով ու «մանուկը եւ ուսանողը կրթեին հայը չի մեռցնելով իր մէջը»⁴³¹:

Ազգային կրթության և դաստիարակության խնդիրները օրակարգային և էական էին «Հողդարի» համար: Մինչև վերջին համարը թերթը քննարկել է այդ ոլորտի հիմնահարցերը: Բարեկամաբար և սրտացավորեն արվող դիտողությունները հիմնականում ընդունվում և հաշվի էին առնվում: «Հողդարը» տպագրել էր ազգային Արամյան վարժարանի տեսուչ Խաչատուր Կրտոտյանի՝ «Հողդարի» խմբագրին ասած հետևյալ խոսքերը. «Սա-նա տեղեր մի՛ քննադատեք դպրոցը. մեր դպրոցը կարծուածէն աւելի՛ օգտակար է եղած. կրնա՞ք մեր սա շրջանաւարտները բաղդատել ու և է շրջանաւարտի մը հետ օտար վարժարաններէն»⁴³²: Կ. Պարսամյանն ընդունել էր այս դիտողությունը, թեև այդ կարծիքը նա համարում էր չափազանցված, բայց ճշմարտացի⁴³³:

Կրթական խնդիրներին զուգահեռ՝ «Հողդարի» էջերում 1910-1914 թթ. կտրվածքով ամփոփված է Սեբաստիայի մշակութային կյանքը: Մեր աչքերի առջև է հառնում Սեբաստիան իր մշակութային հետաքրքրություններով: Թերթի հրապարակումներից երևում է, որ սեբաստացիները թատերասեր էին: Քաղաքում բեմականացվում էին առավելապես հայ դրամատուրգների ստեղծագործությունները: Թատերախմբերը հովանավորվում էին հնչակյան կուսակցության և ՀՅԴ-ի կողմից, թեև դաշնակցականներն ավելի ակտիվ էին այդ հարցում: «Դաշնակցութիւնը միայն զիտէ իր ընկեր-

⁴³⁰ Նույն տեղում, 1912, թիվ 25:

⁴³¹ Նույն տեղում:

⁴³² Նույն տեղում, 1911, թիվ 28:

⁴³³ Նույն տեղում:

ները սերտօրէն կապել իրարու: Դաշնակցական ընկեր մը միայն իր ընկերոջը ցառովը, տառապանքովը կը տապկուի», - գրում էր Թերթը⁴³⁴: Սեբաստիայում ներկայացումներով հանդես էին գալիս ոչ միայն արհեստավարժ թատերախմբեր, այլև հայկական տարբեր կրթօջախների ուսանողների ջանքերով գործող թատերախմբեր: «Քրոնիկ» բաժնի լուրերից մեկը տեղեկացնում էր, որ 1911 թ. փետրվարի 16-ին Սիվասում ձմեռային թատերաշրջանը բացվել էր կիրակնօրյա վարժարանի ուսանողների կողմից «Ս.Դոմինիկ կղզու գերին» դրամայի ներկայացմամբ⁴³⁵: «Դերակատարներուն մէջ ծիլը կար ապագայի խոստմնալիցութեան», - գրում էր Տ.Կ.-ն⁴³⁶: Նա ներկայացման միակ թերությունը համարում էր այն, որ գլխավոր հերոսուհու դերակատարը տղա էր: «Ո՛հ, զարգացումը, մաքու՛ր զարգացումը՝ թոյլատրեր մեզի ալ՝ փայլած տեսնել նոյն բեմին վրայ հայ-իզական սեռի կարողութիւնն ալ», - իր դիրքորոշումն էր ներկայացնում «Հողդարը»⁴³⁷: Թերթը դեմ էր կանացի դերերը տղամարդկանց կողմից ներկայացվելուն, բայց հավանում էր վերջինների խաղը: Թերթն այս առումով առանձնացնում էր դերասան Մահակյանին. «Պրն. Սահակեան անսգիւտ կարողութիւն մ'ունի Շիրվանզադէի կնօջական թիփերուն յոյզերը, պաղատանքները արտայայտելու»⁴³⁸: «Հողդարը» վերլուծական հոդվածներից մեկում, անդրադառնալով Սեբաստիայում Ա.Ասլանենցի և Ա.Չկամյանի թատերախմբերի կողմից Շիրվանզադէի «Կործանվածը» դրամայի բեմականացմանը, կարծում էր, որ Շիրվանզադէն չէր ամաչի, եթե ներկա գտնվեր իր այդ «բարդ, կնճռոտ, խառնակ փիլեսի ներկայացումին. ամեն դեր՝ անթերի՛ » էր⁴³⁹: Թերթը տեղե-

⁴³⁴ Նույն տեղում, 1911, թիվ 34:

⁴³⁵ Նույն տեղում, 1911, թիվ 15:

⁴³⁶ Նույն տեղում:

⁴³⁷ Նույն տեղում:

⁴³⁸ Նույն տեղում, 1912, թիվ 11:

¹¹⁹ Նույն տեղում:

կացնում էր, որ Չկամյանի թատերախումբը «արժանի ծափեր էր խլել» Շիրվանզադեի «Եվգինե» դրամայի ներկայացմամբ, իսկ թատերախմբի բեմադրած «Կործանվածը» դրաման և թատերախումբն ինքը «պատիւ կը բերեն փիւսի մեծանուն հեղինակին, իսկ մեզ՝ հպարտութիւն»⁴⁴⁰:

1911թ. փետրվարի 18-ին Տ.Կ.-ն տեղեկացնում էր, որ Սիվասի Ազգային լսարանում Ազգային ընդհանուր շրջանային միության նախաձեռնությամբ տեղի էր ունեցել գրական-թատերական գիշերույթ⁴⁴¹: Նա գրում էր, որ «գուտ գրական կտորներ հանուեցան բեմ», թեև՝ ոչ այնքան վարպետորեն: Հանդեսին փայլ էր տալիս միայն պարոն Անդրանիկը միմուսի դերով: «Ե՞րբ պիտի զգանք պէտքը արևեստասէր դերակատարներու կազմութեան մը, ո՞վ պիտի շղթայէ, զօդէ՝ հոս-հոն երևցող բնածին յատկութիւնները դերակատարի», - այս հարցադրումներն էր հնչեցնում թղթակիցը⁴⁴²: Վերլուծականներից մեկում «Հողդարը» բարձր գնահատականների էր արժանացնում Սեբաստիայում գործող Արամ Ապլանենցի թատերախմբին և խմբի դերակատարուհուն, ում անունը թերթը այդպէս էլ չէր նշել: Այդ դերակատարուհու մասին «Հողդարը» գրում էր. «Աս քանի՛ հեղ է՝ բեմ կը հանուի ան, ու մի՛շտ սրտաբաց ընդունելութեան կարժանանայ»⁴⁴³: Շաբաթաթերթի համոզմամբ՝ գավառներում թատրոն գնալուց նախընտրելի բան չկար⁴⁴⁴: Սեբաստիա քաղաքում ներկայացումները հիմնականում տեղի էին ունենում Ազգային լսարանում: Ընդմիջումներին հանդես էին գալիս սանթուրահար Արթինը և ջութակահար-երգիչ Տիգրան Խորիկյանը: Թատերական ներկայացումներն առավելապէս կազմակերպվում էին ի նպաստ այս

⁴⁴⁰ Նույն տեղում, 1912, թիվ 5:

⁴⁴¹ Նույն տեղում:

⁴⁴² Նույն տեղում:

⁴⁴³ Նույն տեղում, 1911, թիվ 16:

⁴⁴⁴ Նույն տեղում:

կամ այն վարժարանի: Օրինակ՝ 1911 թ. փետրվարի 17-ին Ա.Ասլանենցի թատերախումբը Ազգային լսարանում հանդես էր եկել «Հայրենիքի սերը» ներկայացմամբ՝ որպես զորակցություն Մեքաստիայի Ազգային վարժարանի⁴⁴⁵: Ա.Ասլանենցի թատերախմբի մեկ այլ՝ «Բռնի ամուսնությունը» ներկայացումը կազմակերպվել էր որպես նպաստ Մեքաստիայի Արամյան վարժարանի⁴⁴⁶: Հասույթը հատկացվելու էր այդ կրթօջախի համար նստարաններ գնելուն: Խմբագրությունը ծափահարում էր դերասանական խմբի անթերի խաղին ու պարսավում էր ազգային մարմինների այն ներկայացուցիչներին և այն ուսուցիչներին, ովքեր չէին եկել դիտելու ներկայացումը⁴⁴⁷: Թերթը ցանկանում էր թատերական դահլիճներում տեսնել «քաղաքիս ամբողջ «հայտիներ»⁴⁴⁸: Վերլուծականները այնպիսի ոգևորությամբ ու սիրով էր գրում «Հռոդարը», որ այդ կերպ կարողանար ներկայացումները դիտելու ցանկություն արթնացնել ընթերցողների սրտերում: Ասենք՝ պատմելով Ա. Չկամյանի թատերախմբի կողմից «Մարվող ճրագներ» պիեսի ներկայացման դերասանական և ռեժիսորական վարպետության մասին, գրում էր. «Սատողերը խազխզած պահուս իսկ խաղին ազդեցութեանը տակն եմ. անչափ կենդանի էին պատկերները»⁴⁴⁹:

Թատերական կյանքը լուսաբանելուն զուգահեռ՝ թերթը «Քրոնիկ» բաժնում որպես լուր ներկայացնում էր Մեքաստիայի մշակութային անցուդարձի կարևոր իրադարձությունները: Օրինակ՝ 1912 թ. օգոստոսի 25-ին «Քրոնիկ» բաժնի լուրը տեղեկացնում էր, որ Մեքաստիայում բեմադրվելու էր «մեր ամենատաղանդաւոր երգահան Տ. Չուխաջյանի «Լէպլէպիճի Հօրօրը» օպե-

⁴⁴⁵ Նույն տեղում:

⁴⁴⁶ Նույն տեղում, 1912, թիվ 4:

⁴⁴⁷ Նույն տեղում:

⁴⁴⁸ Նույն տեղում, 1912, թիվ 31:

⁴⁴⁹ Նույն տեղում:

րան», որը արդեն առինքնել էր Կ. Պոլսի գեղարվեստասերների հիացումը⁴⁵⁰: Բերենք այլ օրինակ: Շաբաթաթերթում տպագրված է «մեծանուն և հեղինակաւոր» ճարտարապետ Թորոս Թորամանյանի սրտագին շնորհակալության խոսքը, որը նա ուղղել էր Սեբաստիայի Առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսին⁴⁵¹: Վերջինս Թորամանյանին էր ուղարկել Սեբաստիայի Ս.Նշան վանքի հատակագծերը: Դրանք հետաքրքրել էին անվանի ճարտարապետին և նրան համոզել էին ևս մեկ անգամ, որ «գաղթական հայութիւնը շատ բան տարեր է իրեն հետ բիզանդական տիրապետութեան սահմանները: Եվրոպական գիտնոց խուզարկութիւնները արդէն քանի մը տարիէ ի վեր վերջնականապէս հաստատած են, որ ներքուստ կիսաբոլորակ վերջաւորութեամբ թելերով խաչաձև եկեղեցիներու յատակագծերը հայկական ստեղծագործութիւն են»⁴⁵²:

Գրական ստեղծագործությունները ցաք ու ցրիվ են «Հողդարի» լեջերում: Շաբաթաթերթը հիմնականում 1-ին էջում տպագրում էր արևմտահայ գրողներից ընտրած մեկ բանաստեղծություն կամ հատվածաբար զետեղում էր նրանց արձակ գործերից: Արևմտահայերեն թարգմանությամբ և հայատառ թուրքերենով «Հողդարը» տպագրել է Սեբաստիայի կուսակալ Մեհմեդ Էմինի բանաստեղծություններից⁴⁵³: Թերթը խրախուսում էր նորաթուխ պոետներին: Նրանցից Փայել Փարլազյանի «Իմ ուխտը» բանաստեղծությունը «Հողդարը» տպագրել էր Դ.Վարուժանի հետևյալ մեկնաբանությամբ. «Հողդարին կը յանձնարարեմ այս քերթուածը՝ զոր խպնտտ ձեռքով մը ինձի ներկայացուց նորընծայ քերթողը: Մասուրի վարդ մը, որ բուրաստանի մը զարդը պիտի ըլլայ արևեստի պատուաստումով: Բնածին տաղանդի մը հեռանկարը

⁴⁵⁰ Նույն տեղում, 1912, թիվ 29:

⁴⁵¹ Նույն տեղում, 1911, թիվ 45:

⁴⁵² Նույն տեղում:

⁴⁵³ Տե՛ս «Հողդար», 1910, թիվ 1, 1910, թիվ 6, 1911, թիվ 16:

կայ հոն: Կ'արժէ կարդալ զայն և նուագել լուսնին տակ, սագի վրայ»⁴⁵⁴:

Դ. Վարուժանը «Հողդարի բլրակին» արձակ բանաստեղծության միջոցով փորձել է բնութագրել թե՛ Սեբաստիայի Հողդար բլրակն ու դրա ստորոտում գտնվող համանուն թաղամասը, թե՛ «Հողդար» շաբաթաթերթի կատարած հայապահպան աշխատանքը: Մեջբերենք այս բնորոշ հատվածը. «Քու համեստ բարձունքիդ վրայ կանգնած կ'ունկնդրեմ անմահութեան երգը 4 հովերուն՝ որոնք ցորեաններու ծովերը յուզելով կուզան մագերուս մեջ նուագել տրտունջը հայրենի ակերումին և փառքը աստղապսակ Մարդուն՝ որուն օրոցքը օրօրուեցաւ քու մէկ բարի հիւղակիդ մէջ: ՀՈՂԴԱՐԻ ճրագը ԱՐԱՐԱՏԻ արևը եղաւ»⁴⁵⁵: Թերևս չափազանցված է «Հողդարի» դերը, բայց Սեբաստիայում շաբաթաթերթը վայելել է ժողովրդի հարգանքն իր հրապարակումներով, կուսակցությունների միջև կամրջող օղակ դառնալու մղումով:

Քաղաքական կյանքի անցուդարձը թերթում թռուցիկ լուրերի տեսքով էր տրվում, իսկ հոդվածների մեջ անդրադառնում էին Սեբաստիայում կատարվող իրադարձություններին ու տեղի ազգային մարմինների աշխատանքներին: Հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող նյութերը մեծ մասամբ զետեղվում էին «Թղթակցություն» և «Քրոնիկ» բաժիննում: Դրանք տեղեկացնում էին Սեբաստիայում հայերի հանդեպ իրականացվող բռնարարքների, ավան-թալանի և ջարդի ու սպանդի մասին: Ջիլեի սեփական թղթակիցը 1911 թ. փետրվարի 8-ին վկայում էր, որ նորից շարունակվում էին բռնակալության շրջանի արարքները⁴⁵⁶: Նա պատմում էր, թե ինչպես էին տեղի թուրքերը «Դուր կեավուր էք, ու կեավուրը կրօնքիս հայհոյեց» ասելով՝ ծեծկո-

⁴⁵⁴ Նույն տեղում, 1911, թիվ 19:

⁴⁵⁵ Նույն տեղում, 1911, թիվ 23:

⁴⁵⁶ Նույն տեղում, 1911, թիվ 14:

դարը» արտատպել էր լուր, որը տեղեկացնում էր ՀՅԴ Թեհրանի մարմնի կողմից ինքնապաշտպանական խմբերի ստեղծման մասին, ընդ որում նշվում էր, թե դրանք պատրաստ էին հարկ եղած դեպքում սլանալ՝ հայ հասարակությանը պաշտպանելու համար⁴⁶¹: Մեկ այլ նյութում, գուժելով Եփրեմ խանի մահը, «Հողդարը» կրկին գովերգում էր զինված պայքար. «Ան հայութեան պարծանքը ու Դաշնակցութեան փառքն էր⁴⁶²: Պանծալի սուգ մը սակայն՝ երանի՜ թե տասնեակներով Եփրեմներ կարենայինք սզալ»⁴⁶³: «Ազգը կհուզվի» խմբագրականում, ներկայացնելով Մուշի և Վանի շրջաններում հայերի կոտորվելու բազմաթիվ փաստեր, դիմում էր կառավարությանը և առաջարկում գենք բաժանել ժողովրդին, որ պաշտպանվեր երկրի անդորրը⁴⁶⁴: «Հայը կը խողխողուի օր ցերեկով, կը թալանուի, կառեւանգուի՝ քաջալերուած տիրող բեժիմի ընթացքէն: Ալ չենք կրնար խօստումներով օրօրուիլ, գործ կուզենք, քանի որ դեռ շատ ուշ չէ, քանի որ աս դրութենական սպանութիւնները համայնական կոտորածի մը բնոյթը առնել են սկսած», - հիշատակում էր «Հողդարը» Կ.Պոլսի հայոց ազգային երեսփոխանների խոսքերը⁴⁶⁵:

1912 և 1914 թվականներին թերթը քաղաքական հնչերանգ էր ստացել, երբ Սեբաստիայում, ինչպես ողջ Օսմանյան Թուրքիայում, նախապատրաստվում էին խորհրդարանական ընտրություններին: Յուրաքանչյուր համարում թերթը 1-2 նյութ էր նվիրում հիշյալ թեմային՝ սատարելով ՀՅԴ թեկնածուներին:

1914թ. «Հողդարը» ներկայացնում և պաշտպանում էր Պատրիարքարանի դիրքորոշումը օսմանյան խորհրդարանական ընտրությունների և հայ թեկնածուների վերաբերյալ: 1914 թ.

⁴⁶¹ Նույն տեղում, 1911, թիվ 38:

⁴⁶² Նույն տեղում, 1912, թիվ 20:

⁴⁶³ Նույն տեղում, 1912, թիվ 30:

⁴⁶⁴ Նույն տեղում:

⁴⁶⁵ Նույն տեղում, 1912, թիվ 30:

թերթի քաղաքական հայացքներն ավելի պարզորոշ և սուր էին դարձել՝ խմբագիր Հ. Փոլադի գալով: «Հողդարը» դեմ էր ապագային կամ կեղծ ազգասեր հայ գործիչներին: Երբ 1912 թ. ՀՅԴ-ն ցուցաբերում էր չեզոք դիրքորոշում, «Հողդարը» քննադատում էր նաև իր համակրած կուսակցությանը: «Դաշնակցութիւնը չուզեր ճակատաբացօրէն մխուիլ պայքարին մեջ՝ վախճալով գուցէ թէ պիտի պարտուի - այլ կուզէ «չեզոք»ին օժանդակել: Չեզոքը, մշտերէ՛ր, ամբո՛խը ատ: Կ'անտեսէմ անգամ իր գոյութիւնը», - գրված էր «Պայքար» խմբագրականում⁴⁶⁶: «Չեզոքը» խմբագրականում չեզոքից վնասակար տարր չէին պատկերացնում: Ըստ թերթի՝ չեզոք նշանակում էր ճահճացած ջուր, որից անտարբերության գարշահոտն էր փչում⁴⁶⁷: «Հողդարը» կուսակցություններին էր դիմում կոչով, որ իրենց շարքերում վերացնեն չեզոքներին⁴⁶⁸:

1912 թ. 5-րդ համարից սկսած՝ շաբաթաթերթը մեծ տեղ էր հատկացնում օսմանյան երեսփոխանական ընտրություններին, ընտրական գործընթացը համակարգող Համազգային մասնախմբի աշխատանքների լուսաբանմանը և թեկնածուների ներկայացմանը: Հակակրանքով էր խոսում Իթթիհատի թեկնածու դարձած Արմենակ Խորիկյանի մասին, ում չէր համակրում նաև հայությունը: «Թեկնածուները» խմբագրականում Կ. Պարսամյանը գրում էր, որ իր ձայնը տալու էր այն թեկնածուին, ով «արիւնքամ պահերուն անայլայլ յեղափոխականը մնաց, որուն նկարագիրը այդ բովէն անբասիր անցաւ»⁴⁶⁹: «Հողդարը» պաշտպանում էր հայ թեկնածուներից նրան, ով հարստության տիրանալու նպատակով չէր գրկել ազգակիցներին, ով մտահոգվել էր հայկական գյուղերի վիճակով, ով հետաքրքրվել էր ազգային դպրո-

⁴⁶⁶ Նույն տեղում, 1912, թիվ 14:

⁴⁶⁷ Նույն տեղում, 1912, թիվ 17:

⁴⁶⁸ Նույն տեղում:

⁴⁶⁹ Նույն տեղում, 1912, թիվ 5:

ցով ու մշակույթով: Թերթի համար թանկ էր այն թեկնածուն, ով անվախորեն պաշտպանում էր ճշմարտությունը և չուներ շահադիտական նկրտումներ⁴⁷⁰: 1914 թ. օսմանյան խորհրդարանական ընտրությունների ժամանակ «Հողդարն» այս տեսակետներն ուներ պատգամավորության թեկնածուների վերաբերյալ: Ավելացել էր մեկ պայման-պահանջ. թերթը հայ ընտրողներին կոչ էր անում պաշտպանել Պատրիարքարանի արդար պահանջները և չմասնակցել ընտրություններին, եթե «չընդունուին այդ պահանջները»⁴⁷¹: Տեղեկացնում էր, որ այդպես էին վարվել Թոքատում⁴⁷² և Ամասիայում⁴⁷³: Ամասիայից «Հողդարի» թղթակիցը պատմում էր, որ հակառակ կառավարության խիստ հրահանգներին՝ հայերը չէին մասնակցել օսմանյան խորհրդարանի պատգամավորական ընտրություններին, բացի այդ, պահանջվող 2 անձանց չէին տրամադրել՝ քվեատուփերը հսկելու համար: Նրանք իրենց այսօրինակ վարքագիծը հիմնավորել էին հետևյալ կերպ. «Իրենք ընտրական աս մէկ գործին չէին կարող մասնակցել, քանի որ Պատրիարքարանի ձայնը անլսելի մնաց, և Հայութիւնն ամբողջ նախատուեցաւ իր արդար պահանջներուն համար»⁴⁷⁴: Թերթը գրում էր, որ Ամասիայում հայերը ձեռնպահ էին մնացել ընտրություններին⁴⁷⁵: Այսպիսով՝ 1914 թ. ընտրապայքարը և արևմտահայության պահանջները «Հողդարի» հիմնական թեմաներն էին:

«Հողդարը» հայ ժողովրդի քաղաքական հասունության գործում էական էր համարում քաղաքական գործիչների հանդիպումները և կատարած քարոզչական աշխատանքը: Թերթը լու-

⁴⁷⁰ Նույն տեղում:

⁴⁷¹ Նույն տեղում, 1914, թիվ 41:

⁴⁷² Նույն տեղում:

⁴⁷³ Նույն տեղում, 1914, թիվ 42:

⁴⁷⁴ Նույն տեղում:

⁴⁷⁵ Նույն տեղում:

սաբանում էր ՀՅԴ նախաձեռնությամբ անցկացվող այդ կարգի հանդիպումները: Առաջարկում էր որպես քարոզիչներ նկատի ունենալ Դ.Վարուժանին և Սեբաստացի Մուրադին: Շահնուրը գրում էր իր թղթակցության մեջ, որ Թոքատում մինչև Դ. Վարուժանի և Մուրադի հետ հանդիպելը ժողովուրդը չէր սիրել դաշնակցականներին, որովհետև իրենց հետ նախորդ հանդիպումներում ուրիշ դաշնակցականների խոսքը շաղախված էր եղել «ցեխերէ, հայեռութենէ և աղտոտութենէ»⁴⁷⁶: Շահնուրի կարծիքով՝ Դ. Վարուժանի ամեն բառը մի բանաստեղծություն էր, իսկ խոսքի ամեն պարբերությունը՝ մի ավարտուն պատմություն: «Չի լացցուց մեզ, այլ վրէժխնդրութեան ոգին արթնցուց մեր մէջ: Հէ՛րիք, ըսաւ, ապրեցանք դարեր տեւող թմրութեան մէջ, ապրինք կեանք մը ասպետական՝ որով ապրեցան մեր նախահայրերը: Հայը, ըսաւ, մի մարտիրոս է, մի վկայ- ժանտ ձեռքեր ջախջախեցին իր գանկը, բայց նա կրցաւ ստեղծագործել, կոտորեցին իր բազուկները, բայց նա իր ակռաներովը բացաւ իր սրտին ակռաները, նիզակներու, մարթիններու և եաթաղանի հարուածներով պատռեցին իր կուրծքը և ծակծկեցին ամբողջ իրանը և սակայն չի կրցան մեռցունել զինքը, որովհետև սիրտը կը բաբախէր տակաւին ա՛յնքան ուժգին, որքան մի առոյգ երիտասարդի մը սիրտը: Պիտի ապրի Հայը ցորչափ փարած է նա իր գրչին, իր բահին և իր զէնքին», - վերապատմում էր Շահնուրը⁴⁷⁷, հավաստիացնելով, թե Վարուժանը հայ ժողովրդի ապագայի հանդէպ անկոտորում հավատ ուներ⁴⁷⁸:

⁴⁷⁶ Նույն տեղում, 1911, թիվ 43:

⁴⁷⁷ Նույն տեղում:

⁴⁷⁸ Դ. Վարուժանը Սեբաստիայի պարծանքն էր. «Քաղաքը ամբողջ՝ պաշտամունք ունէր իրեն հանդէպ: Դիր իր անունը ու և է յայտագրի մէջ, և քաղաքը ամբողջ կը խոնուի հոն: Ինք, սիրտ-բաց, անձներ, կ'եղբայրակցէր ամենուն հետ» (տե՛ս «Հողդար», 1911, թիվ 34):

1914 թ. «Ցեղին Նոր տարին» խմբագրականում «Հողդարը» գրում էր. «Քալեց Ցեղը արինի ու մոխրի արահետներեն, միշտ խիզախ, միշտ կանգուն ու միշտ սպասելով նոր յոյսերու, Նոր Տարին»⁴⁷⁹: Որքան էլ անցնող տարիները արյունոտում էին ցեղի ճանապարհը և մոխիր էին լցնում նրա ոտքերի առջև, դրանք ըմբոստության կայծեր էին արթնացնում հայ ժողովրդի սրտում⁴⁸⁰: Այսպես էր կարծում «Հողդարը» և լավատեսորեն էր տրամադրված ապագայի հանդեպ, թեև հնարավոր էր համարում, որ կրկին արյուն ու ավեր կլինեին հայրենի երկրում: Թերթի խմբագրակազմը չէր էլ ենթադրում, որ թուրքական իշխանությունները կհայրենագրկեին արևմտահայությանը:

Հրատարակության տարիներին «Հողդարը», լինելով գավառային պարբերական, արձարծեց, սակայն, համահայկական հիմնախնդիրներ և ձգտեց նպաստել մեր ժողովրդի կարող ուժերի համախմբմանը՝ դրանց լուծման համար մղվող պայքարում:

ՏՐԱՊԻԶՈՆԻ «ԽԱՐԻՍԽ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1909 թ.)

Տրապիզոնի նահանգը (Տրապիզոնի վիլայեթը, Տրապիզոնի կուսակալությունը) վարչատարածքային միավոր էր Օսմանյան կայսրության հյուսիս-արևելքում, պատմական Պոնտոս և Խադտիք երկրների տարածքում⁴⁸¹: Վարչական կենտրոնը Տրապիզոնն էր⁴⁸²: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Տրապիզոնի նահանգն ուներ 4 գավառ (Տրապիզոն, Մամսոն, Լազիստան, Գյումուշխանե), 22 գավառակ (կազա) և 23 գյուղախումբ (նա-

⁴⁷⁹ Նույն տեղում, 1914, թիվ 41:

⁴⁸⁰ Նույն տեղում:

⁴⁸¹ Մելքոնյան Ա., «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր», Երևան, 2011, էջ 51: «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 444:

⁴⁸² «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 537-538:

հիե)⁴⁸³: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին այս վիլայեթում հաշվվում էր 70000 հայ, որոնց մեծ մասը բնակվում էր Տրապիզոն, Սամսոն, Օրդու, Տրիպոլի, Ունիե, Ռիգե և Աթինա քաղաքներում: Գյուղական հայ բնակչությունը տեղաբաշխված էր Տրապիզոն, Օրդու և Կիրասոն գավառակներում (Օրդուի գավառակում կար 23 հայաբնակ գյուղ)⁴⁸⁴:

Տրապիզոնը գտնվում էր Սև ծովի հարավային ափին: Այստեղ 19-րդ դարի վերջին գործում էին 5 հայկական եկեղեցի⁴⁸⁵, 1 վանք, ազգային ուսումնական հաստատություններ: Առևտրի և արհեստների գրեթե բոլոր ոլորտները հայերի ձեռքին էին⁴⁸⁶: Եթե Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Տրապիզոնի հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 15000-ի, ապա մինչև 1915 թ. հուլիսի 6-ը քաղաքը հիմնականում դատարկվել էր հայերից⁴⁸⁷: Տեղահանությունից հետո եվրոպացի քրիստոնյա քարոզիչների ջանքերով Տրապիզոնում հայ որբերի համար ստեղծված որբանոցը Իթթիհատի Կենտրոնական կոմիտեի ցուցումով փակվել էր, որբ երեխաներն էլ մահմեդականացվել էին: 1916 թ. ապրիլին ռուսական զորքերը գրավում են քաղաքը, իսկ 1918 թ. թուրքերը, վերագրավելով այն, հիմնականում ոչնչացնում են այնտեղ վերադարձած հայերին⁴⁸⁸:

1850-ական թվականներից Տրապիզոնում գործում էր հայկական տպարան⁴⁸⁹, որտեղ տպագրվում էր տեղական մամուլը: Տրապիզոնում են հրատարակվել «Գեղջուկ» (1909-1910 թթ.) և «Խարիսխ» (1909 թ.) պարբերականները:

⁴⁸³ Նույն տեղում:

⁴⁸⁴ Նույն տեղում, էջ 445:

⁴⁸⁵ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 538:

⁴⁸⁶ «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 442:

⁴⁸⁷ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 50:

⁴⁸⁸ Նույն տեղում, էջ 51:

⁴⁸⁹ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 538:

«Խարիսխը» լույս է տեսել 1909 թ. ապրիլ, մայիս, հունիս ամիսներին: Հրատարակվել է չորեքշաբթի և շաբաթ օրերին 4 էջով (երբեմն՝ 6 կամ 8 էջով): Հատավաճառ էր: Տրապիզոնում թերթը կարելի էր գնել քաղաքի կենտրոնում (մեյդանում) գտնվող Սկրտիչ Խոջոյանի կրպակում: Մեփական թղթակիցներ ուներ Ադանայում, Վանում, Օրդուում, Եմուրայում, Էլևիում: Արտոնատերը Մերասի եղբայրներն էին: Խմբագիրը Հարություն Տերտերյանն էր: Թերթն ուներ հասարակական-քաղաքական և գրական ուղղվածություն:

«Խարիսխի» հիմնադիր-խմբագիրը ՀՅԴ անվանի գործիչ Մալխասն էր:

Մալխասը (Արտաշես Հովսեփյան) ծնվել է 1877 թ. Տրապիզոնում: Սովորել է Կարինի Սանասարյան վարժարանում: 1896-1903 թթ. ապրել է ԱՄՆ-ում, Շվեյցարիայում, որտեղ ծանոթացել է ՀՅԴ անվանի գործիչներից մի քանիսի հետ: Նա 1903 թ. ՀՅԴ կողմից ուղարկվել է Ուրմիա, ապա՝ Խոյ: 1906 թ. Մալխասը Վան-Վասպուրականում էր: «Իրեն վստահուեցաւ Խոյի եւ Ս. Դաթէի վանքի զէնքերու փոխադրութեան եւ պահեստաւորման գործը: Մաս կազմեց նաեւ Սասնոյ օգնութեան փութացող զինատար խումբերուն: 1908ի Օսմանեան Սահմանադրութեան հոչակումէն ետք հաստատուեցաւ իր ծննդավայրը՝ Տրապիզոն, ուր ձեռնարկեց Հ.Յ.Դ. պաշտօնաթերթ «Խարիսխ» թերթի հրատարակութեան: Իսկ երբ պայթեցաւ Առաջին Աշխարհամարտը, Մալխաս ամբողջապէս նետուեցաւ Տրապիզոնի հայութեան ինքնապաշտպանութեան գործին մէջ: Այնուհետեւ, Հայ Կամաւորական Շարժման միանալով՝ Մալխաս իր մասնակցութիւնը բերաւ Հայաստանի անկախութեան կերտումի դիւցազնական ճակատամարտներուն», - կարդում ենք Մալխասի մահվան 50-ամյակի առիթով նրա մասին գրված վերլուծական հոդվածում⁴⁹⁰:

⁴⁹⁰ www.azator.gr

Մալխասը մինչև 1914 թ. գործել է Կովկասում, Տրապիզոնում, Կ. Պոլսում՝ պարբերաբար ձերբակալվելով և ենթարկվելով ռուսական ու թուրքական իշխանությունների հալածանքների: Եղել է Հայաստանի 1-ին հանրապետության Խորհրդարանի պատգամավոր: Հայաստանի խորհրդայնացումից հետո տեղափոխվել է ԱՄՆ: Մալխասը մահացել է Բեյրութում 1962 թ.⁴⁹¹:

«Խարիսխի» հրապարակումների մեծ մասը լուրեր էին: Դրանք տեղադրվում էին 1-ին և 4-րդ էջերում գրեթե ամբողջ էջի ծավալով: Լուրերը գրում էին հիմնականում «Խարիսխի» սեփական թղթակիցները: Այդ թղթակցություններում և լուրերում նրանք թարմ տեղեկություններ էին հաղորդում Կ. Պոլսում, Տրապիզոնում ու շրջակա հայկական բնակավայրերում կատարվող պետական ու ազգային կարևոր իրադարձությունների մասին: Լուրերը գրվում էին առանց մեկնաբանությունների՝ պահպանելով չեզոքություն, թեև պարբերականը ՀՅԴ Տրապիզոնի շրջանի օրգանն էր, և նյութերը պատրաստում էին ՀՅԴ հայտնի գործիչները (Մարգալետը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Շահբազը, Մ. Փոլադը): 1-ին էջում լուրերը զետեղվում էին «Սեփական լուրեր», Սեփական հեռագրեր», իսկ 4-րդ էջում՝ «Տեղական լուրեր», «Ծանուցումներ» և «Ազդ» բաժիններում: «Խարիսխի» 3-րդ էջի «Մամուլ» բաժնում տեղ էր գտնում Կ.Պոլսի ազդեցիկ թերթերից արված լրաքաղը, այդ թվում՝ թարգմանաբար ներկայացվում էին թուրքական թերթերից կարևոր լուրերը և հրապարակումները:

«Խարիսխի» լուրերից կարելի է պատկերացում կազմել 1909 թ. ապրիլ-հունիս ամիսներին Թուրքիայում տիրող հասարակական-քաղաքական անցուդարձի և արևմտահայությանը մտահոգող խնդիրների մասին: Հստակորեն երևում է, որ հայ-թուրքական հարաբերությունները սերտացել էին՝ ի պաշտպանություն սահ-

⁴⁹¹ «Պատմագրություն Հայ յեղափոխական դաշնակցության» (քառահատոր շարք), հ. Գ, էջ 407-408:

մանադրական կարգերի: Դրա վկայությունն էին թերթի ապրիլյան լուրերն ու տպագրած հեռագրերը: Օրինակ՝ հեռագրերից մեկը տեղեկացնում էր, որ Կարինում ապրիլի 5-ին հայերը և թուրքերը միացյալ միտինգ էին անցկացրել՝ ի նպաստ սահմանադրական երկրի⁴⁹²: Նույն աղբյուրը հաղորդում էր, որ Կարինում ձևավորվել էր հայ-թուրքական վաշտ, քաղաքում տիրում էին համերաշխություն և ոգևորություն⁴⁹³: Մամսունից ՀՅԴ տեղական կոմիտեն տեղեկացնում էր, որ Կ. Պոլսում խաղաղության ու Սահմանադրության պահպանման նպատակով միացել էին Իթթիհատը, ՀՅԴ-ն և մյուս կուսակցությունները⁴⁹⁴: Խարբերդում «հայ-թուրք խառն միլիցիա» էր ստեղծվել⁴⁹⁵: «Մեփական թղթակցություններ» բաժնում Կարինից հաղորդում էին, որ ՀՅԴ-ն Իթթիհատի հետ կամավորներ էր պատրաստում Սահմանադրությունը պաշտպանելու համար, ընդ որում հայ կամավորների թիվն անցնում էր 400-ից. «Տրամադրութիւնները բաւական բարձր են»⁴⁹⁶: «Տեղական լուրեր» բաժնի լուրը վկայում էր, որ ապրիլի 4-ին Տրապիզոնի քաղաքապետարանի շենքում տեղի էր ունեցել էշրաֆ դասակարգի, Իթթիհատ, Ահրար, ՀՅԴ և Հնչակյան կուսակցությունների խորհրդակցական ժողով՝ համագործակցության եզրեր գտնելու նպատակով⁴⁹⁷: Թերթը համոզված էր, որ միասնական գործելուն զուգընթաց՝ կուսակցությունները ձգտելու էին պահել իրենց անկախությունը, քանի որ, հակառակ պարագայում, Թուրքիան չէր զարգանալու⁴⁹⁸:

«Խարիսխ» կարծում էր, որ երկրի փրկության և առաջընթացի երաշխիքը Սահմանադրությունն էր: Այս տեսակետից

⁴⁹² «Խարիսխ», Տրապիզոն, 1909, թիվ 1:

⁴⁹³ Նույն տեղում:

⁴⁹⁴ Նույն տեղում:

⁴⁹⁵ Նույն տեղում:

⁴⁹⁶ Նույն տեղում, 1909, թիվ 2:

⁴⁹⁷ Նույն տեղում, 1909, թիվ 1:

⁴⁹⁸ Նույն տեղում:

բնորոշ է «Ռեակսիոնը» վերնագրով հոդվածաշարը⁴⁹⁹: Հոդվածագիր Մալխասն իր քաղաքական վերլուծության մեջ պնդում էր, որ Սահմանադրությունը թեև թերի էր, բայց այն գոյության հենակետ էր Թուրքիայի բոլոր ժողովուրդների համար⁵⁰⁰: Մալխասը գրում էր, թե վերջին 9 ամսվա ընթացքում հասարակությունը համոզվել էր, որ երկրի փրկությունը միայն սահմանադրական կարգով կարելի էր երաշխավորել, իսկ նախկին վարչակարգին վերադառնալը պարզապես նշանակելու էր վերջնական հարված հասցնել քաղաքականապես ու տնտեսապես քայքայված Թուրքիային⁵⁰¹: Սկիզբ առած «ռեակսիոն» շարժումը բնորոշ չէր ողջ թուրք ժողովրդին, այլ դրանով շահագրգռված էին մի խումբ մարդիկ. այսպես էր մտածում Մալխասը⁵⁰²: Այս հոդվածաշարը տպագրվել է Ադանայի կոտորածի օրերին, երբ բուռն քննարկումներ էին ծավալվում մեղավորներին գտնելու և պատասխանատվության ենթարկելու նպատակով: Նույն շրջանում «Մուլթան Համիդ և ջարդի քաղաքականությունը» հոդվածաշարում Մալխասը մինչ Ադանան եղած հայերի ջարդերը համարում էր Աբդուլ Համիդի վարած հայաջինջ քաղաքականության արդյունք⁵⁰³: Պետությունը թուրք ժողովրդի մեջ սերմանել էր այն միտքը, թե հայերը չէին ապրում երկրի ցավերով և չէին նպաստում Թուրքիայի առաջընթացին, այլ ցանկանում էին թուրքական պետության տեղում հաստատել հայկական թագավորություն: Համիդի ծրագրով հայը ոչ միայն ֆիզիկապես էր ոչնչացվում, այլև տնտեսապես էր թուլանում, դառնում էր գաղթական՝ դատարկելով հայրենիքը: Համիդը սխալվել էր, երբ կարծել էր, թե հնարավոր էր ոչնչացնել հայ ժողովրդին ու հայ հեղափոխա-

⁴⁹⁹ Նույն տեղում, 1909, թիվ 3, 4, 5:

⁵⁰⁰ Նույն տեղում, 1909, թիվ 2:

⁵⁰¹ Նույն տեղում:

⁵⁰² Նույն տեղում:

⁵⁰³ Նույն տեղում, 1909, թիվ 3:

կան շարժումը: Այս կարծիքն էր հայտնում Մալխասը⁵⁰⁴: Նա նաև եզրակացնում էր, որ Ադանայում հայերին կոտորեցին սուլթան Համիդի վարած քաղաքականության պատճառով⁵⁰⁵:

«Խարիսխի» էջերում արտացոլված է հայ ժողովրդի ցնծությունը Աբդուլ Համիդի գահընկեցության առիթով: Թերթի 1-ին էջերում հեռագրերը ավետում էին հայասպան սուլթանից ազատագրվելու լուրը: Դրանք այն օրերի հայության սին հույսերի և նրանց համակած տրամադրության անմիջական վկայություններն էին: Բերենք օրինակ: Կ. Պոլսից Պ. Մ.-ն գրում էր. «Քաղաքը խրախճանքի մեջ է. կը շնորհաւորենք Սահմանադրութեան և Արդարութեան յաղթանակը»⁵⁰⁶: «Խարիսխի» վերլուծականներում կոչ էին անում չոզևորվել Համիդի գահընկեցութամբ: «Տոնի օրեր Համիդի անկման առթիվ» հոդվածում Գեղամ Տեր-Կարապետյանը ներկայացրել էր Տրապիզոնում տիրող համընդհանուր ուրախության մթնոլորտը. «Կուրախասնային ամենքն ալ. Հայը, Թուրքը, Յոյնը: Տեղույս հայ հասարակութիւնն ալ իր գերագոյն իղձին իրագործումը տօնեց»⁵⁰⁷: Հայ Յ կուսակցությունները Իթթիհատի ակումբում այդ կուսակցության ներկայացուցիչների հետ բանախոսություններով էին հանդես եկել՝ շեշտելով «ազատութեան մեծ յաղթանակը և ազգերու եղբայրակցութիւնը արգիլող պատուարին տապալումը»⁵⁰⁸: Բոլորը համակվել էին տոնական ուրախ տրամադրութամբ. «Ազատութիւնը և եղբայրութիւնը ցնծագին կ'երգուէին»⁵⁰⁹: Քաղաքն ամբողջովին դրոշագարդված էր, և անընդհատ հրաձգություն էր կատարվում՝ ի նշան խրախճանքի: Հայոց Առաջնորդի և մյուս ազգերի ղեկա-

⁵⁰⁴ Նույն տեղում:

⁵⁰⁵ Նույն տեղում:

⁵⁰⁶ Նույնտեղում:

⁵⁰⁷ Նույնտեղում, 1909, թիվ 4:

⁵⁰⁸ Նույնտեղում:

⁵⁰⁹ Նույնտեղում:

վար անձանց կողմից պաշտոնական շնորհավորանքներ հղվեցին կուսակալին և զինվորական հրամանատարությանը: Երեկոյան հայկական թափորը անցավ հրապարակով՝ առջևից 2 մեծ ջահով և դրոշներով, իսկ հետևից թափորին ուղեկցում էր երգչախումբը: Գեղամի վերլուծականը ավարտվում էր թերահավատությամբ երիտթուրքերի քաղաքականության նկատմամբ. «Ուր էր, թե Համիդի անհետացումը երեւան բերէր Ազգութիւններու յարաբերութեանց լաւագոյն ուղին, և մեր առջև բացւէր խաղաղ զարգացման և ստեղծագործ աշխատանքի ազատ ասպարէզ»⁵¹⁰: Այս տեսակէտն էր պաշտպանում նաև Մայիսասը՝ գրելով, թե իթթիհատականները շարունակում էին համագործակցել Արդու Համիդի և համիդականների հետ: Նա պահանջում էր երկրի կառավարումից հեռացնել Համիդին, այլապէս Սահմանադրության հռչակումը չէր կարող ապահովել սահմանադրական կարգեր երկրում⁵¹¹: Ըստ Մայիսասի՝ երիտթուրքերը ոչ միայն շարունակում էին հայերի ջարդի քաղաքականությունը, այլև անհանդուրժող էին մյուս կուսակցությունների նկատմամբ: Իթթիհատը դա անում էր՝ հենվելով «իր գերակշռող թւի առաւելութեան վրայ, երկրի բառլամէնթական կեանքի», ինչպէս նաև վարչական ամբողջ մեխանիզմի ղեկավարումն իր ձեռքն առնելով, Իթթիհատից բացի, ոչ մի քաղաքական կուսակցության չընդունելով⁵¹²:

«Պատմությունը կկրկնվի» խմբագրականում Մայիսասը փաստում էր, որ ոչ մի իրական փոփոխություն չէր կատարվել իշխող «սահմանադրական» կառավարության քաղաքականության մեջ. «Խեցգետնի պէս ետ գնացինք մինչև 95-96 թւականները. հոն ենք, ուր կը գտնուէինք ջարդի թւականներուն»⁵¹³: Սահմանա-

⁵¹⁰ Նույն տեղում:

⁵¹¹ Նույն տեղում:

⁵¹² Նույն տեղում, 1909, թիվ 5:

⁵¹³ Նույն տեղում, 1909, թիվ 6:

դրության կեղծ փետուրներով զարդարվելը, արդարության, հավասարության, եղբայրության բարձրագույն գովազդները Արևմտյան Հայաստանի դրությունը մագաչափ չէին փոխել: Մալխասը, որպես ասվածի ապացույց, հիշատակում էր Ադանայի կոտորածը⁵¹⁴: Նա գրում էր, որ կառավարության անդամները կրկին հայտարարում էին, թե հայերն էին հարձակվողները, իսկ թուրքերը տուժողներն էին. «Նոյն ջարդերը, նոյն մասնակցությունը, նոյն պաշտօնական հերքումը, դիվանագիտական խաղերը: Բաւական է որքան լսեցինք այն սնամէջ և ուռուցիկ բառակապակցությունները, թէ մենք ապրում ենք սահմանադրական երկրում: Ադանայում և շրջակայքում հայ կեանքը վերջացած է: Պատմական Կիլիկեայի հայութիւնը այլևս գոյութիւն չունի»⁵¹⁵: Մալխասը հարց էր տալիս, թե ինչո՞վ կարելի էր արդարացնել Ադանայի վիլայեթում 15000 հայի ջարդը, եթե անգամ հայերն էին առիթ տվել ազգամիջյան անհարթություններին: Ինչո՞վ բացատրել գորքի և զինվորների մասնակցությունը ջարդերին, չէ՞ որ նրանք եկել էին իբրև թե երկրում կարգ ու կանոն վերահաստատելու նպատակով: Մալխասը հավատ չէր ընծայում Ադանա ուղարկված քննիչ հանձնաժողովի արդար հետաքննությանը. «Մենք տիրող արդարադատութեան վրայ բաւական գաղափար ունինք, քանի նախկին րեժիմի մարդիկն են գործի գլուխ, գիտենք, որ 95-96-ի կոտորածներուն մասնակցող, ջարդերը ղեկավարող թուրքերը այսօր բազմած են բառլամենթի մէջ»⁵¹⁶: Մալխասը եզրակացնում էր, որ Թուրքիայում սահմանադրական կարգերը կհաստատվեին, երբ այլևս այնտեղ հայ չէր լինի: ՀՅԴ Տրապիզոնի կենտրոնը Ադանայի կուսակալին 3 հեռագիր էր ուղարկել հարցումով, թե այնտեղ որքա՞ն հայ էր մնացել, և վերջին հեռագրին էր միայն Ադանայի կուսակալ Մուստաֆա Զիհնին պա-

⁵¹⁴ Նույն տեղում:

⁵¹⁵ Նույն տեղում:

⁵¹⁶ Նույն տեղում:

տասխանել, որ հայերը չափազանցնում էին կոտորածի պահով. «Անդօրութիւնը կատարեալ է»⁵¹⁷: Մալխասն անդրադարձել էր կուսակալի այդ պատասխանին և արտահայտել էր ոչ միայն սեփական, այլև իր կուսակցության դժգոհությունը Ադանայի ջարդերն ուրանալու և մեղավորներին կոծկելու հարցում: Նշում էր, որ հավատ չէին ընծայում պաշտոնական լուրերին. «Ո՞ր կառավարութեան տրամադրած լուրերուն հաւատանք: Հաւատք մնա՞ց մեր մէջ»⁵¹⁸:

Ադանայի դեպքերը իրենց պատճառներով ու առիթով հանգամանորեն ներկայացված և վերլուծված են «Ականատեսի պատմածներից» հոդվածում⁵¹⁹: Ավտո-դայր էֆենդին իր կողմնակիցներով թուրքերին դրդել էր հայերի դեմ այն պատճառաբանությամբ, թե անհնար էր հավասարություն դնել հայի և թուրքի միջև: «Մի թե այն հայը, որ դարեր շարունակ եղել է ստրուկ, իսկ մենք, որ եղել ենք գերիշխող տարր, այժմ հաւասար իրաւունքներ պիտի ունենանք», - հարցնում էին նրանք⁵²⁰: Այսպէս մտածողները առիթ էին փնտրում հայերին կոտորելու և պատժելու համար: Կոտորածների առիթ էր այն միջադեպը, երբ մի քանի թուրք հետապնդում են մի հայ պատանու՝ ցանկանալով բռնաբարել նրան⁵²¹: Քաջ հայորդին դիմում է ինքնապաշտպանության. «Երբ սրիկաները դաշոյններով խոցոտում են նրան, ստիպւած դիմում է ատրճանակի. երկուսին սպանում, իսկ մէկին ծանր վիրաւորում է»⁵²²: Վալին պահանջում է հանձնել պատանուն, բայց քաղաքի հայ «գլխաւորները» հրաժարվում են: Վալին նրանց սպառնում է, թե «դուք գիտէք, գնացէք»⁵²³: Թուրքերը

⁵¹⁷ Նույն տեղում, 1909, թիվ 7:

⁵¹⁸ Նույն տեղում:

⁵¹⁹ Նույն տեղում, 1909, թիվ 10:

⁵²⁰ Նույն տեղում:

⁵²¹ Նույն տեղում:

⁵²² Նույն տեղում:

⁵²³ Նույն տեղում:

Ավագ ուրբաթ և կիրակի օրերին միտինգ են գումարում և պատրաստվում են հարձակվել հայկական թաղերի վրա: Երբ լուրը հասնում է հայերին, նրանք Ադանայի Առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի փոխանորդ Արսեն քահանայի հետ հանձնաժողով են ուղարկում վալիի մոտ՝ խնդրելով հարձակման դեմն առնել: Վալին փափուկ բարձ է դնում հայերի գլխի տակ, թեև նրանք արդեն սկսում են կազմել ինքնապաշտպանական խմբեր: Զատիկից հետո, չորեքշաբթի օրը հայերը գնում են իրենց աշխատավայրերը, բայց ժամը 16.⁰⁰-ին «թուրք խուժանը ամեն կողմից յարձակուց շուկայի և թաղի վրա: Հայն էլ ձեռները ծալած չէր. ինքնապաշտպանութեան խումբը բռնել էր գլխաւոր մուտքերը, իսկ զանազան տներից որսորդական հրացաններով օգնում էին ինքնապաշտպանութեան մարտիկներին»⁵²⁴: Թուրքերը չէին կարող ազնիվ մարտում հաղթել հայերին: Նրանք դիմում են իրենց փորձված մեթոդին, որին միշտ տրվել էին հայերը. գնում են բանակցությունների, որ դադարեցվեն փոխադարձ կրակահերթերը: Հայերը ինքնապաշտպանական խմբերին պարտադրում են լքել քաղաքը՝ իշխանություններին հանձնելով զենքերը: «Կառավարութեան ուզած էլ այդ էր: Այս անգամ արդէն անվախ առաջ խաղացին, թէ ինչ եղաւ դրանից յետոյ, դա բոլորին յայտնի է. հրդեհ, մոխիր և արիւն: Այս բոլորը լսելուց յետոյ մարդ ականայ բացականչում է. մինչեւ ե՞րբ պիտի խաբւինք զանազան վալիներու խոստումներից», - գրում էր Ադանայի կոտորածի ականատեսը⁵²⁵:

«Խարիսխը» վկայակոչում էր Բաթումի իր սկզբնաղբյուրը և հայտնում, որ Ադանայում 30000 հայ էր կոտորվել⁵²⁶: Թերթը կարևորում էր փրկված, բայց անպատասպար ու սոված մնացած մարդկանց աջակցության խնդիրը: «Ադանայի վիճակը» խմբագրականում «Խարիսխը» հետևյալ կոչն էր ուղղում իր ընթերցողներին.

⁵²⁴ Նույն տեղում:

⁵²⁵ Նույն տեղում:

⁵²⁶ Նույն տեղում, 1909, թիվ 5:

«Մեռնողները գացին, ողջերը պետք է փրկել»⁵²⁷: Տեղեկացնում էր, որ Տրապիզոնի Ազգային վարչությունը կարոտյալներին օգնելու նպատակով հանգանակություն անցկացնելու համար կազմել էր հանձնաժողով⁵²⁸: Թերթի կարծիքով՝ յուրաքանչյուր հայի պարտականությունը պիտի լիներ մասնակցել այդ հանգանակությամբ՝ ամեն մեկն իր կարողության չափով: Ըստ խմբագրության՝ ով խիղճ ուներ, անկարող էր ձեռքերը ծալած նստել և չօգնել Ադանայի կոտորածից փրկվածներին, որոնցից շատերը մինչ այդ դեպքերը հարուստ էին, իսկ այժմ նույնիսկ ուտելու չոր հաց չունեին: Ունևոր հայերի մեծամասնությունը, սակայն, քար անտարբերությամբ էր լցված: «Սթափուիր, հայ ժողովուրդ, ուրիշից յոյս չկայ: Դու այն ժամանակ կարող ես ապրել, երբ յոյսդ քեզ վրայ ես դրել», - գրում էր թերթը⁵²⁹:

Ս. Մանուկյանը բարձրացնում էր Ադանայում որբացած հայ մանուկների կարիքները համախմբված ձևով հոգալու և նրանց հայեցի դաստիարակություն տալու խնդիրները⁵³⁰: Օրինակելի էր համարում Զմյուռնիայի հայ համայնքի բռնած կեցվածքը: Իզմիրահայերը նախ՝ գումար էին հանգանակել և հասցրել Ադանայի կարոտյալներին, ապա՝ առաջարկել էին Զմյուռնիա ուղարկել 100 հայ որբի, որոնց խնամքով զբաղվելու էր տեղի հայ համայնքը⁵³¹: Հողվածագիրը կարծում էր, որ Տրապիզոնի և մյուս բնակավայրերի հայկական համայնքները կհետևեին իզմիրահայության օրինակին, ովքեր գործնականորեն էին ցույց տվել, թե կրում էին ազգի ու հայրենիքի համար սրբոփող սիրտ⁵³²: Այս հողվածը տպագրելուց 4 օր հետո «Խարիսխը» լուր էր հաղորդել տրապիզոնցիների

⁵²⁷ Նույն տեղում:

⁵²⁸ Նույն տեղում:

⁵²⁹ Նույն տեղում, 1909, թիվ 8:

⁵³⁰ Նույն տեղում, 1909, թիվ 9:

⁵³¹ Նույն տեղում:

⁵³² Նույն տեղում:

հանգանակության մասին՝ ի նպաստ Ադանայի փրկված հայերի: Հանգանակությունը 1909 թ. մայիսի 10-ին կազմակերպել էր ՀՅԴ Տրապիզոնի կոմիտեն քաղաքի եկեղեցում անցկացված և Ադանայի կոտորածի զոհերին նվիրված պարահանդեսի ժամանակ⁵³³: ՀՅԴ Տրապիզոնի կոմիտեի անունից ելույթ ունեցան Մալխասը, Հրանտը և Սեդրակ Եսայանը: Նրանք շեշտում էին զինված ինքնապաշտպանության անհրաժեշտությունը. «Ձեր պաշտպան կանգնելով հայրենիքի գաղափարին, պետք է գիտակցութիւնը ունենալ հայրենիքը պաշտպանելու բնագոյին: Մարդուն ամենաեական պարտականութիւնն է անձի և ընտանիքի ինքնապաշտպանութիւնը: Հայրենիքը ընտանիքներ է կազմած. պետք է ուժեղ լինել՝ կարենալ պաշտպանելու համար հայրենիքը թե՛ ներքին շահագործող թշնամիներ է և թե՛ արտաքին թշնամիներ է»⁵³⁴:

«Խարիսխը» Ադանայի իրադարձությունների վերաբերյալ նյութերը գետեղում էր «Կիլիկիայի շուրջ» բաժնում: Այստեղ խոսվում էր նաև թուրքերի կողմից առևանգված ու թրջացված հայ կանանց և օրիորդների ճակատագրի մասին: Հիմնական եզրակացությունը այն էր, որ հայերն անպաշտպան էին և բողոքելու իրավասու միակ ազգային կառույցը՝ Պատրիարքարանը, անգոր էր պաշտպանելու իր հավատավոր ժողովրդին⁵³⁵: «Խարիսխն» առաջարկում էր պատրաստ լինել զինված ինքնապաշտպանության: Այս առումով թերթը ակտիվորեն լուսաբանում էր զինվորական տուրքին և հայերի զինվորագրությանն առնչվող հանրային քննարկումները: Օրինակ՝ «Զինվորական տուրք» խմբագրականում Մալխասը անդրադառնում էր այն հարցին, որ Թուրքիայում չէին զինվորագրում ոչ մահմեդականներին և այդպիսով նրանց անհավասար պայմանների մեջ էին

⁵³³ Նույն տեղում, 1909, թիվ 11:

⁵³⁴ Նույն տեղում:

⁵³⁵ Նույն տեղում:

դնում մահմեդականների հետ: Հողվածագրի կարծիքով, իբրև սահմանադրական երկրի քաղաքացիներ, հայերը ոչ միայն պիտի կատարեին քաղաքացիական բոլոր պարտականությունները, այլև պետք է օգտվեին բոլոր իրավունքներից: Այնինչ Թուրքիայի Երեսփոխանական ժողովը հետաձգել էր զինվորական օրինագծի քննարկումը՝ որոշելով ոչ մահմեդականների զինվորագրությունը փոխարինել զինվորական տուրքով: Դրա միջոցով ձգտում էին լցնել պետական բյուջեն: «Ընդունել զինուորական տուրքը, պիտի նշանակե ազգային ինքնասպանութիւն գործել», - գրում էր Մալխասը⁵³⁶: Թերթը պաշտպանում էր ՀՅԴ-ի այն առաջարկը, որի համաձայն՝ հայկական գավառներում անհրաժեշտ էր ունենալ ազգային զինված պահակներ: Սա ՀՅԴ-ն համարում էր 1-ին քայլ հայերի զինվորագրության խնդրի լուծման ճանապարհին⁵³⁷:

«Խարիսխը» դեմ էր Տրապիզոնի շրջանի ազգային Առաջնորդարանի կողմից գանձվող պտղի տուրքին, որը հավաքում էին գյուղաբնակներից: Թերթը վկայում էր, որ այդ տուրքը գանձում էին բռնի կերպով և սպառնալիքներով: «Երբ մենք բողոքում ենք հարստահարող կառավարութեան անվերջ տուրքերի դեմ, երբ բողոքում ենք նրանց գանձման բարբարոսային սիստեմի դեմ, թոյլ պիտի տա՞լ, որ մեր ներքին կեանքում կրկնուեն միևնույն երեւոյթները», - գրում էր Զուլալ Գեղացյանցը թերթում տպագրված՝ ազգային Գավառական ժողովին ուղղված նամակում⁵³⁸: Նա առաջարկում էր վերացնել պտղի տուրքը և մուդաթթայի հարկը, որոնք համարվում էին ազգային տուրք: «Ե՛րբ պիտի ազատինք այս անհարկի յարկերէն: Մենք Ազգային տուրք չվճարող չենք, միայն թէ այդ տուրքը պէտք է գործադրուի մեր տեղւոյն կուլտուրական հաստատութիւններու վրայ: Չենք գիտեր, թէ

⁵³⁶ Նույն տեղում, 1909, թիվ 7:

⁵³⁷ Նույն տեղում:

⁵³⁸ Նույն տեղում, 1909, թիվ 2:

Առաջնորդարանը ու՞ր պիտի ուղարկէ այդ փողերը: Գիւղացիք մի՞թէ կթան կով են, որ իւրաքանչիւր պահանջի բաւարարութիւն տան, մինչդեռ իրենց անհամար կարիքներուն ուշադրութիւն դարձնող չկայ»⁵³⁹, - գրում էր «Խարիսխը»՝ գտնելով, որ գյուղացիությանն աջակցելու համար անհրաժեշտ էին հաստուկ ծրագրեր: Ըստ թերթի՝ գյուղաբնակ հայության գլխին մշտապես դամոկլյան սրի պէս կախված էին կամ զապթիէի հրացանի կոթը, կամ քրդի յաթաղանը: Չունենալով կյանքի և գույքի ապահովություն, տերը չլինելով սեփական աշխատանքով ձեռք բերված ունեցվածքի՝ հայ գյուղացիությունը գտնվում էր տնտեսապես քայքայված վիճակում: «Ազգի մը ոյժը, երկրի մը յառաջացման սատարը գիւղացիութիւնն է», - պնդում էր «Խարիսխը»⁵⁴⁰: Թերթն առաջարկում էր հայ գյուղացիությանը օժանդակել նյութապէս և բարոյապէս: «Գյուղատնտեսական» բաժնում խմբագրությունը բացատրում էր, որ նյութական աջակցությունը գյուղաբնակների համար դրամական միջոցների հայթայթումն էր, էժան տոկոսով փոխառություն տալն էր, սերմացուի և երկրագործական գործիքների մատակարարումն էր, իսկ բարոյական օգնություն ասելով՝ իրենք հասկանում էին հայկական գյուղերի կրթական գործին զարկ տալը, երկրագործական վարժարանների բացումը, գյուղատնտեսական գիտելիքների տարածումը⁵⁴¹:

Հայկական գյուղերում մեծանում էր գաղթի ալիքը, իսկ ուլքեր չէին հեռանում բնօրրանից՝ չէին կարողանում հոգալ իրենց ապրուստը: «Խարիսխը» «Մեփական թղթակցություններ» բաժնում տպագրում էր նյութեր հայկական բնակավայրերից՝ ներկայացնելով գյուղացիների կենսապայմաններն ու խնդիրները: Այդ հրապարակումներից պարզվում էր, որ լեռնային Եոմուրայի շրջանում կար 450 տուն հայ: Նրանք տեղաբաշխված էին 14

⁵³⁹ Նույն տեղում, 1909, թիվ 20:

⁵⁴⁰ Նույն տեղում, 1909, թիվ 2

⁵⁴¹ Նույն տեղում:

հայկական գյուղերում, թեև այս շրջանն ուներ 64 գյուղ: Գյուղախմբի կենտրոնը Տրոնայի շուկան էր, որտեղ նստում էր կառավարիչը: Ըստ ավանդության և մեծերի վկայության համաձայն՝ Եոմուրայի հայերը գաղթել էին 1600-1700-ական թվականներին Համշենից և Գարատերեից՝ այստեղ պատասպարվելով ենիչերիներից և հարևան ժողովուրդների կողմից իրենց սպառնացող կրոնափոխությունից⁵⁴²: Լեռնային Եոմուրայի շրջանում հայերը բնակվում էին գյուղերի՝ լեռնային հատվածներում և զբաղվում էին հիմնականում երկրագործությամբ: Մշակում էին եգիպտացորեն, լուրիա և կաղին: Վերջինը նրանց ապրուստի գլխավոր միջոցն էր, թեև Եոմուրայի հայկական հատվածում 5-6 տարին մեկ էր կաղինի բերքն առատ լինում: Հայերի նյութական վիճակը ոչ բարվոք էր. «Գիւղացւոց 100-ին 15-20%-ն» էր ապրում առանց պարտքի»⁵⁴³:

Էլնիի թղթակիցը, գրելով իրենց քաղաքի և այդ շրջանի հայկական գյուղերի հիմնախնդիրների մասին, հետտորական այն հարցն էր տալիս, թե դեռ որքա՞ն ժամանակ պիտի անդրադառնային դրանց, և ի վերջո ո՞վ պետք է լուծեր առկա հիմնահարցերը⁵⁴⁴: Էլնին ուներ 80-ից ավելի թրքաբնակ գյուղ և 40-50 տուն հայ բնակչություն: Հայերը գաղթել էին Թամգարայից և զբաղվում էին առևտրով ու արհեստագործությամբ: Էլնիում գործում էին նախակրթարանը, «Կրթություն և առաջադիմություն» անունով երիտասարդական լսարան-ընթերցարանը և ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ընտանեկան բարքերը նահապետական էին, իսկ կանայք՝ հետամնաց ու անկիրթ: Եկեղեցական, կրթական և համայնքային խնդիրներն ու կարիքները հոգում էին ժողովրդից հավաքած տուրքերով, նվերներով և Ազգա-

⁵⁴² Նույն տեղում, 1909, թիվ 12:

⁵⁴³ Նույն տեղում, 1909, թիվ 21:

⁵⁴⁴ Նույն տեղում, 1909, թիվ 22:

յին ընկերության 350-400 օսմանյան ոսկի դրամագլխի տարեկան տոկոսներով⁵⁴⁵:

Հայկական կամ հայաբնակ գյուղերի հիմնախնդիրների չլուծման մեջ «Խարիսխը», պետական մարմիններից և պետական քաղաքականությունից բացի, մեծ բաժին էր հատկացնում ազգային կառույցներին և Առաջնորդարանին: Դրանց՝ ըստ հարկի չգործելու հետևանքով տարիներ շարունակ անլուծելի էին մնում հայ գյուղացիության սոցիալ-տնտեսական և կրթական-մշակութային կյանքի տարաբնույթ հարցերը: Բերենք օրինակ: «Ազգային քառը» հողվածում ներկայացվում էին Պատրիարքարանի աշխատանքի բացերը⁵⁴⁶: Այնտեղ ոչ կարգ կար, ոչ կանոն: Ժողովներն առիթից առիթ էին գումարվում: Չէին վերահսկում ընդունած որոշումների իրագործմանը⁵⁴⁷: Օրդուի թղթակիցը հաղորդում էր, որ Տրապիզոնի շրջանի Առաջնորդը, տեղի Քաղաքական ժողովը, Թաղական և Ուսումնական խորհուրդները տարիների ընթացքում ոչ մի քայլ չէին ձեռնարկել Օրդուի ուսումնարանի կառավարմանն առնչվող հարցերը կարգավորելու համար, և ի վերջո կրթօջախը փակվել էր:

«Խարիսխը» խորհուրդ էր տալիս չթողնել, որ գործերը կառավարեին «մուր անձնաւորութիւններ», նաև արգելել, որ նրանք անձնական «զծուծ հարցերով ոտնատակ տան համայնքի իրաւունքները»⁵⁴⁸: Կենսապայմանները դրդում էին Օրդուի հայերից շատերին բռնել գաղթի ճանապարհը: Տեղի թղթակիցը հիշատակում էր այն փաստը, որ 10 տարի առաջ բազմամարդ էին Օրդուի շրջանի 230-ից 30 հայաբնակ գյուղերը: Նա բացատրում էր գաղթի պատճառները. «Երկրի մեջ ապրելու անտանելիութիւնը և արիւնարբու րէժիմի խժոժութիւնները պատճառ եղած էին՝

⁵⁴⁵ Նույն տեղում:

⁵⁴⁶ Նույն տեղում, 1909, թիվ 1:

⁵⁴⁷ Նույն տեղում:

⁵⁴⁸ Նույն տեղում, 1909, թիվ 12:

որպեսզի հայ գիղացին ձգե ի'ր իսկ ձեռքի աշխատութեամբ շէնցուցած օճախը և գաղթէ»⁵⁴⁹: Օրդուում օգտագործում էին Հայաստանի բոլոր գյուղերից ամենապարզունակ հողամշակութեան եղանակները: «Տգետ է մեր գիղացին, գիղատնտեսութիւն ըսուածը գրեթէ գոյութիւն չունի, և այնքան արգասաբեր հողը ինչպէս է մեր շրջանը - ոչ ինչ աչքառու արդիւնք չի տար», - գրում էր «Խարիսխի» թղթակիցը⁵⁵⁰: Նա պնդում էր, թե հարկավոր էր Օրդուի բնակչությանը սովորեցնել հողամշակման նոր համակարգից, տեխնիկայից օգտվելու կանոններն ու կարգը: Օրդուի անլուծելի խնդիրներից էին նաև անսարք և ոչ բարվոք վիճակում գտնվող ճանապարհները: Օրդուի գյուղերը գրեթէ չունեին հաղորդակցության ուղիներ, իսկ Գուղջիքե գյուղում նույնիսկ հնարավոր չէր կառք քշել: Տարվա մեջ 5 ամիս Օրդուի գյուղերի ճանապարհներն անանցանելի էին:

«Խարիսխը» կարծում էր, որ անհրաժեշտ էր զարգացնել գյուղերը: Գյուղատնտեսությունը և երկրագործությունը քաղաքակրթության կորիզն էին, իսկ գյուղացիների բարօրությունն ուղղակիորեն ազդում էր երկրի տնտեսական ու մշակութային կյանքի բարգավաճման վրա⁵⁵¹: Այս գործընթացի էական գործոնների շարքում «Խարիսխը» կարևորում էր կրթական ոլորտի խնդիրների լուծումը: Թերթը կրկին 1-ին պլան էր մղում ազգային մարմինների աշխատանքը, որը բնորոշում էր անբավարար և թերի: «Մեր դպրոցները» հողվածում հեղինակը Տրապիզոնի գավառի դպրոցների վիճակը համարում էր աննախանձելի⁵⁵²: Դրանք գործում էին 1-2 տարի, իսկ հետո փակվում էին նույնքան ժամանակով: «Այսպէս քաշ-քաշ կերթայ դպրոցական գործը

⁵⁴⁹ Նույն տեղում, 1909, թիվ 8:

⁵⁵⁰ Նույն տեղում:

⁵⁵¹ Նույն տեղում:

⁵⁵² Նույն տեղում, 1909, թիվ 10:

ուրիշ շատ գործերու հետ», - գրում էր «Խարիսխը»⁵⁵³: Դպրոցները հիմնականում չունեին որոշակի կրթական ծրագիր: Մովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել, կրոն կամ ընդհանուր պատմություն: Տարածված էր Տեր-Թողիկի մեթոդը: Դպրոցների անկանոն գործելու հետևանքով 5-6 տարի դպրոց կամ վարժարան հաճախելուց հետո աշակերտները չէին կարողանում վարժ կարդալ: «Մինչև ե՞րբ մեր Առաջնորդարանը շարունակելու է իր անտարբերությունը մեր գիւղերու և դպրոցներու հանդեպ», - գրում էր թերթը⁵⁵⁴:

Կիրասոնի թղթակիցը «Կիրասոնի կրթական գործը» հոդվածում⁵⁵⁵ տեղեկացնում էր, որ չնայած կաղնու արտահանության և վաճառքի շնորհիվ տեղի հայությունն ապրում էր բարեկեցիկ կյանքով, բայց քաղաքի երկսեռ վարժարանի շենքը կիսաքանդ էր ու խոնավ: Դասարաններում կիսամուտ էր, որովհետև պատուհանների ներքևի մասում ապակիների փոխարեն տախտակ էր խփված: Աղջիկների հարկաբաժնի 1-ին հարկում գործարան կար, որտեղից արտագատվող զարշահոտությունը լցվում էր դասարանները: Հողվածագիրը զարմանում էր այս ամենի նկատմամբ աշակերտների ծնողների, կրթօջախի ուսուցիչների և հոգաբարձուների անտարբերության վրա: Նա գրում էր. «Եթե Կիրասոնի հայ համայնքի սրտին մօտ է մատաղ սերունդի կրթությունը, թող դիտողի դերից անցնի գործի»⁵⁵⁶:

«Կրթության գործը Եոմուրայի շրջանի մեջ» քառամաս հոդվածում Մ. Փոլադը վերլուծում էր այդ շրջանի հայկական 11 գյուղերի կրթական ոլորտի հիմնահարցերը և փորձում գտնել դրանք լուծելու ուղիներ⁵⁵⁷: Եոմուրայի գրեթե բոլոր դպրոցներն

⁵⁵³ Նույն տեղում:

⁵⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵⁵ Նույն տեղում, 1909, թիվ 11:

⁵⁵⁶ Նույն տեղում:

⁵⁵⁷ Նույն տեղում, 1909, թիվ 9, թիվ 12, թիվ 13, թիվ 14:

ունեին վարժարան (14-ից 11-ը)⁵⁵⁸: Սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել և կրոն ու եկեղեցական արարողություններ, ծեսեր, այսինքն՝ կրթական ծրագիրն ուներ կրոնական ուղղվածություն, իսկ կրթությունը տարվում էր Տեր-Թողիկի մեթոդով⁵⁵⁹: Կրթօջախները Եոմուրայի շրջանում կառավարվում էին թաղական խորհուրդների և հոգաբարձությունների կողմից: Դրանք կոնկրետ չափով որոշված բյուջե չունեին, և այդ բյուջեն ամեն տարի փոխվում էր՝ ուսուցչական կազմին հասկացվելիք տարեկան աշխատավարձի չափին համապատասխան: Գործում էր կրթական պարտադիր տուրք, որի չափը որոշվում էր՝ ըստ գյուղացու կարողության չափի: Այդ տուրքի գանձումը և բաշխումը դրված էր Հոգաբարձության վրա: Վերջինը կատարում էր ուսուցիչների ընտրությունը և, աշխատանքից բացի, նրանց տրամադրում էր անվճար կացարան ու սնունդ⁵⁶⁰: Եոմուրայի շրջանի դպրոցները երկսեռ էին: Դրանց մեծ մասն ունեին իրենց գրադարանն ու դեղատունը: Աշակերտների ուժերով գործում էին Սանուց ընկերություններ, իսկ երիտասարդները կազմել էին ընթերցասիրաց ընկերություններ⁵⁶¹: Օրինակ՝ Եոմուրայի Ափիոն գյուղի երիտասարդները հիմնել էին միություն, որի նպատակն էր ծննդավայրում բացել երեկոյան ուսուցմամբ վարժարան, որտեղ փորձելու էին լրացնել կրթական բացը⁵⁶²: «Լաւ կը լինէր, որ ուրիշներ ալ օրինակւէին», - ողջունելով այս ձեռնարկը՝ գրում էր խմբագրությունը⁵⁶³: Թերթը Ափիոնի դպրոցի օրինակին էր կոչ անում հետևել նաև Սյուրմենե գյուղի երկսեռ 2 վարժարաններին, որոնցից մեկի շենքը 40 տարի էր, ինչ գտնվում էր խարխուլ վի-

⁵⁵⁸ Նույն տեղում, 1909, թիվ 5, թիվ 14:

⁵⁵⁹ Նույն տեղում, 1909, թիվ 12:

⁵⁶⁰ Նույն տեղում:

⁵⁶¹ Նույն տեղում:

⁵⁶² Նույն տեղում:

⁵⁶³ Նույն տեղում:

ճակում, այնինչ գյուղն ուներ 60-70 տուն հայ ազգաբնակչությամբ, գրադարան⁵⁶⁴:

Մ. Փոլադն իր վերոհիշյալ հոդվածաշարում տեղեկացնում էր, որ 1908-1909 թթ. նոր ուսումնական տարվա շեմին Եոմուրայի կրթական բարեփոխումների ջատագով ուսուցիչների ջանքերով կազմվել էր այդ շրջանի Ուսուցչական միությունը: Այն փորձելու էր շաղկապել Եոմուրայի բոլոր կրթօջախները՝ 1-ին հերթին դրանց համար մշակելով կրթական նույն ծրագիրը⁵⁶⁵: Ընդ որում, Եոմուրայի շրջանի հայկական գյուղերի դպրոցներում դասավանդում էին 17 ուսուցիչ, ուվքեր, բացառությամբ մեկի, ավարտել էին Տրապիզոնի Ազգային վարժարանը⁵⁶⁶: Եոմուրայի Ուսուցչական միությունը շրջանի բոլոր վարժարաններում բացել էր Սանուց միություններ, որոնց նպատակն էր նպաստել կրթօջախների աշակերտ-աշակերտուհիների մտավոր և բարոյական զարգացմանը: 1909 թ. մայիսի 30-ի դրությամբ Եոմուրայի շրջանում գործում էին Սանուց 10 միություն և կրթասիրաց 4 ընկերություն, իսկ այն գյուղերում, որոնցում չկային ընթերցասիրաց ընկերություններ, երիտասարդությունը միացել էր տեղի Սանուց միություններին⁵⁶⁷: Նույն աղբյուրը տեղեկացնում էր, որ Եոմուրայի մի շարք գյուղերում երիտասարդները հիմնել էին կրթասիրաց ընկերություններ, որոնց միջոցով, ինչպես նաև գրքերի, թերթերի օգնությամբ, փորձում էին բարձրացնել ժողովրդի կրթական մակարդակը⁵⁶⁸:

«Խարիսխը» Տրապիզոնում կրթության ոլորտին զարկ տալու էական գործոն էր համարում «Կրթասիրաց» ընկերության «վերակենդանացումը»⁵⁶⁹: Այդ կառույցը հիմնվել էր 1890-ական թվական-

⁵⁶⁴ Նույն տեղում, 1909, թիվ 14:

⁵⁶⁵ Նույն տեղում, 1909, թիվ 13:

⁵⁶⁶ Նույն տեղում, 1909, թիվ 14:

⁵⁶⁷ Նույն տեղում, 1909, թիվ 16:

⁵⁶⁸ Նույն տեղում:

⁵⁶⁹ Նույն տեղում, 1909, թիվ 16:

ների վերջին Երվանդ Զեյթինճյանի ջանքերով⁵⁷⁰: Նպատակն էր նպաստել նահանգի հայկական կամ հայաբնակ գյուղերի դպրոցական գործի առաջխաղացմանը: Կրթասիրաց ընկերությունն ուժերը կենտրոնացրել էր Կալաֆկայի վարժարանում, որտեղ դասավանդում էր վաստակավոր ուսուցիչ Մկրտիչ Գարագաշյանը: «Կրթասիրացը» Վանք գյուղում բացել էր գյուղական կենտրոնական վարժարան, որտեղ պիտի ուսուցիչներ պատրաստեր: Ընկերությունը ցանկանում էր Վանքը վերածել տիպար ազարակի: «Կրթասիրացի» ծրագրերն անավարտ էին մնացել, քանի որ ընկերության գործունեությունը դադարել էր 1895-1896 թթ. Աբդուլ Համիդի իրականացրած հայկական ջարդերի շրջանում: «Այժմ կարիքը շատ աւելի մեծ է, քան 15 տարի առաջ, ուստի օգուելով խաղաղ գործունեության բանալիք ասպարեզից, անհրաժեշտ է անմիջապես վերակենդանացնել Կրթասիրաց ընկերությունը աւելի լայն ծաւալով ու նպատակով», - գրում էր Հ. Լազը⁵⁷¹: Հողվածագրի կարծիքով՝ Տրապիզոնի գավառում կրթական մակարդակը ցածր էր⁵⁷²: Քաղաքներում և գյուղերում չկային պատրաստված ուսուցիչներ, իսկ դպրոցները չունեին մշակված ընդհանուր ու կանոնավոր ուսումնական ծրագրեր: Մովորեցնում էին հիմնականում գրել և կարդալ: Այնինչ Օսմանյան Թուրքիայում հայախալած քաղաքականությանը դիմակայելու համար հայ ժողովրդին անհրաժեշտ էր կիրթ մտավոր սերունդ, որը նրան կառաջնորդեր ազատության պայքարում: Այդ նպատակին էր ծառայելու «Կրթասիրաց» ընկերությունը: Հ. Լազն առաջարկում էր հայկական կամ հայաբնակ գյուղերում ու քաղաքներում բացել կրթասիրաց ընկերություններ, որոնք պիտի ղեկավարվեին ազգային ընդհանուր շահի սկզբունքով⁵⁷³:

⁵⁷⁰ Նույն տեղում:

⁵⁷¹ Նույն տեղում:

⁵⁷² Նույն տեղում, 1909, թիվ 18:

⁵⁷³ Նույն տեղում:

«Կրթական գործը» առաջնորդողում Մալխասը բարձրացնում էր այն հարցը, որ օսմանյան պետության բոլոր ազգերից գանձվող կրթական տուրքը անարդարացիորեն գործածվում էր միայն թուրք ազգաբնակչության կրթական խնդիրները լուծելու համար⁵⁷⁴: Ըստ Մալխասի՝ կրթական տուրքը պետք է համամասնորեն բաշխվեր: Դրանից պիտի օգտվեին բոլոր ազգությունները՝ այդ տուրքն օգտագործելով իրենց ազգային նախակրթարանների զարգացման համար: Հողվածագիրն առաջարկում էր նախակրթարաններում ուսուցումը իրականացնել անվճար հիմունքներով: Նախնական կրթությունը պիտի լիներ ընդհանուր և պարտադիր բոլորի համար: Ազգային նախակրթարանները պիտի գործեին պետական ծրագրի համաձայն, որպեսզի ավարտելուց հետո դրանց սաները հեշտորեն և առանց լրացուցիչ պարապմունքների կարողանային ընդունվել պետական բարձրագույն վարժարաններ⁵⁷⁵:

«Խարիսխը» ողջունում էր մի խումբ եռմուրացիների այն նախաձեռնությունը, որով նրանք դիմել էին Գավառային ժողովին և պահանջել կրթական տուրքը դարձնել համընդհանուր ու այն չգանձել միայն գյուղաբնակներից⁵⁷⁶: «Ցանկալի էր, որ Եօմուրայի կուլտուրական շարժումը չթառամեր որպես աշնան տերեւ: Գիւղացիութիւնը, թէն ընկճւած է տնտեսապէս, բայց կռահեց, որ ուսումը եւս նիւթական սնունդէ աւելի անհրաժեշտ և միանգամայն կարելոր է մատաղ սերունդի համար, հոգ կտաներ կրթական գործը յաջող հիմքերի վրայ դնելու, չխնայեր իր լումաները և կաշխատեր ունենալ նաեւ միջնակարգ վարժարաններ աւարտած ուսուցիչներ և շրջանային տեսուչ մը», - գրում էր Ավոն⁵⁷⁷:

«Ի՞նչ է դարմանը» հողվածում Մ. Դանիելյանն ուսուցիչներին առաջարկում էր խորհել այն հարցի շուրջ, թե ինչպե՞ս կարելի էր

⁵⁷⁴ Նույն տեղում, 1909, թիվ 17:

⁵⁷⁵ Նույն տեղում:

⁵⁷⁶ Նույն տեղում, 1909, թիվ 19:

⁵⁷⁷ Նույն տեղում, 1909, թիվ 18:

հայկական վարժարանները վերածել լուսավորության կենտրոնների⁵⁷⁸: Նրա կարծիքով՝ ուսուցիչները պիտի լինեին կրթության գործի ռահվիրաները: 1-ին հերթին ուսուցիչներն ամուր հիմքերի վրա կարող էին դնել կրթական գործը: Որպես սկիզբ Մ.Դանիելյանը նրանց առաջարկում էր Տրապիզոնի նահանգի բոլոր հայկական կամ հայաբնակ շրջաններում կազմել ուսուցչական միություններ, ապա՝ գումարել այդ կառույցի ընդհանուր ժողով և քննարկել կրթական ոլորտի հիմնահարցերը՝ գտնելով լուծումներ դրանց համար⁵⁷⁹:

«Խարիսխը» «Դարմանը» վերնագրով հոդվածում գրում էր. «Հայկական կեանքի անվերջ դարման սպասել թիւրք կառավարութենէն անմտութիւն է, և թէ թիւրք կառավարութեան ցոյց տւած թշնամական վերաբերմունքը մասնաւոր դիտումով է որ առաջ կը տարւի»⁵⁸⁰: Նա առաջարկում էր, որ ամեն հայ անհատ հետաքրքրվեր ոչ միայն անձնական, այլև ազգային-հասարակական գործերով ու համազգային խնդիրներով, ի թիվս որոնց՝ կրթական հիմնահարցերով⁵⁸¹: Եվ դա պիտի դառնար յուրաքանչյուր հայի պարտականությունը: Այս ամենին զուգահեռ՝ ոչ միայն կրթական, այլև ազգային վարչական ու տնտեսական բոլոր գործերի կառավարումը անհրաժեշտ էր հանձնել ժողովրդի կողմից ընտրված կամ նրա վստահությունը վայելող աշխարհիկ անձի, ով պատասխանատու պիտի լիներ գործող ազգային խորհուրդների և հայ հասարակության առջև: Հոդվածագիրը գրում էր, թե իրեն գուցե առարկեին՝ վկայակոչելով այն փաստը, թե նշված հարցերով իրավասու էր զբաղվել Առաջնորդը: Դրանք մտնում էին նրա պարտականությունների մեջ: Առաջնորդը, հոդվածագրի կարծիքով, բազմազբաղ էր տարբեր պատճառներ

⁵⁷⁸ Նույն տեղում, 1909, թիվ 19:

⁵⁷⁹ Նույն տեղում:

⁵⁸⁰ Նույն տեղում, 1909, թիվ 18:

⁵⁸¹ Նույն տեղում, 1909, թիվ 3:

րով (կառավարության հետ հանդիպումներ, Ազգային ժողովների նախագահություն, կրոնական պարտականություններ և այլն): Նա նաև, որպես կրոնական անձնավորություն, պատասխանատու չէր ժողովրդի առջև և, ինչ-որ առումով, ինքնիշխան էր: Հիշյալ նկատառումներից ելնելով՝ հողվածագիրն նպատակահարմար էր գտնում ազգային գործերի ֆինանսատնտեսական մասով պատասխանատու դարձնել աշխարհիկ կարող ուժերի տեր և ազգասեր անհատի, իսկ հոգևոր Առաջնորդի վրա թողնել ազգի քաղաքական և մշակութային ներկայացուցչի պարտականությունը՝ գիտակցելով այն, որ հանրային գործերն անձերը չպիտի կառավարեին, այլ՝ հասարակությունը⁵⁸²:

«Խարիսխ» շաբաթաթերթը թեև հրատարակության կարճ ընթացք ունեցավ, բայց կարողացավ դրսևորել կուսակցության պաշտոնաթերթին վայել կեցվածք՝ արձագանքելով 1909 թ. ոչ միայն Տրապիզոնում, այլև Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած վճռորոշ քաղաքական իրադարձություններին, լուսաբանելով ու վերլուծելով մասնավորապես Ադանայի հայկական ջարդերը և ընդհանրապես մեր ժողովրդի գոյատևմանը սպառնացող պետական ձեռնարկները:

⁵⁸² Նույն տեղում:

**ՏՐԱՊԻԶՈՆԻ «ԳԵՂՋՈՒԿ» ԱՄՍԱԹԵՐԹԸ
(1909 - 1910 ԹԹ.)**

«Գեղջուկ» ամսաթերթը լույս է տեսել Տրապիզոնում 1909-1910 թթ.: Խմբագրությունը գտնվում էր Ափիոնում: Հիմնադիր խմբագիրն էր ՀՅԴ հայտնի գործիչ Սիմոն Չավարյանը:

Սիմոն Չավարյանը (Սմբատ Օհանյան) ծնվել է 1866 թ. Լոռիի Այգեհաստ գյուղում: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա՝ Մոսկվայի գյուղատնտեսական ակադեմիան: 1889 թ. - վերադարձել է Թիֆլիս: Այստեղ նա դարձել է Քրիստափոր Միքայելյանի աջակիցը՝ ՀՅԴ-ն հիմնադրելու գործում: 1890 թ. հոկտեմբերին Ս. Չավարյանը կրթական ու կազմակերպչական առաքելությունն իրականացնելու նպատակով մեկնել է Տրապիզոն, որտեղ կարճ ժամանակ անց ձերբակալվել և վերադարձվել է Կովկաս, ապա՝ աքսորվել Բեսարաբիա: 1892 թ. նա մասնակցել է ՀՅԴ 1-ին Ընդհանուր ժողովին՝ պաշտպանելով կուսակցության ապակենտրոնացման սկզբունքը: Մինչև 1902 թ. մնացել է Կովկասում՝ վարելով ՀՅԴ Բյուրոյի քարտուղարությունը: 1902 թ. մեկնել է Ժնև: Այստեղ «Փոթորկի» գործով Կովկաս մեկնած Ք. Միքայելյանի փոխարեն ղեկավարել է ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի աշխատանքները: 1904 թ. ՀՅԴ 3-րդ Ընդհանուր ժողովում նա ընտրվել է ՀՅԴ Կիլիկիայի Պատասխանատու մարմնի անդամ: Գործել է Եզիպոսում, Լիբանանում, Սիրիայում: 1907 թ. ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովում Չավարյանը ներկայացրել է ընդարձակ տեղեկատվություն Կիլիկիայի հայության վիճակի և տարածաշրջանի ապստամբական ներուժի մասին: 1908 թ. օսմանյան Սահմանադրության հռչակումից հետո Կովկասից մեկնել է Կ. Պոլիս: Ս. Չավարյանը մասնակցել է ՀՅԴ 5-րդ (1909թ.) և 6-րդ (1911թ.) Ընդհանուր ժողովներին: 1909-1911թթ., իբրև ազգային վարժարանների ընդհանուր տեսուչ, եղել է Մուշում և Մասունում: 1911 թ. հաստատվել է Կ. Պոլսում: Այստեղ նա զբաղվել է ուսուցչությո-

յամբ և աշխատակցել է «Ազատամարտին»: Հանդես է եկել Եկվոր և Անտոն կեղծանուններով:

Ս. Զավարյանը մահացել է 1913 թ.: Կ. Պոլսում կազմակերպված հուղարկավորությունից հետո նրա մարմինը տեղափոխվել և հողին է հանձնվել Թիֆլիսում⁵⁸³:

Ս. Զավարյանն էր գրում «Գեղջուկի» խմբագրականները և վերլուծականները: Թերթը հրատարակվում էր Տրապիզոնի և շրջակա գյուղերի Ուսուցչական միության ջանքերով: Արծարծում էր առավելապես կրթական, նաև գյուղերի տնտեսական զարգացման և առաջընթացի հիմնախնդիրները: Վերլուծությունները կատարվում էին՝ էլենելով ՀՅԴ ծրագրային դրույթներից:

«Գեղջուկի» հիմնական աշխատակիցներն էին Զորան, Վահեն, Վազրիկը, Վաչագանը, Ա. Իսրայելյանը, Ս.Տ.-ն, Վ. Ցուլքը, Գ. Հակոբյանը, Թ. Խզմալյանը:

Շուրջ մեկ տարի՝ 1909 թ. ապրիլից մինչև 1910 թ. ապրիլ ամիսը «Գեղջուկը» ձեռագիր տարբերակով է հասել բաժանորդներին, ովքեր հիմնականում Տրապիզոնի Ուսուչական միության անդամներն էին⁵⁸⁴: 1910 թ. ապրիլ-օգոստոսյան համարից տպագրվել է Տրապիզոնի «Ոսկինարի» տպարանում:

«Գեղջուկը» արևմտահայ գավառի զարգացման գործում առաջնային էր համարում կուսակցությունների և ազգային կառույցների դերը: «Անկարելի է իրական առաջդիմութիւն և քաղաքակրթութիւն ակնկալել երկրէ մը կամ ժողովուրդէ մը, ուր չկան քաղաքական կուսակցութիւններ»- գրում էր «Գեղջուկը»⁵⁸⁵: Թերթի կարծիքով՝ անհրաժեշտ էր օգտվել այն հանգամանքից, որ սահմանադրական հռչակված Թուրքիայում թույլատրվում էր ազ-

⁵⁸³ «Պատմագրության Հայ Հեղափոխական Դաշնակցության», հ. Ա, էջ 383:

⁵⁸⁴ «Գեղջուկ», Տրապիզոն, 1910, թիվ 4:

⁵⁸⁵ Նույն տեղում, թիվ 7-11, էջ 19:

գային կուսակցությունների գործունեությունը: «Գնահատենք մեր կուսակցությունների անկեղծ գործունեությունը և նպաստենք դրանց հզորացմանը», - կոչ էր անում ընթերցողներին Ա. Իսրայելյանը⁵⁸⁶:

Գյուղերի թաղական մարմինների անդամներին Վազրիկը առաջարկում էր «իրենց անհատական շահերէն աւելի բարձր չդասել ժողովուրդին շահերը», հետևել 3 սկզբունքի՝ անաչառությանը, արդարությանը, աշխատասիրությանը⁵⁸⁷: Թերթը վկայում էր, սակայն, որ գյուղերի ամենատարբեր իրավասություններով օժտված թաղական խորհուրդները զբաղվում էին ոչ թե օրախնդիր հարցերով, այլ անհատական վեճերով, իսկ կարևոր խնդիրները լուծում էին կողմնապահորեն: «Շատ անգամներ իրաքանչիւր թաղական կ'աշխատի խնդիրների լուծումը ի շահ իրեն կամ ազգականին և կամ իւր հարևանին կողմը ըլլայ», կարդում ենք «Պարտականության անգիտակցությունը» հոդվածում⁵⁸⁸:

Հակահայ քաղաքականության հետևանքով շարունակվում էր հայության արտագաղթը բնօրրանից: Վահեն տեղեկացնում էր, որ կոնկրետ Եոմուրայի շրջանից հայերը գաղթում էին Ռուսաստան, ԱՄՆ և Թուրքիայի ներքին գավառներ «տնտեսական վիճակի ու քաղաքական անտանելի դրութեան պատճառաւ»⁵⁸⁹: Ս.Վրացյանը, վերլուծելով Թուրքիայի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը և հայ ժողովրդի արտագաղթի պատճառները, տնտեսական ապահովությունը կապում էր քաղաքական կայուն վիճակի հետ: Նա գրում էր հետևյալը. «Եթէ այս երկրում լինէր ապահովութիւն՝ լայն մտքով, այսինքն՝ կարգ ու կանոն

⁵⁸⁶ Նույն տեղում:

⁵⁸⁷ Նույն տեղում, էջ 6:

⁵⁸⁸ Նույն տեղում, էջ 5:

⁵⁸⁹ Նույն տեղում, էջ 3:

կամ օրենքի իշխանություն, հայկական շրջաններում կամ Մշոյ սանջակում մի քիլօ քառակուսի մէթր տարածութեան վրա միջին հաշուով կը բնակուէր ոչ թէ 6 հոգի (ինչպէս այժմ է), այլ 16, նոյնիսկ 116 հոգի: Բայց այն ատեն հողի քիլէն միջին հաշուով կարժենար ոչ թէ 10 ոսկի (ինչպէս այժմ է), այլ 50 կամ և նոյնիսկ 500»⁵⁹⁰: Ս. Զավարյանը շեշտում էր այն միտքը, որ Թուրքիայի բնակչության սոցիալ-տնտեսական, քաղաքական «աննախանձելի» դրությունը անմիջականորեն կապված էր երկրի հակաժողովրդական բնույթի և ժողովրդի անմարդկային կենսապայմանների հետ⁵⁹¹: «Մեր անտարբերությունը» հողվածում Յաշան փաստում էր, որ օսմանյան պետությունը տնտեսական առաջընթաց չունէր, որովհետև բացակայում էր քաղաքական ազատությունը⁵⁹²: Ըստ հողվածագրի՝ դա էր պատճառը, որ աստիճանաբար փակվում էին մեկ տարի առաջ հայերի կողմից Եւմուրայի շրջանում բացված կոոպերատիվ խանութները և կոոպերատիվ ընկերությունները, որոնց շնորհիվ գյուղացիները ինչ-որ չափով կարող էին դիմակայել մեծահարուստների շահագործմանը⁵⁹³: Զորան «Կոոպերատիվ շարժումը» հողվածում երկրի տնտեսական դրության բարվոքման ձևեր էր համարում կոոպերատիվները⁵⁹⁴: Իբրև օրինակ էր բերում համայնական ջրանցքները և հացի համայնական փոերը, որոնք փոխադարձ օգնության միջոցներ էին գյուղացիության համար: Թվարկելով կոոպերատիվ միությունների տեսակները՝ ներկայացնում էր դրանցից ամենաօգտակարն ու դյուրամատչելին՝ սպառողական միությունը, որով «ամեն ոք կարող էր ըմբռնել և միանալով ուրիշներու հետ՝ կազմել ու վարել այդպիսի ձեռնարկ մը: Այդ

⁵⁹⁰ Նույն տեղում, էջ 22:

⁵⁹¹ Նույն տեղում, էջ 2:

⁵⁹² Նույն տեղում, էջ 12:

⁵⁹³ Նույն տեղում, էջ 13:

⁵⁹⁴ Նույն տեղում:

միութիւններուն նպատակն է սպառողին և արդիւնաբերողին միջև ի վնաս վերջինիս գործող առևտրական միջնորդներու դերը ջնջել»⁵⁹⁵:

Ամսաթերթի հիմնադիր խմբագիրներից Մյունին հաճախ էր գյուղերում հանդես գալիս տնտեսական թեմաներով դասախոսություններով: Ափիոն գյուղում, Էլույթ ունենալով կոոպերատիվ միությունների և կոոպերատիվ խանութների անհրաժեշտության թեմայով, նա բացատրում էր ներկաներին, թե «գիւղացի հասարակութիւնը իր քայքայուած դրութիւնը բարւոքելու համար անհրաժեշտ է, որ սպառողական և վարկային միութիւններ ունենայ: Չքաւոր ու տանջուած ժողովուրդի փրկութեան միակ միջոցն է ունենալ կօօպերատիւ և վարկային միութիւններ»⁵⁹⁶:

Հայրենիքը ավերակների էր վերածվել և խճճված էր տգիտության խավարում: Հայրենի երկրի վերաշինման համար Մենորդն առաջարկում էր⁵⁹⁷.

* մատաղ սերնդին դաստիարակել մտքի և հոգու ստրկության դեմ պայքարի ոգով,

* կրթությունն այնպես կազմակերպել, որ հետագայում սաները կարողանային գտնել աշխատանք և իրենց տեղը կյանքում,

* տալ բազմակողմանի գիտելիքներ,

* ծրագրերում ներառել արհեստների, օտար լեզուների ուսուցում,

* աշակերտների մեջ սերմանել քաղաքացիական գիտակցություն, որ նրանք պատրաստ լինեին պաշտպանել իրենց իրավունքները,

* մեծ տեղ հատկացնել ֆիզիկական պատրաստվածությանը, ծրագրերում ընդգրկել մարմնամարզություն, զբոսանքներ ու ճամփորդություններ⁵⁹⁸:

⁵⁹⁵ Նույն տեղում, էջ 15:

⁵⁹⁶ Նույն տեղում, էջ 16-17:

⁵⁹⁷ Նույն տեղում, էջ 11:

Վերոհիշյալ գործընթացում անհրաժեշտ էր ներառել ընտանիքներին. «Դրական և ցանկալի հետևանքի հասնելու համար դպրոց և ընտանիք ձեռք ձեռքի պետք է տան»⁵⁹⁹: Հրապարակի վրա դրված էր աճող սերնդի կրթության գործը. «Լարե՛նք մեր բոլոր ջանքերը, միանանք բոլորս անխտիր այս սուրբ գործի շուրջը, որ միշտ պայծա՛ռ փայլէ մեր ազգի ԼՈՒՍՍՏՈՒ ՓԱՐՈՍԸ», - գրում էր Մենորդը⁶⁰⁰: Նա նաև կոչ էր անում հասարակությանը մտածել ազգային կրթօջախները ուսուցչական կադրերով ապահովելու խնդրի լուծման ուղղությամբ: Արևմտյան Հայաստանում չկային ուսուցիչների պատրաստմամբ և վերապատրաստմամբ զբաղվող հաստատություններ: Ուսուցիչները չունեին նյութական կայուն վիճակ, ստանում էին «մուրացիկի ռճիկ» և շարունակ ուրիշ աշխատանք փնտրելու հոգսով էին տարված՝ պատրաստ լինելով ցանկացած պահի թողնել ուսուցչի գործը⁶⁰¹:

«Գեղջուկը» հանգամանորեն վերլուծել է 1910 թ. ապրիլի 22-24-ին Տրապիզոնի ՀՕՄ-ի ակումբում տեղի ունեցած Տրապիզոնի շրջանի Ուսուցչական միության 2-րդ Ընդհանուր ժողովի աշխատանքները՝ հանդես գալով որոշ առաջարկներով: Տրապիզոնի շրջանի հայկական կամ հայաբնակ գյուղերի բոլոր վարժարաններում (բացառությամբ 2 գյուղի դպրոցների) դասավանդում էին կրթական նույն ծրագրով և միանման մեթոդներով: Վ. Յուրը առաջարկում էր ակտիվացնել կապը այդ կրթօջախների միջև ու միջոցներ հատկացնել Տրապիզոնի շրջանի հայկական և հայաբնակ գյուղերի ազգային դպրոցների համար մեկ ընդհանուր թեմա-

⁵⁹⁸ Նույն տեղում, էջ 12:

⁵⁹⁹ Նույն տեղում:

⁶⁰⁰ Նույն տեղում:

⁶⁰¹ Նույն տեղում:

կան տեսուչ ունենալու նպատակով⁶⁰²: Վերջինս պիտի լիներ «շրջանի վարժարաններու միացման օղակը»⁶⁰³:

«Գեղջուկի» աշխատակիցներից Վաչագանը եղել էր Եոմուրայի շրջանի հայկական վարժարաններում և թերթի էջերում ներկայացնում էր իր տպավորությունները: Դրական էր համարում այն, որ այդ վարժարաններում դասավանդում էին ուսումնական նոր ծրագրով, որը հարմարեցված էր գյուղական միջավայրի պայմաններին⁶⁰⁴: Ուսուցիչների մեծամասնությունը հետևում էր եվրոպական երկրներում կիրառվող մանկավարժական ուղղություններին և դասավանդման մեթոդներին: Եոմուրայի շրջանի հայկական բոլոր վարժարանները գործող էին՝ բացառությամբ Ճոշարա գյուղի դպրոցի⁶⁰⁵: Կրթօջախներից շատերում դասավանդում էին 2-3 ուսուցիչ, ովքեր գրեթե բոլորն ավարտել էին Տրապիզոնի Ազգային վարժարանը: Կյուշանայի և Ծինկիլայի դպրոցներն ունեին նաև վարժուհիներ: Ուսուցիչները գուրգուրանքով էին վերաբերում աշակերտներին, իսկ վերջինները հարգալից էին ուսուցիչների նկատմամբ: Մաները մաքրակենցաղ, ընդունակ ու համարձակ էին: Հագուկապը համապատասխանում էր քաղաքային դպրոցների համազգեստներին: Հողվածագիրը քաջալերանքի արժանի էր համարում այն, որ 15-16 տարեկան աշակերտ-աշակերտուհիները սովորում էին միևնույն դասարանում կողք-կողքի: Եոմուրայի վարժարանների մեծ մասն ուներ գրադարան ու դեղատուն: Շրջանի ամենաօրինակելի դպրոցը Ափիոն գյուղինն էր, որտեղ սովորում էին 125 աշակերտ-աշակերտուհի, և դասավանդում էին վարժուհիները նույնպես: Վատ վիճակում էին գտնվում Կալաֆկայի և Քեանի վարժարանները⁶⁰⁶:

⁶⁰² Նույն տեղում, էջ 22:

⁶⁰³ Նույն տեղում, էջ 2:

⁶⁰⁴ Նույն տեղում, էջ 22-23:

⁶⁰⁵ Նույն տեղում, էջ 22:

⁶⁰⁶ Նույն տեղում, էջ 23:

«Գեղջուկը» կոնկրետ օրինակներով ներկայացնում էր Տրապիզոնի շրջանի հայկական գյուղերի վարժարանների խնդիրները՝ առաջարկելով դրանք հասցնել եվրոպական դպրոցների մակարդակին⁶⁰⁷: Թ.Խզմայանը կարևոր թերություն էր համարում այն, որ իրենց շրջանի դպրոցները նպատակ ու միջոցներ չէին հասկացնում աշակերտներին ինքնուրույն դարձնելու համար⁶⁰⁸: «Այլ ևս չեմ խօսիր այն ուսուցիչներու մասին, որոնք ամենեւին չեն թողներ, որ մանուկներն արտայայտուին, իրենց կարծիքն ունենան, դասի սահմաններէն դուրս ելնեն»⁶⁰⁹: «Մեր իրականությունից» հողվածում ուսուցիչների կողմից իրենց խնդիրների հետ համակերպվածությունն էին համարում դպրոցներում առկա հիմնահարցերի չլուծվելու հիմնական պատճառներից մեկը⁶¹⁰: «Ձեր քով պակասում է իրաւունքի գիտակցութիւնը և քաղաքացիական արիութիւնը»⁶¹¹, - նշված էր հողվածում: Ուսուցիչները հանդուրժում էին իրենց շրջանի վարժարանների տեսուչ Հ. Խուշպուլյանին, ով «հակամանկավարժական, պահպանողական և կղերամիտ» հայացքներ ուներ⁶¹²: Նա, իր կապերն օգտագործելով, Տրապիզոնի Քաղաքական խորհրդի միջոցով հասել էր Ուսումնական խորհրդի հրաժարականին, քանի որ այդ խորհրդի կողմից հեռացվել էր աշխատանքից: Փաստորեն նոր Ուսումնական խորհուրդ էր ձևավորել և կրկին նշանակվել էր պաշտոնին⁶¹³: Թերթը կոչ էր անում ուսուցիչներին միասնաբար պայքարել Հ. Խուշպուլյանին պաշտոնանկ անելու համար⁶¹⁴:

⁶⁰⁷ Նույն տեղում, էջ 30:

⁶⁰⁸ Նույն տեղում, էջ 31:

⁶⁰⁹ Նույն տեղում:

⁶¹⁰ Նույն տեղում, էջ 31-33:

⁶¹¹ Նույն տեղում, էջ 33:

⁶¹² Նույն տեղում, էջ 32:

⁶¹³ Նույն տեղում, էջ 31:

⁶¹⁴ Նույն տեղում, էջ 33:

«Գեղջուկը» «Ուսուցչական միության շուրջ» խմբագրականում պնդում էր, որ անհիմն էին Տրապիզոնի Ուսուցչական միության հասցեին որոշ խմբակների կողմից հնչող այն դժգոհությունները, որոնց համաձայն՝ Ուսուցչական միությունը թույլ էր տալիս անիրավություններ վարձավճարներ հավաքելիս և ուսուցիչներին աշխատանքի տեղավորելիս⁶¹⁵: Հասարակության մի շերտի սրտով չէր այն, որ Ուսուցչական միությունը կրթական տուրքից որոշակի գումար հավելավճարի ձևով ավելացնում էր ուսուցիչների աշխատավարձին՝ գտնելով, թե տարեկան 15-30 ոսկի աշխատավարձը բավարար չէր ուսուցիչների կարիքները հոգալու և բարեկեցիկ ապրուստի համար⁶¹⁶: «Ճիշտ է, մենք գիտենք, որ կրթական տուրքը շատ ծանրացած է գիւղացիութեան վրայ: Այդ չի նշանակել, որ վարժապետները միայն բանջարով պիտի ապրին»⁶¹⁷, - գրում էր թերթը: Շատերի դուրը չէր գալիս, որ Ուսուցչական միությունը Տրապիզոնի շրջանի հայկական կրթօջախներում աշխատանքի էր հրավիրում այլ վայրերից «աւելի ձեռնհաս ուսուցիչների», ինչը, խմբագրության կարծիքով, արվում էր ընդհանուր բարօրության համար⁶¹⁸: «Մեր գիւղական միջավայրի տխուր երևոյթներէն մէկն ալ՝ անհատական հաշիւները հասարակական գործի հետ խառնելու ծուռ ու կործանող ընթացքն է... Ամեն հանրային գործ քննադատութիւններով միայն կարող է իր սխալը, անտեսած թերութիւնները դարմանելով յառաջդիմել: Միայն թէ անոնց այդ քննադատութիւնները բղխի՝ անկեղծ զգացումներէ,- այս եզրակացությանն էր հանգում Ջորան⁶¹⁹: Նա գրում էր, որ հասարակական գործիչը պատասխանատու էր ժողովրդի առջև, և առողջ քննադատությունը անհրաժեշտ գործոն էր՝ սխալ ընթացքից հրաժարվելու համար: Այդ քննադա-

⁶¹⁵ Նույն տեղում, 1910, թիվ 4, էջ 1:

⁶¹⁶ Նույն տեղում, 1910, թիվ 7-11, էջ 7:

⁶¹⁷ Նույն տեղում:

⁶¹⁸ Նույն տեղում, էջ 6:

⁶¹⁹ Նույն տեղում, էջ 7:

տությունը հնչեցնողները, սակայն, չպիտի խեղաթյուրեին իրականությունն ու փաստերը և չպիտի «պղտոր ջուրի մեջ ձուկ որսային», որովհետև ժողովուրդը նրանց դիմակն ի վերջո պատռելու էր⁶²⁰:

Այսպիսով՝ «Գեղջուկը» համոզված էր, որ հասարակությանն անհրաժեշտ էր ներկայացնել իրականության օբյեկտիվ պատկերը, ժողովրդին և պետությանը մտահոգող հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները, որոնց ընտրությունը պետք է կատարեր հասարակությունն ինքը⁶²¹: Պարբերականը, սակայն, չի կարողացել լիովին կատարել նախանշած նպատակները նյութական և տեխնիկական դժվարությունների պատճառով: Այն դադարել է լույս տեսնել 1910 թ. սեպտեմբերից՝ դեռ նոր սկսելով իր տպագրության 2-րդ շրջանը⁶²²:

ՏՐԱՊԻԶՈՆԻ «ՊՈՆՏՈՍ» ԵՎ «ՇԱՐԺՈՒՄ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ (1910 Թ.)

«Պոնտոսը» լույս է տեսել Տրապիզոնում 1910 թ. մարտ-օգոստոս ամիսներին՝ սկզբնապես որպես ամսաթերթ (թիվ 1-5), ապա՝ որպես շաբաթաթերթ (թիվ 6-9), հետո կրկին որպես ամսաթերթ (թիվ 10-11): Տպագրվել է Սերասի եղբայրների տպարանում: Պատասխանատու տնօրենը Հովսեփ Մաթոսյանն էր (Շահեն):

«Պոնտոսին» աշխատակցում էին Ա. Քյուրքչյանը, Յոլակը, Հովհ. Մազմանյանը (Պարույր Հայկազն), Ս. Դավիթյանը, Արսեն Երկաթը, Փոթորիկը, Ռ. Կայծակը:

Խմբագիրը Վարդան Գևորգյանցն էր: Նա հայտնի էր նաև որպես բանաստեղծ՝ Վ. Ջնար գրական կեղծանունով: Վ. Գևորգյանցը 18 տարեկան էր և լի էր մեծ նպատակներով: Պարզ ու համեստ, «ազնիւ մտածումներով, իտեալի մը կառչած անվկանգ կամքով

⁶²⁰ Նույն տեղում:

⁶²¹ Նույն տեղում, էջ 17:

⁶²² Նույն տեղում, էջ 1:

մը հրահրուած Պգտիկ Վեռլէն մ'է ան», - գրում էր նրա մասին Պարույր Հայկազնը⁶²³: Վ.Գևորգյանցն ավարտել էր Տրապիզոնի Ազգային վարժարանը: Նա նպատակի ու սկզբունքի զինվոր էր, ով հրացանի տեղ գիր ուներ, սրի տեղ՝ գրիչ⁶²⁴: Բանաստեղծական 3 ժողովածուի («Պոնտոսի ձայներ», «Պղնձե երգեր», «Շամանդադ») հեղինակ էր: «Սկսնակ մը և բառին բովանդակ առումով նոր գրող մ'է Վարդանը՝ որ մեծ ապագայ կը խոստանայ: Վարդան Գևորգեանց անոնցմէ է, որոնք տղայ հասակէն, բնածին կարողութեան շնորհիւ լաւ կը ճանչնան անձերն ու իրերն և լաւ կ'ըմբռնեն անձերու, իրերու ու երևոյթներու յարաբերական արժէքն», - գրում էր Պարույր Հայկազնը⁶²⁵:

«Պոնտոսը» հասարակական-քաղաքական և գրական ուղղվածություն ուներ: Թերթը ՀՅԴ օրգան չէր, բայց ընդգծված դաշնակցական դիմագիծ էր դրսևորում՝ պաշտպանելով ՀՅԴ տեսակետները: Կ. Պոլսի «Արևելք» օրաթերթը ժամանակին «Պոնտոսին» համարել էր դաշնակցական մամուլի օրգան⁶²⁶, թէև «Պոնտոսի» խմբագրությունը համամիտ չէր այդ կարծիքի հետ և թերթը համարում էր անկախ, բայց ՀՅԴ համակիր⁶²⁷:

Խմբագրականները գետեղվում էին 1-ին էջում: Թերթին առավելապէս մտահոգում էին ազգային կյանքի ներքին խնդիրները: «Ազգային խրտվիլակներ» խմբագրականում Վ.Գևորգյանցը փաստում էր, որ ինքը և իր համախոհները դադարել էին հավատալ Օսմանյան Թուրքիայի սահմանադրականությանը և ազգային ղեկավար մարմինների ժողովրդամետ գործունեությանը⁶²⁸: «Այսօր մեր ոսկեծղի անուրջներուն փշրուիլը կ'ողբանք: Վերսկ-

⁶²³ «Պոնտոս», Տրապիզոն, 1910, թիվ 6-9:

⁶²⁴ Նույն տեղում:

⁶²⁵ Նույն տեղում:

⁶²⁶ «Արևելք», Կ. Պոլիս, 1910, թիվ 7324:

⁶²⁷ «Պոնտոս», Տրապիզոն, 1910, թիվ 6-9:

⁶²⁸ Նույն տեղում:

սած են տնտեսական խուլիքանական ճնշումը, շահադիտական աղտոտ կոիւր, եղեռնը», - գրում էր խմբագիրը⁶²⁹: Քահանան Աստծո և խաչի անունը տալով՝ իր շահերն էր հետապնդում, ազգակործան մատնիչն իրեն ներկայացնում էր ազգի պատվի նախանձախնդիր անձ, հարուստը, «մի քանի փարաներ» եկեղեցուն նվիրելով, փորձում էր ապահովել կեղեքողի դիրքը, իսկ գիտակից երիտասարդությունը ժողովրդին կոչ էր անում չտարվել կեղծ ազգայինների խոսքերով⁶³⁰: Գիտակից երիտասարդների առաջին դիրքերում կանգնած էին, թերթի համոզմամբ, ՀՅԴ գործիչները, ովքեր թեև ենթարկվել էին համիդյան և գոլիցիյան հալածանքներին, բայց շարունակում էին պայքարել «կուրծք տուած միայն հայ ազգի Ազատութեան, միայն ի սեր ազգի վերածնութեան հզօր գործին տալով իրենց արեան վերջին կաթիլը»⁶³¹: Գևորգյանը վկայում էր, որ ՀՅԴ ակտիվիստները ենթարկվում էին կեղծ «ազգայինճիների» չարախոսություններին և գաղափարական գրոհներին⁶³²: Որպես ասվածի ապացույց հիշատակում էր 1910 թ. մայիսի 30-ի երեսփոխանական ընտրությունների ժամանակ ՀՅԴ-ի դեմ սկսված արշավը: Ստահող լուրեր էին տարածել, թե 150 դաշնակցական գործիչ զինված մտել էին ընտրատեղամասեր և կեղծել էին ընտրության արդյունքները: Այնինչ կեղծիքները կատարվել էին ազգային շահերով «շահագրգիռ» ընտրազանգվածի կողմից, ովքեր իրենց 15 թեկնածուներին էին անցկացրել՝ կատարելով կեղծարարություններ⁶³³: Օրինակ էին բերում Տրապիզոնի Ազգային վարժարանի տեսուչ Խուշպուլյանին: Նա իր կամայականությունների և դիկտատորական կամքի գոհն էր ձգտում դարձնել դաշնակցության շար-

⁶²⁹ Նույն տեղում:

⁶³⁰ Նույն տեղում:

⁶³¹ Նույն տեղում:

⁶³² Նույն տեղում:

⁶³³ Նույն տեղում:

քերում գտնվող վարժարանի աշակերտներին⁶³⁴: «Այս թայֆայականութեան պարագլուխները ինչո՞ւ չեն պատժուիք: Ո՞վ համեստ աղաներ ու տիկիներ, դուք որ սալոններէն կը ճառէք հակայեղափոխական վլվլուկներ, իբրև ազգային պատուի անողոք նախանձախնդիրներ՝ ինչո՞ւ համար կը լռէք: Գիտցէ՛ք, որ Ձեր վախճանը մօտ է: Գաղափարը, միտքը, երիտասարդական ուժը այսօր չէ, վաղը անպայմանօրէն կը տօնէ յաղթանակը», - վստահեցնում էր Գևորգյանցը⁶³⁵: Հայ մեծահարուստները պահպանողական էին համարում այդ երիտասարդությանը այն բանի համար, որ նրանք պաշտպանում էին աշխատավորների և արհեստավորների շահերը և պայքարում էին հանուն ազգային դպրոցների բարեփոխման ու հանուն մշակութային կյանքի առաջընթացի⁶³⁶:

«Դիրքերը թող ճշտվին» հողվածի հեղինակը՝ Ֆալաքը, գրում էր, որ մեծ մասամբ արժանապատվությունից զուրկ մարդիկ էին ձգտում իրենց ձեռքն առնել ազգային հաստատությունների դեկը⁶³⁷: Նրանք կրում էին ժողովրդասերի և ազգափրկչի դիմակներ: Նմանների պատճառով էր նաև, որ ազգային և դպրոցական գործերը «քայլ մը առաջ գնացած չէին»⁶³⁸: Ֆալաքը գրում էր. «Գործ շինելու տեղ քանդողներ շա՛տ ունինք»⁶³⁹: Ըստ թերթի՝ ժողովրդի լուսավորության նպատակին պիտի ծառայելին եկեղեցիները ևս՝ դռները բացելով հանրային դասախոսությունների և հավաքների համար⁶⁴⁰:

Վեցամսյակի առթիվ գրված խմբագրականում նշված էր պարբերականի նշանաբանը. «Մենք ժողովրդեան շահը գերա-

⁶³⁴ Նույն տեղում:

⁶³⁵ Նույն տեղում:

⁶³⁶ Նույն տեղում:

⁶³⁷ Նույն տեղում:

⁶³⁸ Նույն տեղում:

⁶³⁹ Նույն տեղում:

⁶⁴⁰ Նույն տեղում, 1910, թիվ 11:

դասելով, ակամայ կը տանէինք ամեն քաշքշուկներ: Քանի ուժ ունինք, պատրաստ ենք պաշտպանել զրկուածին շահերը և մեր շունչը նուիրել մեր սիրելի ժողովրդեան սիրոյն»⁶⁴¹: Նույն խմբագրականը հայտնում էր, որ թերթն ուներ ֆինանսական լուրջ խնդիրներ⁶⁴² և այլևս լույս չէր տեսնելու⁶⁴³:

1910 թ. հոկտեմբերի 20-ին, որպէս «Պոնտոսի» շարունակություն, Վարդան Գևորգյանցի խմբագրությամբ լույս է տեսնում «Շարժում» շաբաթաթերթը⁶⁴⁴: «Նպատակ և ուղղություններ» վերնագրով խմբագրականում պարզաբանվում էին պարբերականի հետապնդած նպատակները, այն է՝ հրատարակել ճշմարտությունը և ներկայացնել հասարակությանը հուզող խնդիրները⁶⁴⁵: Թերթը «պիտի հարուածէ սուտը, աղտոտը և յառաջդիմութեան դէմ լարուած ամեն մի քայլ ու ըստ կարելոյն պիտի ջանայ ճշմարտութիւնը բիրեղի պարզութեամբ ցոլացնել, պախարակելով մեծ ու պզտիկ ամեն կուռքերը, գոր ինքզինքնին յաւիտենապէս ազգին տէրն ու ղեկաւարները կարծած են: Ճշմարիտը, բարին և գեղեցիկը - ահա՛ ուղղութիւնը «Շարժումին»⁶⁴⁶: Նշվում էր, որ շաբաթաթերթն ունենալու էր նաև գրական ուղղություն⁶⁴⁷: Մի քանի համար հրատարակվելուց հետո, հավանաբար կրկին ֆինանսական խնդիրների պատճառով, «Շարժումը» դադարել է լույս տեսնել:

⁶⁴¹ Նույն տեղում:

⁶⁴² Նույն տեղում:

⁶⁴³ Նույն տեղում:

⁶⁴⁴ «Շարժում», Տրապիզոն, 1910, թիվ 1:

⁶⁴⁵ Նույն տեղում:

⁶⁴⁶ Նույն տեղում:

⁶⁴⁷ Նույն տեղում:

ԱՄՍՄԻԱՅԻ «ԱՊԱՌԱԺ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ (1911 թ.)

Սեբաստիայի նահանգը գտնվում էր Գայլ և Ալիս գետերի ավազանում⁶⁴⁸: 15-րդ դարի 1-ին կեսին այն զավթել էին օսմանյան թուրքերը և անվանել սկզբում՝ Ռումի, ապա՝ Սեբաստիա: 19-րդ դարի վերջին ուներ 4 գավառ՝ Սեբաստիա, Շապին Գարահիսար, Եվդոկիա (Թոքատ), Ամասիա, 28 գավառակ (կազա) և 257 գյուղախումբ (նահիե)՝ 4761 գյուղով: Ամենամեծ հայաբնակ գավառը Սեբաստիան էր: Այն ուներ 11 գավառակ, որոնցում, ըստ տարբեր աղբյուրների հաղորդած տվյալների, ապրում էր 235000-418000 հայ⁶⁴⁹:

Սեբաստիա նահանգի վարչական կենտրոնը Սեբաստիա քաղաքն էր: Այստեղ գործում էին 17 արական և 4 իգական դպրոցներ, 3 տպարան, Ս. Աստվածածին, Ս. Մինաս, Ս. Փրկիչ, Ս. Մարգիս առաքելական և հայ ավետարանականների 2 եկեղեցիները, Ս. Նշան, Ս. Հրեշտակապետ, Ս. Վլասիոս, Անապատ, Ս. Խնդրակատար Աստվածածին, Ս. Հակոբ, 40 Մանկունք վանքերը, Աղքատախնամ ընկերությունը, որբանոցը, Ազգային հիվանդանոցը, մշակութային ընկերություններ⁶⁵⁰: 1914 թ. Սեբաստիայում ապրում էր 36000 հայ: Նույն թվականի վերջից թուրքական իշխանություններն սկսել են ոչնչացնել տեղի հայ ազգաբնակչությանը⁶⁵¹:

Սեբաստիայի Ամասիա գավառի վարչական կենտրոնը Ամասիա քաղաքն էր: Գտնվում էր Իրիս գետի ափին: 19-րդ դարի վերջին այս գավառը բաժանված էր 7 գավառակի, որոնց կազմում կար մի քանի տասնյակ հայկական գյուղ: Ամասիայի հայահոծ քաղաքներն էին Ամասիան, Մարզվանն ու Զիլեն⁶⁵²:

⁶⁴⁸ Մելքոնյան Ա., նշվ. շխ., էջ 48:

⁶⁴⁹ «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 408:

⁶⁵⁰ Նույն տեղում, էջ 407:

⁶⁵¹ Նույն տեղում:

⁶⁵² Նույն տեղում, էջ 29:

Ամասիայի հայ ազգաբնակչության կոտորածն սկսվել է 1915 թ. ապրիլից, իսկ նույն թվականի հունիսի 15-ին հրապարակվել է հայերի տեղահանության կառավարական հրահանգը⁶⁵³:

1911 թ. Ամասիայում և Մարզվանում լույս է տեսել «Ապառաժ» պարբերականն՝ սկզբում՝ որպես շաբաթաթերթ (12 համար 1-ին 3 ամսում), հետո՝ որպես ամսաթերթ, ապա՝ կրկին որպես շաբաթաթերթ: 1-ին համարը հրատարակվել է 1911 թ. հունվարի մեկին: Տպագրվել է Ամասիայի Հովհաննես Հովնանյանի ու Մարզվանի «Ներսո և Սրայյան» տպարաններում:

Խմբագիրը ՀՅԴ գործիչ Լևոն Լանին էր, ով հետագայում դառնում է նաև թերթի արտոնատերը (սկզբնապես թերթի արտոնատերը Հարություն Թուլումպաճյանն էր- Մ.Ն.): Հիմնական աշխատակիցներն էին Լ. Կայծունին, Սլաքը, Մաժանը, Ահարոն Դարբինյանը: Ուներ գործակալներ տարբեր վայրերում: Ամասիայում «Ապառաժի» գործակալը Նշան Մավյանն էր, Թոքատում՝ Ավետիս Հայկազնյանը, Սեբաստիայում՝ Արամ Ակինյանը, Ջարայում՝ Կարպիս Ասատուրյանը, Շապին Գարահիսարում՝ Շավարշ Օզանյանը, Վանում՝ Տիգրան Չիթունին, Կարինում՝ Գևորգ Մեծատուրյանը, Սամսոնում՝ Արմենակ Քյուրքչյանը, Կիրատնում՝ Արմենակ Մալամանյանը, Երզնկայում՝ Ջարմայր Ճերմակյանը, Կեսարիայում՝ Վարդերես Արմենյանը, Այնթապում՝ Նշան Պալեոզյանը, Իզմիրում՝ Խաչիկ Գազազյանը, Կ.Պոլսում՝ Մենեքերիմ Հայկազնյանը, Սելանիկում՝ Հակոբ Իզմիրյանը, Հալեպում՝ Օսնիկ Թոսփաթը, Բեյրութում՝ Մեսրոպ Վարդանյանը, Բաղդադում՝ Գասպար Թյոտատյանը, ԱՄՆ-ում Արմենակ Շիրվանյանը⁶⁵⁴:

«Ապառաժը» «Ուխտին առջև» խմբագրականում կարևորում էր արևմտահայ գավառում պարբերական մամուլի դերը՝ վերջինս համարելով հանրային կյանքի հայելի: «Մամուլ մը ունենալ քաղա-

⁶⁵³ Նույն տեղում, էջ 15:

⁶⁵⁴ «Ապառաժ», Ամասիա, 1911, թիվ 4:

քակրթության պսակն ունենալ կը նշանակէ: Ան տառապեալնէրու սրտին ձայնն է և դէպի լոյս գացողներու մտերիմը: Մամուլը իր դերին մէջ ստրկութիւն չը ճանչնար», - գրում էր թերթը⁶⁵⁵: Պարբերականն իրեն համարում էր ժողովրդին ուղղված ճշմարտության ձայն, որը ձեռք էր մեկնում գաղափարի և իդեալի սիրահար երիտասարդներին՝ նրանց կոչելով դէպի առաջ⁶⁵⁶: Գըտնում էր, որ «գաւառը գաւառացիներով ծաղկեցնելը, գաւառացիին ցաւը իր շրթունքներէն լսելը՝ մեծագոյն առաքինութիւն էր»⁶⁵⁷: Թերթը իր «կուրծքին վրայ Արդարութիւնը պիտի սնուցանէր, թէն չէր փափագիր օտարներու արցունքին մէջ յաղթանակը տեսնել»⁶⁵⁸:

«Ապառաժը» տպագրվել է նյութական և բարոյական զոհողությունների գնով⁶⁵⁹: «Ապառաժի շուրջը» խմբագրականում, ամփոփելով եռամսյա գործունէության արդյունքները, խմբագրությունը վստահեցնում էր, որ պարբերականն իրենք հրատարակելու էին «որչափ ատեն, որ ոյժ ունին, դրամ ունին և ըսելիք ունին հայ հասարակութեան և թիւրք կառավարութեան... Բարոյական յաղթանակի համար զոհեցինք ու պիտի զոհենք, վստահ գիտնալով, թէ օր մը վերջապէս հայ հասարակութիւնը պիտի գնահատէ լոյսը», իսկ հայ բանվորը պիտի պայքարի իր քրտինքի վարձատրությունը պահանջելու համար⁶⁶⁰: Տպագրվելով որպէս շարաթաթերթ կամ ամսաթերթ՝ «Ապառաժը» շարունակելու էր պաշտպանել հայ դատը. «Պիտի դարձնենք մեր ակնարկը հոն՝ ուր ոճիր կը գործուի, մահ կը սերմանուի, բանուորներ կը հեծեճեն, անօթիներ կուլան»⁶⁶¹:

⁶⁵⁵ Նույն տեղում, 1911, թիվ 1:

⁶⁵⁶ Նույն տեղում:

⁶⁵⁷ Նույն տեղում:

⁶⁵⁸ Նույն տեղում:

⁶⁵⁹ Նույն տեղում, 1911, թիվ 4:

⁶⁶⁰ Նույն տեղում:

⁶⁶¹ Նույն տեղում:

«Ապառաժը» հասարակական-քաղաքական և գրական ուղղվածություն ունեցող պարբերական էր: Այն ընթերցողներին էր ներկայացնում տվյալ շաբաթվա (հետագայում՝ տվյալ ամսվա) կարևոր լուրերը ազգային, քաղաքական ու տնտեսական կյանքի տեսությունների հետ: Տպագրում էր գիտահանրամատչելի հոդվածներ՝ փորձելով հարստացնել աճող սերնդի գիտելիքները տարբեր ոլորտներում: Կ.Պոլսի առևտրային և լեզվագիտական վարժարանի տնօրեն Հակոբ Բագրատունին գրական աշխարհի անունից ողջունում էր պարբերականի ծնունդը, որ «արժանաւոր օռկանը պիտի ըլլայ Ամասիային ու անոր վարկն ու համբաւը պիտի փողփողէ ու բարձրացնէ: Մաղթելի է, որ Հայաստանի ամեն հայաշատ քաղաքներ ըմբռնեն մամուլին դերը բնիկ երկրին մէջ, պայմանաւ, որ բնաւ չըլլայ այն գեղծանող կամ չարաշահ, այլ՝ մնայ հաւատարիմ իր ուխտին»⁶⁶²:

Չնայած իր ընդհանուր ուղղվածությանը՝ «Ապառաժն» ուներ 2 հիմնական գիծ.

* բոլոր համարներում «Սարեն-ձորեն» բաժնում ներկայացնում էր լուրեր Թուրքիայի հայկական կամ հայաբնակ գյուղերից ու քաղաքներից,

* նյութերն ընտրում էր այնպես, որ դրանց միջոցով նպաստեր գավառաբնակ հայ երիտասարդության վերածննդին:

Կարելի է փաստել, որ «Ապառաժը» երիտասարդական-լրատվական թերթ էր: «Վերածնունդը» խմբագրականում հարց էր տալիս ընթերցողներին, թե հայը մինչև ե՞րբ էր մնալու իբրև ծեր ազգ՝ անկարող շարժվելու և երգելու. «Լացող ազգերը չեն կրնար վերածնիլ... Ազգերը իրենց երիտասարդ ոյժերովը կրնան վերածնիլ: Երիտասարդ ըլլալ կը նշանակէ յաղթանակի մը ետեւէն վազել: Ու՞ր են հայ կուրծքին վրայ վերածնող երիտասարդ-

⁶⁶² Նույն տեղում, 1911, թիվ 5:

ներու բանակները»⁶⁶³: «Ապառաժը» համոզված էր, որ հայ երիտասարդությունը պիտի վերածնվեր «այս անգամ իտալի ճամբուն վրա, սիրահար լոյսին և անմահութեան: Յաղթանակը վերածնունդներէն կը սպասենք»⁶⁶⁴: Այդ նպատակով, խմբագրության կարծիքով, աճող սերնդին անհրաժեշտ էր առաջին հերթին բուժել դարերով հայ ժողովրդի մեջ մտած ստրկամտությունից ու դրանից բխող մոլորություններից: Ընդ որում, այդ գործով պիտի զբաղվեին դպրոցը և ընտանիքը⁶⁶⁵:

«Ապառաժը» համոզված էր, որ «Հայը իր վերածնունդը գալառացիներէն կը սպասէ»⁶⁶⁶: Գավառացի հային առաջարկում էր չլքել հայրենիքը և մնալ «իր արօրին, իր բանին քով, իր կրպակէն ներս և սակայն ամեն նոր յղացումի առջեւ մտայոյզ»⁶⁶⁷: «Կյանքը գավառին մեջ» խմբագրականում Ահարոն Դարբինյանը գրում էր, որ Գավառն էր ծնել հայ հեղափոխական գործիչներից շատերին՝ Աղբյուր Սերոբին, Անդրանիկին, Բաբկենին, Կայծակին, Ժիրայրին և այլոց⁶⁶⁸: «Ցաւատանջ կեանքը գաւառին մէջ դրաւ առաջին պսակը հերոսագրութեան և դիւցազնավայել ըմբոստութեան: Ոչ թէ միայն գաւառացի այրերն էին, որ կրցան իրենց կռուվիը ցցել բռնութեան դէմ, այլ նոյն իսկ կիներ, որոնք ուխտած հաւատարիմ մնալ հային նկարագրին, իրենց պզտիկներուն հետ նետուեցան վար ապառաժներու գագաթներէն: Հայ կինը Գաւառին մէջ աջակցիլ զիտցաւ այրերուն, փաթթեց անոնց վերքերը: Վերցուր զուլումի շղթան գաւառներէն, և գաւառացիին կեանքը կըլլայ համբոյր, ծիծաղ, շինարար աշխատանք»⁶⁶⁹:

⁶⁶³ Նույն տեղում, 1911, թիվ 2:

⁶⁶⁴ Նույն տեղում:

⁶⁶⁵ Նույն տեղում, 1911, թիվ 5:

⁶⁶⁶ Նույն տեղում, 1911, թիվ 9:

⁶⁶⁷ Նույն տեղում:

⁶⁶⁸ Նույն տեղում, 1911, թիվ 8:

⁶⁶⁹ Նույն տեղում:

«Ապառաժը» կառավարությանն առաջարկում էր աշխատանքով ապահովել բնակչությանը և այդպիսով բարելավել երկրի տնտեսական կյանքը: «Այսօրուան աղքատ ճանչուածներէն ոմանք գործելու և իրենց աշխատութեան բաժինով գոհանալու բաղձացողներ են, որոնք կը պօտան իրենց ողորմութիւն դրկող տեսչութեան.- Մեր ստեղծագործ բազուկները գործ կ'ուզեն և ոչ թէ ողորմութիւն: Կանոնաւորէ մեր երկրին ճամբաները, մուրալու տեղ ստեղծելու վարժեցուր, և մենք մինչև մահ կ'աշխատինք և կը ճարենք մեր հացը քրտինքով թրջուած», - գրում էր թերթը «Մալիէի ողորմութիւնը» խմբագրականում⁶⁷⁰:

«Ապառաժը» գտնում էր, որ ժողովուրդն իրավունք ուներ անհրաժեշտութեան դեպքում բողոքել կառավարության հակաժողովրդական գործունեության դէմ և նրանից պահանջել կատարել սեփական պարտականութիւնները⁶⁷¹: Այնինչ կառավարութիւնը վերջին 3 տարվա ընթացքում երբեք չէր լսել հայ ժողովրդի ձայնը, չէր տեսել նրա վերքերը, չէր դարմանել խնդիրները⁶⁷²: «Եղա՛ւ ինքը անկեղծ Սահմանադրական մը՝ ո՛չ», - կարդում ենք «Թուրք կառավարութիւնը և գավառացիին ցավերը» խմբագրականում⁶⁷³: «Ապառաժը» տեղեկացնում էր, որ երիտթուրքական կառավարության վարած քաղաքականութեան պատճառով հայ-թուրքական հարաբերութիւնները մասամբ «ցրտացած» էին Խարբերդում, իսկ Ամասիայում Իթթիհատի շարքերից դուրս էր գալիս 1908 թ. հեղափոխութիւնից հետո այդ կուսակցութեանն անդամագրված հայերի մեծամասնութիւնը⁶⁷⁴: Թերթը երիտթուրքական իշխանութիւններից պահանջում էր չչարունակել հին վարչակարգի գործունեութիւնը. «Որչափ

⁶⁷⁰ Նույն տեղում:

⁶⁷¹ Նույն տեղում, 1911, թիվ 5:

⁶⁷² Նույն տեղում:

⁶⁷³ Նույն տեղում:

⁶⁷⁴ Նույն տեղում, 1911, թիվ 11:

ատեն որ մեր երկրին մեջ քաղաքական նոյն պահանջներուն տակ ապրող ազգերը հոգեառ աչքերով, սրուած ատամներով, թշնամական ոգիով կը նային իրարու, մէկ մէկու գոյութեան հիմերը կը քակեն, երկիրը կը տուժէ, նորէն ակերակները կը մխան, նորէն Կիլիկեան ջարդերը կը կրկնուին»⁶⁷⁵: «Ապառաժը» նշում էր, որ Ամասիայի իթթիհատական կառույցը անկեղծ չէր իր հայ անդամների նկատմամբ, նրանց հետ խտրականությամբ էր վարվում, նրանց անտեղյակ էր թողնում կուսակցության գործունեությանը և բացահայտորեն շարունակում էր առաջ տանել ձուլման քաղաքականությունը⁶⁷⁶: Հայ-թուրքական հարաբերությունները լարվել էին, երբ Մարզվանի քաղաքապետի ընտրության ժամանակ ոտնահարվել էին հայ ընտրողների իրավունքները, և հաշվի չէին առնվել նրանց քվեները⁶⁷⁷: Թերթը պնդում էր, որ դա միտումնավոր էր արվել, որպեսզի միմյանց դեմ հանեին հայերին ու թուրքերին⁶⁷⁸: Հարց էր տալիս կառավարությանը. «Ինչո՞ւ անտեսել հայուն իրաւունքը: Ինչո՞ւ այս բոլորը, եթէ ոչ զիրար ջախջախելու համար: Մինչեւ ե՞րբ այս քաղաքականութիւնը»⁶⁷⁹:

Իր սոցիալ-տնտեսական ու քաղաքական տեսակետները առավել հասկանալի դարձնելու նպատակով «Ապառաժը» տպագրել է ՀՅԴ տեսաբան Մ.Վարանդյանի հոդվածներն ու նրա գրքերի մասին իր աշխատակիցների գրած վերլուծականները: Երիտթուրքերի իրականացրած պետական քաղաքականությունը բնորոշելու համար էր, կարծես, տպագրել Մ.Վարանդյանի՝ «Պանթուրքիզմը» հոդվածը: Այն պատկերացում էր տալիս իթթիհատական կառավարության պանթուրքիստական ծրագրի մա-

⁶⁷⁵ Նույն տեղում:

⁶⁷⁶ Նույն տեղում:

⁶⁷⁷ Նույն տեղում, 1911, թիվ 12:

⁶⁷⁸ Նույն տեղում:

⁶⁷⁹ Նույն տեղում:

սին. «Կուսակցական դեկղատորութիւնը, միացած ամենավատ-
թար նացիօնալիզմի, ազգայնականութեան հաւատամքին,
ձգտում էր բոլոր միջոցներով իրականացնել անկարելին՝ ձուլել
բոլոր այլազան տարրերը օսմանցիութեան մէջ, ստեղծագործել
ամբողջ կայսրութիւնից ո՛չ միայն մէկ միաձոյլ պետութիւն, այլ
և մէկ Ազգ»⁶⁸⁰:

«Տիրելու տենչը» խմբագրականում թերթը կարծիք էր հայտ-
նում, որ իթթիհատական Թուրքիան Սահմանադրությունը
դարձրել էր իր համար վերարկու, որի տակ թաքնվելով էր կա-
տարում բոլոր հանցագործությունները՝ ոտնահարելով ազգա-
յին փոքրամասնությունների մարդկային տարրական իրավունք-
ները⁶⁸¹: «Բաժնենք, որ տիրենք. ահա բացագանչութիւնը այն
խմբակին և կամ մեծամասնութեան, որուն հետ ճակատագրակա-
նօրէն սահմանաւաճներ ենք ապրելու, գործելու և շփուելու»,
գրում էր թերթը⁶⁸²: «Սարեն-ձորեն» բաժնի լուրերը, սակայն, վկա-
յում էին, որ իրենց բնօրրանում հայերին կրկին սպառնում էին կո-
տորածը, ավերն ու թալանը: «Ուճիրները կը շարունակուին հայկա-
կան գաւառներուն մէջ: Ե՛րբ հայուն արիւնը պիտի դադրի հոսե-
լէ»,⁶⁸³ այս հարցով էր ավարտվում Սիվասից ուղարկված լուրերից
մեկը⁶⁸³:

Այն դեպքում, երբ հայ ժողովրդի առջև ծառայել էր մահվան և
ոչնչացման վտանգը իր իսկ հայրենիքում, խմբագրությունը կոչ էր
անում համախմբվել և միասնական լինել ազգային խնդիրների
լուծման ու ինքնապաշտպանության գործը կազմակերպելու նպա-
տակով⁶⁸⁴: «Սահմանենք մենք մեր Ազգը-Հայութիւնը-
ապրելու, և պիտի ապրի, մեծնայ, պիտի ուժովնայ և պիտի պարծի իր հան-

⁶⁸⁰ Նույն տեղում:

⁶⁸¹ Նույն տեղում, 1911, թիվ 5:

⁶⁸² Նույն տեղում:

⁶⁸³ Նույն տեղում:

⁶⁸⁴ Նույն տեղում:

ճարներով, լեզուով ու գեղարուեստներով: Մենք այդ ցանկալի օրին պետք է ձգտինք»,- գրում էր թերթը⁶⁸⁵: Այն նաև հայտարարում էր, որ պետական հայակործան քաղաքականությունից բացի՝ հայ մեծահարուստներն էին խրամատներ բացում հայ ժողովրդի առաջադիմության «անիններուն առջև»⁶⁸⁶: Նրանք դիրքեր էին գրավել կառավարության մեջ, ունեին համբավաբեր աշխատանք ու գործ, բայց միավորվել էին հայ թշվառներին ավելի թշվառացնելու, քաղցածներին արհամարհելու, ազգափրկիչ գաղափարներ ունեցող երիտասարդներին վարկաբեկելու նպատակով: Թեև իրենց համարում էին ազգասեր ու եկեղեցասեր, սակայն «կը ջարդուէին ու կը լռէին, կը գրկուէին պատուի, կեանքի, խօսքի ազատութենէն ու կը քծնէին, կը դողդողային»⁶⁸⁷: Նրանք, պետական պաշտոնատար անձաց հետ միացած, պայքարում էին հայ աշխատավորների և հայ բանվորների դեմ⁶⁸⁸: «Երկու դասակարգ դեմ առ դեմ» խմբազրականում «Ապառաժը» կոչ էր անում հայ աշխատավորներին համախմբվել միությունների մեջ, ընդվզել հայ մեծահարուստների և թուրքական կառավարության դեմ ու պաշտպանել իրենց իրավունքները⁶⁸⁹:

Թերթը հայ կյանքի առաջընթացի խոչընդոտներից էր համարում անբարեխիղճ և անգործունակ հոգևոր առաջնորդներին ու եկեղեցականներին: Ժողովուրդը դժգոհ էր Ամասիայի Առաջնորդ ծայրագույն վարդապետ Իբրանոսյանից: «Ամասիոյ Առաջնորդին անկարողութիւնը և ցոյց տուած անգործունէութիւնը մատնանշող բողոքագրերը օրը օրին կը հասնին», - տեղեկացնում էր «Մարեն-ձորեն» բաժինը:⁶⁹⁰ «Ապառաժը» առաջարկում էր բարեփոխել հայ

⁶⁸⁵ Նույն տեղում:

⁶⁸⁶ Նույն տեղում, 1911, թիվ 6:

⁶⁸⁷ Նույն տեղում:

⁶⁸⁸ Նույն տեղում, 1911, թիվ 7:

⁶⁸⁹ Նույն տեղում:

⁶⁹⁰ Նույն տեղում, 1911, թիվ 8:

եկեղեցու ծիսակատարությունները և արարողությունները, վերանայել հոգևորականների կոչումները՝ ի շահ ժողովրդի բարօրության և հոգևոր աճի: «Մեր եկեղեցականությունը ունի իր մեջ շատ մը մութ գանկեր և կոյր աչքեր. պետք է մաքրագործել», - գրված էր «Երեսփոխանական բարեփոխում» հոդվածում⁶⁹¹:

Թերթը կարծում էր, որ ազգային առաջընթացի համար անհրաժեշտ էր հաշվի առնել եվրոպական ժողովուրդների առաջավոր փորձը: «Եթե հայը կփափագի իր ապրած երկրին, իր ծաղկեցուցած հայրենիքին մեջ խաղաղ միջավայր մը ստեղծելով ապրիլ հանգիստ, տիրանալ իր կորսնցուցած դատին և ապագայ սերունդին օրհնութեանը արժանանալ, պետք է միշտ քաղաքակրթութեան ճամբուն վրայ կենայ այն հաւատքով, թէ ինքը կրնայ իր ցեղային բնորոշ յատկություններովը իսկ մրցանակը օտարներէն առաջ», - պնդում էր Լ. Կայծունին «Ճամփուն եզերքը» հոդվածում⁶⁹²: Անհրաժեշտ էր նաև ինքնաճանաչումը: Այդ գործընթացին նպաստելու համար «Ապառաժը» բացել էր «Հայը օտարներուն առջև» խորագիրը: Այստեղ թերթը զետեղում էր օտարագգի հանրահայտ անձանց կարծիքները հայ ժողովրդի մասին:

Օրինակ՝ Ջորջ Մառը գրում էր, որ հիացած էր հայերով: Նրանք «բաժնուած են քաղաքներով, հեռու կ'ապրին իրարմէ, բայց միշտ մօտ են սրտով... Ստեղծող և մարդկութեանն օգտակար ըլլալու ձգտումն ունեցող Ազգ մ'է: Շատ ճարպիկ են և հանճարեղ, ամեն երկինքի տակ կ'ապրին, ամեն միջավայրի կը յարմարին, ամեն, ուր որ երթան, առաջին ընելիքնին կ'ըլլայ շինել և շէնցնել: Եթէ իրենց ապրած միջավայրը քիչ մը ազատ թողէր զիրենք, հիմա շատոնց պիտի կրնային Ասիոյ մէջ նոր Եւրոպա մը ստեղծել: Լուծի տակ, մութի մէջ կ'ապրին, բայց լոյսի սիրահար են: Ամեն բանի մէջ

⁶⁹¹ Նույն տեղում, 1911, թիվ 9:

⁶⁹² Նույն տեղում, 1911, թիվ 1:

Աստուծոյ մատը կը տեսնեն... Ամենէն ծերին վրայ երիտասարդի մը կորովը կը նշմարուի»⁶⁹³:

«Ապառաժը» մինչև վերջին համարը փորձել է իրականացնել որպէս գավառաթերթ իր առջև դրված նպատակները, թէն նյութական դժվարությունների պատճառով կարճատև ընթացք է ունեցել:

ԿԱՐԻՆԻ «ԱԼԻՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ (1914 Թ.)

1909 թ. մայիսի 31-ից մինչև 1914 թ. մարտի 20-ը Կարինում լույս է տեսել ՀՅԴ ուղղվածություն ունեցող «Հառաջ» եռօրյա պարբերականը նախ՝ որպէս շաբաթաթերթ, հետո՝ որպէս երկօրյա, ապա՝ որպէս եռօրյա թերթ⁶⁹⁴:

«Հառաջը» Կարինի «Հայ երիտասարդաց միության» օրգանն էր⁶⁹⁵: Այդ մշակութային կազմակերպությունը «հիմնուած էր դաշնակցականներու կողմէ» ՀՅԴ հայտնի գործիչ Արամ Ատրու-նու նախաձեռնությամբ⁶⁹⁶: 1914 թ. հիշյալ կազմակերպությունն ուներ 800 անդամ: Հիմնական նպատակն էր նպաստել հայ ժողովրդի մշակութային առաջընթացին, բարձրացնել նրա մտավոր, հոգեկան ու բարոյական կարողությունները: «Լոյս տալ անլոյսին, նոր խօսք՝ այդ խօսքին կարօտ մեր գիւղացուն ու գաւառացուն», - գրում էր Մարալը⁶⁹⁷:

«Հառաջն» ունեցել է 4 խմբագիր: Նրանք բոլորը ՀՅԴ անվանի դեմքեր էին՝ Եղիշե Թովսյան (1909 թ. մայիս-սեպտեմբեր), Փիլոս Փափախյան (1909 թ. հոկտեմբեր-նոյեմբեր), Միմոն

⁶⁹³ Նույն տեղում, 1911, թիվ 6:

⁶⁹⁴ Տէր Խաչատուրեան Ա., «Հայ մամուլի մատենագիտական գործեր», Պէրոյթ, 2014, էջ 627:

⁶⁹⁵ «Ալիք», Կարին, 1914, թիվ 3:

Պողոսեան Ե., «Մշակութային կեանքը Կարնոյ մէջ», Պէրոյթ, 1957, էջ 300-332:

⁶⁹⁶ Տէր Խաչատուրեան Ա., նշվ. աշխ., էջ 626:

Թեոդիկ, «Յուշարձան Ապրիլ Տասնըմէկի», Կ.Պոլիս, 1919, էջ 64:

⁶⁹⁷ «Ալիք», Կարին, 1914, թիվ 3:

Վրացյան (1909 թ. նոյեմբեր-1911 թ.) և Շավարշ Միսաքյան (1911-1914 թթ.)⁶⁹⁸: 1909-1914 թթ. «Հառաջի» արտոնատերը Արամ Ասրունին էր, իսկ պատասխանատու տնօրեններն էին հաջորդաբար՝ Վահե Թոքաճյանն ու Շավարշ Միսաքյանը:

1909 թ. մայիսի 31-ի անդրանիկ համարի խմբագրականում ներկայացվում էին «Հառաջի» հետապնդած նպատակները: «Յառաջ հրապարակ է գալիս իբրև մի համեստ գործօն, որ պիտի ծառայե ընդհանուր հայրենիքի վերաշինութեանն ու բոլոր ճնշուածների պաշտպանութեանը՝ առանց ազգի ու կրօնի խտրութեանը», - գրում էր պարբերականը⁶⁹⁹:

«Հառաջի» խմբագրությունը և տպարանը սկզբնապես գտնվել են Կարինի Չամուր փողոցում, առաջնորդարանից ոչ շատ հեռու՝ կարճ ժամանակ անց տեղափոխվելով «Կանայ ճամբու վրայ»⁷⁰⁰:

«Հառաջը» 1914թ. փակվել է թուրքական իշխանությունների կողմից և որպես երկօրյա թերթ հրատարակվել է նախ՝ «Երկիր», ապա՝ «Ալիք» անուններով:

«Ալիքի» խմբագիրը ՀՅԴ անվանի գործիչ Շավարշ Միսաքյանն էր:

Շավարշ Միսաքյանը ծնվել է 1884 թ. Սեբաստիայի Զիմառա գյուղում: Ավարտել է Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանը: 16 տարեկանից թղթակցել է տարբեր թերթերի: 1908 թ. խմբագրել է Կ. Պոլսի «Ազդակ» շաբաթաթերթը, 1911-1914 թթ.՝ Կարինի «Հառաջ» թերթը, աշխատակցել է Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթին: 1915 թ. ձերբակալվել է և ենթարկվել է չարչարանքների: 1918 թ. Մուղղոսի զինադադարից հետո Հ. Սիրունու հետ դարձել է Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի խմբագիրը: 1919 թ. մաս-

⁶⁹⁸ Տե՛ր Խաչատուրեան Ա., նշվ. աշխ., էջ 627:

Վրացեան Սիմոն, «Կեանքի ուղիներով», Պէրոյթ, 1960, հ. 2, էջ 158:

⁶⁹⁹ «Յառաջ», Էրզրում, 1909, թիվ 1:

⁷⁰⁰ Վրացեան Ա., նշվ. աշխ., էջ 158-164:

նակցել է ՀՅԴ Երևանի 9-րդ Ընդհանուր ժողովին: 1922 թ. տեղափոխվել է բնակվելու Սոֆիայում, իսկ 1924 թ.՝ Փարիզում, որտեղ հիմնել է «Հառաջ» օրաթերթը: ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովում ընտրվել է ՀՅԴ Բյուրոյի անդամ: 1925-1933 թթ. եղել է «Դրոշակի» խմբագրակազմում: Շ. Մխաթյանը մահացել է 1957 թ.⁷⁰¹:

«Ալիքը» հրատարակվել է որպես դատական քաջքշուկի մեջ հայտնված «Երկիր» թերթի իրավահաջորդ: «Նոր չէ, որ կառավարութիւնը կը հետևի մեր թերթերուն, անոնց բովանդակութեանն ու ուղղութեանը», - գրված էր «Նոր մեթոդը» խմբագրականում⁷⁰²: «Ալիքը» որևէ թերթ փակելը համարում էր պետության իրավունքը, եթե դա պատճառաբանված էր պետական շահով: Այնինչ Թուրքիայում 1914 թ. կրկին սկսել էին հետապնդել հայկական թերթերին՝ պարզապես հայ ժողովրդի իրավունքների մասին գրելու պատճառով: Նույնը կատարվել է նաև «Ալիքի» հետ: Թերթի պատասխանատու տնօրեն Հրաչյա Լուսպարոնյանին դատի էին տվել ապակենտրոնացման մասին վերլուծական հոդված տպագրելու պատճառով⁷⁰³: Ընդհանուր դատախազությունը «Ալիքի» 1914 թ. 1-ին համարում տպագրված՝ ապակենտրոն և կենտրոնացված պետական կառավարման համակարգերին նվիրված հոդվածի առնչությամբ էր դատի տվել Լուսպարոնյանին: Նախադատ ատյանը նրան դատապարտել էր 1 ամիս տևողությամբ բանտարկության և գանձել էր 20 ոսկի տուգանք: «Ալիքի» պատասխանատու տնօրենն իր հերթին դիմել էր վերաքննիչ ատյան⁷⁰⁴: «Ալիքը» հարց էր տալիս, թե ինչո՞վ էին «վտանգավոր» թուրք պաշտոնյայի զեղծարարությունների և

⁷⁰¹ Հովսեփյան Մ., «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.)», Երևան, 2009, էջ 170-171:

Մխաթեան Շ., «Օրեր և ժամեր», Փարիզ, 1958, էջ IX- XII:

⁷⁰² «Ալիք», Կարին, 1914, թիվ 3:

⁷⁰³ Նույն տեղում, թիվ 12:

⁷⁰⁴ Նույն տեղում:

անարդարությունների մասին գրված «Հառաջի» նյութերը⁷⁰⁵: Թերթի «դեմ արձակված վճիռն ալ» տրամաբանական կլիներ այն ժամանակ, երբ ապացուցված կլիներ տպագրված փաստերի անճշտությունը⁷⁰⁶:

Անդրադառնալով «Երկիր» թերթի դադարեցման խնդրին՝ «Ալիքը» հռետորական հարցադրումով էր հանդես գալիս. «Մի՞ թե այս դժբախտ երկրին մեջ յանցանք է մինչև իսկ արդարադատութեան հաւատալը»⁷⁰⁷: Չէ՞ որ պետական համակարգի անարդարությունների մասին գրելով՝ պարբերականը «ամենէն առաջ հայրենասիրական գործ մը կատարած կ'ըլլայ, օգնելով կառավարութեան, յարուցած խնդիրներու մանրամասնութեանց իրազէկ ըլլալուն մէջ»⁷⁰⁸: «Երկիրին» մեղադրում էին, թե իբր սուտ տեղեկատվություն էր տարածել առ այն, որ Ըղձաձոր գյուղում ծագած վիճաբանության ժամանակ թուրքերը նախահարձակ չէին եղել և չէին վիրավորել 9 հայ գյուղացու, (ընդ որում, այս միջադեպի համար ոչ մի թուրք չէր պատժվել, իսկ վիճաբանությանը մասնակից բոլոր հայերին բանտարկել էին)⁷⁰⁹: «Երկիրը» դադարեցվել էր նաև այն պատճառով, որ մեղադրել էր կառավարությանը Բաղէշում քրդերի սարքած հայկական ջարդի պատասխանատուներին և իրականացնողներին չպատժելու համար: «Ալիքի» խմբագրությունը պնդում էր, որ «Երկիրը» ճիշտ էր վարվել՝ օբյեկտիվորեն լուսաբանելով ու վերլուծելով Բաղէշում ծավալված իրադարձությունները: Մի՞ թե հանցանք էր երկրի թերությունների մասին գրելը՝ դրանց վրա հրավիրելով պետության և հասարակության ուշադրությունը: Եթե պետությունը նույնիսկ փոքր ցանկություն ունենար, ապա կճնշեր Բաղէշում

⁷⁰⁵ Նույն տեղում, թիվ 4:

⁷⁰⁶ Նույն տեղում:

⁷⁰⁷ Նույն տեղում:

⁷⁰⁸ Նույն տեղում:

⁷⁰⁹ Նույն տեղում:

սկսված քրդական մարդասպան շարժումը, և չէին լինի տասնյակ գոհերը⁷¹⁰:

«Ալիքի» խմբագրությունը անդրադարձել է «Հառաջ» և «Երկիր» թերթերի հրատարակության դադարեցման պատճառներին: Պարբերականների հոդվածները «պաշտօնական շրջանակներու մօտ նկատուեր են վնասակար մանաւանդ հայրենիքի շահերուն տեսակէտէն: Եթէ մեր պաշտօնական շրջանակները այն կանխակալ կարծիքը չունենային, թէ պաշտօնական շրջանակներու տեսակէտները չի բաժնող մէկը հայրենասէր չէ, եթէ ընդունել կարողանային, որ տիրող մտայնութիւններուն ու ուղղութիւններուն դէմ եղող մէկը, կրնայ շատ աւելի ջերմ հայրենասէր ըլլալ, քան իրենք, ապա վնասակար չէին նկատուիր այն գրածքները, որոնք նկատուեր են, և դադարման չէին դատապարտուիր այն թերթերը, որոնք դադարեցուցեցան»⁷¹¹: Ըստ «Ալիքի»՝ սրանք էին «Հառաջի» և «Երկիրի» դադարեցման հիմնական պատճառները⁷¹²:

Պարբերականը վկայում էր, որ շրջակա գյուղերից ստանում էին նամակներ, որոնցում բարձր էր գնահատվում «Հառաջի» գործունեությունը: Բարբերդում «Ալիքի» թղթակից Պարույրը գրում էր, որ թերթի փակվելուց հետո «բոլոր խաւերու կողմէ անխտիր զգացեցաւ անոր պակասը, պէտքը գաւառաթերթի մը, որ եղած էր գաւառացիներու ցաւերուն և ուրախութեանց թարգմանը: «Երկիր»ի առաջին թիւերն իսկ յուսալ կուտան, թէ անիկա պիտի հետևի «Յառաջ»ի ուղղութեան, միշտ թարգմանը պիտի լինի թուրք, քուրդ և հայ աշխատաւորութեան տառապանքին, ի վեր պիտի հանէ գործուած զեղծումներն ու անիրաւութիւնները՝ որ կողմէն ալ գան և պիտի լինի անողոք քննադատը զեղծանող պաշտօնէութեանց, անխիղճ վաշխատուներուն, վերջապէս՝

⁷¹⁰ Նույն տեղում, թիվ 5:

⁷¹¹ Նույն տեղում, թիվ 6:

⁷¹² Նույն տեղում, թիվ 5:

խթանը երկրին յառաջդիմութեանը»⁷¹³: Մեկ այլ թղթակից (Թաթուլը) Ալաշկերտից գրում էր, որ «Յառաջի» փակումը զրկանք էր բոլորի համար, որովհետև «գոցած էին այդպետով բոլորիս աչքերը»⁷¹⁴: Այնինչ «Հառաջն» ընթանում էր ճշմարտության ճանապարհով և արձագանքում էր ժողովրդի հառաչներին⁷¹⁵:

Երբ թերթում ենք «Հառաջի» իրավահաջորդ «Ալիք» թերթի համարները, համոզվում ենք, որ պարբերականը անմասն չի մնացել ժողովրդին մտահոգող խնդիրներին, լուսաբանել է դրանք և ներկայացրել է առաջարկներ ազգային կառույցներին ու պետական համապատասխան մարմիններին՝ իր կողմից ներկայացվող խնդիրների համար լուծումներ գտնելու գործին աջակցելու առումով: Հիմնական հիմնահարցերը, որոնց անդրադարձել է «Ալիքը», վերաբերում էին կրթական ոլորտին, ազգային դպրոցներին, արևմտահայ կյանքը խաթարող պետական քաղաքականությանը, ընթերցողներին քաղաքականապես վերազինելու խնդիրներին:

Ըստ «Ալիքի» հրապարակումների՝ Էրզրումի նահանգում աճող սերունդը հիմնականում ստանում էր ժամանակի ոգուն համապատասխան կրթություն⁷¹⁶: Ուշադրություն էր դարձվում նաև նրանց ֆիզիկական պատրաստվածությանը՝ առաջնորդվելով «Առողջ միտքը առողջ մարմնի մեջ պետք է փնտրել» կարգախոսով⁷¹⁷: Այդ սկզբունքներով էին կրթվում ու դաստիարակվում, օրինակ՝ Կարինի Ազարյան, Մարյան, Գավաֆյան, Արծրնյան վարժարանների և մանկապարտեզների աշակերտներն ու սաները⁷¹⁸: Պարբերականը տեղեկացնում էր, որ Բաբերդում

⁷¹³ Նույն տեղում:

⁷¹⁴ Նույն տեղում, թիվ 3:

⁷¹⁵ Նույն տեղում:

⁷¹⁶ Նույն տեղում, թիվ 6:

⁷¹⁷ Նույն տեղում:

⁷¹⁸ Նույն տեղում:

կրթասեր առաջնորդ Անանիա ծայրագույն վարդապետ Հազարապետյանի գորակցությամբ և տեղի պատանիների ջանքերով հիմնվել էր «Մահակ-Մեսրոպ» միությունը⁷¹⁹: Դրա նպատակն էր նպաստել երկսեռ պատանիների ֆիզիկական, մտավոր ու բարոյական վիճակի բարելավմանը, հայթայթել չքավոր պատանիների համար գրենական պիտույքներ և աջակցել բարձրագույն վարժարանների մեջ նրանց տեղավորման գործին, բացել գրադարան-ընթերցարաններ, կազմել մարմնամարզական ու դերասանական խմբակներ⁷²⁰: ՀՅԴ Բաբերդի տեղական կոմիտեի ուժերով Լսեռնք հայկական գյուղում բացվել էր ընթերցարան-գրադարան: Այս մասին տեղեկացնում էր Ա. Խալտունին⁷²¹: Օրինակելի էր Կարինի Կարմիր վանքի «Ժառանգավորաց» վարժարանը: 1914 թ. այն ունեցել էր 40 աշակերտ, իսկ 1915 թ. ուսումնական տարվա համար որոշել էին այստեղ բացել 6-րդ դասարան: Վարժարանի ուսուցչական ժողովը պատրաստել էր ուսումնական նոր ծրագիր, որը համապատասխանում էր տեղի պայմաններին և հետապնդում էր 2 նպատակ.

- պատրաստել գյուղական ուսուցիչներ,
- պատրաստել աշակերտներին այնպես, որ նրանք կարողանային ընդունվել միջնակարգ դպրոցի 4-րդ կամ 5-րդ դասարան⁷²²:

«Ալիքի» թղթակիցների լուրերից ու թղթակցություններից միննույն ժամանակ պարզվում էր, որ Բաբերդի և Ալաշկերտի մի շարք գյուղերում բարձիթողի վիճակում էին գտնվում հայկական դպրոցները: Պարույրը կարծիք էր հայտնում, որ թեև Բուլանուխը հայաշատ գավառ էր, սակայն կրթական բարեփոխումների տեսանկյունից հետ էր մնացել մյուս հայաշատ գավառներ

⁷¹⁹ Նույն տեղում, թիվ 2:

⁷²⁰ Նույն տեղում:

⁷²¹ Նույն տեղում:

⁷²² Նույն տեղում, թիվ 7:

րից⁷²³: «Կրթական հաստատությունները եղած են գոմ-դպրոցներ, ուր կը փճանայ մատաղ սերունդը թե՛ ֆիզիքապես և թե՛ բարոյապես: Շէնքը այնքան կարևոր է, որչափ առողջ դաստիարակությունը», - գրում էր «Ալիքի» թղթակիցը⁷²⁴: Ալաշկերտից էլ Թաթուլը հաղորդում էր, որ այդ գավառի դպրոցների ընդհանուր տեսուչ Բաբաջանյանը պարզել էր, թե ինչպես էին ողջ ուսումնական տարվա ընթացքում ժամավաճառությամբ զբաղվել Ալաշկերտի երկսեռ վարժարանի տնօրեն-ուսուցիչ Մանուկ Գույումջյանը և նրա ուսուցչուհի կինը⁷²⁵: Որպես ասվածի ապացույց հիշատակում էր մի քանի փաստ: Տիկին Գույումջյանը մեկ տարվա կտրվածքով հայոց պատմությունից անցկացրել էր ընդամենը 4 դաս: Նա 40 դաս էր հատկացրել ձեռագործի ուսուցմանը, մի առարկա, որը կարևոր էր գավառահայության համար⁷²⁶:

«Ալիքի» խմբագրությունն իրավիճակը շտկելու գործում կարևորում էր ծնողների դերը և նրանց համագործակցությունը կրթօջախների հետ: «Շատ քիչ ծնողներ եղած են, որ այցելած են դպրոց և հազվագիտ ծնողներ, որ հետաքրքրված են իրենց գալակի դաստիարակութեան և յառաջդիմութեան գործով, իսկ հասարակութեան և ծնողներու հսկայ մեծամասնությունը մնացեր է անտարբեր և անհետաքրքիր», - գրում էր պարբերականը⁷²⁷: Այնինչ, ըստ «Ալիքի», աճող սերունդը մեր ժողովրդի հույսն ու ապավենն էր⁷²⁸: Ազգային կրթական ոլորտում նկատվող բացերը շտկելու կոչված ազգային մարմիններն իրենց հերթին ընդունում էին որոշումներ, որոնցով խորացնում էին առկա խնդիրները: Կարինի՝ կրթական ոլորտի համար պատասխանատու ազգային

⁷²³ Նույն տեղում, թիվ 12:

⁷²⁴ Նույն տեղում:

⁷²⁵ Նույն տեղում, թիվ 4:

⁷²⁶ Նույն տեղում:

⁷²⁷ Նույն տեղում, թիվ 6:

⁷²⁸ Նույն տեղում:

վարչությունը կրճատել էր կրթական բյուջեն: Մարալը «բաց հարցումներով» էր դիմում այդ մարմնի անդամներին, թե արդյոք Ազգային Սահմանադրությունը նրանց իրավունք տալի՞ս էր կրթական բյուջեն կրճատելու համար: «Մտածե՛ր էք արդեօք, թե՛ ձեր այդ քայլով ու՞ր կ'առաջնորդեք մեր ժողովուրդը, յե՛տ, թե՛ առաջ, ի՞նչ, կուզեք որ քաղաքական ստրկութեան շղթաներուն հետ կուլտուրական ստրկութեան շղթանե՞րը անցունեք մեր վզին», - հարց էր տալիս հողվածագիրը⁷²⁹: «Ալիքը» համոզված էր, որ ազգային ներքին կյանքում առաջնորդվում էին «դեպի յետ կարգախօտով»: Սկսած կեղրոնէն մինչև յետին գաւառը, նոյն կարգախօտն է, որ կը թագաւորէ: Ամեն կերպ աշխատանք թափւեցաւ, որ խեղդի այն կենսաբեր շունչը, որ գաւառէն ծագում կ'առնէր, որ կամաց-կամաց ժողովրդին ինքնագիտակցութեան, արժանաւորութեան ու արժանապատուութեան շիտակ ըմբռնողութիւն կը ներարկէր», - կարդում ենք Գ. Կոմսիի հողվածում⁷³⁰:

Թերթն անհրաժեշտ էր համարում, որ ազգային մարմինները (դրանց շարքում 1-ին հերթին ուսումնական խորհուրդները) իրենց գործունեությամբ դառնային դեպի գյուղերն ու անտեսված գավառները՝ «փրկելու համար ժողովրդական կրթութիւնը այն տարրերու ձեռքէն, որոնք ոչ միայն ոչինչ չեն հասկնար դպրոցէն ու դպրոցական գործերէն, այլ և հակառակն են անոր»⁷³¹:

«Ալիքը» պահանջում էր, որ ամեն մի գավառական շրջան իր պայմաններին համապատասխանող կրթական ընդհանուր ծրագիր ունենար, որը կկիրառվեր բոլոր դպրոցներում կրթական բավարար մակարդակ ունեցող փորձառու ուսուցչական կազմի կողմից, որոնց աշխատանքը կվերահսկեր շրջիկ ուսումնական տեսուչը⁷³²: Նույն պահանջով էր հանդես գալիս Բաբերդի թղթա-

⁷²⁹ Նույն տեղում, թիվ 6:

⁷³⁰ Նույն տեղում:

⁷³¹ Նույն տեղում, թիվ 11:

⁷³² Նույն տեղում, թիվ 12:

կից Պարույրը՝ պնդելով, որ հենց այդ ամենի բացակայության պատճառով էր ետ մնացել Բաբերդի 27 հայաբնակ գյուղերի կրթական գործը⁷³³: Ազգային մարմինների վերակազմության խնդիրն էր առաջնահերթ⁷³⁴, քանի որ Բարենորոգումների գործադրությունից հետո դրանց գործունեության ծանրության կենտրոնը պիտի փոխադրվեր գավառներ (Մ.Հ.- «Ալիքը» հավատում էր հայկական Բարենորոգումների ծրագրի կենսագործմանը): «Գավառական մեր ազգային մարմինները իրենց շրջանի հասարակական գործերուն վերաբերմամբ մեծ չափով պիտի խաղան այն դերը, ինչ-որ ցարդ վերապահուած էր պատրիարքարանին»⁷³⁵: Ըստ «Ալիքի» խմբագրակազմի՝ ազգային մարմիններում ցանկալի էր ընդգրկել խելահաս և հասարակական ջիղ ունեցող անձանց⁷³⁶: Թերթը, միևնույն ժամանակ, ծանր ու վտանգավոր հարված էր համարում 1914 թ. հունվարին օսմանյան խորհրդարանի ընդունած այն օրինագիծը, որն իրավունք էր տալիս կառավարությանը առայժմ 1 տարով վերացնել նահանգներում վճարված տուրքերը, մասնավորապես ազգությունների՝ իրենց կրթության համար վճարած տուրքը⁷³⁷: Ըստ այդմ, 1914 թ. հունվարի 26-ին թուրքական կառավարությունն իր հերթին ընդունել էր այդ օրինագծից բխող հրամանագիր, որի համաձայն՝ հայ ժողովուրդը չէր կարողանալու տնօրինել կրթական բյուջեին, և կրկին շահելու էր թուրք տարրը⁷³⁸: «Պետական դպրոցներ պատրուակին տակ կը փորձի թուրք տարրի կրթութեան համար ապահովել կրթական տուրքի մեծագոյն տոկոսը և ողորմելի մէկ փշրանքը միայն թողնել, բաժնելու համար զանազան

⁷³³ Նույն տեղում, թիվ 4:

⁷³⁴ Նույն տեղում, թիվ 8:

⁷³⁵ Նույն տեղում, թիվ 9:

⁷³⁶ Նույն տեղում:

⁷³⁷ Նույն տեղում, թիվ 15:

⁷³⁸ Նույն տեղում:

տարբերուն, համաձայն իրենց մասնակցութեան չափին», - գրում էր թերթը⁷³⁹:

«Ալիքի» համար կրթական ոլորտում իրականացվող քաղաքականությունն անընդունելի էր, քանզի Թուրքիայում իրականում պետական դպրոցները թուրքական դպրոցներն էին: «Այդ դպրոցներու մէջ հազիւ հազ հայ գտնուի հարիւրին միայն 1-2 տոկոս, այնինչ այդ դպրոցները իրենց մէջ բաղկացուցիչ բոլոր տարբերէն ալ այնքան ուսուցիչ ու աշակերտներ պիտի ունենան, ինչքանով որ այդ տարբերէն ամեն մէկը կը մասնակցի կրթական տուրքին: Արդարութեան պահանջն է այս: Պէտք է իւրաքանչիւր տարր ստանայ իր վճարած տուրքի արդար ու լիակատար բաժինը», - պնդում էր «Ալիքը»⁷⁴⁰: Կառավարության այս որոշումը թերթը բնութագրում էր որպէս կրթական տուրքից անհատներին հատկացվելիք բաժնի գրավման օրինագիծ⁷⁴¹: Դրանով թուրքական կառավարությունը հարվածում էր հայկական բարենորոգումների ծրագրին, որի գործադրման պարագայում նահանգներից գանձված կրթական տուրքից յուրաքանչյուր տարր իր կրթական գործը կազմակերպելու համար ստանալու էր այդ տուրքին սեփական մասնակցության չափով: Փաստորեն, այս օրինագիծը չեղյալ էր համարում հայկական բարենորոգումների ծրագրի վերոհիշյալ հատվածը, և այդ ծրագիրն արդեն հակասում էր նոր օրենքին⁷⁴²:

Հայկական բարենորոգումների ծրագրից խուսանավելը և դրա իրագործման ձգձգումը զուգորդվում էր հայերի հանդեպ պետական բռնաճնշումների, իրավազրկումների, ալան-թալանի, բռնաձուլման քաղաքականությամբ: «Ալիքը» հրապարակել է այդ ամենը փաստող բազմաթիվ օրինակներ: Դրանք մասնավո-

⁷³⁹ Նույն տեղում, թիվ 11:

⁷⁴⁰ Նույն տեղում:

⁷⁴¹ Նույն տեղում, թիվ 16:

⁷⁴² Նույն տեղում:

րապես տեղեկացնում էին Թուրքիայում դատերի և իրավական վեճերի՝ ի վնաս հայերի լուծման և հողագրավումների մասին: Թղթակցություններից մեկում, օրինակ, տեղեկացվում էր, թե քուրդ Մուստաֆա բեյը բռնագրավել էր Քղիի Ամառիճ գյուղի հայերի արտերը, ծեծել էր սովել ընդդիմացողներին ու նրանց կանանց⁷⁴³: Բացի այդ՝ քրդերը, կառավարության թողսովութ-յամբ, հնձում և իրենց էին վերցնում Ամառիճի հայերի մարգագե-տինների խոտերը: «Կը տեղեկանանք, որ հայերը իրենց սեփա-կան բնակավայրէն վտարելու համար տեղւոյն պատկանեալ իշ-խանութեան կողմէ որոշում եղած է: Այս պատճառով մեծ դէպ-քերու երևան գալը հաւանական է, հետևապէս առաջքն առնելու համար կը փութամ հաղորդել խնդիրը», - գրում էր «Ալիքի» թղթակիցը⁷⁴⁴: Թաթուլը վկայում էր, որ հողային վեճերը շատ էին Բուլանուխում: Տեղական իշխանությունները գրեթե ամեն օր զբաղվում էին դրանց լուծման գործով, թեև՝ հիմնականում հօ-գուտ թուրքերի և քրդերի⁷⁴⁵: Ուտնահարվում էին հայ հողագործ-ների իրավունքները: «Երբ կառավարութիւնը ինքը կը պաշտ-պանէ քիւրդին, և որոշում կը տրւի ի նպաստ անոր, ի՞նչ կը մնայ հային, ձեռքը ծոցը տուն վերադառնալ և լալ իրեն սև օրերը»⁷⁴⁶: Բերում էր օրինակ, թե ինչպես 1895-1896 թթ. համիդյան ջարդե-րից խուսափելու նպատակով Ապրի գյուղից Բարսեղը և Հակոբն իրենց ընտանիքներով գաղթել էին Ռուսաստան: Թուրքիայում սահմանադրական կարգերի հռչակումից հետո վերադառնալով գյուղ՝ նրանք տեսել էին, որ իրենց «շէն շող տները, ախոռները, յարդանոցները և այլն, ամեն ինչ ատերած, գետնին հաւասարեց-ված է»: Դրանք նրանց արտերի հետ գրավել էին տեղի քուրդ շեյ-խերը: Հակոբը և Բարսեղը փորձել էին օրենքի օգնությամբ լուծել

⁷⁴³ Նույն տեղում, թիվ 11:

⁷⁴⁴ Նույն տեղում:

⁷⁴⁵ Նույն տեղում, թիվ 7:

⁷⁴⁶ Նույն տեղում:

այս հարցը, բայց դատական երկարատև քաշքշուկից հետո ոչնչի չէին հասել⁷⁴⁷: Լաթար գյուղում հողավեճերին լուծում տալու համար իշխանությունն ընտրել էր աճուրդի ճանապարհը⁷⁴⁸: Պարույրի կարծիքով՝ հայերը չէին կարողանում իրենց իսկ հողերի աճուրդին մասնակցել, քանի որ չունեին պահանջվող գումարները: Բնական էր, որ նրանք օրենքի ուժով էին զրկվում իրենց պապական հողակտորներից և գաղթում էին բնօրրանից⁷⁴⁹: «Քառասուն տարի առաջ մենք՝ գիւղացիներս, Ռուսաստանի ճամբան չգիտէինք, իսկ այսօր այքը բացողը Ռուսաստանի ճամբան կը բռնէ: Տուն չկայ առանց պանդուխտի, 280 տունէ բաղկացած Ձիթող գիւղը 300 երիտասարդ պանդուխտ ունի: Գիւղացիութեան գոյութեան խարխիւը հողն է: Հողը ձեռքէդ ելաւ՝ օջախդ մարեցաւ՝ կըսէ գիւղացին», - կարդում ենք թղթակցություններից մեկում⁷⁵⁰:

1914 թ. հուլիսի 10-ին «Ալիքը» տպագրել է փաստեր, թե ինչպես էին Թուրքիայում գտել իրենց բնօրրան հայրենիքում հայերի օջախները մարելու նոր եղանակ. մանկական համաճարակներ: Թերթը պատասխանատվության էր կանչում պետական առողջապահական մարմիններին, որոնք անգործության էին մատնված գավառներում և չէին բուժում ԽՆուսի գյուղերում բկացավով ու վարդախտով վարակված մանկիկներին⁷⁵¹: Այդ բնակավայրերում գրանցված մանկական մահացածության մեծաքանակ դեպքերին ուրիշ անուն, քան կոտորած, չէր կարողացել տալ Շ.Արմենը⁷⁵²: «Դրանք սովորական մահեր չեն, այլ աւերածութիւն, հասարակական աղէտ, գիւղերի ամայացում, օճախների աւեր, ընտա-

⁷⁴⁷ Նույն տեղում:

⁷⁴⁸ Նույն տեղում, թիվ 12:

⁷⁴⁹ Նույն տեղում:

⁷⁵⁰ Նույն տեղում, թիվ 10:

⁷⁵¹ Նույն տեղում, թիվ 13:

⁷⁵² Նույն տեղում:

նիքների քայքայում», - գրում էր հողվածագիրը⁷⁵³: Նա բերում էր թվային տվյալներ միայն Խնուսի շրջանում մահացած երեխաների թվաքանակի վերաբերյալ: Ըստ այդմ՝ մի քանի ամսվա ընթացքում Գարա-Չոպան գյուղում 250 տնից մահացել էին 170 երեխա, Գոմ-Գայա գյուղում՝ 50 տնից 25, Մավորի գյուղում՝ 10 տնից 7, Կեովենտուկ գյուղում՝ 130 տնից 55, Կեոբալ գյուղում՝ 100 տնից 110, Խալիլ-Չավուշ գյուղում՝ 110 տնից 60, Շահպատին գյուղում՝ 40 տնից 32 երեխա: «Մա արդեն կոտորած է... Կան տներ, որոնք բոլորովին զրկւել են մանուկ սերունդից, կան ընտանիքներ, որոնք 5-7-13 զոհեր են տւած», - այսպես էր եզրափակում իր վերլուծական հողվածը Շ.Արմենը⁷⁵⁴: Պետական այս քաղաքականությունն, ըստ թերթի, թելադրված էր Թուրքիայի կառավարման կենտրոնացված համակարգով, որին գումարվում էր «ազգայնական կեդրոնացման սիստեմը: Պետական վարիչները չեն կրնայ հաշտւիլ, որ Թուրքիան կրնայ Թիւրքիա ըլլալ, որդեգրելով պետական այնպիսի ձև մը, որ հաստատուած ըլլայ բոլոր ազգերու հաւասարութեան իրաւունքին վրայ: Մեր վարիչներուն մէջ դեկավարող ձգտում մըն է զօրացնել թուրք տարրի քանակական ոյժը և դարձնել Թուրքիան միատարր ու միաձոյլ պետութիւն»⁷⁵⁵:

«Ալիքի» խմբագրությունը, ինչպես կարելի է եզրակացնել թերթում հրապարակված նյութերից, չէր կարող պատկերացնել անգամ, որ հայ ժողովրդի հանդէպ իր բնօրրանում ոչ միայն կիրագործվեր թուրքական պետության կողմից մշակված ցեղասպանություն, այլև հայությունը կզրկվեր իր պատմական հայրենիքից:

⁷⁵³ Նույն տեղում:

⁷⁵⁴ Նույն տեղում:

⁷⁵⁵ Նույն տեղում, թիվ 1:

**Կ. ՊՈԼՍԻ «ԱԶՍՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԸ
(1909-1915 ԹԹ.)**

ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի «Ազատամարտ» պաշտոնաթերթի աշխատակազմը ներկայացնելը, որոշ առումով, բարդ է այն պատճառով, որ աշխատակիցների (հաստիքային և արտահաստիքային) թիվը բավական մեծ է եղել ու պարբերաբար փոփոխվել է⁷⁵⁶: Եղել են աշխատակիցներ, ովքեր իրենց պարտականությունները կատարել են աշխատավայրում մինչև օրաթերթի վերջին համարի լույս ընծայման օրը՝ 1915 թ. ապրիլի 24-ը⁷⁵⁷:

«Ազատամարտի» արտոնատերը, պատասխանատու տնօրենն ու խմբագիրն էր արևմտահայ անվանի հասարակական-քաղաքական գործիչ, արձակագիր Ռուբեն Չարդարյանը: Այդ տարիներին ՀՅԴ Արևմտյան Բյուրոն խոհեմաբար է վարվել՝ «Ազատամարտի» խմբագիր ընտրելով Ռ. Չարդարյանին, քանզի հիմնականում նրա շնորհիվ այն չի վերածվել նեղ-կուսակցական թերթի: «Թերթը իր շնորհիւ կուսակցութեան մը օրգանը չեղաւ միայն, այլ՝ հայ ժողովուրդի առողջ բնագոյներուն ամբողջական արտայայտութիւնը, հայ մտքին ճիգերուն ասպարեզը», - կարդում ենք «Հայրենիք» ամսագրում⁷⁵⁸:

Ռուբեն Չարդարյանը ծնվել է 1874 թ. Խարբերդում: Ավարտել է տեղի Ազգային վարժարանը: 1892-1903 թթ. աշխատել է Խարբերդի Կեդրոնական վարժարանում որպես ավագ ուսուցիչ՝ դասավանդելով հայոց լեզու, հայ գրականություն և հայ ժողովրդի պատմություն: 1904 թ. տեղափոխվել է Իզմիր, որտեղ շուրջ մեկ տարի եղել է Մանիսայի Ազգային վարժարանի տեսուչը: Բազմակողմանիորեն կրթված, մի քանի լեզվի տիրապետող, 17 տարեկանից գրասեր հասարակայնությանը հայտնի Ռ. Չար-

⁷⁵⁶ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 9, էջ 112-120, 1925, թիվ 3, էջ 28-44:

⁷⁵⁷ Նույն տեղում, 1924, թիվ 12, էջ 115-137:

⁷⁵⁸ Նույն տեղում, 1924, թիվ 3, էջ 67-71, թիվ 5, էջ 93-97:

դարյանը գրել է դպրոցական դասագրքեր, զբաղվել թարգմանությամբ: Նրա հրապարակախոսական հոդվածները և գրական ստեղծագործությունները (հեքիաթներ, նովելներ, արձակ բանաստեղծություններ) 1890 թվականից տպագրվել են արևմտահայ մամուլում: 1910 թ. Կ.Պոլսում հրատարակվել է նրա անդրանիկ և միակ գրական ժողովածուն՝ «Ցայգալույսը», որը 1912 թ. լույս է տեսել նաև Փարիզում Ա. Չոպանյանի, Է. Գոլանճյանի, Ջ. Եսայանի՝ ֆրանսերեն թարգմանությամբ⁷⁵⁹:

Ռ. Ջարդարյանը ենթարկվել է ոստիկանության հետապնդումների, բանտարկվել է և ազատ արձակվելով՝ մեկ այլ ձերբակալությունից խուսափելու նպատակով 1905 թ. Իզմիրից փախել է Բուլղարիա: Պլովդիվ քաղաքում 1905-1908 թթ. հրատարակել ու հայրենիքում տարածել է «Ռազմիկ» թերթը: Նա հմուտ խմբագիր էր և քաղաքական պայքարի բովով անցած գործիչ: Հիշյալ արժանիքները նպաստել են այն բանին, որ 1908 թ. վերադառնալով Կ. Պոլիս՝ Ռ. Ջարդարյանն ստանձնել է «Ազատամարտի» խմբագրի պաշտոնը: Նա երբեմն տպագրվել է «Աչք Եհովայի» և «Էժտահար» ծածկանուններով: Ռ. Ջարդարյանը «Ազատամարտ» օրաթերթում հրատարակվելու հնարավորություն է ստեղծել ոչ միայն հայ մտավորականության հանրաճանաչ ներկայացուցիչների, այլև շնորհալի երիտասարդ ստեղծագործողների համար՝ պնդելով. «Ցաճախ չսպասուած ժայռէն ջուր կցայտէ»⁷⁶⁰:

«Ազատամարտի» վարչական հոգսերով զբաղվել են Կարապետ Փաշայանը, Սարգիս Օհանջանյանը (Ֆարհատը) և Հայկ Թիրյաքյանը (Հրաչը): Վերջինս թերթի մատակարարությունը վարել է մինչև նրա փակման օրը: «Ազատամարտի» խմբագրական քարտուղարությունը փոխեփոխ ստանձնել են Գեղամ Բարսեղյանը, Շավարշ Միսաքյանը, Հակոբ Միրունին: Թերթի հիմնական աշ-

⁷⁵⁹ «Սովետական գրականություն» ամսագիր, Երևան, 1966, թիվ 11, էջ 129-142:

⁷⁶⁰ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1925, թիվ 3, էջ 29-32, 40-43, 1924, թիվ 11, էջ 107-115:

խատակիցներն էին Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունին), Հարություն Շահրիկյանը (Ատոմը), Գեղամ Բարսեղյանը, Բարսեղ Շահբազը, Գասպար Իփեքչյանը, Ներսես Փափազյանը:

«Ազատամարտի» աշխատակիցները պարբերաբար փոխվել են: Թերթի ստեղծման աշխատանքներին մասնակցել են Լ. Մոզլանը, Ս.Զավարյանը, Հ.Համբարձումյանը, Ս.Սրենցը, Ռ.Դարբինյանը, Ռ.Լեռնյանը, Ա.Խաչատրյանը, Ս.Մինասյանը, Հ.Մանուկյանը, և այլք: Խմբագրական մարմնի մեջ ընդգրկված էին 6 անդամ, ովքեր վարչության 3 անդամների հետ ղեկավարել են թերթը: «Ազատամարտն» ունեցել է թարգմանիչներ, լրագրողներ, թղթակիցներ (այդ թվում՝ արտահաստիքային) աշխարհի տարբեր մասերում: Ռ. Զարդարյանն «Ազատամարտում» հրատարակվելու հնարավորություն էր ստեղծել ոչ միայն հայ մտավորականության հանրաճանաչ ներկայացուցիչների, այլև՝ շնորհալի երիտասարդ ստեղծագործողների համար:

Թերթում հանդես է եկել հայ մտավորականության սերունդը՝ Գ.Զոհրապը, Դ.Վարուժանը, Սիամանթոն, Ավ.Իսահակյանը, Լ.Շանթը, Ռ.Սևակը, Ա.Ահարոնյանը, Գ.Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ), Գ.Խաժակը, Ա.Վռամյանը, Մ. Կյուրճյանը, Մ. Վանոյանը և այլք:

«Ազատամարտը» հրատարակվել է այլ անուններով՝ «Առաջամարտ» (1912թ.), «Բյութանիա» (1912-1913 թթ.), «Ազդակ» (1912-1913 թթ.), «Բագին» (1912 թ.), «Մեղու» (1913 թ.), «Շանթ» (1913-1914 թթ.) և «Ճակատամարտ» (1914 թ.)⁷⁶¹:

⁷⁶¹ «Հայոց պարբերական մամուլը», Երևան, 1934, էջ 57: «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն», Երևան, 1970, էջ 34:

Մեր կազմած մատենագիտական ցանկն այսպիսին է. 1909 թ. հունիսի 10-ից մինչև 1912 թ. նոյեմբերի 5-ն՝ «Ազատամարտ», 1912 թ. նոյեմբերի 5-ից թիվ 1, 2, 3, 4 (թիվ 1051)՝ «Առաջամարտ», 1912 թ. թիվ 1052-1062՝ «Բյութանիա», 1912 թ. նոյեմբերի 18-ից (թիվ 1063) մինչև դեկտեմբերի 23-ը (թիվ 1093)՝ «Առաջամարտ», 1912 թ. դեկտեմբերի 24-ին (թիվ 1094)՝ «Ազդակ», 1912 թ. դեկտեմբերի 25-ից (թիվ 1095)

Օրաթերթը զարկ է տվել հայրենի գրականության բարգավաճմանն ու հայ գիրը հասցրել է Հայկական գավառի կամ Արևմտյան Հայաստանի ամենախույ անկյունները՝ նաև որպես դասագիրք օգտագործվելով հեռավոր գյուղերում⁷⁶²:

«Ազատամարտը» տպագրվել է Բերայի Ենի Չարշը փողոցում, թիվ 32 հասցեում այդ նպատակով կառուցված Ատոմ Շահենի տպարանում: Նույն շենքում էր ՀՅԴ պաշտոնատեղին: Հետագայում՝ 1910 թ., երբ կուսակցությունը բացել էր սեփական տպարանը (տնօրեն՝ Հայկ Թիրյաքյան) Համալ Պաշը փողոցի թիվ 74 շենքում, այնտեղ էին փոխադրվել ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի գրասենյակը, «Ազատամարտի» խմբագրությունը և տպարանը (խմբագրության գեոնահարկ նկուղում)⁷⁶³: Այդ շենքից էին 1915 թ. ապրիլի 24-ի կեսգիշերին ձերբակալել ու բանտարկել «Ազատամարտի» վերջին՝ (թիվ 1815) այդպես էլ լույս չտեսած համարի վրա աշխատող հերթապահ խմբագրին, գրաշարին, մեքենավարին, բեռնակրին և դոնապանին: Թերթի մնացած աշխատակիցներին (գրեթե բոլորին) ձերբակալել էին իրենց բնակարաններում: Նրանց ճակատագիրն արդեն կանխորոշված էր. նահատակություն մնացյալի հետ: Խմբագրության շենքը բռնագրավել ու թալանել էին հենց կեսգիշերին (այդ թվում՝ դրամարկում գտնված 400 ոսկին, «Ազատության մատենադարանի» գրքերի պահեստը)⁷⁶⁴: Ապրիլի 24-ին ձերբակալվածների ու նահատակվածների թվում էր նաև Ռ. Զարդարյանը: 1915 թ. մարտին նա հրաժարվել էր հեռանալ արտերկիր՝ փրկելու կյանքը՝ այսպես պատասխանելով Թուրքիայից հեռանալու առաջարկով

մինչև 1913 թ. հունվարի 12-ը՝ «Բյութանիա», 1913 թ. հունվարի 12-15-ը՝ «Ազդակ», 1913 թ. հունվարի 15-ից՝ «Ազատամարտ»:

⁷⁶² «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 9, էջ 118:

⁷⁶³ Նույն տեղում:

⁷⁶⁴ Նույն տեղում, 1924, թիվ 12, էջ 115-137:

իրեն դիմած գործընկերոջը. «Ես «Ազատամարտի» գլուխը պետք է ըլլամ մինչև իր վերջին օրը»⁷⁶⁵:

«Ազատամարտի» կարծիքով, որպես քաղաքական կուսակցության պաշտոնաթերթ, ինքն ուներ առաքելություն. նպաստել արդարության, ժողովրդավարության և սահմանադրական կարգերի հաստատմանը Թուրքիայում⁷⁶⁶: 1909 թ. հունիսի 10-ի անդրանիկ համարի խմբագրականում կարդում ենք, որ օրաթերթը, իբրև գաղափարական, շիտակ ու ժողովրդանվեր մամուլի ներկայացուցիչ, դեկավարվելով «Ամեն ինչ ժողովրդի համար և ժողովրդի միջոցով» նշանաբանով, ձգտելու էր օսմանահպատակ ազգերի իրավահավասար գործակցությանը, պետության բարենորոգմանը, արևմտահայության կենսամակարդակի բարձրացմանը⁷⁶⁷: «Ազատամարտն», այս ամենին զուգահեռ, լինելու էր հայ մտավորականության ժամադրավայրն ու նրանց հուզող խնդիրների արտահայտիչը⁷⁶⁸: «Ազատամարտի» վեցամյա գործունեությունը մեզ համոզում է, թե այն որքա՛ն հավատարիմ էր մնացել իր սկզբունքներին: «Ազատամարտն» եղել է սիրված ու գնահատված թերթ՝ ուրույն դիմագծով: Դրանում, անշուշտ, դեր էր խաղացել ՀՅԴ-ի գործելակերպը: Այդ տարիներին Դաշնակցությունն ուներ պատգամավորներ օսմանյան խորհրդարանում, ներկայացուցիչներ Ազգային ժողովում: Բնական է, որ, իբրև ՀՅԴ-ի պաշտոնաթերթ, «Ազատամարտը» գտնվել է կառավարական շրջանների ուշադրության կենտրոնում, որոնք հաշվի են առել նրա կարծիքը պետական կարևորության հիմնախնդիրներով զբաղվելիս⁷⁶⁹:

⁷⁶⁵ Նույն տեղում, 1925, թիվ 3, էջ 28-44:

⁷⁶⁶ «Ազատամարտ», 1909, թիվ 7:

⁷⁶⁷ Նույն տեղում, թիվ 1:

⁷⁶⁸ Նույն տեղում, թիվ 3:

⁷⁶⁹ Վարանդյան Ս., «Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն», Գահիրէ, 1950, հ. 2-րդ, էջ 22:

Թուրքական թերթերը հաճախ էին թարգմանաբար արտատպում «Ազատամարտի» խմբագրականները: Թուրք հասարակությանը ՀՅԴ տեսակետներին ծանոթացնելու միտումով 1911 թ. թիվ 525-ից թերթում անգամ բացվել էր թուրքերեն լեզվով բաժին: Այդտեղ տպագրվում էին «Ազատամարտի» նախորդող օրվա խմբագրականները, կարևոր հրապարակումներից մեկն ու մեկը և այլն: Թերթին բաժանորդագրված էին բազմաթիվ այլազգիներ, թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, պալատական ապարատի անդամներ, որոնց ուղարկվող օրինակները տպագրվել են ավելի որակյալ թղթի վրա⁷⁷⁰:

1915 թ. «Ազատամարտը» հայտնվել էր թուրքական հալածանքի կիզակետում իր խիզախ հրապարակումների պատճառով: 1915 թ. ապրիլի 10-ին Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթը տեղեկացնում էր, որ թուրքական իշխանությունների հրահանգով փակվել էր Կ.Պոլսի «Ազատամարտը»: Տպագրում էր նաև թերթը փակել տալու պատճառները: Ահա թե ի՛նչ էր մասնավորապես գրված Կ.Պոլսից Արլոյի ուղարկած հեռագրում. ««Ազատամարտը» առանձնապես հալածանքի առարկայ էր, չնայած նրա շատ քորրեկտ դիրքին: Ամեն մի բառը գեշ մեկնում և թշնամական էր ընդունում: Թիրքերի համար բաժակը լեցեց, երբ մարտի համարներից մեկում լոյս տեսաւ մի նկարը՝ նոթինակութիւն մի գերմանական հանդէսից, որը ցոյց էր տալիս, թէ ի՞նչպէս անգլիական զրահաւորները նոր տեսակ երկաթաթել ցանցերով շրջապատւած վերնից, յաջող կերպով պաշտպանւում են թշնամու ռումբերից: Թէև ցենզուրան թոյլ էր տւած, բայց գլխաւոր շտաբը կատաղեց և դրա մէջ տեսաւ իբրև վատ դիտում Տարտանէլում օսմ. փառապանծ թնդանօթածիզների հերոսութիւնը հերքելու, ուստի ահագին աղմուկ բարձրացրեց և վրէժխնդիր

⁷⁷⁰ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 12, էջ 116-121:

եղաւ, արքայազն Վառլանը պատասխանատու տնօրէնը, որ վերջերս դռքթ. Կ. Փաշայեանն էր»⁷⁷¹:

«Ազատամարտն» անդրադարձել է արևմտահայերի ներքին կյանքի հիմնախնդիրներին, Ազգային խորհրդի, թաղապետարանների, Պատրիարքարանի, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությանը: Ընդ որում, վերլուծություններն արվել են անկողմնակալ: Սա եղել է օրաթերթի գործելակերպի անկյունաքարը: Իր հիմնադրման տարեդարձին նվիրված խմբագրականում «Ազատամարտը» հայտնում էր, թե մեկ տարվա ընթացքում երկար շարք կազմող հարցերը քննարկել էր անկեղծությամբ, հետևողականորեն, սկզբունքայնությամբ: «Պաշտպանեցինք ոչ թե մարդկանց, այլ՝ սկզբունքները, այն է՝ իրենց կիրառութեան մեջ», - ասվում էր հոդվածում⁷⁷²: Թերթը պաշտպանել էր հայ ժողովրդի շահերը, վեր էր հանել ներազգային հիմնահարցերը՝ դրանցից ձեռքազատվելու նպատակով: «Մեր ազգային վարչական մեքենան» հոդվածում Հ. Շահրիկյանը գրում էր, որ վարչական մեքենայի կենտրոնական ու գավառական մարմինների անդամները սովորաբար ընտրվում էին պատահականությամբ: Նրանց մեջ չէին լինում որոշակի ծրագրեր ունեցող խմբակցությունների ներկայացուցիչներ, ովքեր իրենց գործունեության ընթացքում պիտի աշխատեին իրականացնել այս կամ այն ծրագիրը: Նրանց մեծ մասն իր առօրյա բան ու գործը գերադասում էր նիստերին ներկա գտնվելուց: Քվորումի բացակայության պատճառով շաբաթական 23 նիստ գումարելու փոխարեն կայանում էր երկշաբաթյա մեկ նիստ, որը սպառվում էր գրանցման, քննարկվելիք հարցերի ընթերցման, վիճաբանությունների վրա: Նիստը փակվում էր՝ սեղանի վրա թողնելով բազմաթիվ թղթեր, խնդիրներ, որոնք ամիսներ շարունակ սպա-

⁷⁷¹ «Հորիզոն», Թիֆլիս, 1915, թիվ 76:

⁷⁷² «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, թիվ 304:

սում էին իրենց լուծմանը: Հողվածի հեղինակը կարծում էր, որ անհրաժեշտ էր ճիշտ ընթացք տալ ազգային վարչական մեքենային: Թեև դժվար, բայց անհնարին չէր գտնել նման միջոցներ⁷⁷³: Կյանքում հակառակն էր կատարվում: Թերթն Ազգային ժողովի գործունեությունը համարում էր ամուլ: Եվ դա այնպիսի ժամանակահատվածում, երբ 1911թ. վերջերից սկսած՝ ուժեղացել էր հայահալած քաղաքականությունը, և կարիք էր զգացվում ազգային ուժերը համախմբելու և միասնականորեն պայքարելու:

«Ազատամարտն» ընթերցողների ուշադրությունը մշտապես բևեռում էր առաջնահերթ հիմնահարցի վրա: Դա բնօրրանի հայաթափմանը նպաստող գաղթի ալիքն էր: Թերթը թվարկում էր գաղթականության դրդապատճառները, դրանից ծնվող անցանկալի հետևանքները և հորդորում ժողովրդին՝ «մնալ իր հողին վրայ», քանզի «գաղթը սպաննիչ» էր⁷⁷⁴: Ինչքան էլ անտանելի տնտեսական, քաղաքական հանգամանքները հարկադրեին, հայը չպիտի լքեր հայրենիքը, որովհետև առանց հայի չկար Հայաստան: Նա պիտի մնար և մտածված գործելակերպով, ինքնուրույնաբար կառավարեր ինքն իրեն⁷⁷⁵: Այսպես էր կարծում օրաթերթը:

«Ազատամարտի» համոզմամբ՝ գաղթի դրդապատճառների հիմքում ընկած էր հողային հարցը: Չենք կարող մատնացույց անել որևիցե համար, որում թերթը գոնե 1 հողված կամ լուր տպագրած չլիներ այս խնդրին առնչվող: Հողային հարցն այնքան էական ու կարևոր էր համարվել, որ հենց հրատարակման 1-ին տարում 118-143-րդ թվերում հողվածաշար էր տպագրվել «Պետական վերանորոգությունն ու հողային հարցը» խորագրով: Հեղինակը՝ Ատոմը, գրում էր, որ բռնության և հալածանքի հետևանքով հայկական շատ գավառներ դատարկվել էին, և հողերն անցել էին քուրդ ու թուրք ազգաբնակչությանը: Թվարկվում էին այդպիսի

⁷⁷³ Նույն տեղում, 1909, թիվ 4:

⁷⁷⁴ Նույն տեղում, 1909, թիվ 6:

⁷⁷⁵ Նույն տեղում, 1909, թիվ 13:

գավառներից Վանի վիլայեթում՝ Նորտուզը, Ադրակը, Գավառը, Բիթլիսի վիլայեթում՝ Մդերդը, Խիզանը, Մոսկանը, Խոյթը, Մանազկերտը, Էրզրումի վիլայեթում՝ Խնուսը, Ալաշկերտը և այլն: Ասվում էր, որ հողային գրավումները լայն չափեր էին ստացել հատկապես համիդյան վարչակարգի օրոք: Ներկայացվում էին դրանց կատարման միջոցներն ու կերպերը: Թվարկենք մի քանիսը.

1. անհատական բռնություններ. քուրդ աղան կամ բեկը հաճախ կառավարական պաշտոնյաների աջակցությամբ կամ թույլտվությամբ բռնի ուժով արևմտահայերին քշել էին իրենց սեփական հողերից ու տիրացել դրանց, իսկ ունեզրկված հայ ընտանիքը կամ համայնքը դարձել էր գաղթական,

2. կառավարական բռնություններ. առանց փոխարժեքը վճարելու՝ կառավարությունը բռնությամբ գրավել էր արևմտահայերի հողաբաժինները և դրանք տվել էր դրսից Թուրքիա եկող մահմեդական մուհաճիբներին, ինչի հետևանքով նախկին հողատեր կամ հայ գյուղացին դարձել էր գաղթական կամ հողագուրկ վարձու մշակ,

3. պաշտպանության անհրաժեշտությունը. այլազգի հարստահարիչներից որոշ չափով պաշտպանվելու համար արևմտահայ գյուղացին ուրիշ այլազգու պաշտպանությանն էր ապավինել՝ նրան տալով իր հողերի լավագույն մասը՝ միաժամանակ դառնալով պաշտպանի հպատակն ու հարկատուն,

4. կեղծիքը. քուրդ բեկերն ու աղաները կարողացել էին փաստաթղթերի կեղծմամբ իրենց անունով դարձնել այն հողերը, որոնց տերերը բացակայել էին երկար տարիներով,

5. ահռելի չափերի հասնող պարտատոկոսները, որոնց դիմաց հայ գյուղացին սովորաբար վերջնահաշվում տվել էր իր հողակտորը:

Հողային հարցն, ըստ հողվածագրի, անհնար էր լուծել Թուրքիայի հողային օրենքով: «Ազատամարտը» ներկայացնում

էր կառավարության ձեռնարկները՝ խնդիրը լուծելու ուղղությամբ, բայց հասկացնում էր, որ դրանք՝ այդ մեկ-երկու քայլերը, պարզապէս աչքակապություն էին: «Հողային հարցի շուրջ» խմբագրականում գրում էին, որ կառավարությունը մի կողմից՝ ընդունում էր հողավեճը «հարթող» որոշումներ, մյուս կողմից՝ աչքը փակում, չտեսնելու էր տալիս դրանց կեղծումները⁷⁷⁶: Խոսքը վերաբերում էր Վանի և Բիթլիսի վիլայեթներին, որտեղ օրըստօրէ խորանում էր ծագած հողային վեճը: Նախորդ վարչակարգի թուլտվությամբ Թուրքիայում բռնությամբ հայերից զավթվել էին ընդարձակ հողատարածություններ, և այժմ իշխանությունները փորձում էին օրինականացնել այդ հափշտակումները: Ներքին գործերի նախարարությունը հրահանգել էր, որ Վանի և Բիթլիսի վիլայեթներում ամենահին փաստաթղթեր՝ «թափու-սէնէտի» ունեցողները նկատվեին իրավատեր, իսկ մնացած դեպքերում հարցը պիտի լուծվեր դատարաններում: Իրականում հողահափշտակիչները համագործակցելով տեղի պաշտոնյաների հետ՝ կաշառքով, սպառնալիքով ու բռնությամբ ձեռք էին բերում հին կամ նոր «թափու-սէնէտի» և դառնում վիճահարույց հողատարածքի օրինական տերերը: Նման գործարքների հետևանքով Մուշի ու Բուլանուխի շրջաններում լցվել էին 30 հազարից ավելի հայ գաղթականներ: Նրանք այս կամ այն գյուղի նախկին բնակիչներն էին, որ համիդյան ջարդերից ապաստանել էին արտերկրում: Այդ ընթացքում քրդերը և թուրքերը խլել էին նրանց հողերը, տուն ու տեղը և գտնելով կալվածագրեր՝ տիրացել էին այդ գյուղերին: Նույն վիճակում էին Սասունի Կելիկենման և Կելիկուզան գյուղերը:

Թերթը Թուրքիայում գոյություն ունեցող հողային և մնացած հիմնահարցերի, ի թիվս որոնց մասնավորապէս կրթական ու զինվորական խնդիրների, չլուծված մնալու համար պատասխա-

⁷⁷⁶ Նույն տեղում, 1909, թիվ 128:

նատու էր համարում կառավարությանն ու իշխանություններին: «Ազատամարտը» հրապարակումների միջոցով անդրադառնում էր հայեցի դաստիարակության ու կրթության խնդիրներին: Կառավարությունը ոչ միայն չէր աջակցում հայկական դպրոցների բարեկարգման գործընթացին, այլև ամեն կերպ խանգարում էր: 1912 թ. դեկտեմբերի 23-ի համարում տեղեկացվում էր, որ համաձայն Բարձր Դռան նոր հրահանգի՝ վերացվում էին հայկական դպրոցների պետական վճարները. «Կառավարութիւնը ներկայ տարվայ բյուջեից ջնջել է ոչ իսլամների ու կրթության հատուկ բաժինը»⁷⁷⁷: 1911 թ. թիվ 481-ի խմբագրականում մտահոգություն էր հայտնվում ազգային վարժարանների նկատմամբ - պետական վերաբերմունքի առնչությամբ: Գավառներից բողոքում էին, որ կրթական տեսուչները վարժարաններին հատկացված պետության կրթական վճարները վերջիններին տալու փոխարեն պահանջում էին անձամբ վճարել ուսուցիչներին և գրաքննության էին ենթարկում հայ վարժարանների դասագրքերը: «Ազատամարտն» այս երևույթը որակում էր որպես մեր վարժարանների ներքին ինքնավարության խախտման հակապետական ուղի: «Գահավեժ քաղաքականություն» հոդվածից պարզվում էր, որ ըստ օսմանյան խորհրդարանի որոշման՝ ազգային վարժարանները զրկվում էին ներքին ինքնավարությունից⁷⁷⁸: Նրանց վկայականները արժեզրկվում էին, և նրանք պարտավորվում են կառավարության վավերացմանը ենթարկել իրենց ծրագրերը, կառավարական հանձնաժողովում նախնական քննության անցկացնել ուսուցիչներին, որտեղ ստացած վկայականներով կվավերացվեր նրանց պաշտոնավարությունը: «Սա պետական անքաւելի յանցանք է, որն արթնացնելու է միջցեղային թշնամութիւն», - գրում էր «Ազատամարտը»⁷⁷⁹: Թերթը լուր էր

⁷⁷⁷ «Ազդակ», Կ.Պոլիս, 1912, թիվ 1094:

⁷⁷⁸ «Ազատամարտ», 1911, թիվ 482:

⁷⁷⁹ Նույն տեղում:

տպագրել խորհրդարանի այն որոշման մասին, որով օրենքները հրատարակվելու էին միայն պաշտոնական լեզվով՝ թուրքերենով: «Որո՞ւ համար են օրենքները», - հարց էր տալիս «Ազատամարտը»⁷⁸⁰: Պահանջ էր առաջ քաշում, որ վերջ տրվեր պետական այն քաղաքականությանը, որը դժվարացնում կամ անհնար էր դարձնում պետական վարժարաններում (հատկապես մասնագիտական ուղղվածություն ունեցողներում) ոչ իսլամների մուտքը և ընդունելությունը⁷⁸¹: Հույս դնել, թե պաշտոնական մարմինները կբարեկարգեին ազգային դպրոցները, ինքնախաբեություն էր. այս կարծիքն էր ձևավորում ընթերցողների շրջանում «Ազատամարտը»: Թերթը գտնում էր, որ կրթական բարեփոխման համար պիտի շահագրգռված լինեին եթե ոչ պետական մարմինները, ապա՝ արևմտահայերը, մասնավորապես ծնողները՝ հարկադրելով թաղական խորհուրդներին շարժվել, գործ անել. «Մենք՝ հայերս, ի՞նչ արեցինք ազգային վարժարանների ու կրթութեան վերածնութեանն ի նպաստ: Բա՛ն մը չըրինք»⁷⁸²: 1911 թ. թիվ 661-ի խմբագրականում կարդում ենք. «Դժգո՞հ ենք մեր դպրոցներէն: Երկու կարծիք չկայ այս խնդրում: Դարմա՞նը. ահա թէ ինչ կը փնտրւի»: «Ազատամարտը» փորձում էր ճշտել հիմնահարցերի առաջացման պատճառները: Դրանցից առաջինը հայկական դպրոցների բյուջեի անձուկ կացությունն էր: Անհրաժեշտ էր կարգավորել վանական կալվածքների մատակարարությունը և դրանց հասույթը հատկացնել կրթական գործին: Անհրաժեշտ էր նաև դպրոցների բյուջեն միացնել շրջան առ շրջան՝ մեկ տեսչության մեջ և ըստ այնմ՝ բաշխել նախնական, երկրորդական ու միջնակարգ-բարձրագույն վարժարանների միջև: Թերթն առաջարկում էր վանքերի մատակարարությունը ենթարկել համայնական հսկողության՝ այն գործա-

⁷⁸⁰ «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1911, թիվ 507:

⁷⁸¹ Նույն տեղում, 1910, թիվ 362:

⁷⁸² Նույն տեղում, 1912, թիվ 937:

ծելով հոգուտ համայնքի պահանջների, ի մասնավորի՝ կրթական գործին: Ընդ որում, այն լուծելու համար Ազգային ժողովին հուշում էր մոտեցման 3 ճանապարհ.

1. ընտրել Եվրոպայում կրթությունն ստացած մանկավարժների հանձնախումբ՝ ուսումնասիրելու համար Կ.Պոլսի և գավառների դպրոցների ընդհանուր վիճակը և արվածի հիման վրա մշակել կրթական բարեփոխումների ծրագիր,

2. ընտրել 2-րդ հանձնախումբ, որը կուսումնասիրեր կրթական գործի նոր նյութական աղբյուրները՝ հատկապես նկատի ունենալով վանապատկան ու եկեղեցապատկան եկամուտները,

3. կրթական բյուջեն բաշխել ազգային բոլոր վարժարաններին՝ ընդհանուր և համաչափ կարգով⁷⁸³:

1909 թ. իր գրեթե բոլոր համարներում «Ազատամարտն» անդրադարձել է Ադանայի կոտորածին, քննիչ հանձնաժողովների գործունեությանը, նրանց կազմած զեկուցագրերին և ՀՅԴ-ի դիրքորոշմանն այս խնդրում: Կարելի է փաստել, որ ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնաթերթն Ադանայի կոտորածից հետո ի պաշտոնե էր ընդունել Դաշնակցության դիրքորոշումն երիտթուրքերի հանդեպ և հնարավորինս զուսպ էր եղել գնահատականների մեջ: Ի դեպ, «Ազատամարտը» 1909 թ. թիվ 4-ից սկսած՝ տպագրել է Սիամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամիս» շարքը⁷⁸⁴: «Ազատամարտը» տպագրել է Ադանա, Թարսուս, Մերսին, Դյորթյոլ քաղաքներում ՀՅԴ բժշկական և փաստաբանական մասնախմբերի զեկուցագրերը⁷⁸⁵: Դրանք ահագանգում էին կատարված ոճիրների, եղեռնից փրկվածների անմխիթար կացության մասին: Թերթը թերի էր համարում Ադանայի զինվորական ատյանի աշխատանքը. «Անոնք ևս, ինչպես եղած է մինչև այժմ, կը քննեն գործերն ու անձերն ոչ թե արդարութեան, այլ

⁷⁸³ Նույն տեղում, 1911, թիվ 661:

⁷⁸⁴ Նույն տեղում, 1909, թիվ 4, 8, 16, 27, 45 և այլն:

⁷⁸⁵ Նույն տեղում, 1909, թիվ 9, 10, 38, 83:

քաղաքական պարագաներու տեսանկյունից: Ծանր ու ցաւալի է այս իրողութիւնը»⁷⁸⁶: Ադանա էին ուղարկվել օսմանյան խորհրդարանի և կառավարության հանձնաժողովները: «Ազատամարտը» տեղեկացնում էր, որ խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Հակոբ Պապիկյանը «կարգ մը պատճառներով, որոնց մէջ նաև՝ առողջական, թողուցած է Ատանան և ճամբայ ընկած դէպի Պոլիս»⁷⁸⁷: Մեկ-երկու օրից «Ազատամարտը» թարգմանաբար արտատպել էր «Իթթիհատի» թղթակցի հարցազրույցը Հ. Պապիկյանի հետ: Հայ պատգամավորն ասում էր, որ հանձնաժողովն այլևս անելիք չունէր. «Ըստ իս՝ քննելիք բան չը մնաց»: Լրագրողի հարցին, թե կոտորածի կազմակերպիչն ո՞վ էր, նա պատասխանում էր. «Բռնապետութեան կուսակիցները: Թէև կառավարութիւնը մասնակցութիւն չունի, սակայն ինք պատճա՛ռ տւած է: Ամեն պարագայի մէջ տեղական կառավարութիւնը մասնակցութիւն ունի»⁷⁸⁸: Թվարկում էր նաև կոնկրետ անուններ⁷⁸⁹:

1909 թ. հուլիսի 4-ին տարածվում է Ադանայի կոտորածի հետաքննության զինվորական աստյանի կազմած տեղեկագիրը: «Ազատամարտն» այն որակում էր որպէս գրպարտություն հայերի դեմ. «Մեղաւորը հայերն են: Այսպէս կ'ըսէ զինուորական ատեանը: Բայց այդպէս չեն ըսեր փաստերը»⁷⁹⁰: Թերթը թիվ 25-ի «Անարդար վճիռներ» խմբագրականում կառավարությունից պահանջում էր պաշտոնական զեկուցագրով հերքել զինվորական աստյանի տեղեկագիրը և սկսել դատական գործընթաց՝ մեղավորներին պատժելու նպատակով, քանի որ արդեն կային քննիչ հանձնաժողովների կատարած քննությունների արդյունք-

⁷⁸⁶ Նույն տեղում, 1909, թիվ 8:

⁷⁸⁷ Նույն տեղում, 1909, թիվ 11:

⁷⁸⁸ Նույն տեղում, 1909, թիվ 13, 48:

⁷⁸⁹ Նույն տեղում, 1909, թիվ 48:

⁷⁹⁰ Նույն տեղում, 1909, թիվ 22:

ների ամփոփումները⁷⁹¹: Եվ հենց այստեղ էր, որ երիտթուրքերն, ասես, քաղաքական խաղի մեջ էին ներքաշել Դաշնակցությանը: Իթթիհատն առերես հրապարակավ հատուկ շրջաբերականով հայտարարում էր, որ հայերն անմեղ էին, և Ադանայի կոտորածի մեղքն ընկնում էր հակասահմանադրական տարրերի ու տեղի կառավարող մարմինների վրա⁷⁹²:

«Ազատամարտը» 1909 թ. օգոստոսի 24-ին տպագրել է ՀՅԴ-Իթթիհատ համագործակցության շրջաբերականի հայերեն բնագիրը⁷⁹³, իսկ 1909 թ. հոկտեմբերի 6-ին՝ ՀՅԴ 5-րդ Ընդհանուր ժողովի շրջաբերականը Կիլիկիայի դեպքերի վերաբերյալ: Վերջինով մեկ անգամ ևս Ադանայի կոտորածի պատասխանատվությունը դրվում էր տեղական կառավարող պաշտոնյաների վրա: ՀՅԴ-ն պահանջում էր պատժել նրանց և կոտորածի ու թալանի ղեկավարներին, նաև՝ հատուցել հայերին հասցված վնասները: «Մենք դժգոհ ենք վարչապետին քաղաքականութենէն և ամբողջ Դահլիճին դիրքէն՝ Ստանայի խնդրին մէջ», - այսպես էր գրել թերթը⁷⁹⁴:

Բավական ուշագրավ էր «Ազատամարտի» մոտեցման կերպը: Որքան մեծանում էին հայակործան բռնաճնշումներն, այնքան թերթն, ի հակակշիռ դրանց, հոգաձության կենտրոնում էր պահում արևմտահայերի ազգային կյանքը: Ընթերցողներին հորդորում էր ապրել ուժեղանալու փիլիսոփայությամբ, խուսափել և հրաժարվել ներքին կռվից ու երկպառակություններից, զավառն անտեսելուց և ականջի ետև զցելուց⁷⁹⁵: Համախմբման էր հրավիրում հայ ժողովրդին՝ բացատրելով, թե հարկավոր էր

⁷⁹¹ Նույն տեղում, 1909, թիվ 18, 25:

⁷⁹² Նույն տեղում, 1909, թիվ 29, 42:

⁷⁹³ Նույն տեղում, 1909, թիվ 63:

⁷⁹⁴ Նույն տեղում, 1909, թիվ 153:

⁷⁹⁵ Նույն տեղում, 1909, թիվ 2, 11, 12, 58, 96, 122:

ձեռք քաշել այնպիսի սիրուց, երբ սիրում ես ազգդ, բայց ասում ես ազգակցիդ⁷⁹⁶:

Կիլիկիայի ողբերգական դեպքերից հետո անգամ «Ազատամարտը» չէր դնում արևմտահայերի անկախանալու խնդիրը: Ընդհակառակը, իբրև նվազագույն պահանջ առաջադրում էր Արևմտյան Հայաստանի ներքին ինքնավարության խնդիրը օսմանյան պետության կազմում: Եվ քանի որ 1908 թ. երիտթուրքերը թեկուզ արտաքուստ կայսրությունը հռչակել էին սահմանադրական՝ ի լուր աշխարհի տարփողելով, թե իրենք հարգում էին միջազգային դաշնագրերն (այդ թվում՝ Բեռլինի համաժողովի որոշումները) ու պատրաստ էին բարենորոգումներ անցկացնել բոլոր գավառներում, ապա թերթն ուզում էր ապահովել արևմտահայերի գեթ ներքին կյանքի կարգավորման հնարավորությունները: Ահա թե ինչ ենք կարդում «Թուրքական տազնապը» հոդվածում. «Ան կը պահանջեր ապագայի համար ոչ թե անիրականանալի անկախութիւն մը, և կամ, ինչպէս որ հիմարօրէն կ'ըսէին՝ հայկական թագավորութեան յարութիւնը, այլ վարչական ինքնուրոյնութիւն, ճիշտ ինչպէս որ կանխատեսուած էր Միտհաթեան Սահմանադրութեան մէջ»⁷⁹⁷:

1912 թ. նոյեմբերից սկսած՝ «Ազատամարտը» մշտապես անդրադառնում էր Հայկական հարցին և այդ անունով բաժին էր բացել, որտեղ նաև տվյալ խնդրին առնչվող հոդվածների, հրապարակումների պատճառով պարբերաբար կամ դատի էր տրվում, կամ փակվում էր իշխանությունների հրամանով, կամ փոխում էր սեփական անվանումը: 1912 թ. դեկտեմբերի կեսերից ամեն համարում վերլուծվում էր Թուրքիայի ներքին գործերի նախարարության՝ հայկական 4 նահանգի բարենորոգումների համար կազմած նախագիծն՝ այն գնահատելով իբրև մակերե-

⁷⁹⁶ Նույն տեղում, 1909, թիվ 126:

⁷⁹⁷ Նույն տեղում, 1909, թիվ 9:

սային փաստաթուղթ: Նշվում էր, որ խմբագրակազմը կողմ էր հայկական նահանգների բարեկարգման ծրագրին՝ դրա տակ հասկանալով լուրջ, արմատական ձեռնարկ, որը պիտի բարգավաճման առաջնորդեր տեղի բնակչությանը: «Ազատամարտը», սակայն, վստահ չէր, որ Թուրքիայում կիրականանար հայկական բարենորոգումների որևէ նախագիծ կամ ծրագիր⁷⁹⁸:

Այսպիսով՝ կարող ենք փաստել հետևյալը:

«Ազատամարտն» ստեղծվել էր գաղափարական, կուսակցական հիմունքներով՝ որպես ՀՅԴ գաղափարաքարոզչական պայքարի միջոց: Այն մինչև վերջին համարը մնացել է ՀՅԴ ծրագրի, կուսակցության հայեցակետերի և քաղաքական ուղեգծի գաղափարախոսը՝ մշտապես տպագրելով, վերլուծելով ու հանրությանը ծանոթացնելով ՀՅԴ որոշումներին, ռազմավարության և մարտավարության առանձնահատկություններին, կատարած աշխատանքներին: Օրաթերթի հավաքածուները կարող են օգտակար լինել ՀՅԴ պատմությունն ուսումնասիրող պատմաբանների և քաղաքական վերլուծաբանների համար այնքանով, որ կնպաստեն օբյեկտիվ պատկերացում կազմել կուսակցության անցած ուղու՝ 1909-1915 թթ. բարդ ու վճռորոշ ժամանակահատվածի մասին: Ի պատիվ «Ազատամարտի»՝ պետք է նշել, որ օրաթերթն ապահովել է կուսակցական բազմակարծություն իր էջերում քննարկվող ցանկացած հիմնախնդրի վերաբերյալ:

«Ազատամարտը» խուսափել է դառնալ միջկուսակցական պայքարի միջոց: Լինելով կուսակցական մամուլի օրգան՝ այն չի վերածվել նեղ-կուսակցական պաշտոնաթերթի: Հրատարակության ողջ ժամանակամիջոցում եղել է արևմտահայ կյանքի բոլոր բնագավառների առաջընթացին զարկ տվող լուրջ ազդակ: Ոչ միայն մտահոգվել է համազգային բնույթի հիմնախնդիրներ-

⁷⁹⁸ Նույն տեղում, 1912, թիվ 1085:

րով, այլև հետամուտ է եղել դրանց լուծմանը՝ փորձելով այդ նպատակի իրականացման համար միավորել հայ մտավոր ներուժը:

«Ազատամարտը» ճկուն ու հեռատես քաղաքականություն է վարել հայ մտավոր ներուժի կրողը հանդիսացող անհատների հանդեպ և կարողացել է իր շուրջը համախմբել ժամանակի հայ մտավորականության սերուցքը՝ նրանց հնարավորություն տալով արտահայտել իրենց տեսակետները տարաբնույթ հարցերի վերաբերյալ՝ քաղաքականությունից մինչև մշակույթ:

Օպերատիվություն և բազմակարծություն ապահովելու ունակությունները նպաստել են թերթի՝ հայ և օտարազգի ընթերցողների լայն շրջանակի ձևավորմանը: Հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո առավել ուժգնացած թուրքական գրաքննության պայմաններում անգամ ձեռք բերելով թղթակիցներին ռազմաճակատ ուղարկելու բացառիկ թույլտվություն՝ «Ազատամարտը» ռազմաճակատից նրանց ուղարկած թղթակցությունների կամ եվրոպական առաջադեմ թերթերից քաղած տեղեկատվության միջոցով կարողացել է ապահովել ամենօրյա լրատվություն:

«Ազատամարտն» ոչ միայն զարգացրել է դաշնակցական մամուլի ավանդույթները, այլև կատարելագործել է դրանք՝ հիմնելով ազատամարտյան ինքնատիպ լրագրության դպրոցը, որի դասերը ուսանելի են նաև այսօր: Ի հեճուկս թուրքական գրաքննության, «Ազատամարտի» սերունդը խիստ բեղմնավոր էր: Մեծ եղեռնի ընթացքում օրաթերթի խմբագրին ու աշխատակազմի լավագույն մասին կորցնելուց հետո էլ այդ սերունդը շարունակեց իր կիսատ մնացած ծրագրերը և անելիքները՝ Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի (1918-1924 թթ.) միջոցով⁷⁹⁹:

⁷⁹⁹ Կ.Պոլսի «Ազատամարտ», «Ճակատամարտ» օրաթերթերի և ՀՅԴ Կ.Պոլսի պարբերականների մասին տե՛ս Մ. Հովսեփյանի՝ «Կ.Պոլսի ՀՅԴ մամուլն

«ԱԶԱՏԱՄԱՐՏ» ԳՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ (1910-1915 թթ.)

«Ազատամարտ» օրաթերթը հրատարակության տարիներին (1910-1915 թթ.) գրեթե բոլոր համարներում լուսաբանել է հայկական և համաշխարհային մշակութային անցուղարձը: Թերթի էջերում իրենց ստեղծագործություններով հանդես են եկել ոչ միայն արևմտահայ ու արևելահայ, այլև օտարազգի գրողներն ու արվեստագետները:

Օրաթերթի գրական-մշակութային ուղղվածությամբ նյութերն ու որդեգրած քաղաքականությունն առանձին և ամբողջական գիտական լուրջ ուսումնասիրության կարիք ունեն, ինչը մեր այս աշխատության շրջանակներից դուրս է: Փաստենք մի շարք առանձնահատկություններ «Ազատամարտի» գրական-մշակութային մոտեցումների վերաբերյալ:

- Մշակութային ուղղվածությամբ նյութերով, վերլուծական հոդվածներով և ուսումնասիրություններով հարուստ են «Ազատամարտի» տարեմուտյան կամ Կադանդի առիթով հրատարակված բացառիկ համարները, որոնք լույս են տեսել 4-ի փոխարեն 8 էջով⁸⁰⁰:

- «Ազատամարտը» փորձել է կամրջել պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի՝ միայնցից զատված հատվածների գրականության և արվեստի աշխարհի ներկայացուցիչներին:

- Թերթը քաղաքական գործունին համարժեք է համարել արվեստի և մշակույթի դաստիարակիչ դերը ժողովրդի կյանքում:

- Ուշադրության կենտրոնում է պահել արվեստի բնագավառի խնդիրները, կատարվող տեղաշարժերը, գրական ու մշակութային

ագգային-ագատագրության ջահակիր 1909-1915 թթ.», Երևան, 2003 թ. և «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.)», Երևան, 2009 թ. գրքերում:

⁸⁰⁰ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 11, էջ 104-115:

այլ կարգի քննարկումները, բանավեճերը և ասուլիսները: Այս տեսակետից «Ազատամարտը» կարելի է համարել ժամանակի արևատահայ մշակութային կյանքի յուրատեսակ հանրագիտարան: Ընդ որում, թերթն ապահովել է բազմակարծություն բանավիճային հարցերում և չի արտահայտել կողմնակալ տեսակետներ:

«Ազատամարտն» այնքան է կարևորել գրականության և արվեստի վերափոխիչ ու կրթադաստիարակչական գործառույթները, որ 1910 թ. հուլիսի 10-ից սկսել է հրատարակել «Ազատամարտ» գրական, գիտական և գեղարվեստական շաբաթաթերթ-հավելվածը: Այն լույս է տեսել մինչև 1913 թ. սկզբները: 1911-1912 թթ. հավելվածը տպագրվել է «Բագին» և «Բամբիո» անուններով:

Լույս է տեսել «Ազատամարտի» գրական հավելվածի 73 համար:

Հավելվածի խմբագրման գործը փոխելոխ վարել են Ռ.Զարդարյանը, Ռ.Դարբինյանը և Շ.Միսաքյանը: 1911թ. դեկտեմբերի 13-ի խմբագրականում նշվում էր, որ հավելվածի հրատարակությունից հետո անցել էր շուրջ մեկ տարի, և այդ ընթացքում ամսագիրը կարողացել էր ստեղծել հաստիքային և արտահաստիքային աշխատակիցների և ընթերցողների լայն ցանց: Ամսագիրը «Եւրոպայի գլխաւոր մտաւորական կեդրոններուն մէջ ունէր իր մասնաւոր թղթակիցները»⁸⁰¹: Խմբագրակազմը հույս էր հայտնում, թե ամսագիրը «գրական պաշտամունքի և փառաբանութեան ճշմարիտ և կենդանի տաճարը պիտի ըլլայ մեր մտքի ուխտեալներուն»⁸⁰²:

1910 թ. հուլիսի 10-ին «Ազատամարտի» գրական հավելվածի 1-ին խմբագրականում Ռ. Զարդարյանը գրում էր, թե «Յաւելուածը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ նախաքայլ մը դէպի գրական նոր աշխատանքը, որուն համար իրենց գործակցութիւնը պիտի բերեն արեւմտեան և արեւելեան Հայերու յայտնի գրողներէն մեծ մաս

⁸⁰¹ «Ազատամարտ» շաբաթաթերթ (ամսագիր), Կ.Պոլիս, 1911, թիվ 1, էջ 1:

⁸⁰² Լույս տեղում:

մը: Ձեռնարկը նպատակ ունի արձագանքը բերել հայ կեանքին մէջ օտար իմացական շարժումներուն, ծանօթացնելով ինչ որ Արևեստն ու Գիտութիւնը կ'աւելցնեն համաշխարհային քաղաքակրթութեան և ընկերական յառաջդիմութեան ի նպաստ»⁸⁰³:

Գրական հավելվածի խմբագրակազմը լիովին կատարել է իր առջև դրած նպատակները:

«ՈՒՍԱՆՈՂ» ԵՎ «ԵՐԿՈՒՆՔ» ԱՄՍԱԹԵՐԹԵՐԸ

«Ուսանողը» և «Երկունքն» եղել են ՀՅԴ մասնաձյուղերը հանդիսացող Եվրոպայի ու Կ.Պոլսի ուսանողական միությունների ամսաթերթերը: Դրանց աշխատակազմերի մասին սկզբնաղբյուրների բացակայության կամ գրեթե բացակայության պատճառով կարելի է միայն պնդել, որ 2 ամսագրերն էլ ունեցել են խմբագրական մարմին և աշխատակիցների փոքրաթիվ շրջանակ (հիմնականում երիտասարդ մտավորականներ և ուսանողներ)⁸⁰⁴: Նրանք նույնիսկ խուսափել են հրատարակվող նյութերի մեծ մասի վերջում կամ սկզբում գրել իրենց անուն, ազգանունը և մեծամասնությամբ (չնչին բացառություններով) հանդես են եկել կամ կեղծանվամբ, կամ անուն-ազգանվան սկզբնատառերով: Դրանց իսկությունը պարզելը դժվարանում է արդեն նշված պատճառով:

«Ուսանող» ամսագրի 1-ին համարը տպագրության է նախապատրաստվել Բեռլինում Եվրոպայի ՀՅԴ ուսանողական միության Գերագույն մարմնի 3 անդամների նախաձեռնությամբ, ովքեր միաժամանակ եղել են ամսագրի խմբագրական մարմնի ներկայացուցիչները: Նրանց ջանքերով էր, որ 1909 թ. փետրվարին և ապրիլին Փարիզում հաջորդաբար լույս էին տե-

⁸⁰³ Նույն տեղում, 1910, թիվ 1, էջ 1:

⁸⁰⁴ «Ուսանող», 1909, թիվ 1, էջ 1-3, 45-48, 1909, թիվ 3, էջ 129-132, 1911, թիվ 6, էջ 3-8, 1912, թիվ 7, էջ 280-288, «Երկունք», 1912, թիվ 1, էջ 30-31:

սել «Ուսանողի» 1-ին և 2-րդ համարները⁸⁰⁵: 1909 թ. ապրիլի 10-15-ին Գերմանիայում տեղի էր ունեցել Եվրոպայի ՀՅԴ ուսանողական միության 2-րդ համագումարը: Այնտեղ քննարկվել էին նաև «Ուսանողի» հրատարակությանն առնչվող խնդիրներ: Որոշվել էր, որ ամսագրի խմբագրական մարմինը պետք է ունենար 3 կամ 5 անդամ և 2 փոխարինող անդամ: Նրանք պիտի ընտրվեին Եվրոպայի ՀՅԴ ուսանողական միության համագումարի մասնակիցների կողմից ու պատասխանատու լինեին նրանց առաջ: Խմբագրական մարմինը աշխատելու էր Գերմանիայում, իսկ ամսագիրը հրատարակվելու էր Ժնևում, Փարիզում, Կ.Պոլսում, Զյուռնիայում: Այսինքն՝ այնտեղ, որտեղ հնարավոր էր իրականացնել «Ուսանողի» լույս ընծայումը: Նշված համագումարում գաղտնի քվեարկությամբ ընտրվել էին ամսագրի խմբագրական մարմնի անդամները (Վ. Վ., Ս. Ն., Բ. Կ.) և նրանց փոխարինողները (Ա. Բ., Ս. Բ.)⁸⁰⁶: Տարիների ընթացքում այդ կազմը փոփոխության էր ենթարկվել: «Ուսանողին» աշխատակցել են Ե.Ֆրանկյանը, Վ.Խորենին, Ա.Շիրակունին, Մ.Վաքուրը, Վանիկը, Տրդատը, Արման և այլք:

Մեր ձեռքի տակ՝ Հայաստանում կա «Ուսանողի» 8 թիվ՝ հրատարակված 1909-1914 թթ. Փարիզում (թիվ 1, 2, 5), Ժնևում (թիվ 3, 4, 6, 8) և Կ.Պոլսում (1912 թ., թիվ 7): Այն հրատարակվել է սկզբում որպես ոչ պարբերական (թիվ 1, 2), իսկ 1909 թ. հետո՝ որպես պարբերական հանդես, որը պետք է տպագրվեր երկու ամիսը մեկ: Սակայն նյութական, տեխնիկական միջոցների բացակայությունն ու խմբագրական աշխատանքներին ցուցաբերած անպատասխանատու վերաբերմունքը խանգարել էին իրականացնել մտահղացումը. «Ուսանողն» ուշ-ուշ էր հրատարակել հերթական համարը: Արդեն թիվ 6-ում տեղեկացվում էր, թե ամսաթերթը

⁸⁰⁵ «Ուսանող», 1909, թիվ 3, էջ 199-210:

⁸⁰⁶ Նույն տեղում, 1909, թիվ 3, էջ 213-216, թիվ 2, էջ 65-67:

կիրատարակվի տարին 2 անգամ⁸⁰⁷: Թիվ 7-ում «Ուսանողն» այլևս չՅԴ Եվրոպայի ուսանողական միության ամսաթերթը չէր, այլ նույնաբնույթ ժողովածու: Խմբագրականից պարզվում էր, որ «Ուսանողը» կտպագրվեր միայն այն դեպքում, երբ հնարավորություն կլիներ⁸⁰⁸:

«Երկունք» ամսագրի արտոնատերը և պատասխանատու տնօրենը Գալուստ Էյնաթյանն էր: Այն տպագրվել է ամիսը մեկ անգամ նախ՝ Օ. Արզումանի, ապա՝ Հ. Թիրյաքյանի տպարաններում: «Երկունք» նախնական խմորատիպ ամսագրի հրատարակմանը մասնակցել են Վանի Երամյան եւ Կեղրոնական վարժարանների շրջանավարտներ Գալուստ Էյնաթյանը, Մանվել և Բարունակ Կապուտիկյանները, Արամ Սաֆրաստյանը, Խոսրով Խանջյանը, Պարզև Պանիրյանը, Մանուկ Ասլանյանը, Տիգրան Ջրբաշյանը և ուրիշներ⁸⁰⁹: Ամսագրում նյութեր են հրատարակել Ա.Վտակյանը, Իքսր, Խ.Աստուրյանը, Կ.Թանտրջյանը, Գ.Միլիթարյանը, Մ.Չիլյանը, Ա.Սաֆրաստյանը, Ռիվարեցը, Ասլանը, Ասաֆը, Նեվան, Շահրիմանը, Հ.Մ.-ն, Մ. Ա.-ն, Կ. Մ.-ն, Մ.-ն և այլք:

«Երկունք» ամսաթերթը հրապարակ էր իջել, որ հնչեցներ ՉՅԴ կողմից «ականջի յետև գցած» ընկերվարական սկզբունքները, որ օժանդակեր կուսակցության կազմակերպչական, քարոզչական աշխատանքներին, կապ պահպաներ Կ.Պոլսի և Արևմտահայաստանի դաշնակցական ուսանողների միջև՝ ձգտելով թե՛ նրանց, թե՛ կուսակցության անդամներին տանել ընկերվարական ճանապարհով⁸¹⁰: Ըստ ամսաթերթի՝ երիտասարդ սերնդի ձայնը և պահանջներն ընկերվարական էին ու քանի որ իբրև այդպիսիք -

⁸⁰⁷ Նույն տեղում, 1911, թիվ 6, էջ 3-8:

⁸⁰⁸ Նույն տեղում, 1911, թիվ 7, էջ 3-6, 1909, թիվ 3, էջ 213-216:

⁸⁰⁹ «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1981, էջ 486:

⁸¹⁰ «Երկունք», 1912, թիվ 1, էջ 30-31:

հարկ և պատշաճ ձևով չէին երևացել ՀՅԴ նախընթաց մամուլում, ուստի դրանց հնչեցման համար էր ասպարեզ եկել «Երկունքը»⁸¹¹:

«Ուսանողի» և «Երկունքի» ծննդյան գլխավոր պատճառը և գործունեության անկյունաքարը ՀՅԴ ծրագրերը ներկայացնելը, լուսաբանելը, տարածելը և Կ.Պոլսում ու Եվրոպայի քաղաքներում սովորող դաշնակցական ուսանողների համախմբմանը և համագործակցությանը նպաստելն էին: Ամսաթերթերն աջակցելու էին հայ ուսանողության (լայն իմաստով՝ երիտասարդության) ինքնակրթությանն ու ինքնագարգացմանը և ազգի մտավոր սերունցի հարատևությանը: Ըստ «Ուսանողի» ու «Երկունքի»՝ սրանք էին ուսանողական թերթերի և ժողովածուների առջև դրված խնդիրները⁸¹²: «Ուսանողը» և «Երկունքը» միայն կուսակցական հիմնահարցերով չեն տարվել: Նրանց էջերում տեղ են գտել իմաստասիրական, գրական-գեղարվեստական, հասարակագիտական ուսումնասիրություններ, հոդվածներ: «Ուսանողին» և «Երկունքին» բնորոշ էր բանավիճային բնույթը: Շատ դեպքերում «Ուսանողը» և «Երկունքը» ծայրահեղ էին իրենց կարծիքներում, շատ դեպքերում՝ անհանդուրժող ու անվերապահորեն միակ ճշմարիտը երևալու հավակնող:

⁸¹¹ Նույն տեղում, 1912, թիվ 2, էջ 56:

⁸¹² «Ուսանող», 1912, թիվ 7, էջ 254-260, «Երկունք», 1912, թիվ 1, էջ 30-31, թիվ 4, էջ 96-99:

Կ. ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԸ (1918-1924 ԹԹ.)

1918-1924 թթ. Կ.Պոլսում, որպես «Ազատամարտի» իրավահաջորդ, բայց ոչ որպես ՀՅԴ պաշտոնաթերթ, հրատարակվել է «Ճակատամարտ» օրաթերթը գրեթե այլ խմբագրակազմով և նոր բաժիններով ու թեմաներով: Խմբագիրը Հակոբ Ճոլոյանն էր: Պատասխանատու տնօրեններն էին Մանուկ Ապլանյանը և Շավարշ Միսաքյանը, իսկ արտոնատերը՝ Վրթանես Մարտիկյանը:

Հակոբ Միրունին (Ճոլոյանը) ծնվել է 1890 թ. ապրիլի 19-ին Ատաբազար գյուղաքաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Հրեշտակապետաց թաղի դպրոցում: Սովորել է Էսայան (1901-1904 թթ.) և Կեդրոնական (1905-1909 թթ.) վարժարաններում, ապա՝ Կ. Պոլսի համալսարանի իրավաբանական բաժնում (1909-1913 թթ.): 1908 և 1913 թվականներին Հ. Միրունին բանտարկվել է որպես թուրքական պետության համար քաղաքականապես անվստահելի տարր: 1914 թ. նա գորակոչվել է օսմանյան բանակ, որտեղից փախել է՝ խուսափելով զինվորական ծառայությունից: 1914-1918 թթ. ապրել է Կ. Պոլսի տարբեր թաքստարան-բնակարաններում: 1918-1920 թթ. մասնակցել է Կ.Պոլսում այդ տարիներին ծավալված ազգային-հասարակական կյանքին: 1922 թ. մշտական բնակություն է հաստատել Ռումինիայում: 1944 թ. նա իր քաղաքական հայացքների համար արքայազն է Սիբիր և 10 տարի անցկացրել արքայազնությունում: 1965-1971 թթ. Հ.Միրունին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրավերով 5 անգամ այցելել է Հայաստան: Նա վախճանվել է 1973 թ. ապրիլի 7-ին Բուխարեստում: Հ. Միրունին գրական և գիտական ասպարեզում երևացել է 1905-1907 թթ.՝ հանդես գալով որպես բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, թարգմանիչ, բանասեր, պատմաբան, արևելագետ: Նա նպաստել է հայ-ռումինական գրական ու գիտական կապերի զարգացմանը: Հ.Միրունին խմբագրել է

տասնյակ պարբերականներ: Նա թղթակցել է ավելի քան 100 անուն հայերեն, ֆրանսերեն և ռումիներեն թերթերի և հանդեսների: Արժեքավոր են Սիրունու՝ «Պոլիս և իր դերը» բազմահատոր գիրքը, հայ ազգային ու մշակութային մի շարք գործիչներին, ինչպես նաև ռումինացի հայագետ Նիկոլա Եորգային նվիրված աշխատությունները, «Ինքնակենսագրական նոթերը», «Հուշերու գիրքը»:

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուղրոսի հաշտության դաշնագրի ստորագրումից հետո⁸¹³ Հ. Սիրունու և նրա մի շարք ընկերների ջանքերով լույս է տեսնել «Ճակատամարտ» օրաթերթը: Սիրունին այդ մասին վկայել է իր հուշերում. «Առաջին հերթին մեր մտահոգությունն եղավ «Ազատամարտը» վերսկսիլ՝ դաշնակից մարտանաւերուն Պոլիս մտած օրն իսկ: Իմ մօտս կանչեցի կարգ մը բարեկամներ... և հրաւիրեցի զանոնք հիմնադրամ մը կազմել իսկոյն՝ որպէսզի կարենանք թերթը վերսկսիլ: «Արդարամարտ» կոչեցինք զայն՝ ի նմանութիւն «Ազատամարտի»: Բայց, աւա՜ղ, ոյժեր չունէինք գոնէ կարենալ քիչ մը նմանելու համար «Ազատամարտին»: Մանաւանդ որ Շաւարշն ալ դեռ արձակուած չէր բանտէն: Սկսնակ ոյժեր շուրջս ժողկեցի, Գուրգէն Մխիթարեանը, Մանուկ Ասլանեանը, Արտաշէս Վանարեանը և այլք, որոնք պիտի հասունային յետոյ: Առաջին թիւը լոյս տեսաւ 1918 նոյեմբեր 20-ին: Քիչ յետոյ Շաւարշն ալ ելաւ բանտէն, ու միասին վարեցինք այլևս թերթը: Խմբագրականները կը գրէինք փոխն ի փոխ»⁸¹⁴:

Նորաբաց թերթն ունեցել է 3 անվանում՝ «Արդարամարտ» (1918 թ. թիվ 1-12), «Արիամարտ» (1918 թ. թիվ 13-32), «Ճակատամարտ» (1918 թ. թիվ 33-ից մինչև 1924 թ.): Անվանափոխութեամբ

⁸¹³ «Թուրքիայի Հանրապետության պատմություն», Երևան, 2014, էջ 13:

⁸¹⁴ Սիրունի Յակոբ, «Ինքնակենսագրական նոթեր», Երևան, 2006, էջ 204-205:

յունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ «թուրք իշխանութիւնները երկիցս փակեցին թերթը»⁸¹⁵:

Աշխատակիցները Մեծ եղեռնից մազապուրծ եղած արևմտահայ ճանաչված ու հայտնի գրողները, հրապարակախոսները և մտավորականներն էին: «Ճակատամարտի» էջերում հանդես են եկել Շավարշ Միսաքյանը, Երվանդ Օտյանը (Սրմաքէշխանյան), Թեոդիկը (Թեոդորոս Լաբճինճյան), Արամ Չարգը (Վտարանդի), Սարգիս Գլզճյանը (Ծերուկ), Մկրտիչ Պարսամյանը, Գևորգ Մեսրոպը, Ենովք Արմենը, Վահան Շահրիմանը և ուրիշներ:

«Ճակատամարտում» պահպանվել էին «Ազատամարտի» ավանդույթներն ու բաժինները: Վերջիններին ավելացել էին նորերը՝ «Մեր խոսքը», «Առտվան տոմսեր», «Եղեռնապատում», «Վերապրողները», «Հայաջինջ սարսափները», «Հայկական դատը գաղութներու մեջ», «Շարժումը հայ գաղութներու մեջ», «Մեր գաղութները և անոնց կյանքը», «Կփնտրվին», «Կյանքը Հայաստանի մեջ», «Հայաստանի խորհրդարանի նիստերը» և այլ բաժինները:

Ազգային-մշակութային կյանքի խաթարման պատճառով օրաթերթում մինչև 1919 թ. նոյեմբեր ամիսը չկային մշակութային ուղղվածությամբ նյութեր:

«Ճակատամարտի» համար առաջնահերթ էին Հայ դատի պաշտպանության, Հայոց ցեղասպանության կազմակերպիչներին և իրագործողներին միջազգային դատարանի կողմից պատժի ենթարկելու, հայ ժողովրդի կրած մարդկային, նյութական և բարոյական կորուստների փոխհատուցման, հայ տարագիրների ներգաղթի կազմակերպման, անկախ և միացյալ Հայաստան հիմնելու նպատակները: «Ճակատամարտում» մեծ տեղ են գրա-

⁸¹⁵ Նույն տեղում, էջ 205:

վել Հայաստանի 1-ին հանրապետության կյանքի համարյա բոլոր ոլորտների լուսաբանումները:

Թերթը 1-ին համարներից սկսած՝ ներկայացրել է հայ ժողովրդի նկատմամբ թուրքական պետության կողմից մշակված և իրագործված ցեղասպանությունն ապացուցող փաստեր, նաև պատասխանատվության է կանչել մեղավորներին: «Մեր դատը» խորագրի ներքո տպագրվել են նյութեր, որոնցում պատկերացում են տրվել արևմտահայության կրած քաղաքական, տնտեսական, նյութական, ֆիզիկական և բարոյական վնասների մասին: «Արիամարտի» 1918 թ. դեկտեմբերի 13-ի՝ «Ընթացիկ կյանք» բաժնում տպագրված են վավերագիր 2 փաստաթուղթ⁸¹⁶: Դրանք գտնվել էին Իթթիհատի կենտրոնական գրասենյակում կատարված խուզարկության ժամանակ: Այդ փաստաթղթերը կամ ծածկագիր-հեռագրերը «կապացուցանեին նոյն կուսակցութեան հայկական ջարդերուն մեջ կատարած դերը: Յայտնի է, թե ջարդերը կազմակերպելու համար Իթթիհատի կեղդոնեն մարդիկ դրկուած և չէթաներ կազմակերպած են: Կարգ մը նահանգներու մեջ Իթթիհատի ներկայացուցիչներն ալ մասնակից են այս գործին»⁸¹⁷: Նշվում էր նաև, թե «Թալէայթ փաշա հետեւեալ հեռագիրը քաշած է Մալաթիոյ Իթթիհատի ակումբին.- «Ոչնցացուցէք այն բոլոր հայերը, որոնք հող հաւաքուած են և պիտի հաւաքին, բոլոր նիւթական եւ բարոյական պատասխանատութիւնը իմ վրայ ըլլալու պայմանաւ»: Ինչպէս յայտնի է, հայկական ջարդերը կազմակերպելու համար, պատերազմի սկիզբէն իսկ, Տօքո. Պէհաւտոին և Տօքո. Նազրմ Արեւելեան Նահանգները կը պտըտէին: Տօքո. Նազրմ՝ Պէհաւտոին Շաքիրի հետեւեալ ծածկագիր հեռագիրը դրկած է. «Կը պահանջուի հայերը տարագրել և վտանգաւոր նկատուած-

⁸¹⁶ «Արիամարտ», 1918, թիվ 19:

⁸¹⁷ Նույն տեղում:

ները ոչնչացնել: Արդեօք այսպէս կ'ըլլա՞, եղբայրս»⁸¹⁸: Եվս մեկ վավերագիր-փաստաթուղթ էր տպագրվել իր թուրքերեն բնագրի հետ 1919 թ. մարտի 24-ին «Վերջին լուր» բաժնում: Այդ փաստաթուղթը կամ հայաջինջ ծրագիրը մշակել էին «Թալէաթ և ընկերները, Թուրքիոյ Հայ ժողովուրդը ոչնչացնելու համար»⁸¹⁹:

Թերթը «Հայաջինջ սարսափները» կամ «Վերապրողները» խորագրերի ներքո, 1-ին համարներից սկսած, տպագրել է ականատեսների վկայությունները իրենց բնակավայրում կատարված ջարդերի մասին: 1919 թ. այդ պատմություններին զուգահեռ՝ ներկայացվել են հայերի հերոսական ինքնապաշտպանության դրվագները և ֆիդայիների քաջագործությունները: Չկա «Ճակատամարտի» որևէ համար, որտեղ տպագրված չլինեն նշված անձանց կամ հայ կամավորական ջոկատների ու խմբերի լուսանկարները: Այս կերպ օրաթերթը կարծես փորձել է ընթերցողներին և թուրքական կառավարող շրջանակներին հասկացնել, թե անկարելի էր ոչնչացնել կամ կոտրել հայ ժողովրդի ազատատենչ ոգին: Մեծ է այս կարգի հողվածների ու լուսանկարների պատմական արժեքը: Դրանք կարելի է օգտագործել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում:

«Ճակատամարտի» հրապարակումներից երևում է, որ Մուրրոսի զինադադարից հետո հայ ժողովրդին դեռ շարունակել են սպառնալ ջարդերն ու կոտորածները: Թուրքիայում հայահալած քաղաքականությունը չէր փոխվել: Խոսքը մասնավորապես վերաբերում էր իթթիհատականների նկատմամբ հարուցված կեղծ դատավարությանը⁸²⁰ և իթթիհատական կենտրոններում անցկացվող

⁸¹⁸ Նույն տեղում:

⁸¹⁹ «Ճակատամարտ», 1919, թիվ 112:

⁸²⁰ Անուսյան Մ., «Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ.)», Երևան, 2013, էջ 38:

անարդյունք խուզարկություններին, հայ որբերի ու իրենց տները վերադարձող տարագրյալների իրավունքների ոտնահարմանը:

1918 թ. նոյեմբեր 30-ին «Դահիճները կցնծան» խմբագրականում նշվում էր, թե հիմարություն էր արդարություն հուսալ թուրքիայում: Չէ որ վարչապետ Թեֆիկ փաշայի գլխավորած կառավարությունը պահանջել էր ընդհանուր ներման ցանկում ներում շնորհել հայ մարտիրոսագրության հեղինակներին ու մեղսակիցներին՝ նրանց դասելով քաղաքական հանցագործների շարքը⁸²¹: Իթթիհատական պարագլուխների ձերբակալությունը շարունակվել է 1919 թ. սկզբներին՝ Թուրքիայի նախարարների խորհրդի որոշման համաձայն: «Մեր խոսքը» խմբագրականում, սակայն, «Ճակատամարտը» կարծիք էր հայտնել, թե ծայրահեղ լավատեսություն էր թուրքական կառավարությունից սպասել բացարձակ արդարություն հայկական կոտորածների պատասխանատուների դատավարությունից: Սկսված դատավարությունը բացահայտել էր բազմաթիվ ոճրագործություններ, դրանց կազմակերպիչներին, իրականացնողներին: Օրինակ՝ 1919 թ. ապրիլի 28-ի համարի «Եփրատ գետը կհորդի հայոց դիակներով» նյութում տպագրված է քննիչ մարմնի կողմից պատրաստված և դատարանում ընդունված ամբաստանագիրը: Այն «Ճակատամարտը» համարել է պատմական կարևոր վավերաթուղթ և «հերքմնագիր մը բոլոր Սիւլէյման Նազիֆներու և անոնց դէմ, որ յանդգնութիւնն ունեցան մասնակի քանի մը սպանութիւններ անուանելու հայկական աղէտը»⁸²²: Փաստվում էր, որ տարագրության ընթացքում զանազան վայրերում և տարբեր ժամանակներում կատարված խժոժությունները երբեք չէին ունեցել տեղական ու առանձնակի հանգամանք, այլ կազմակերպվել և իրագործվել էին «բերանացի և գաղտնի հրաման-

⁸²¹ «Արիամարտ», 1918, թիվ 10:

⁸²² «Ճակատամարտ», 1919, թիվ 141:

ներով»⁸²³: Ամբաստանագրում ասվում էր («Ց-րդ սերի, վեաիքա 1») ⁸²⁴, որ Տրապիզոնի ջարդը կատարվել էր Թալեաթի դրոմամբ: Ներքին գործերի մասնավոր դիվանի պետ Իսսան բեյը հայտնում էր, թե երբ ինքը Քիլիսի գայմագամն էր, Կ.Պոլսից Հալեպ ուղարկված Արդյուրահման Նուրի բեյը հետևյալն էր ասել իրեն. «Տարագրութիւնը` Հայերը բնաջնջելու նպատակով եղած է, ես շփման մէջ մտայ Թալեաթ պէյի հետ և անձամբ իրմէն առի բնաջնջման հրամանները»⁸²⁵: Խարբերդի կուսակալ Սապիթ բեյը Նագըմ բեյին էր հղել մի հեռագիր, որի լուսանկար-պատճենը 9-րդ «սերիին մէջն է»: Այնտեղ հարցում էր արվել. «Ղրկուած Հայերուն գործը լմնցուցի՞ք. տարագրութիւնները տեղեկացուցէք, վնասակար անձերը կ'ոչնչացուի՞ն, թէ` ո՛չ, միայն կ'աքսորուին»: Մեկ այլ ծածկագիր-հեռագրում Պոլիից Սյուֆիտ բեյը գրում էր, որ տեղի իթթիհաստական կառույցի քարտուղար «Միտհաթ Չանկըրիէն իրեն հեռագրել է, որ Էնկիւրիէն 61000 Հայեր տարագրած են»: Նա խորհուրդ էր տվել Սյուֆիտ բեյին, որ Պոլիի ապագա երջանկությունն ապահովելու համար անհրաժեշտ էր տարագրել տեղի հայերին: «Ճակատամարտը» վերլուծելով այս փաստը` եզրակացնում էր, թե Պոլիի նման պատերազմական գոտուց հեռու գտնվող վայրում հայերի տարագրությունն իրականացնելը ամեննին ռազմական անհրաժեշտությունից չէր բխել: Ամբաստանագրում մեջբերված էր Թալեաթին ուղարկված Խարբերդի կուսակալ Սապիթ բեյի մեկ այլ հեռագիրը, որը գտնվում էր Երեսփոխանական ժողովի 5-րդ ճյուղի թղթածրարներում: Հեռագրում արձանագրված էր, որ բոլոր ճանապարհները լցված էին «կիներու և տղաներու դիակներով»: Թալեաթը Հայոց եղեռնի հետքերը վերացնելու նպատակով Խարբերդի, Դիարբեքի, Ուրֆայի և Դեր-Չորի կառավա-

⁸²³ Նույն տեղում:

⁸²⁴ Նույն տեղում:

⁸²⁵ Նույն տեղում:

րիչներին էր ուղարկել ծածկագիր-հեռագրեր: Դրանցում նա նրանց հրամայել է այրել ճանապարհներին մնացած հայերին պատկանող առարկաները, իսկ նրանց դիակները՝ թաղել և ոչ թե նետել գետերը, լճերն ու ձորերը⁸²⁶:

«Ճակատամարտում» վավերագիր-փաստաթղթեր բազմիցս են տպագրվել 1918-1919 թթ., երբ դեռևս հույս է փայփայվել հասնել Հայ դատի պաշտպանությանը: Բերենք ևս մեկ օրինակ: 1919 թ. մարտի 15-ին թերթում կարդում ենք Թուրքիայի ներքին գործերի նախարար Ջեմալ բեյի հայտարարությունը այն մասին, որ Իթթիհատը «ջարդել տուա 800000 Հայեր և տարագրեց 400000 Յոյներ»⁸²⁷: Թերթը հասկացել էր, որ իթթիհատականների ձեռքակալությունները և դատավարությունը քաղաքական ֆարս էին, որ դաշնակից պետությունները չէին պատրաստվում ձեռնարկել հայանպաստ քայլեր: Եղեռնի կազմակերպիչների դատավարությունը «Ճակատամարտը» համարել էր «աչքկապուկ մը», իսկ «ջարդարարներու դէմ յարուցւած դատը նահատակուած Մարկոսին, Կիրակոսին անձնական դատը չէ, Հայ ազգին դատն է ան»⁸²⁸: Հիմարություն էր հայ ժողովրդի համար «ելլել պահանջել թուրք դատարաններու ներկայ կազմէն՝ իր արդար դատին գոհացումը»⁸²⁹:

Մուղրոսի զինադադարից հետո թուրքական իշխանություններն ընդունել էին մի շարք հիշատակագրեր ու որոշումներ, որոնց համաձայն՝ պիտի վերջ տրվեին հայերի հալածանքներին, բռնի իսլամացված հայերը նորից պիտի քրիստոնյա դառնային, թուրքերի մոտ ստրուկի կարգավիճակում պահվող հայ որբերը և առևանգված աղջիկները, կանայք պիտի վերադարձվեին Թուրքիայի հայկական համայնքին, տարագիր հայերը պի-

⁸²⁶ Նույն տեղում:

⁸²⁷ Նույն տեղում, 1919, թիվ 106:

⁸²⁸ Նույն տեղում, 1919, թիվ 92:

⁸²⁹ Նույն տեղում:

տի վերադառնային իրենց բնակավայրերը, հայերից հափշտակված ու խլված կալվածքները, հողերը և ունեցվածքը պիտի հանձնվեին ողջ մնացած դրանց նախկին տերերին: «Ճակատամարտը» շարունակ ահագանգել է, որ կառավարության այդ կարգադրությունները «խօսքի սահմանէն անդին չանցան»⁸³⁰: Բերվել են օրինակներ: Ըստ այդմ՝ թուրքական իշխանություններն ամեն ինչ անում էին, որ Եղեռնից մազապուրծ հայերը չվերադառնային իրենց բնակավայրերը: Իսկ եթե վերադառնային, ապա չկարողանային ապրել իրենց նախկին տներում, որոնք բռնագավթվել կամ շատ էժան գներով վաճառվել էին թուրքերին: Հայ տարագրյալներին չէին տալիս օրենքով հասանելիք՝ դեպի նրանց ծննդավայր փոխադրման ծախսի գումարը, նաև՝ նպաստը: Նրանց չէին ապահովում գալիք ձմեռվա համար անհրաժեշտ վառելիքով ու գարնանային սերմացուով: «Տարագիրներուն կալվածները» խմբագրականում նշվում էր, որ մի կողմից՝ թուրքական նոր կառավարության կարգադրության համաձայն՝ տարագիր հայերի անշարժ գույքը պիտի վերադարձվեր նրանց, մյուս կողմից՝ ներքին գործերի նախարարի հրահանգով այդ կարգադրությունը սրբագրվել էր: Ըստ այդմ, «տարագրեալներէն անոնք, որ կը վերադառնային և անձնապէս իրենց կալուածները կը պահանջէին, անմիջապէս պիտի ստանային, իսկ անոնք, որ անձնապէս չէին ներկայանար (մեռած, կորսուած, կոտորուած), անոնց մօտաւոր կամ հեռաւոր ժառանգորդներուն չպիտի յանձնուէին կալուածները»⁸³¹: «Ճակատամարտը» կառավարությունից պահանջում էր լինել ազնիվ և չեղյալ հայտարարել ներքին գործերի նախարարության հրահանգը: Չէ՞ որ հայերի կալվածքներն անտեր չէին մնա, եթե նրանք իրենց կամքին հակառակ չտարագրվեին ու չդատապարտվեին բնաջնջման:

⁸³⁰ Նույն տեղում, 1919, թիվ 106:

⁸³¹ Նույն տեղում, 1919, թիվ 90:

Ջոհերը մեղավոր չէին: Կառավարությունը իրավունք չուներ նրանց անշարժ գույքը հափշտակել կամ հանձնել դրանց ապօրինի տիրացած անձանց: «Բարոյական և իրաւաբանական ոչ մէկ հիմ կայ ասոր հակառակը շարժելու: Այդ կալուածները ժամանակաւորապէս պէտք է յանձնել ուղղակի տէրերուն, իսկ անոնց չգոյութեան պարագային, անոնց ազգականներուն այն օրէնքով, որ գոյութիւն ունի», - այս եզրահանգմանն էր եկել թերթը⁸³²: Քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ օրաթերթի առաջարկները, ինչպէս նաև Եղեռնից մագապուրծ եղած տարագրյալների իրավունքները մնացել են մերժված և ոտնահարված թուրքական իշխանությունների կողմից: «Ճակատամարտը» ոչ միայն պաշտպանել է տարագրյալ հայերի շահերն ու իրավունքները, այլև ռեպրտաժների ու թղթակցությունների միջոցով պատկերացում է տվել նրանց կյանքի և կենցաղի մասին:

Օրաթերթը հոգատարությամբ է մոտեցել նաև հայ որբերին գտնելու, հավաքելու և ուժացումից փրկելու հիմնահարցերին: «Ճակատամարտը» համոզված էր, որ թուրքական պետությունը շահագրգիռ չէր նշված խնդիրների հայանպաստ լուծմամբ: Ընդհակառակը, իշխանություններն ամեն ինչ անում էին, որ խոչընդոտեին, ասենք՝ որբերին հայտնաբերելուն կամ նրանց հայ համայնքին վերադարձնելուն: «Շողերը փրկելու համար» հոդվածի հեղինակ Սարգիս Սարունու կարծիքով՝ «անոնք որ 2 տարեկանն են վար ըլլալով հաւաքուած էին թուրքերու կողմէ, կարելի էր կորսուած նկատել»⁸³³: Թուրքական իշխանությունները հայերի հիմնած Որբահավաք և Որբախնամ մարմիններին խանգարելու նպատակով թղթարարությանը մեծ դեր էին հատկացրել: Նրանք հայ որբերին գտնելու գործը հանձնարարել էին հայոց կոտորածներում աչքի ընկած անձանց:

⁸³² Նույն տեղում:

⁸³³ «Արիամարտ», 1918, թիվ 16:

«Ճակատամարտն» ուշադրության կենտրոնում է պահել Պատրիարքի և պատրիարքարանի գործունեությունը: Սա չի նշանակում, որ նույն շրջանում այնտեղ տպագրված արևմտահայ մյուս պարբերականները անտարբեր կեցվածք ունեին ազգային այդ կարևոր կառույցի աշխատանքների նկատմամբ: Պարզապես ՀՅԴ պարբերական հրատարակությունները ավելի ծայրահեղ էին իրենց գնահատականներում և պահանջում էին ավելին, քան պատրիարքարանը իրավասու էր իրականացնել Օսմանյան Թուրքիայում: Հողվածների կիզակետում էին հայտնվում այն հոգևորականները, ովքեր չարաշահում էին իրենց դիրքը, պաշտոնը կամ հոգևոր հովվին անհարիր վարք ու բարքով էին աչքի ընկնում:

ՀՅԴ կուսակցական և համակիր մամուլը, այդ թվում նաև «Ճակատամարտը», յուրօրինակ հարգալից վերաբերմունք ուներ, սակայն, Չավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանի՝ արևմտահայոց վերջին Պատրիարքի նկատմամբ⁸³⁴, թեև նա նույնպես հողվածների ենթատեքստերում արժանանում էր քննադատության, որոնցում հիմնականում նշում էին ոչ թե նրա, այլ պատրիարքարանի անունը: Չավեն Պատրիարքը իր ապրած ողջ կյանքով բացառիկ ազգասեր ու հայրենանվեր անձնավորություն էր, ով վայելում էր գրեթե ողջ ժողովրդի հարգանքն ու մեծարանքը: Դա արտահայտված է ժամանակի արևմտահայ մամուլում: Օրինակ՝ «Բյուզանդիոնի» 1913 թ. օգոստոսի 31-ի համարում լուր կար Ազգային ժողովի այն նիստի գումարման մասին, որտեղ ձայների ճնշող մեծամասնությամբ Պատրիարք էր ընտրվել Դիարբեքիի Առաջնորդ Չավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը: Քվեարկությունից հետո ատենապետ Ատյանը

⁸³⁴ Կ. Պոլսի հայոց Պատրիարքության գործունեությունը առավել հանգամանորեն ուսումնասիրված է Ռ. Մելքոնյանի «Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը» (Երևան, 2010 թ.) աշխատության մեջ:

դրվատելով նորընտիր Պատրիարքին՝ նշում էր, որ առաջնորդական երկարատև պաշտոնավարություններով նա ձեռք էր բերել լավ համբավ: Ջավեն սրբազանը մտերիմներին բազմիցս խոստովանել էր, որ իրեն ազգին ծառայելու մղումով համակել էր Բաղդադի ազգային վարժարանում իր 1-ին ուսուցիչը՝ Միհրան Սվաճյանը⁸³⁵:

Ջավեն Պատրիարքի գահակալությունն ընթացել է 2 փուլով՝ 1913-1916 թթ. և 1918-1922 թթ.: Հայր Ջավենը պաշտոնավարում էր առանց իր շուրջը մեծ աղմուկ հանելու՝ յուրացնելով կառավարությանը կասկածելի և ազգին անհաճ չդառնալու գաղտնիքը: Նա եպիսկոպոս էր ձեռնադրվել 1910 թ.: «Տէր Ջաւէն եպիսկոպոս նկարագրով լուրջ անձ մըն էր: Երբէք դրամի մարդ չէ եղած և ուր որ գտնւած է, անշահախնդիր վերաբերում մը ցոյց տւած է», - գրում էր «Բյուզանդիոնը»⁸³⁶: «Ժամանակ» օրաթերթը (հանձինս Երվանդ Օտյանի) թեև համեստ ու պարտաճանաչ եկեղեցական էր համարում հայր Ջավենին, ով հոժարակամ և կարողությունների չափով պաշտոնավարել էր իր թեմում՝ առանց խռովություններ հարուցելու և առանց զեղծում գործելու և խնդիրներ ունենալու, բայց, միևնույն է, գտնում էր, որ նրան Մեսիայի պես չպիտի ընդունէր արևմտահայությունը⁸³⁷: Այնինչ Ջավեն Պատրիարքից, նրա ընտրության և պաշտոնավարության շրջանում, ժողովուրդը մեծ ակնկալիքներ ուներ: Մտածում էին, որ նա պիտի կարողանար թե՛ ազգային մեքենան շարժան մեջ դնել, թե՛ վերականգնել պատրիարքական պաշտոնի «խոնարհած պատկառանքը ա՛յնպիսի աստեն մը, երբ ամեն կողմ արհաւիրքով լի էր»⁸³⁸:

⁸³⁵ «Բյուզանդիոն», Կ.Պոլիս, 1913, օգոստոսի 31:

⁸³⁶ Նույն տեղում:

⁸³⁷ «Ժամանակ», Կ.Պոլիս, 1913, թիվ 1624:

⁸³⁸ «Բյուզանդիոն», Կ.Պոլիս, 1913, սեպտեմբերի 3:

Հայր Զավենը օժտված էր վարչական կարողություններով, տոկուն կամքով: Հաստատական էր և հավատարիմ իր համոզմունքներին: Ուներ մեծ հավատք: Փորձառու հոգևորական էր: Նվիրված էր եկեղեցուն: Նա մինչև Պատրիարք ընտրվելը զարկ էր տվել կրթական գործին: Նպաստընկալ վարժարաններ էր բացել Սպերի, Դերջանի, Խնուսի ու Բասենի հայաբնակ գյուղերում: Հիմնել էր Կարինի Կարմիր վանքի որբանոցը և շրջակայքից այնտեղ էր հավաքել հարյուրավոր որբուկների, «որոնք իր գուրգուրանքին առարկան եղան մինչև վերջը»⁸³⁹: Հայր Զավենը ինքն անձամբ էր զբաղվում այդ որբանոցի սաների խնամքով ու դաստիարակությամբ և մտահոգվում էր չափահաս որբերի հետագա ճակատագրով: Նախորդ պաշտոնավարությունների ընթացքում Զավեն սրբազանի հաջողություններով ոգևորված՝ արևմտահայության մեծամասնությունը հույսեր էր կապում, որ նա կարողանալու էր «պատրիարքական պաշտօնն հասցնել փափաքուած բարձրութեան՝ առանց տարուբերուելու կուսակցական և իմբակցական հովերէ և հոսանքներէ»⁸⁴⁰:

Զավեն Պատրիարքը 1913 թ. սեպտեմբերի 13-ին հանդիպում է Կարինում իրեն ողջունելու եկած արևմտահայ հավատացյալ համայնքի հետ: Նրանց նա վստահեցնում է, որ ծանոթ է հայ գավառի ցավերին ու կարիքներին, որ «պիտի ըլլայ Գաւառի Պատրիարքը և ոչ թէ՛ Պոլսոյ»⁸⁴¹: Պատրիարքը ասում էր, որ ապրելու էր գավառի հոգսերով և գործելու էր գավառի համար՝ համագործակցելով ժողովրդի ու նրա պաշտոնական մարմինների և հասարակական գործիչների հետ: Հայր Զավենը համոզված էր, որ իր գործունեությունն արդյունավետ կլինէր միայն այն դեպքում, երբ ազգային մարմիններն ու կուսակցությունները համերաշխաբար կաջակցեին իրեն որպէս զորապետի՝ ժողովր-

⁸³⁹ Նույն տեղում:

⁸⁴⁰ Նույն տեղում:

⁸⁴¹ «Բյուզանդիոն», Կ.Պոլիս, 1913, սեպտեմբերի 25:

դի պայքարը հաղթանակով պսակելու նպատակին հասցնելու համար: «Այդ պարագային վստահ եմ, թե յաղթանակը մեր ժողովրդեանն է, եթե նոյնիսկ մենք զոհուինք ալ», - պնդում էր նորընտիր Պատրիարքը⁸⁴²: Հայր Զավենը Կարինի թերթերից մեկին տված հարցազրույցում նշում էր, որ կառավարությանը պիտի պարբերաբար դիմեր՝ հայ ժողովրդի նկատմամբ կատարվող ջարդարարական քաղաքականությանը և ապօրինություններին վերջ տալու ակնկալիքով. «Ինձի այնպես կ'թուի, թե կառավարութիւնը կամ չէ՛ հասկցած երկրին պետքեր և կամ նպատակ չունի իրական բարենորոգումներ մտցնել»⁸⁴³: 1913 թ. դեկտեմբերի 5-ին «Բյուզանդիոնը» տպագրել է Զավեն Պատրիարքի հայտարարությունները բարենորոգումների խնդրի վերաբերյալ: Նրա կարծիքով՝ եթե թուրքական կառավարությունը հայ ժողովրդին՝ թուրքերին իրավահավասար տարր համարեր, ապա բարենորոգումների «խնդրի մը առջեւ չէր գտնուի»⁸⁴⁴:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում ազգային քաղաքական կյանքում պատրիարքարանին զուգահեռ, անգամ ավելի մեծ դերակատարում ունեին ազգային կուսակցությունները: Այս հանգամանքը չէր խանգարում, որ հայր Զավենը պատրիարքարանի օրեցօր թուլացող լծակները օգտագործեր և արևմտահայության հանդեպ կիրառվող բռնարարքների, ալան-թալանի, կոտորածների մասին բողոքներով շարունակ դիմեր կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին, Կ.Պոլսում տեղակայված հյուպատոսարանների և դեսպանատների պաշտոնատար անձանց, եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում պաշտոնավարող իր գործընկերներին: Նա հնարավորությունների սահմաններում ձգտում էր օգտակար լինել ժողովրդին, փրկել նրան կանխազգացվող եղեռնից, թեև պաշտոնավարության սկզբնա-

⁸⁴² Նույն տեղում:

⁸⁴³ Նույն տեղում:

⁸⁴⁴ Նույն տեղում, 1913, դեկտեմբերի 5:

կան շրջանում արդեն լավ էր պատկերացնում իրերի դրվածքը: «Կեդրոնական կառավարութիւնը այժմ բարեկարգութիւններ մտցնելու ձեռնարկած է, սակայն մինչև այժմ եղածները ոչ մէկ հիմնական բան կ'պարունակեն: Ինծի այնպէս կ'թուի, թէ կառավարութիւնը չէ՛ հասկացած երկրին պէտքերը և նպատակ չունի իրական բարենորոգումներ մտցնելու», - այս կարծիքն էր հայտնել Զավեն արքեպիսկոպոսը իր 1-ին ելույթներից մեկում⁸⁴⁵: Օրինակ բերենք, թէ Զավեն արքեպիսկոպոսը ինչպէս էր համառորեն պայքարում վանքապատկան և եկեղեցապատկան հողատարածքների բռնագրավումների դեմ կամ դրանք ետ վերադարձնելու համար: 1913 թ. սեպտեմբերի 19-ին «Ազատամարտ» օրաթերթը տեղեկացնում էր, որ Հասան աղան բռնագրավել էր Վարազա վանքի Սալախանէ գյուղը՝ առաջարկելով գնել գյուղի հողատարածքը վանքից: Արքեպիսկոպոսը բողոքագրով դիմել էր Վանի կուսակալին և նշել, որ ընդունելի չէին Սալախանէի գնման կամ վարձակալման առաջարկները. «Ազգը կ'պահանջէ, որ գիւղը օրինական թուղթերով վերադարձւի Վարազայ վանքին»⁸⁴⁶:

Զավեն Պատրիարքի ժողովրդանվեր գործելակերպը հարուցում էր թուրքական իշխանությունների գայրույթը, որոնք դադարեցրել էին բանակցությունները պատրիարքարանի հետ դեռևս 1913 թ. մարտին⁸⁴⁷: 1913 թ. նոյեմբերից նրանք սպառնագրեր էին ուղարկում պատրիարքարան: Դրանցից մեկում (1913 թ. նոյեմբերի 12)⁸⁴⁸ Պատրիարքին հիշեցնում էին. «Մի՛ մոռնաք, թէ ո՛ւր կ'ապ-

⁸⁴⁵ Նույն տեղում, 1913, սեպտեմբերի 25:

⁸⁴⁶ «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1913, թիվ 1625:

⁸⁴⁷ Ազգային մարմինները և պատրիարքարանն առավել գործուն էին դարձել 1912-1914 թթ.՝ Արևմտահայաստանում բարենորոգումների և Հայկական հարցի քննարկման ժամանակաշրջանում (տե՛ս Ալբերտ Խառատյան, «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը. 18-րդ դարի սկիզբ 1923թ.»

(www.hpj.asj-oa.am):

⁸⁴⁸ Վարդան Լեւոն, «Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը», Պէյրուք, 1970, էջ 35:

րիք»⁸⁴⁹: Մեկ տարի անց (1914 թ. նոյեմբերի 16) պատրիարքարանը ստացել էր հետևյալ սպառնազիրը. «Ով հայ գեավուրներ, մինչև մօտ ժամանակներս ձեր թերթերը, ձեր Պատրիարքը, ձեր ժողովները, բոլորը ձեր գլուխը պիտի անցնենք... Այսօր թուրքերը յանձն առած են և ուխտած են հայ գեավուրները մաքրել»⁸⁵⁰: 1915 թ. հունիսին հայր Զավենը գրություններից մեկում փաստում էր, որ օսմանյան պաշտոնական և անպաշտոն անձանց արված բոլոր թախանձանքներն ու «լացերը» կամ օտար պետությունների «անպաշտօն և կեւ պաշտօնական» դիտողությունները որևէ ազդեցություն չգործեցին հայերի նկատմամբ թուրքական պետության որդեգրած ցեղասպան քաղաքականության վրա⁸⁵¹: 1915 թ. դեկտեմբերի 28-ին ամերիկահայոց հոգևոր Առաջնորդ Արսեն ծայրագույն վարդապետ Վեհունիին Զավեն Պատրիարքը գրում էր, որ հայ ժողովրդի ցեղասպանության ծրագիրը հղացել էր թուրքական կառավարությունը. «Հրահանգը կեղրոնեն տրվեցաւ և ամեն կողմ գործադրվեցաւ անխղճօրէն»⁸⁵²: «Հայաստան առանց Հայու. այս է Օսմ.կառավարութեան ծրագիրը: Արդէն սկսուած է Հայոց հողերուն և տուներուն մէջ իսլամներ բնակեցնել: Հայութիւնը ամբողջովին բնաջինջ ընելու ծրագիր մըն է այս, առանց աղմուկի, առանց կոտորած անունը տալու նախճիր մըն է այս»,- գրում էր հայր Զավենը 1915 թ. հուլիսի 30-ին բուլղարահայերի հոգևոր Առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին՝ նրան խնդրելով Ազգային պատվիրակությանը և Վեհափառ կաթողիկոսին տեղյակ պահել այն ամենի մասին, ինչին տեղեկացվում էին իր նամակ-

⁸⁴⁹ Կիրակոսյան Ջոն, «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», Երևան, 1982, հ.1, էջ 286:

⁸⁵⁰ Նույն տեղում, էջ 287:

⁸⁵¹ Կիրակոսյան Ջ., «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», Երևան, 1983, հ. 2, էջ 37:

⁸⁵² Նույն տեղում:

ներով Հայոց Ցեղասպանության վերաբերյալ⁸⁵³: Չավեն պատ-
րիարքը կարծում էր, որ անհրաժեշտ էր դիմել քաղաքակիրթ
ազգերի օգնությանը, որովհետև թեև պատրիարքարանը «ըրա-
մինչեւ հիմայ ինչ որ կրցաւ», բայց միայնակ անկարող էր դիմա-
կայել եղեռնին: «Աշխատեցէք և դիմեցէք ամէն կողմ՝ թէ արտա-
սահմանի Հայութեան և թէ օտար մարդասէրներուն, որ իրենց
նիւթական օժանդակութեամբ կեանքեր փրկեն: Ազատենք հիմա
ինչ որ կրնանք», - նշված է հայր Չավենի՝ 1915 թ. օգոստոսի 25-
ին գրված նամակում⁸⁵⁴:

Ցեղասպանության թոհ ու բոհի պայմաններում անգամ
չընկճվեց Չավեն Պատրիարքի ազգասեր ոգին: Ճկուն մտքի և
անձնական կապերի շնորհիվ նա բռնագրավման ենթակա հայկա-
կան հաստատությունների՝ օսմանյան բանկերում պահ տրված
գումարները կարողացավ փոխանցել պատրիարքարանի հաշվին
և հաջողացրեց աքտրված կամ կարիքի մեջ գտնվող իր ազգակից-
ներին փոխանցել նրանց կուտակային գումարներից⁸⁵⁵:

1916 թ. օգոստոսի 10-ին թուրքական իշխանությունների կող-
մից արևմտահայերի ազգային Մահմանադրության մեջ կատար-
ված փոփոխությունների հետևանքով փակվում է Կ. Պոլսի հա-
յոց Պատրիարքությունը, իսկ Չավեն Պատրիարքն աքտրվում է
Բաղդադ: 1918 թ. Մուդրոսի զինադադարից հետո վերաբացվում
է Կ. Պոլսի հայոց Պատրիարքությունը: 1919 թ. փետրվարի 19-ին
Չավեն արքեպիսկոպոսը վերադառնում է Կ. Պոլիս և վերստին
ստանձնում է Պատրիարքի պարտականությունները⁸⁵⁶: Այդ մա-
սին լուր կար «Ճակատամարտ» օրաթերթում, որը նաև տպագ-

⁸⁵³ Չավեն արք., «Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ»,
Գահիրէ, 1947, էջ 131-136:

⁸⁵⁴ Նույն տեղում, էջ 149:

⁸⁵⁵ Խառատյան Ալբերտ, «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը. 18-րդ դարի
սկիզբ 1923թ.», (www.hpj.asj-oa.am):

⁸⁵⁶ Չավեն արք., նշվ.աշխ., էջ 277:

րել էր Ջավեն պատրիարքի լուսանկարը⁸⁵⁷: Խմբագրականում նշվում էր, որ ժողովուրդը տաժանելի աքսորից վերադարձած իր Պատրիարքին ողջունել էր խանդավառությամբ և ցնծությամբ: Ժողովրդի կարծիքով՝ Ջավեն Պատրիարքը անձնավորում էր հայի մեծ տառապանքը: Ժողովուրդը նրա մեջ գնահատում էր այն պարկեշտ մարդուն, որը մինչև վերջ չլքեց պատնեշը, չվաճառեց խիղճը և «Բ. Դռան գետնասող պողոտային տեղ նախընտրեց քսորի ճամբան»⁸⁵⁸: Ամերիկահայոց Առաջնորդական տեղապահ Շահեն ծայրագույն վարդապետ Գասպարյանը 1919 թ. հուլիսի 29-ին նամակ էր ուղարկել հայր Ջավենին՝ համայնքի անունից ողջունելով նրա վերադարձը: «Աստուած է, որ ինայեց, պաշտպանեց, պահեց ու վերադարձուց զՁեզ կրկին ի գլուխս Ձեր հօտին, որպէսզի... Կենդանի, Անլռելի, Անկաշառ Վկան, Պատմիչը և Խօսնակն լինիք մօտ Մէկ Միլիոն Անմեղ Հայ-Քրիստոնէայ Ջոհերու սպանութեանց, Ծերերու խոշտանգանաց, Մայրերու ենթարկուած անարգանաց, Կոյսերու անպատիվ բռնաբարմանց, Մանուկներու և Որբերու տանջանացն», - գրում էր ամերիկահայոց Առաջնորդական տեղապահ Գասպարյանը⁸⁵⁹: Նրա կարծիքով՝ աստվածային նախախնամության Աջը Ջավեն սրբազանին նորից Պատրիարքի պաշտոնին էր բերել, որ նա թարգմանիչը լինի հայ ժողովրդի «Անմահ իրաւանց և Արդարագոյն վրիժաց»⁸⁶⁰: Սա պետք է լինէր արևմտահայոց Պատրիարքի գործը և կոչումը:

Ջավեն պատրիարքը 1921 թ. ապրիլի 23-ին շրջաբերականով դիմում է ժողովրդին, որ մասնակցեին Հայոց Ցեղասպանությանը զոհ գնացած նահատակների հիշատակին ապրիլի 24-ին Կ. Պոլսի Մայր եկեղեցում տրվելիք հոգեհանգստյան պատա-

⁸⁵⁷ «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1919, թիվ 87:

⁸⁵⁸ Նույն տեղում:

⁸⁵⁹ Ավագյան Քնարիկ, «ԱՄՆ հայ գաղութի պատմությունը», Երևան, 2000, էջ 195:

⁸⁶⁰ Նույն տեղում:

րագին, որով այդ օրը աշխարհասփյուռ հայության համար հայտարարվում էր Հայոց Յեղասպանության գոհերի հիշատակի օր⁸⁶¹:

Առաջին աշխարհամարտում կրած պարտությունից հետո 1918-1920 թթ. Թուրքիայում համեմատաբար նպաստավոր պայմաններ էին ստեղծվում արևմտահայության փրկված ու ցիրուցան եղած բեկորները բնօրրանում հավաքելու և ազգային կյանքը վերաշինելու համար: Զավեն Պատրիարքը փորձում էր բռնաձուլումից և բռնի իսլամացումից փրկել թուրքերի կողմից առևանգված ու ստրուկի կարգավիճակում պահվող հազարավոր հայ կանանց ու որբերին: Վերադարձից հետո մեկ ամիս չանցած՝ հայր Զավենը նախագահում է վերաբացված Ազգային երեսփոխանական ժողովի մարտի 14-ի նիստում և առաջարկում է շտապ ընտրել Կրոնական և Քաղաքական ժողովների պետերին⁸⁶²:

Պատրիարքի նախաձեռնությամբ ստեղծված Որբախնամ, Տարագրելոց, Նպաստամատույց և այլ հանձնախմբերն ու Հայ կարմիր խաչն սկսում են օգնել Յեղասպանությունը վերապրածներին և տվյալներ են հավաքում թուրքերի մոտ ապօրինի պահվող հայ կանանց ու որբերի մասին⁸⁶³: Պատրիարքարանը նրանց՝ հայ համայնքին վերադարձնելու պահանջով դիմում էր իշխանություններին:

Անտանտի ուժերի գործադրած ճնշման հետևանքով Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը 1919 թ. փետրվարի 5-ին հրաման էր ուղարկել գավառներ, որով պահանջում էր «մուսուլման ընտանիքների մոտ գտնվող հայ կանանց և երեխաներին հանձնել հայերից կազմված հանձնաժողո-

⁸⁶¹ «Ժողովրդի ձայն» («Շամանակ»), Կ. Պոլիս, 1921, ապրիլի 23:

⁸⁶² «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 106:

⁸⁶³ 1919 թ. փետրվարի 28-ին Որբախնամ և Տարագրելոց ընկերությունները միավորվում և կազմում են Հայ ազգային խնամատարությունը, որը մասնաճյուղեր էր հիմնել Կ. Պոլսի բոլոր թաղերում և բացել էր գաղթականների կայաններ ու որբանոցներ: Հայ կարմիր խաչն անդամակցել է Միջազգային կարմիր խաչին (տե՛ս Զաւեն արք... նշվ. աշխ., էջ 280):

վին»⁸⁶⁴։ Չավեն պատրիարքը և ազգային կառույցները այդ հրամանը փորձում էին կյանքի կոչել որքանով կարողանում էին։ Իրականում նրանք հասկանում էին, որ դա կեղծիք է։ «Ճակատամարտ» օրաթերթը գրում էր, որ Ֆերիտ փաշայի օրոք թուրքական կառավարությունը թեև արտաքին ճնշումների ազդեցության տակ հայտարարությունով դիմել էր իսլամ ազգաբնակչությանը՝ հայ համայնքին հանձնել իսլամացված հայ որբերին, բայց պարզ էր, որ «կառավարութիւնը չ'ուզեր յանձնել իսլամացուած հայ որբերը»⁸⁶⁵։ Այդ հայտարարություն-հրամանն այնպես էր շարադրված, որ յուրաքանչյուր թուրք կարողացավ ըմբռնել դրա բուն էությունը, այն է՝ «անշուշտ որ չէք յանձներ»⁸⁶⁶։ Օրաթերթը վկայում էր, որ հայ մանուկների սրտերը այնպես էին թուրքերը թունավորել, որ կամ քույրը եղբորն ասում էր, թե ինքը հայ չէր, կամ՝ հակառակը։ Հարյուրավոր էին այն որբուկները, որոնք փոքր էին եղել և չէին հիշում իրենց հայ լինելու հանգամանքը։ Հարյուրավոր էին նաև այն որբերը, որոնք սպառնալիքի տակ ուրանում էին իրենց ազգությունը⁸⁶⁷։

1919 թ. ապրիլի 12-ին Չավեն Պատրիարքը հայ ավետարանական համայնքի ազգապետ Ջենոբ Պեզճյանի և հայոց կաթողիկոսի պատրիարքական տեղապահ արքեպիսկոպոս Սայեդյանի հետ տարածում են կոչ (այն տպագրվել է ժամանակի արևմտահայ մամուլի էջերում), որով դիմում էին ազգաբնակչությանը՝ միասնական նվիրատվական սնդուկի հաստատման համար⁸⁶⁸։ Համազգային Միացյալ խորհուրդը նպատակահարմար էր գտնում ոչ թե տարբեր կառույցների միջոցով նվիրատվությունների հավաքումը, այլ մեկ ընդհանուր սնդուկի մեջ

⁸⁶⁴ Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 65։

⁸⁶⁵ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, հունվարի 3։

⁸⁶⁶ Նույն տեղում։

⁸⁶⁷ Նույն տեղում։

⁸⁶⁸ Նույն տեղում, 1919, ապրիլի 12։

դրամի կուտակումը: Հաշվարկվել էր, որ վերապրողների անմիջական կարիքները հոգալու համար անհրաժեշտ էր հանգանակել մեկ միլիոն օսմանյան ոսկի: Այդ գումարը հավաքելու նպատակով հիշյալ խորհուրդը կազմում է համընդհանուր վստահություն վայելող անձանցից բաղկացած հանձնաժողով: Վերոհիշյալ կոչում դիմում էին արևմտահայությանը՝ խնդրելով նրանց աջակցել տարագիրների և որբերի օգնության գործին. «Անոնք՝ ահաուր եղեռնական թանկագին իլեակները, մեր հայրենի աշխարհի հաստատութեան սիւները պիտի ըլլան, կորսուելու վրայ են՝ կեանքի և մահուան պայքար մղելով տակաւին: Աններելի ոճիր մը պիտի ըլլար մեզի համար լուռ հանդիսատեսներ ըլլալ՝ չազատելով մեր սիրելիները մահուան ճիրաններէն»⁸⁶⁹: 1919 թ. սեպտեմբերին Ազգային երեսփոխանական ժողովն ընդունում է օրենք, որի համաձայն՝ յուրաքանչյուր հայ պարտավոր էր իր նյութական կարողության չափով վճարել «Հայրենիքի տուրք» 2 տարբերակով՝ միանվագ կամ ամսական: Այդ նպատակով թաղերի մեջ կազմվել էին հանձնաժողովներ, որոնք գնահատում էին ամեն մի հայ անհատի նյութական կարողությունը և ըստ այդմ որոշում էին նրա կողմից տրվելիք գույքի չափը: «Հայրենիքի տուրքով» փորձում էին հոգալ կարիքավոր և անպատասպար մնացած հայ տարագիրների ու գաղթականների հոգսերը այնքան ժամանակ, մինչև նրանք կկարողանային վերահաստատվել հայաթափված հայրենիքում: Պատրիարքարանը այդ տուրքի ստացագիրն էր պահանջում որևէ հարցով իրեն դիմողներից և չէր օժանդակում տուրքը չվճարողներին: Նույն կերպ էին վարվում Կ. Պոլսի եկեղեցիների Թաղական խորհուրդները, որոնք մերժում էին մկրտության, ամուսնության և հուղարկավորության արարողությունների համար իրենց դիմող այն թաղայիններին, ովքեր «նիւթական կարողու-

⁸⁶⁹ Նույն տեղում:

թիւն ունէին և չէին ներկայացնէր «Հայրենիքի տուրքի» ստացագիրը»⁸⁷⁰: Վերոհիշյալ օրենքի գործադրությունը հանձնվել էր Ազգային կենտրոնական ելևտական հանձնաժողովին, իսկ հավաքված գումարների մատակարարության հոգսը դրված էր Ազգային խնամատարության վրա:

Ուշագրավ է, որ ՀՅԴ համակիր կամ ոչ պաշտոնական մամուլի օրգանները ողջունում էին Ջավեն Պատրիարքի ակտիվ գործելակերպը և ազգային մարմինների աշխատանքը հունի մեջ դնելու նրա ծրագրերը: Միննույն ժամանակ այդ պարբերականները թէև ըմբռնումով էին մոտենում այդ ծրագրերին խոչընդոտող օբյեկտիվ պատճառներին, բայց գտնում էին, որ անհրաժեշտ էր արագացնել մեկ միլիոն օսմանյան ոսկին հանգանակելու ուղղությամբ տարվող կազմակերպչական աշխատանքները: «Ճակատամարտ» օրաթերթը մասնավորապէս առաջարկում էր պատրիարքարանը վերակազմավորել կառուցվածքով, կազմով և ծրագրերով, քանի որ այն անպատրաստ էր ժամանակի առաջադրած անհրաժեշտություններին լիովին ընդառաջ գնալու և ձեռնհասորեն կատարելու իր պարտականությունները: Պատրիարքը, որպէս ազգային իշխանության ղեկավար, պիտի գիտակցէր, որ հակառակ դեպքում «Սպիտակ» եղեռն էր սպառնալու մեր ժողովրդին, իսկ դա հավասարագոր էր «Կարմիր» եղեռնին⁸⁷¹:

Ջավեն Պատրիարքը լսում էր պատրիարքարանի կամ իր հասցեին հնչող քննադատությունները, բայց ժամանակ չէր վատնում դրանց պատասխանելու վրա: Նա շարունակում էր իր ազգափրկիչ առաքելությունն ի կատար ածել, քանի դեռ հնարավորություն և գործելու իրավունք ուներ: 1919 թ. մայիսի 17-ին հայր Ջավենը տարածում է շրջաբերական-կոնդակ, որով կոչ էր անում տարագրյալներին ու որբերին միայն «ավելացածէն բա-

⁸⁷⁰ Ջաւեն արք., նշվ.աշխ., էջ 280-281:

⁸⁷¹ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիվ 927:

ժին չհանել»⁸⁷²: Նա կոչ էր անում վիրավոր հայրենիքի վերաշինության համար յուրաքանչյուր հայի ի սպաս դնել իր կարողությունները, ինչքը, կյանքը: Հաջողության էական պայմանը համարում էր համազգային գործակցությունը և համերաշխությունը: Հարկավոր էր ցույց տալ, որ հայը ոչ միայն անհատաբար ուներ լավ հատկություններ, այլև հավաքական համերաշխ կյանքով արժանի էր մեծ և ազատ ազգերի շարքի մեջ մտնել: Ուստի անհրաժեշտ էր հրաժարվել ամեն վեճերից, եսասիրական ձգտումներից, երկպառակտություն և բաժանում առաջ բերող առիթներից: «Պետք է փրկել անպաշտպան ու անպատուած մեր քոյրերը, պետք է ապրեցնել մեր որբերը, որոնք վաղուան կենդանի հայութիւնը պիտի կազմեն: Ժամանակը սուղ է: Լուրջ ու կազմակերպուած աշխատանքի պէտք կայ», - գրված էր պատրիարքի կոնդակում⁸⁷³:

1920 թ. դեկտեմբերի 30-ին «Ճակատամարտ» օրաթերթում տպագրում են Ջավեն Պատրիարքի կազմած որբերի փրկության ծրագիր-հրահանգը: Այն ուղղված էր Որբախնամի թաղային մասնաճյուղերին: Տեղեկացվում էր, որ որբերի փրկության Կենտրոնական մարմնի որոշմամբ Կաղանդից մինչև Ս. Ծնունդ (դեկտեմբերի 31-ից հունվարի 6-ը) ընկած ժամանակահատվածը հռչակված էր «Որբերի փրկության շաբաթ»: Այդ օրերին մասնաճյուղերի անդամները պիտի ջանային ժողովրդին ներկայացնել որբերի ճգնաժամային կացությունը և առաջարկեին հրաժարվել գոնե այդ տոների առթիվ կատարվելիք բոլոր ծախսերից և նվերներից՝ նախատեսված գումարը հատկացնելով որբերի օգնության նվիրական գործին: Հրահանգում էին մասնաճյուղերին մինչև հունվարի 15-ը կազմակերպել ամանորյա հանդեսներ, որոնցում կընդգրկեին նաև որբերին և կանցկացնեին

⁸⁷² Նույն տեղում, 1919, թիվ 108:

⁸⁷³ Նույն տեղում:

աճուրդներ՝ հոգուտ նրանց⁸⁷⁴: 1922 թ. հունիսի 2-ին Ազգային պատվիրակության հաշվեցույցի տվյալների համաձայն՝ 1918 թ. Մուղղոսի զինադարից մինչև 1921 թ. դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում Կ. Պոլսում հավաքվել էր 1.536.157 օսմանյան ոսկի որբերի և տարագրյալների համար⁸⁷⁵: Այս ձեռնարկներից բացի՝ որբերին օգնելու նպատակով Զավեն Պատրիարքը համագործակցում էր Ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց ընկերությունների, միջազգային և հայկական Կարմիր խաչի ընկերությունների հետ՝ կազմակերպելով նրանց աշխատակիցների ու դեկավարների այցելությունները հայկական որբանոցներ և նպաստելով նրանց կողմից նվիրատվությունների հատկացմանը հայ որբերին: Այդ այցելությունները նույնպես լուսաբանվել են արևմտահայ պարբերականների, ի թիվս որոնց նաև ՀՅԴ կուսակցական և համակիր մամուլի էջերում:

Որբախնամ ծրագրին զուգահեռ Զավեն արքեպիսկոպոսը շարունակում էր որբափրկիչ աշխատանքները: «Իմ առաջին գործերէս մէկը եղաւ տարագիրները խնամելէ զատ, որբերը հաւաքել փողոցներէն և իսլամներու տուններէն», - գրում էր հայր Զավենն իր հուշերում⁸⁷⁶: Մինչև 1922 թ. Կ. Պոլսի հայոց Պատրիարքության և նրա ջանքերով ստեղծված հանձնախմբերի աշխատանքի շնորհիվ բռնաձուլումից փրկվել և հայ համայնքին են վերադարձվել հազարավոր հայ որբեր և առևանգված ու բռնի իսլամացված հայ կանայք և աղջիկներ: Մասնավորապես Առաքել Չաքրյանի գլխավորությամբ գործող Որբահավաք մարմինը 1919 թ. մայիսից 1921 թ. դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում «Չեզոք տուն» կոչվող կառույցի հետ «Պոլսոյ մէջ գտնուած

⁸⁷⁴ Նույն տեղում, 1920, թիվ 645:

⁸⁷⁵ Զաւեն արք., նշվ.աշխ., էջ 282-283:

⁸⁷⁶ Նույն տեղում, էջ 288:

գրեթե 4-5000 որբերէն 3000-ը ազատեր է թուրքերու քովէն»⁸⁷⁷: Գավառներում գտնվող հայ որբերի մեծամասնությունը «մնաց թուրքերուն ձեռքը: Հարիւր հազարաւոր որբերէն շատ քիչերը կարելի եղաւ ազատել»⁸⁷⁸: Զավէն Պատրիարքը դրա պատճառը համարում էր այն, որ Համաձայնական բանակը չէր մտել գավառներ:

1920 թ. հունվարի սկզբին պատրիարքարանը և Քաղաքական ժողովն ընդվզում ու բողոքում են կառավարության այն որոշման դեմ, որով 1000 օսմանյան ոսկի էր հատկացվելու հայ որբերի կարիքները հոգալու համար: Պատրիարքարանը հիշատակագիր է ուղարկում Բարձր Դռանը՝ նշելով, որ հայ որբերի խնդիրների լուծման համար անհրաժեշտ էր 200000 օսմանյան ոսկի: Հիշատակագրով տեղեկացնում էին կառավարությանը, որ Քաղաքական ժողովը ոչ միայն սկզբունքորեն չէր ընդունում այդ գումարը, այլև պահանջում էր վերադարձնել՝

- պատերազմի ժամանակ պետության հաշվին գանձված ազգապատկան բոլոր կալվածքների վարձերը,

- հայկական վանքերից, եկեղեցիներից կողոպտված և Կ.Պոլսի փողերանոցում հալեցված ու տարբեր առարկաներ ձուլած ոսկեղենի ու արծաթեղենի փոխարժեքը,

- հայկական գավառներում կառավարության կողմից գրավված և վաճառված հայ ժողովրդի գույքի փոխարժեքը⁸⁷⁹:

Պատրիարքարանը 1921 թ. սկզբներին զեկույցի տեսքով ամփոփել է իր Որբախնամ և Որբափրկիչ ծրագրերի արդյունքները՝ նշելով, որ 63000 հայ որբեր դեռևս մնում էին մուսուլմանական ընտանիքներում⁸⁸⁰:

⁸⁷⁷ Նույն տեղում, էջ 292:

⁸⁷⁸ Նույն տեղում:

⁸⁷⁹ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, թիվ 348, հունվարի 6:

⁸⁸⁰ Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 66:

«Ժողովրդի ձայն» անկախ պարբերականը 1921 թ. փետրվարի 11-ին տեղեկացնում էր, որ պատրիարքարանը Ազգերի Դաշնակցության լիզա էր ուղարկել հայ որբերի վիճակին նվիրված իր տեղեկագիրը՝ այդ կազմակերպության իսկ պահանջով: Տեղեկացվում էր նաև, թե առաջիկա գարնանը 3 անձից բաղկացած մասնախումբ էր գալու «Թուրքիա՝ զբաղւելու հայ որբերը փրկելու և ապահովելու գործով»⁸⁸¹:

1922 թ. պատրիարքարանին տեղեկացնում են, որ «Միլլի կառավարութիւնը զենքի տակ առած է Անաստուրի մէջ մնացած հայ որբերէն անոնք, որ անցած են 15 տարին: Ազատ չեն մնացած նոյն իսկ ամերիկեան որբանոցներուն աշակերտները»⁸⁸²: Չավեն Պատրիարքը նաև այս արհավիրքից և բնաջնջումից որբերին փրկելու գործում նոր ուղղություն էր որդեգրել՝ նրանց տարհանել հիմնականում քրիստոնյա ազգաբնակչություն ունեցող կամ հայ ժողովրդի հանդէպ բարեկամաբար տրամադրված պետություններ և այդ կերպ որբերին փրկել թուրքական հերթական սպանդից: «Ճակատամարտը» տեղեկացնում էր, որ 1922 թ. դրությամբ 25.000 հայ որբ կար ԱՄՆ-ում, 400-ը՝ Գերմանիայում, 15.000-ը՝ Հունաստանում, 400-ը՝ Հռոմում, 200-ը՝ Ռումինիայում, 1000-ը՝ Բուլղարիայում, 5000-ը՝ Սիրիայում, 40.000-ը՝ Խորհրդային Հայաստանում⁸⁸³: Չավեն պատրիարքը փորձում էր կարգավորել այդ հայ որբերից շատերի հետագա ճակատագիրը, այսինքն՝ անել այնպես, որ նրանք օտար երկրում հայի հետ ընտանիք կազմեին և կապեր հաստատեին տեղի հայ համայնքի հետ՝ պահպանելով իրենց ազգային դիմագիծը⁸⁸⁴: ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերականները քննադատորեն էին անդրադառնում Չավեն Պատրիարքի այս ծրագրին՝ պնդելով,

⁸⁸¹ «Ժողովրդի ձայն» («Ժամանակ»), Կ. Պոլիս, 1921, փետրվարի 1:

⁸⁸² «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922, թիվ 992:

⁸⁸³ Նույն տեղում, 1922, թիվ 1330:

⁸⁸⁴ Ավագյան Բ., նշվ. աշխ., էջ 175-177, 196-201:

թե հայ որբերին չպետք է տարհանել հայրենիքից և չհավատալով, որ օտար երկրում հայ երեխաները հայ կմնային⁸⁸⁵:

Թուրքական իշխանությունները ոչ միայն սպառնագրեր էին ուղարկում Պատրիարքին, այլև հասկացնում էին, որ դեմ էին նրա հայափրկիչ ծրագրերին: Հայր Զավենին չէին հանդուրժում ոչ միայն այն բանի համար, որ նա տեղեկագիր էր ուղարկել Ազգերի դաշնակցության լիգա, այլև 1920 թ. մեկնել էր Ֆրանսիա և Կիլիկիայի հայերին փրկելու խնդրանքով դիմել էր ֆրանսիական կառավարությանը: Թեև այդ առաքելությունը չծառայեց իր նպատակին ու պաշտոնական Ֆրանսիան ձեռք չմեկնեց, բայց Պատրիարքի այցը համարվեց Թուրքիայի դեմ ուղղված դավաճանություն⁸⁸⁶: Քեմալական կառավարությունը Զավեն Պատրիարքին չներեց նաև այն պատճառով, որ նրա նախաձեռնությամբ 1922 թ. հունիսի 4-ին կրկին Ազգերի դաշնակցության լիգա բողոքագիր էր ուղարկվել: Դրանով քննադատվում և մերժվում էր 1922 թ. ապրիլի 20-ին Թուրքիայում ընդունված հայերի լքյալ գույքերի վերաբերյալ այն օրենքը, որը թույլ էր տալիս կառավարությանը բռնագրավել «թշնամի յարձակումէն ազատագրուած շրջաններէն մեկնած անձերուն գոյքերը»⁸⁸⁷:

«Ճակատամարտ» օրաթերթը հանգամանորեն լուսաբանել է Հայաստանի Օգնության Կոմիտեի (այսուհետև՝ ՀՕԿ) նախագահ Հովհ. Թումանյանի այցը Արևմտյան Հայաստան: Բանաստեղծը 1921 թ. սեպտեմբերին մասնակցել էր այդ կազմակերպության հիմնադիր ժողովին և ընտրվել էր ՀՕԿ-ի նախագահ: ՀՕԿ-ը պիտի օգներ կառավարությանը սովոր վերացնելու և երկիրը վերաշինելու գործում: «Ինձ էլ հարկադրեցին նախագահությունն առնելու ինձ վրա, իբրև թե իմ անունը կարող է համե-

⁸⁸⁵ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922, թիվ 1330:

⁸⁸⁶ Բաղդասարյան Կոբյուն (աբեղա), «Մոռացված տապանաքարը», (տե՛ս www.armworld.am):

⁸⁸⁷ Վարդան Լեւոն, նշվ. աշխ., էջ 271-272:

րաշխությանը նպաստել», - գրում էր Թումանյանն Ավ. Իսահակյանին⁸⁸⁸: ՀՕԿ-ի հիմնադիր ժողովում որոշում է կայացվում Հովհ.Թումանյանին և Երվանդ Թադիանոսյանին գործուղել Կ.Պոլիս՝ տեղի հայության ուժերը համախմբելու և հայրենիքին տրամադրվող օգնության գործը կազմակերպելու նպատակով: Թումանյանը վատառողջ էր և կամքին հակառակ էր համաձայնվել կատարել այդ որոշումը, այն էլ որբերին ու գաղթականներին սովից փրկելու մղումից դրդված⁸⁸⁹: ՀՕԿ-ի համագումարում ելույթի ժամանակ ասում է հետևյալը. «Քանի դեռ ժողովուրդը սովամահ է լինում փողոցներում, պետք է թողնել ամեն ինչ, մոռանալ ամեն բան և գնալ նրան փրկելու»⁸⁹⁰: Այս մտահոգությունն արտահայտված է 1921 թ. սեպտեմբերին գրած նրա կոչում: Այստեղ նա որպես ՀՕԿ-ի նախագահ էր դիմում աշխարհի տարբեր երկրներում ցրված համայն հայությանը: ՀՕԿ-ի նախագահը գրում էր. «Հայ ժողովրդին սովից ազատելու և քանդված Հայաստանը վերազինելու գործը վեր է կուսակցական նկատառումներից և քաղաքական տարաձայնություններից... Արդ, լսիր, հայություն, ուր էլ որ լինես, Եվրոպայից մինչև Հնդկաստան և ամենուրեք: Լսիր քեզ կանչող հայրենիքի ձայնը և շտապիր օգնության ամեն բանով, ինչով կարող ես, որ ունենաս էն՝ ինչ-որ երազել ես դարբերով-ազատ ու շեն հայրենիք»⁸⁹¹: Այս փաստաթղթում կարծես խտացված են Հովհ. Թումանյանին հուզող առաջնահերթ խնդիրները և այն գաղափարները, որոնցով հանդես էր եկել մեծ բանաստեղծն իր ամբողջ կյանքում⁸⁹²: ՀՕԿ-ի կոչով

⁸⁸⁸ Հովհաննիսյան Սուսաննա, «Պատմություններ Հովհ.Թումանյանի կյանքից», Երևան, 2010, էջ 224:

⁸⁸⁹ Թումանյան Ն., «Հուշեր և գրույցներ», Երևան, 1987, էջ 243-244:

⁸⁹⁰ Հովհաննիսյան Ս., նշվ. աշխ., էջ 224:

⁸⁹¹ ՀՕԿ-ի կոչը (տե՛ս Հովհ. Թումանյան, «Ընտիր երկեր», Երևան, 1978, էջ 495-497):

⁸⁹² Գյուլնազարյան Խ., «Թումանյանի քննադատական և հրապարակախոսական ժառանգությունը» (տե՛ս Հովհ.Թումանյան, «Երկերի լիակատար ժողովածու», Երևան, 1994, հ. 6, էջ 567):

Թումանյանը հանդես է եկել Կ.Պոլսում տեղի մտավորականության կողմից կազմակերպված հանդիպումների ժամանակ: Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթը 1921թ. նոյեմբերի 2-ի համարում «ՀՕԿ-ի ներկայացուցիչները Պոլսո մեջ» հոդված-հարցազրույցում և «Առաքելության մը առթիվ» խմբագրականում հանգամանորեն անդրադարձել է ՀՕԿ-ի նախագահի ելույթին: Թերթը պարզաբանում էր, որ Հովհ. Թումանյանը և Ե. Թաղիանոսյանը Կ.Պոլիս էին ժամանել՝ ապահովելու համար գաղութների մասնակցությունը հայրենիքի օգնության գործին: Բանաստեղծը ներկաներին հավաստիացնում էր, որ ՀՕԿ-ը ստեղծվել էր Հայաստանի տնտեսական ճգնաժամը մեղմելու և երկիրը վերաշինելու նպատակով: «Հայրենիքի Օգնութեան Կօմիտէին կը մասնակցին հասարակական ամեն խաւի ներկայացուցիչներ, առանց քաղաքական կուսակցութեանց մէջ խտրութիւններ դրուած ըլլալու: Զուտ համահայկական նկարագիր մը ունի կազմուած մարմինը և պիտի ձգտի ապահովել ամեն տեղ ջրուած Հայերուն նիւթական և բարոյական օժանդակութիւնը»,- ասում էր Թումանյանը⁸⁹³: Նա հավելում էր, որ այդ նպատակով էր եկել Կ. Պոլիս և հույս ուներ, որ տեղի հայությունը պիտի օգնէր Հայաստանում տառապող իր եղբայրներին: Թումանյանը նշում էր, որ պիտի աշխատէր Կ.Պոլսի Հայրենիքի Օգնության Մարմինը (այնուհետև՝ ՀՕՄ) կապել Մայր հայրենիքում գործող ՀՕԿ-ի հետ՝ այդպիսով արդյունավետ դարձնելով օգնության ջանքերը և համագործակցություն ստեղծելով այդ 2 կենտրոնական մարմինների միջև: Բերում էր փաստեր, թե Ամերիկյան նպաստամատույցը հանձն էր առել մինչև 1922 թ. հունիս ամիսը պարենավորել 100.000 հոգի և մինչև 1921 թ. դեկտեմբեր ամիսը 200.000 փութայուր բերել տալ Հայաստան: Ռուսաստանը ամսական 25.000 փութայուր, իսկ Ադրբեջանը ձրի նավթ և մագուր էին խոստա-

⁸⁹³ «Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1921, թիվ 901:

ցել տրամադրել Հայաստանին: Աբխազիան արդեն 500 փութ ծխախոտ էր նվիրել ՀՕԿ-ին: Թումանյանը հավատում էր, որ հայկական գաղթօջախները նույնպես ձեռք էին մեկնելու ՀՕԿ-ին: Դա առավելապես ունենալու էր բարոյական նշանակություն, քանի որ մեծ հասույթ չէր գոյանալու: Պարզապես իրենց անվերապահ և լիառատ օգնությամբ «գաղութի մեր Հայութիւնը ցոյց պիտի տայ, թէ ինք անտարբեր չէ Հայաստանի մէջ գալարուող մեր սովահար եղբայրներու օգնութեան կոչին»⁸⁹⁴:

«Ճակատամարտ» օրաթերթը «Առաքելության մը առթիվ» խմբագրականում վստահեցնում էր, որ Կ. Պոլսի, ԱՄՆ-ի, Հունաստանի և այլ երկրների հայկական գաղթօջախները ՀՕԿ-ի կոչի կարիքը չունեին: Իրենց հնարավորությունների սահմաններում նրանք մշտապես փորձել էին օգնել հայրենիքին: «Հայ ժողովուրդին օգնելու համար երբէք պէտք չունինք նկատի առնելու ըէժիմը՝ որուն ենթարկուած է Հայաստան, և գոյնը Երեւանի այսօրուան վարիչներուն: Հայրենիքը մե՛րն է՝ հակառակ բոլոր տառապանքներուն ու այդ տառապանքներու՛ն հետ: Ան չի կրնար զրկուիլ ոչ մեր գուրգուրանքէն, ոչ ալ մեր աջակցութենէն», - գրում էր «Ճակատամարտը»⁸⁹⁵: Օրաթերթը հիշեցնում էր, որ մինչ ՀՕԿ-ի նախագահի Կ.Պոլիս գալը, ՀՕՍ-ը նոյեմբերը հայտարարել էր հագուստի ամիս: Այդ մեկ ամսվա ընթացքում 200.000 կտոր հագուստ էլ պիտի հայթայթվեր պոլսահայերի ջանքերով, և հավաքված հագուստը պիտի ուղարկէին Հայաստանի ժողովրդին ձմռանն ընդառաջ՝ «Ապրեցնենք Հայաստանի ժողովուրդը» կարգախոսի համաձայն⁸⁹⁶:

Գաղութները չէին կարող խուլ մնալ Մայր հայրենիքի օգնության խնդրանքին: «Ճակատամարտը» վստահեցնում էր, որ իրենք օգնելու էին սովից ու ցրտից ամեն օր կաթիլ առ կաթիլ

⁸⁹⁴ Նույն տեղում:

⁸⁹⁵ Նույն տեղում:

⁸⁹⁶ Նույն տեղում, 1921, թիվ 899:

մեռնող իրենց հայրենակիցներին և հայրենի հողի վրա ստեղծված Հայաստան պետությանը: Հակառակ դեպքում՝ իզուր էր խորհել անկախության ու հայրենիքի մասին: «Վաղը արդեն ուշ կ'ըլլայ» խոսքերով էր պոլսահայությունը պատասխանում ժողովրդի անունից իրենց դիմող ՀՕԿ-ի պատվիրակությանը⁸⁹⁷: Հայ գաղթօջախների աջակցության գործին անկարող էր խանգարել Հայաստանի անկախությունը խեղդելու եկած «կարմիր մարդոց հաստատած խորթ ընթիվը»⁸⁹⁸: Պարզապես առաջարկում էին միջազգային հանձնախմբի միջոցով Հայաստան հասցվելին և կարիքավոր հայությանը բաժանվելին հավաքված պարենը, դեղորայքն ու հագուստը, թեև նպաստամատույց այդ ճանապարհը մերժում էր Խորհրդային Ռուսաստանը՝ դա համարելով միջամտություն իր ներքին գործերին⁸⁹⁹: «Թող մեր աչքերուն փոշի չցանեն ըսելով, որ Երեւանի մէջ կազմուած է արդէն վստահելի տարրերէ և զանազան հոսանքէ ու կուսակցութենէ Հայաստանի Օգնութեան Կօմիտէ մը՝ որուն կառավարութիւնը գործելու ամեն ազատութիւն կուտայ», - գրում էր «Ճակատամարտը»⁹⁰⁰: Օրաթերթը չէր կասկածում Կ.Պոլիս ուղարկված ՀՕԿ-ի պատվիրակության անդամների պարկեշտությանը, բայց չէր վստահում խորհրդային կառավարությանը⁹⁰¹: «Ճակատամարտը» տպագրել է ՀՕԿ-ի կանոնադրությունը և ծրագիրը⁹⁰²: Այդտեղ հստակ գրված էր, որ ՀՕԿ-ը հասարակական մարմին է և «իրեն յայտարարում է չեզոք քաղաքական և կուսակցական պայքարի հանդէպ»⁹⁰³: Նույնն ասում էր հանդիպումների ժամանակ ՀՕԿ-ի նախագահը: Այդ շնչով էր համակված Թումանյանի ելույթը 1921

⁸⁹⁷ Նույն տեղում, 1921, թիվ 916:

⁸⁹⁸ Նույն տեղում, 1921, թիվ 902:

⁸⁹⁹ Նույն տեղում:

⁹⁰⁰ Նույն տեղում, 1921, թիվ 903:

⁹⁰¹ Նույն տեղում:

⁹⁰² Նույն տեղում, 1921, թիվ 918:

⁹⁰³ Նույն տեղում:

թ. նոյեմբերի 11-ին Կ.Պոլսի Թոքաթյան սրահում նրա պատվին ռամկավար-ազատական կուսակցության կազմակերպած թեյասեղանի ժամանակ⁹⁰⁴: Հանդիպմանը ներկա էին հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների ու մարմինների 50-ից ավելի անդամներ: Թումանյանը նրանց ուշադրությունը հրավիրում էր այն հանգամանքի վրա, որ իրենք Կ.Պոլիս էին եկել Հայաստանի վերաշինության գործը հունի մեջ գցելու համար: «Շատ ուրախ եմ, որ Հայաստանի օգնութեան գործին շուրջ գրեթէ տարակարծություններ չկան: Երբ մեր տան մեջ խօսք եղաւ, թէ Պոլսոյ մեջ միութիւններ եղած են Հայաստանին օգնելու համար, երկու Լօռեցիներէն մէկը միւսին ըսաւ. «Դու կը կարծէիր, թէ մենք անտէ՞ր ենք»: Բոլոր օգնութիւններէն աւելի մենք պիտի տանինք այն լուրը, թէ երկրէն դուրս բոլորը բոցավառուած են մէկ հոգիով և մէկ կրակով: Ահա թէ ինչն է մեզի համար թանկագինը»⁹⁰⁵:

Անկախ ՀՕԿ-ի առաքելության շուրջ ծավալված քննարկումներից՝ ՀՕԿ-ի պատվիրակությունը Արևմտյան Հայաստանում շարունակում էր իր հանդիպումները տարբեր խավերի ներկայացուցիչների հետ: Օրինակ՝ «Ճակատամարտում» լուր կար հայ կաթոլիկ համայնքի հոգևոր հովվի տեղապահի ու հայ բողոքականների ազգապետի հետ Հովհ. Թումանյանի և Ե. Թադևոսյանի հանդիպման մասին⁹⁰⁶: 1921թ. նոյեմբերի 22-ին «Պոլիս և թաղեր» բաժնում օրաթերթը ներկայացնում էր Թումանյանի հանդիպումը Մազրի-գյուղի հայկական թաղի բնակչության հետ: Բանաստեղծը մեկ ու կես ժամ տևած բանախոսության ընթացքում պարզաբանում էր, որ իր այցելության նպատակն էր «ոչ թէ կարեկցութիւն հայցել և օգնութիւն խնդրել,

⁹⁰⁴ Նույն տեղում, 1921, թիվ 910:

⁹⁰⁵ Նույն տեղում:

⁹⁰⁶ Նույն տեղում:

այլ բարոյական կապը զօրացնել մայր երկրի և գաղութներուն միջեւ»⁹⁰⁷:

ՀՕԿ-ի նախագահը վայելում էր ողջ հայ ժողովրդի սերն ու հարգանքը որպէս հասարակական-քաղաքական գործիչ և որպէս հրապարակախոս ու գրող: «Ճակատամարտում» Հակոբ Օշականը «Հովհաննէս Թումանյան» քառամաս վերլուծական հոդվածաշարով փորձել է ընթերցողներին պատկերացում տալ նրա գրական ժառանգության մասին⁹⁰⁸: Իհարկէ, հոդվածագիրը միակողմանիորէն և պարզունակ հայեցվածքով էր անդրադառնում Թումանյանի ստեղծագործություններին՝ թերի ու ոչ օբյեկտիվ գնահատելով դրանց մեծամասնությունը: Օշականը, սակայն, փաստում էր անուրանալին. «Ոչ մէկը բանաստեղծներէն կրցաւ անոր չափ բազմաձեւ եղանակով մը բացատրել...հայի հոգին: Թումաննէան երեւոյթը անհամեմատ բարձր է իր ժամանակից: Նրա ստեղծագործութիւնները համամարդկային արժէք ունեն»⁹⁰⁹:

«Ճակատամարտ» օրաթերթում ուշադրության են արժանացել աճող սերնդի կրթական գործը և ուսուցիչներին մտահոգող հիմնահարցերը՝ հատկապէս 1920-1922 թթ.: Կրթական ոլորտում գոյություն ունեցող խնդիրների քննարկումը «Ճակատամարտը» շարունակել է գրեթէ մինչև իր վերջին համարը: Արդէն 1924 թ. պարբերականն այլևս չի բարձրացրել նախկինում հնչեցրած խնդիրները, այլ ավելի շատ մտահոգվել է Թուրքիայում ընդունված այն օրենքներով կամ կառավարության որոշումներով, որոնք սահմանափակում էին ազգային փոքրամասնությունների (մասնավորապէս հայերի)՝ մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքը:

⁹⁰⁷ Նույն տեղում, 1921, թիվ 918:

⁹⁰⁸ Նույն տեղում, 1921, թիվ 922, 925, 926, 927:

⁹⁰⁹ Նույն տեղում, 1921, թիվ 927:

Հասարակական-քաղաքական խնդիրներից բացի՝ «Ճակատամարտում» լուսաբանվել է նաև ժամանակի հայկական և միջազգային մշակութային անցուդարձը: 1920-1924 թթ. օրաթերթում հաճախակի են դարձել բնույթով մշակութային նյութերը (վերլուծական հոդվածներ, թղթակցություններ, լուրեր): «Ճակատամարտը» դրանցով կարծես ցանկացել է ցույց տալ, թե, անկախ ամեն ինչից, հայ ազգը կենսունակ է և հաջողությունների կարող է հասնել աշխարհի լավագույն բեմերում ու ցուցասրահներում: Մշակութային կյանքն արտացոլված է «Թատրոն», «Գրքեր», «Գավառի մոռցված տիտանները», «Մշակութային սուրհանդակ», «Հոբելյան մը» և այլ խորագրերի ներքո:

«Ճակատամարտը» լուսաբանել է Հայաստանի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ հանրապետությունների կյանքը: 1919-1920 թթ. թերթը պատկերացում է սովել 1-ին հանրապետության սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային առօրյայի մասին: «Արարատյան սուրհանդակ» բաժնում սեփական թղթակիցների լուրերը արևմտահայ ընթերցողներին հավաստի տեղեկատվություն են հաղորդել հայոց պետականության առաջին քայլերի, առկա խնդիրների ու կատարվող աշխատանքների մասին: ՀՀ պետական կյանքում նկատվող թերություններին թերթը ներողամտորեն է վերաբերվել ու մշտապես Հայաստանին աջակցողի դերում է եղել: Վերլուծել և ընթերցողների դատին է ներկայացրել մեր ժողովրդի և պետականության համար ճակատագրական ու կարևոր իրադարձություններ, համաժողովներ և Հայ դատի լուծման համար ընթացող բանակցություններ ու քննարկումներ, մի խոսքով՝ 1918-1921 թթ. Հայաստանի կենսագրության մանրամասները: Բնորոշ է այն հանգամանքը, որ ռուս և հայ բոլշևիկներին այս շրջանում օրաթերթը քաղաքական լուրջ գործոն չի համարել: 1922 թ. «Ճակատագրական տարին» տարեվերջյան խմբագրականում օրաթերթը փաստում էր, որ զինադադարից հետո անցել էր 4 տարի, և Թուրքիան արդեն ինքն էր

պայմաններ առաջադրում բանակցություններում, իսկ Խորհրդային Ռուսաստանը շարունակում էր Հայկական հարցում իր անհաշտ ընթացքը⁹¹⁰: «Այլ ևս ոչ մէկ խօսք՝ զանազան որոշումներու մասին, որոնց կարգին՝ և Հայաստանի հողային պահանջներու մասին», - գրում էր թերթը⁹¹¹: Այս մտահոգություններով լի վերլուծական հոդվածներ ու խմբագրականներ է շարունակել տպագրել նաև 1923-1924 թթ.: Անդրադարձել է մասնավորապես Հայկական միացյալ պատվիրակության գործունեությանը, Հայ ազգային տան խնդրին և լոգանյան բանակցային գործընթացին: «Անցնող տարին» խմբագրականում Լոզանում Հայկական հարցի ձախողումը պայմանավորել է բանակցություններին մասնակցող պետությունների շահերի չարաշահմամբ⁹¹²: 1924թ. արդեն արձանագրում էր. «Այլևս «մարդասիրական» ինդիք էր դարձել հայկական դատը: Իբր այդ քննեց Ազգերու Դաշնակցութիւնն ալ, մասնախումբէ մասնախումբ գլորելով զայն»⁹¹³: Այնուհանդերձ, թերթը չի հավատացել, որ վերանալու էր այդքան դժվարությամբ ձեռք բերված Հայաստանի անկախ պետականությունը, որ Սևրի դաշնագիրը մնալու էր չվավերացված, ու կյանքի չէին կոչվելու դրա դրույթները, որ այդպես էլ չլուծված էր մնալու Հայկական հարցը, որ չէին պատժվելու Հայոց եղեռնի կազմակերպիչները և իրականացնողները: Այս համատեքստում հասկանալի էր թերթի ցանկությունը՝ օբյեկտիվորեն պատկերել հայաստանյան իրադարձությունները: Դրանցում հիշատակված փաստերը ներկայացված էին ըստ ականատեսների վկայությունների:

1921-1924 թթ. «Ճակատամարտը» հասկացել էր, որ Խորհրդային Հայաստանը այլևս պատմական իրողություն էր, որ

⁹¹⁰ Նույն տեղում, 1922, թիվ 1260:

⁹¹¹ Նույն տեղում, 1922, թիվ 1217:

⁹¹² Նույն տեղում, 1922, թիվ 1272:

⁹¹³ Նույն տեղում, 1924, թիվ 1798:

Հայ դատը առաջիկայում դժվար թե պաշտպանվեր և ստանար արդար լուծում: Խորհրդային Հայաստանը աստիճանաբար սփյուռքահայության մեծամասնության համար (որոշակի վերապահումներով) սկսել էր ընկալվել որպես հայ ժողովրդի պետականության նոր դրսևորում, որին նրանք պիտի փարեին ու պիտի փորձեին օգնել ու աջակցել Հայաստանին՝ խորհրդային իշխանության ընձեռած նույնիսկ չնչին համագործակցության հնարավորության սահմաններում: Այս առումով «Ճակատամարտը» բացառություն չէր: Եվ հասկանալի էին օրաթերթի ջանքերը՝ իր էջերում թեկուզ արտատպելով հոդվածներ հայաստանյան մամուլից, պատկերացում տալ ընթերցողներին հայրենիքի առօրյայի և հաջողությունների մասին: Հայաստանի հոգսերի հանդեպ անտարբեր չէին գաղութները: «Ի՞նչ փոյթ ըէժիմը, որ կը տիրէ Հայաստանի մէջ, ու կարգերը, որոնք կը կառավարեն հայ ժողովուրդը: Քաղաքական նկրտումները տեղ չեն կրնար ունենալ հիւանդի մը սնարին մօտ: Հայ ժողովուրդը կը հիւծի, պէտք է դարման հասցնել», - գրում էր «Ճակատամարտը»⁹¹⁴: «Հայրենիքը մէրն է հակառակ բոլոր տառապանքներուն, ու այդ տառապանքներուն հետ: Հետևաբար, ան չի կրնար զրկուիլ ոչ մեր գուգուրանքէն, ոչ ալ մեր աջակցութենէն», - համոզված էր օրաթերթը⁹¹⁵: Խմբագրականներից մեկում քննարկելով հայրենիք-սփյուռք կապերը՝ «Ճակատամարտը» գտնում էր, որ Հայաստանի դռները պիտի բաց լինեին բոլոր հայերի առաջ՝ անկախ նրանց մեծամասնական լինել-չլինելու հանգամանքից⁹¹⁶: Այս պայմաններում սփյուռքահայ համայնքները կամ բարերարներն անհրաժեշտության դեպքում գրեթե զրկվում էին հայրենի երկրի շենացման գործընթացին մասնակցելուց⁹¹⁷:

⁹¹⁴ Նույն տեղում:

⁹¹⁵ Նույն տեղում, 1921, թիվ 901:

⁹¹⁶ Նույն տեղում, 1922, թիվ 1101:

⁹¹⁷ Նույն տեղում:

Խորհրդային Հայաստանի և հայ գաղթօջախների փոխհարաբերությունների լուսաբանման և ընդհանրապես «Ճակատամարտի» քաղաքական ուղեգծի պատճառով այնքան էին սրվել հարաբերությունները, որ, ինչպես տեղեկացնում էր թերթը, 1923 թ. հուլիսի 12-ին «Խորհրդային Հայաստան» լրագիրը հայ համայնքներին կոչ էր արել՝ չաջակցել «Ճակատամարտ» օրաթերթի և «Հայրենիք» ամսագրի շուրջ համախմբված անձանց նախաձեռնած անգամ համահայկական բնույթի ձեռնարկներին, քանզի «զանազան սուտ ու պրովոկացիոն տեղեկություններով դրանք գրգռում էին ժողովրդի միամիտ տարրերը Խորհրդային Հայաստանի դեմ»⁹¹⁸: «Ճակատամարտը», չնայած Խորհրդային Հայաստանի մամուլում իր հասցեին հնչեցված կարծիքներին, շարունակում էր առօրյա հրապարակումները՝ կրկին մատնանշելով հայրենիքում առկա խնդիրները: Ընդ որում, թերթը պարբերաբար հիշեցնում էր. «Արտասահմանի մեջ, հանրութիւնը լուր չունի Խորհրդային Հայաստանի ներքին կեանքէն: Ինչ որ գիտէ, թերթերու կցկտուր տեղեկութիւններն են, քաղուած խորհրդային թերթերէ»⁹¹⁹: Այսինքն՝ հասկացել էր, որ միայն այդ պարտադրված ճանապարհով (Խորհրդային Հայաստանից հայ գաղթօջախներ ուղարկված թերթերի միջոցով) ստացված տեղեկատվությունը կարող էին տպագրել հայրենիքի անցուղարձի մասին:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ «Ճակատամարտը», Հանրապետական Թուրքիայի հոչակումից հետո, թեև անհրաժեշտության դեպքում տեղեկացնում էր շարունակվող հակահայ քաղաքականության, հայ ժողովրդի իրավունքները ոտնահարող նոր օրենքների ու կառավարական որոշումների մասին, բայց թերթում այլևս չկային դրանց դեմ ուղղված հոդվածներ:

⁹¹⁸ Նույն տեղում, 1923, թիվ 1488:

⁹¹⁹ Նույն տեղում, 1923, թիվ 1538:

Դա պայմանավորված էր ոչ թե գաղափարական-քաղաքական ուղղվածության փոփոխությամբ, այլ մի կողմից՝ Թուրքիայի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական հանգամանքներով, մյուս կողմից՝ այդ հանգամանքների և Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության հետևանքով խմբագրակազմում Հայ դատի լուծման հետ կապված հույսերի մարմամբ:

«ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ԱՄՍՕՐՅԱ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ

1919-1920 թթ. Կ.Պոլսում հրատարակվել են «Ճակատամարտ» օրաթերթի համանուն գյուղատնտեսական և մանկավարժական ամսօրյա հավելվածները: Մեզ են հասել այդ պարբերականների ընդամենը մի քանի համար: Դրանցում ամփոփված նյութերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այդ հանդեսների ուղղվածության ու նպատակների մասին:

«Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածը Հայ գյուղատնտեսական միության (այսուհետև՝ ՀԳՄ) պարբերական մամուլի օրգանն էր: Հանդեսի հիմնական բաժիններն էին՝ «Տնտեսական-ընկերային», «Տեղեկատվական-գիտական», «Գյուղական կյանք», «Օգտակար բույսեր», «Բնության գրկին մեջ», «Անասունների համաճարակներ», «Նամականի» և այլն:

«Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածի խմբագրական մարմինը և աշխատակիցները հիմնականում հիշյալ միության անդամներն էին: Նրանք իրենց գործին քաջատեղյակ և փորձառու մասնագետներ էին: Հանդեսի խմբագրական մարմնում ընդգրկված էին Գեղամ Գավաֆյանը, Պողոս Գևորգյանը, Հովհաննես Հինդյանը, Շահան Բերբերյանը, Գևորգ Մեսրոպը: Հոդվածաշարերով և վերլուծություններով հանդես էին գալիս ՀԳՄ վարչական խորհրդի անդամներ Կարապետ Նուրյանը, Հայկ Սերենկյուլյանը, Սեպուհ Ստեփանյանը, Նշան Անդ-

րեասյանը: Նրանք և «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյայի ողջ կազմը ձգտում էին նպաստել Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում գյուղատնտեսության զարգացմանը, հայ ժողովրդի կենսակերպի բարելավմանը: Հավելվածի նշանաբանն էր՝ «Միութիւն, համերաշխութիւն և գիտութիւն»⁹²⁰:

«Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա հավելվածը Հայ ուսուցչական միության (այսուհետև՝ ՀՈՒՄ) պարբերական մամուլի օրգանն էր: Հանդեսի խմբագրական մարմնում ընդգրկված էին Գեղամ Գավաֆյանը, Պողոս Գևորգյանը, Հովհաննես Հինդլյանը, Գևորգ Մեսրոպը, Շահան Բերբերյանը: Նրանք և աշխատակիցների մեծ մասը ՀՈՒՄ-ի անդամներն էին ու համատեղում էին աշխատանքը «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելվածում:

«Ճակատամարտ» մանկավարժական ամսօրյա հանդեսն ուներ «Էական հարցեր», «Կրթական վիճակագրություն», «Հարցումներ և պատասխաններ՝ աշակերտների դաստիարակության վերաբերյալ», «Կրթական քրոնիկ», «Հայ դաստիարակներ», «Տեղեկատվություն ՀՈՒՄ գործունեության», «ՀՈՒՄ քրոնիկ», «Նոր գրքեր» բաժինները:

ՀՈՒՄ-ը և նրա պաշտոնաթերթը հետապնդում էին մի շարք նպատակներ.

- ՀՈՒՄ-ի Կ.Պոլսի մասնաճյուղերի վերաբացում,
- մանկավարժական եռամսյա դասընթացների կազմակերպում,
- ուսուցիչների նյութական վիճակի բարվոքում,
- չափահաս որբերի հայեցի դաստիարակություն և այլն⁹²¹:

⁹²⁰ «Ճակատամարտ» գյուղատնտեսական ամսօրյա հավելված, 1919, թիվ 1, էջ 3-4, 1919, թիվ 2, էջ 24:

⁹²¹ Նույն տեղում, 1919, թիվ 1, էջ 14-22:

**Կ.ՊՈԼՄԻ «ՇԱՆԹ» ՀԱՆՐԵՍԸ (1911-1915 ԹԹ.
ԵՎ 1918-1919 ԹԹ.)**

«Շանթ» հանդեսը լույս է տեսել Կ.Պոլսում 1911-1915 թթ. և 1918-1919 թթ.: Խմբագիրը Մերուժան Պարսամյանն էր: Աշխատակազմում ընդգրկված էին ժամանակի անվանի գրողներն ու հրապարակախոսները. Երվանդ Օտյան, Երուխան (Երվանդ Սրմաքեշխանյան), Օննիկ Չիֆթե Սարաֆ, Եղիա Տեմիրճիբաշյան, Զարուհի Գալեմքերյան, Միքայել Շամտանձյան, Մկրտիչ Պարսամյան (Կայծակ), Ժակ Մայապալյան (Փայլակ), Արամ Չարգ (Վտարանդի), Հակոբ Անտոնյան, Շավարշ Միսաքյան, Հակոբ Միրունի, Ենուք Արմեն, Արշակ Ալպոյաճյան, Գևորգ Մեսրոպ, Հովհաննես Ասպետ և այլք: «Շանթը» թղթակիցներ ուներ Արևմտյան Եվրոպայի երկրներում, Կովկասում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում: Նրանց նյութերը հանդեսին հաղորդում էին «տեղի գրական և գեղարվեստական շարժումը՝ մասնաւորապէս հայէն բոլոր և հայութիւնը շահագրգռող»⁹²²:

«Շանթ» հանդեսը հիմնվել էր հայ գրականության զարգացմանը նպաստելու նպատակով: «Հանգրվանը» վերնագրով խմբագրականում նշված էր. «Ժամանակն հասած է, որ դիմենք գեղարվեստի հանգրուանին, ստեղծենք նոր միջավայր մը, ուր արւեստին գաղտնիքները քողամերկուին, ուր քաղաքական և ազգային մոլեգնոտ կռիվներէն յոգնած մեր ուղեղները անդորրին պահ մը: Այդ հանգրուանը ժամադրավայրը պիտի ըլլայ բոլոր ինքնզինքնին հարգող գրագէտներուն: Հոն կուսակցական ոգին տեղի պիտի տայ զուտ գեղարվեստական մակընթացութեան, ամեն գրագէտ՝ այդ նոր գետնին վրայ ձեռք պիտի երկարէ իր սկզբունքի ախոյեանին՝ գործակցելու համար գրականութեան պանծացումին: Ահաւասիկ այդ նպատակին համար կը հիմնենք

⁹²² «Շանթ» հանդես, 1911, թիվ 1, էջ 1:

«Շանթ» հաղէար»⁹²³: Այդ ծրագրային խմբագրականում նշվում էր ամսագրի հիմնական նպատակը, այն, որ «Շանթի» էջերում պիտի արտացոլվեին հայ արվեստն ու գրական միտքը, իսկ «գրական և գեղարուեստական շարժումին մէջ պիտի խօսուէր ամեն հրատարակութիւններու վրայ՝ տարուան գրականութեան և գեղարուեստին ամփոփ ու ճշգրիտ պատմութիւնը տուած ըլլալու համար»⁹²⁴:

Հրատարակության առաջին շրջանում «Շանթ» հանդեսն ունեցել է գրական-գեղարվեստական և գիտական ուղղվածություն: Հանդեսի հիմնական բաժիններն ու խորագրերն էին՝ «Գրական-գեղարվեստական շարժում և մոտեցումներ», «Լրափունջ», «Գրքեր», «Թրքահայ գրականություն», «Մամուլ», «Թարգմանություններ», «Հայ աշխարհ», «Հայ հորիզոնեն», «Նամակներ»: Կային թեմաներ, որոնց անդրադառնում էին «Շանթի» գրեթե յուրաքանչյուր համարում: Օրինակ՝ «Թրքահայ գրական շարժումը» խորագրի ներքո մշտապես քննարկվում էին արևմտահայ գրականության անցած ուղին, թերություններն ու ձեռքբերումները: Հոդվածներում հաճախ մոտեցումները տարբերվում էին, իսկ երբեմն էլ ծայրահեղորեն հակադիր էին միմյանց: Գրական անցուդարձի, նոր հրատարակված գրքերի, գրական մամուլի օրգանների, ընդհանրապես մշակույթի և արվեստի ոլորտների նորությունների մասին լուրեր, թղթակցություններ, թարգմանական նյութեր կան «Շանթ» հանդեսի «Հայ հորիզոնեն» բաժնում: Այդտեղ տպագրված լուրերը հաճախ ծառայում էին վերլուծականներ ու գրախոսականներ գրելուն: Բանավիճային հոդվածների շնորհիվ «Շանթը» կարողացել է գրական-մշակութային խնդիրներով մտահոգ մարդկանց համար ստեղծել արտահայտվելու հնարավորություն և դրանով նպաստել

⁹²³ Նույն տեղում:

⁹²⁴ Նույն տեղում:

գրականության զարգացմանը: Գնահատելի է, որ տարբեր կարծիքների տեր անձինք հանդեսի էջերում պահպանել են կոռեկտությունը և հազվադեպ են մտել անձնական վեճ ու կռիվների մեջ: «Շանթի» ընթերցողներին հենց սա է գրավել: Նրանցից մեկը՝ պարսկահայ բանաստեղծ Տիգրան Աճեմյանը, «Նամակներ» բաժնում մաղթում էր, որ հանդեսում «երեւոյող հայ գրական վարպետները շարունակեն մնալ կողք կողքի հետզհետե՛ աւելցնելով իրենց շարքի մէջ ուրիշներ, բոլորովին հեռու կուսակցական արդէն իր համն ու հոտը կորսնցնող վեճերէ և գործածեն իրենց սուր գրիչները ոչ թէ իրարու միսը ծակծկելու, այլ մշակելու և գեղեցկացնելու հայ գեղարեստի անդաստանը»⁹²⁵: «Շանթի» «Գրական-գեղարվեստական շարժում» բաժինն իրապես ծառայել է այդ նպատակին: Արժեքավոր են բաժնի «Գրքեր» և «Մամուլ» խորագրերը, որոնցում ներկայացվում, գրախոսվում կամ վերլուծվում էին ժամանակի մամուլի օրգանները և նոր հրատարակված գրքերը: Այստեղ նույնպես ապահովվում էր բազմակարծություն: Նույնիսկ նույն էջում կամ հաջորդական համարներում տպագրում էին կողմ և դեմ տեսակետներ որևէ գրքի կամ թերթում տպագրված գրական կարևոր հարցեր շոշափող հողվածների մասին: Գրախոսականները աչքի են ընկնում անկեղծությամբ և օբեկտիվությամբ: Դրանցում մատնանշվում էին տվյալ գրական երկի և՛ արժանիքները, և՛ թերությունները: «Շանթի» քննադատությունը սրտացավ և բարեկամական էր իրական գրական արժեքների, և, ընդհակառակը, խարազանող ու ոչնչացնող՝ անտաղանդների հրատարակած գրքերի նկատմամբ:

«Գրական-գեղարվեստական շարժում» բաժնում հատուկ ուշադրության էին արժանացել Լևոն Շանթի ստեղծագործությունները: Մատնանշվել են այս գրողի մոտ նկատվող թեմատիկ

⁹²⁵ Նույն տեղում, 1911, թիվ 6, էջ 95:

նորությունները և դրանցում առկա թերությունները: Լ.Շանթի ստեղծագործությունների և հատկապես «Հին աստվածներ» դրամայի շուրջ քննարկումները եղել են տևական արևմտահայ գրական շրջանակներում: Հնչած կարծիքները փորձել են ամփոփել 1913 թ. մարտի 3-ի գրական ասուլիսում, «գոր կազմակերպած էր Էսաեան Սանուց Միութիւնը»⁹²⁶: Ժյուրիի նախագահն էր Դուրյան արքեպիսկոպոսը, անդամներն էին՝ Կոմիտաս վարդապետը, Ռ. Զարդարյանը, Գ. Զոհրապը, Դ. Վարուժանը, Սիամանթոն, Մ. Կյուրճյանը, Մ. Շամտանճյանը, Ս. Մինայանը և Թեոդիկը: Նրանց կարծիքով՝ «Հին աստվածները» հայ թատերգության մեջ «սեմպոլիք առաջին գեղեցիկ փորձն» էր⁹²⁷: Դրաման «իր էութեամբ կը կրէր համաշխարհային բնոյթ՝ հայկական գոյնով և հայկական միջավայրի մէջ պատկերացուած: Ոճն ,ըստ էութեան, քննադատելի չէ, իսկ լեզուն ունի քննադատելի կողմեր: Հին աստվածները հայ տաղանդի գեղեցիկ մէկ արտայայտութիւնն է»⁹²⁸: Ընդհանրապես «Շանթ» հանդեսը ողջունել է նշված միության ջանքերով 1913 թ. անցկացված գրական այն ասուլիսները, որոնք նվիրված էին Լ.Շանթի, Գ.Զոհրապի և Դ.Վարուժանի ստեղծագործությունների քննարկումներին: «Շանթ» հանդեսում երևում է մշակույթի և արվեստի հայ և օտարազգի ներկայացուցիչների ընտրանին: Տպագրվել են ոչ միայն նրանց ստեղծագործությունները, այլև նրանց մասին հոդվածներ ու վերլուծականներ գրեթե յուրաքանչյուր համարում: Այդ նյութերը զետեղվել են «Հայ նկարիչներ», «Գերմանացի բանաստեղծներ», «Իտալացի բանաստեղծներ», «Անգլիական գրականություն», «Ճանչվոր դեմքեր», «Պարսկական բանաստեղծություն», «Հնդկական բանաստեղծություն», «Օտար հորիզոններ» բաժիններում:

⁹²⁶ Նույն տեղում, 1913, թիվ 37, էջ 212:

⁹²⁷ Նույն տեղում:

⁹²⁸ Նույն տեղում:

Հրատարակության 2-րդ շրջանում (1918-1919 թթ.) «Շանթ» հանդեսի նախկին բաժինները հարստացել են նորերով՝ «Հայ պանթեոնը», «Վերապրողները», «Մեր մեծ արքայականները», «Մեր ազգային վերջին մեծ մարտիրոսները», «Դեպի կյանք» և այլն: 1918-1919 թթ. «Շանթը» դարձել էր գրական-քաղաքական և առավելապես հայապահպանության ու ազգի վերածնության խնդիրներ արծարծող հանդես: Դա պատահական չէր և թելադրված էր Թուրքիայի հասարակական-քաղաքական իրավիճակով: Դեռևս 1911 թ. իր անդրանիկ խմբագրականում «Շանթը» գրում էր. «Ո՛չ մեկ երկրի քաղաքական կեանք այնքան զորաւոր կերպով ազդած է գրականութեան եւ արւեստի վրայ, որքան մեր մէջ»⁹²⁹:

1918 թ. հրատարակության նոր շրջանի 1-ին խմբագրականում գրված էր, թե հանդեսի աշխատակիցների մեծ մասը նահատակվել էր, և «մեր ազգին ապրած զարհուրելի օրերէն վերջը, պարզապէս ծիծաղելի պիտի երեւար գուտ գրական-գեղարվեստական օրկանի մը գոյութիւնը, ինչպէս էր Շանթը»⁹³⁰:

Պահպանելով գրական-գեղարվեստական ուղղվածությունը՝ «Շանթը» հետապնդել է նաև Մեծ եղեռնը վերապրողների կողմից «մեր արիւնոտ պատմութիւնը գրելու, ապրելով՝ մահուանը յաղթելու և քանդուած երկիրը վերանորոգելու նպատակները»⁹³¹: «Շանթի» աշխատակիցներն առաջնորդվել են նշված սկզբունքներով՝ հիշելով, թե իրենք զավակներն էին այն սերնդի, որ «մեռաւ՝ մեզի ապրեցնելու համար, որ կռուեցաւ ու յաղթանակեց»⁹³²:

1-ին համարներից սկսած՝ հանդեսում տպագրվել է Մ. Շամտանճյանի «Իթթիհատի հայաջինջ նոպան» հուշագրություն-

⁹²⁹ Նույն տեղում, 1911, թիվ 1, էջ 1:

⁹³⁰ Նույն տեղում, 1918, թիվ 1, էջ 2-3:

⁹³¹ Նույն տեղում, 1919, թիվ 13, էջ 148:

⁹³² Նույն տեղում:

նր, որտեղ նա հոգեբանական վերլուծության է ենթարկել հայ մտավորականների մարտիրոսագրությունը և իբրև ականատես վկա ներկայացրել է նրանց արքայի շրջանը, զրկանքները, տառապանքները և ապրելու անկոտրում կամքը: «Հայ հորիզոնն» բաժնում այս շարքը գնահատված էր որպես «Շանթի» «ներկայացուցած ամենէն աշխատուած ու արժեքաւոր գործը»⁹³³:

Հայ մտավորականների զրկանքների և 1915-1918 թթ. նրանց կյանքի ու գործունեության մասին որոշակի պատկերացում էին տալիս «Վերապրողները» և «Մեր տեսակցությունները» բաժիններում տպագրված նյութերը:

«Շանթի» 1919 թ. ապրիլի 11-ի թիվ 25-26 միացյալ համարն ամբողջությամբ նվիրված էր արևմտահայ գրականության նահատակված սերուցքին: Հանդեսի թե՛ այդ, թե՛ ուրիշ համարներում զետեղված հոդվածներում և հուշերում նրանցից յուրաքանչյուրն երևում էր յուրովի, երևում էր խաղացած անփոխարինելի դերով ու տեղով հայ ազգային-գրական կյանքում: Հանդեսում առանձնահատուկ մեծարանքով է ներկայացված Ռուբեն Զարդարյանը, ում զեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումը մեծ հաճույք էր «նոյնիսկ իր գաղափարական ու դաւանական հակառակորդներուն համար»⁹³⁴: Հուշագրություն-հոդվածներից մեկում Զոհրապ-Կարոն նրան համարում էր հայ գրական շքեղ փաղանգի ամենակարկառուն դեմքերից, ով դարձավ Մեծ եղեռնի զոհերից՝ «իր ընկերներուն հետ թողնելով պարապ մը, որ ո՛չ մէկ կերպով կարելի է լեցնել: Բարոյական կորուստներու մեծագոյնը պէտք է ողբալ Զարդարեանի անձին մէջ, նկատի ունենալով անոր երեսկ հանգամանքը, իբրև գրագետ՝ իր անգուգական շնորհներուն մէջ, իբրև բանաստեղծ՝ իր խորքին մէջ և իբրև հրապարակագիր՝ իր յեղափոխականի հրաշունչ խօսքերովը»⁹³⁵: «Շանթի» խմբագրակազմի կարծիքով հատկապէս Ռ. Զարդարյանի գրական ստեղծագործություններ-

⁹³³ Նույն տեղում, 1919, թիվ 18, էջ 216:

⁹³⁴ Նույն տեղում, 1919, թիվ 8, էջ 92:

⁹³⁵ Նույն տեղում, 1919, թիվ 25-26, էջ 293:

րով են ժամանակին պոլսահայ մտավորականները իրապես ճանաչել հայկական գավառը կամ «Հայ բնագաւառը իր տառապանքներով ու խաչելութեամբ, իր ուրախութիւններով ու վիշտերով, աշխարհ մը, որուն ամեն մէկ ծաղիկն ու վարդը, խոտն ու մամուռը, լեռն ու ձորը, երկինքն ու արեւը, վերջապէս բովանդակ Հայ Աշխարհը, եկան մեր ականջին բաներ մը փսփսայ, ա՛յնքան ցաւագին ու ա՛յնքան հրապուրիչ միեւնոյն ատեն»⁹³⁶: «Շանթում» տպագրված է նաև Կոմիտաս վարդապետի կարծիքը Ռ. Զարդարյանի մասին. «Երբ Ցայգալոյսը կարդացի, Զարդարեանը չպատկերացուցի բնաւ աչքերուս առջեւ, այլ ամբողջ ազգ մը, ամբողջ ժողովուրդ մը՝ իր գեղեցկութեամբ ու շքեղութեամբ: Այդ մատեանը գրքի մը տպաւորութիւնը չէր, որ թողուց վրաս, այլ կեանքի մը, իր բարախումներովն ու իր զգայնութեամբը»: Ռուբեն Զարդարյանը դեռ ասելիք ու անելիք ունէր: Նա դեռ չէր ավարտել իր գործը: Նա ապրել և սպանվել էր «Ցեղին համար»⁹³⁷:

«Շանթը» գտնում էր, թե կար մի ընդհանուր արժանիք, որը միավորում էր Ռ. Զարդարյանին և մյուս նահատակ մտավորականներին. անդավաճան, անձնուրաց ազգասիրությունն ու հայրենապաշտությունը: Ականատեսի պատմաձեների հիման վրա Գ.Ս.-ի՝ «Հայ մտավորականությունը արքտրանքի ճամբուն» նյութում կար այդ ընդհանրությունն ամփոփող հատված: Խոսքը վերաբերում է նրան, որ երբ տարսոնահայերը հանդիպում են իրենց քաղաքով անցնող արքտրյալ 80 հայ մտավորականների հետ (Գ. Զոհրապ, Վ. Սերենկյույան, Ռ. Զարդարյան, Է. Ակնունի և այլք), նրանք են սկսում մխիթարել ժողովրդին՝ «Ժպտելով, խնդալով և խօսելով: Բոլորին ըսածը գրեթե միեւնոյն խօսքերն էր, տարբեր շեշտով, տարբեր հմայքով.

- Մենք նման տառապանքներ ու արքտրներ շատ ենք տեսել: Դուք եղէք գործի, սկզբունքի մարդ և ոչ թե խօսքի: Մի՛

⁹³⁶ Նույն տեղում, 1919, թիվ 8, էջ 90:

⁹³⁷ Նույն տեղում:

վհատիք արգելքներու առջեւ, ասպարէզը ձերն է, հետեւեցէք մեզ և մեր ճամբուն: Որքան ատեն որ լոյս կայ, լոյսին ճառագայթը կայ, որքան ատեն դուք ապրիք, ձեր լոյսովը Հայաստան մը պիտի լուսաւորուի»⁹³⁸:

Հայաստանի վերաշինության և հզորացման գաղափարը արծարծվել է «Շանթ» հանդեսի 1918-1919 թթ. գրեթե բոլոր համարներում: 1919 թ. թիվ 32-ի խմբագրականում փաստվում էր հետևյալը. «Հայ Հանրապետութիւնը, որուն առաջին տարեդարձը սօսեցինք մեծ հպարտութիւնով, անհուն և անպարտելի զոհողութիւններու արդիւնքն էր»⁹³⁹: Դա գիտակցում էր հատկապէս մեր մտավորականությունը, «որ վաղը, հայրենի ակերակներու վերաշինութեան ստեղծագործ աշխատանքին մէջ, պարտք մը ունի կատարելիք, հոն թրթռացնելու համար Հայ Բազուկին Երզը, Աշխատանքի Տաճարին Դրան առջեւ ծունկի եկած՝ Հայ Ազատագրութեան առաջին սօսը յուշերգելու՝ ապրող սերունդներուն»⁹⁴⁰: «Շանթի» կարծիքով Հայաստանի 1-ին հանրապետության հիմնումը դարագլուխ էր բացում հայոց պետականության պատմության մէջ: «Բարենորոգումի բոլոր ծրագիրները այլ ևս մեզի չեն վերաբերիր. քաղաքակիրթ աշխարհը մեզ կը դնէ մեր ճակատագիրը ու մեր ապագան ինքնորոշելու սկզբունքին հետ դէմ առ դէմ: Դադրած ենք ստրուկ ազգ մը ըլլալէ, եւ մենք, անհատաբար ու հաւաքօրէն, կը պատկանինք Մե՛ր Հայրենիքին, Հայ Հայրենիքին... Ամեն հայ միտքով ու սիրտով միացած ու անբաժան. ահա՛ մեր ապագայ յաջողութեան ուղեգիծը»⁹⁴¹, - գրված էր 1919 թ. թիվ 9-10-ի «Հայ դարագլուխը» խմբագրականում: Հանդեսի աշխատակազմը համոզված էր, որ արդեն ժամանակն էր լրջորեն նաև հաշվարկելու հայ ժողովրդի կրած մարդկային, հոգևոր ու բարոյական կորուստ-

⁹³⁸ Նույն տեղում, 1919, թիվ 25-26, էջ 303:

⁹³⁹ Նույն տեղում, 1919, թիվ 32, էջ 361:

⁹⁴⁰ Նույն տեղում:

⁹⁴¹ Նույն տեղում, 1919, թիվ 9-10, էջ 101:

ները: Բնորոշ է Գևորգ Մեսրոպի «Հայ քաղաքակրթության կո-
րուստները (1914-1918)» ուսումնասիրությունը⁹⁴²:

Ազգային վերածննդի և հայապահպանության խնդիրների
արձարծումը «Շանթի» էջերում թեն հրատարակության 2-րդ շրջ-
ջանում դարձել էր առաջնահերթ, բայց, միևնույնն է, հանդեսն իր
բնույթով շարունակում էր մնալ գրական-գեղարվեստական: Անա-
չառ ու անկողմնակալ էին «Շանթ» հանդեսի վերլուծություններն
ու գնահատականները ժամանակակից արվեստագետների ստեղ-
ծագործությունների վերաբերյալ: Հանդեսի արժանիքներից մեկն
այն էր, որ այստեղ, ինչպես հրատարակության 1-ին շրջանում,
քննարկվող հարցերի վերաբերյալ ապահովվում էր բազմակար-
ծություն և ծավալվում էր երկխոսություն, երբ մասնավորապես
խոսքը վերաբերվում էր արևմտահայ գրականությանը, թատրո-
նին և արվեստին ընդհանրապես: Գրական բանավեճի առումով
բնորոշ են, օրինակ՝ արևմտահայ գրական շարժմանը նվիրված
հոդվածները⁹⁴³: «Շանթի» էջերում հանդես էին գալիս արևմտահայ,
արևելահայ և օտարազգի գրողները: Հանդեսն անդրադառնում էր
Եղեռնից հետո օտար ափերում ապաստանած արևմտահայ գրող-
ների գործերին:

Հրատարակության տարիներին «Շանթը» կարողացել է դառ-
նալ ժամանակի գրական-գեղարվեստական չափանիշներին հա-
մապատասխանող հանդես, որի համարները հրատարակվելուն
պես սպառվում էին, և որը բավարարում էր ընթերցող հասարա-
կայնության գեղագիտական պահանջները:

⁹⁴² Նույն տեղում, 1919, թիվ 11, էջ 128-129:

⁹⁴³ Նույն տեղում, 1919, թիվ 2, էջ 17-19, 1919, թիվ 3, էջ 33-34, 1919, թիվ 7, էջ 97-
98, 1919, թիվ 29, էջ 337:

Կ.ՊՈԼՍԻ «ՀԱՅ ՄԿԱՌԻՏ» ՀԱՆՐԵՍԸ (1919-1922 թթ.)

«Հայ սկաուտ» հանդեսը հրատարակվել է Կ. Պոլսում (1919-1922 թթ.) և Փարիզում (1929-1935 թթ.): Այն եղել է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության (այսուհետև՝ ՀՄԸՄ) օրգանը: Ամսագրի խմբագիրը Կարո Ուշագլյանն էր, պատասխանատու տնօրենը՝ Հրաչյա Տեր-Ներսիսյանը, արտոնատերը՝ Գառլո Շահինյանը: Աշխատակազմում ընդգրկված էին ՀՄԸՄ-ի անդամներ, անվանի մարզիկներ, մարզական վերլուծաբաններ՝ Հակոբ Քրիսյանը, Վահրամ Ս. Փափագյանը, Միսակ Նալբանդյանը և այլք:

Հրատարակվել է Օ.Արզումանյանի, «Ք.Քեշիշյան և որդի», «Մասիս», «Պահլի եղբայր» տպարաններում: Հանդեսի 1-ին համարի «Մեր գործը (1 նոյ.1918-1 հոկտ.1919)» հաշվետվության մեջ ներկայացվում էր, թե ինչպես էին հիմնադրվել ՀՄԸՄ-ն ու «Հայ սկաուտը». «Զինադարի առաջին օրերուն, երբ հայութիւնը արիւնի մկրտութենէն տակաւին նոր դուրս էր եկեր, խումբ մը երիտասարդներ հավաքուեցանք Գրիգոր Յակոբեանի կոչին վրայ՝ կազմելու համար ՀՄԸՄ-ն: Առաջին նիստը գումարուեցաւ 1 նոյեմբեր 1918 թ. 9 հոգիի ներկայութիւնով, որոնք հրաշքով մը աւերի ճիրաններէն դուրս մնացած էին և որ նախկին սիրահարներ ու մասնագէտներ էին մարզանքի և սօրի կեանքին»⁹⁴⁴: Ժողովում որոշում են ընդունում «լայն և պարզ ծրագրով մը սկսիլ մարմնակրթականի գործը և զայն մտցնել դպրոցներէ և հիմնելիք որբանոցներէն ներս»⁹⁴⁵: Այդ մասին վկայել է նաև ՀՄԸՄ-ի նախագահող-հիմնադիրներից Հակոբ Միրունին. «Առաջին հաւաքումին կային Գրիգոր Յակոբեանէ և ինձմէ գատ՝ Լևոն Յակոբեանը, Հայկ Ճիզմէճեանը, Գառլո Շահինեանը և Տիգրան Խոյեանը, որոնց շուտով պիտի գային աւելնալ քանի մը ուրիշներ ալ, ինչպէս Յովհաննէս Հինդլեան, Ժիրայր Խօրասանճեան,

⁹⁴⁴ «Հայ սկաուտ» հանդես, Կ.Պոլիս, 1919, թիվ 1, էջ 13-14:

⁹⁴⁵ Նույն տեղում:

Վահրամ Ս. Փափազեան և Գրիգոր Մերճանօվ: Այդ առաջին հաւաքման մէջ իսկ հիմը դրուեցաւ ՀՍԸՄ-ին: ՀՍԸՄ-ն ծնունդն էր իրական պահանջի մը և կրցեր էր առինքնել ամբողջ հայ երիտասարդութիւնը Պոլսոյ և գաղութներու մէջ»⁹⁴⁶:

ՀՍԸՄ-ի հիմնական նպատակն էր՝ կազմակերպել սկաուտական խմբեր, որոնցում ընդգրկված հայ պատանիները մարզվելու էին «մարմինով և հոգիով»⁹⁴⁷: «Մեր գաղափարականը» խմբագրականում թվարկված են ՀՍԸՄ-ի հետապնդած խնդիրները. «Մենք կուզենք պատրաստել անհատներ, որոնք կարող ըլլան ապագայ քաղաքակիրթ աշխարհի հարուստներուն դիմագրաւելու: Մենք կուզենք պատրաստել օրինապահ, բայց ոչ ստորուկ մարդը, տալ անոր առողջ և կորովի մարմին և ուղղադատ միտք: Մեր գաղափարականն է՝ պատրաստել առողջ սերունդ մը նոր հայրենիքին համար»⁹⁴⁸: Հայ սկաուտը պետք է լինէր լավատես, հուսադրող, վստահելի և կարգապահ անհատ, որին «կարենայ յանձնուիլ և յանձնել հայրենիքի շահերը»⁹⁴⁹: Հայ սկաուտի նշանաբանն էր՝ «Բարձրացի՛ր, բարձրացու՛ր», իսկ նպատակը՝ «բարձրանալ հոգիով, միտքով և մարմնով»⁹⁵⁰: Հակոբ Քրիսյանի կոչում, ուղղված հայ սկաուտներին, մատնանշվում էին նրանց առջև դրված խնդիրները. «Ուշադրութեամբ դիտէ, հայ սկաուտ, ճակատդ զարդարող միտալը՝ վրան Արարատի յուշարձանը: Ան կը խորհրդանշէ հայը, հայը, որ կանգուն մնացած է միշտ, հակառակ թշնամիներու տեսական հալածանքին ու ջարդին: Յարգանքով ու երկիւղածութեամբ կանգնէ այս մեծ յուշարձանին առաջ և միտքդ դիր կատարել անոր արձա-

⁹⁴⁶ Սիրունի Յ., նշվ. աշխ., էջ 204, 208:

⁹⁴⁷ «Հայ սկաուտ» հանդես, Կ. Պոլիս, 1919, թիվ 1, էջ 3-9:

⁹⁴⁸ Նույն տեղում:

⁹⁴⁹ Նույն տեղում:

⁹⁵⁰ Նույն տեղում, 1919, թիվ 4, էջ 51-52:

կած պատգամը: Քու իտեալդ պէտք է ըլլայ ո՛չ միայն բարձրանալ, այլ նաեւ բարձրացնել»⁹⁵¹:

Հայ սկաուտներն ու հայ արիները պիտի կարողանային դիմակայել փորձություններով, ցեղասպանության սարսափներով, դեռևս շարունակվող կոիվներով լեցուն ժամանակաշրջանի մարտահրավերներին: Թեև 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում զինադադար էր կնքվել Անտանտի երկրների և Առաջին համաշխարհային պատերազմում պարտվող կողմ ճանաչված Թուրքիայի միջև՝ վերջինիս առջև որոշակի պարտավորություններ դնելով Հայաստանի Հանրապետության հետ պատերազմական գործողությունների մեջ չմտնելու առումով, բայց զինադադարը ժամանակավոր ու խաբուսիկ էր: Կրկին վտանգված էր հայ ժողովրդի խաղաղ գոյակցությունը: Նման քաղաքական հանգամանքներում լիովին տեղին էին Եղեռնից մազապուրծ եղած հայ երիտասարդների հայրենասիրական մղումները ՀՍՀՄ-ի ստեղծման, աճող սերնդին մարտունակ դարձնելու և հայեցի դաստիարակություն տալու ուղղությամբ: Բնութագրական է Տ. Չիթունու «Վերցու՛ր ձեռնոցդ, հայ արի» արձակ բանաստեղծությունը, որը տպագրված էր «Հայ սկաուտ» հանդեսում⁹⁵²: Այնտեղ կոչ էր արվում պաշտպանել Հայաստանի պատիվը այնպես, ինչպես վայել էր Գայլ Վահանների ու Դավիթ Բեկերի ժառանգորդներին. «Հայ արի, վերցու՛ր երեսիդ նետուած կարմիր ձեռնոցը, բարձրացի՛ր Արարատեան վետութիւնով, բարձրացու՛ր կոխտտ պատիւը Մայր Հայրենիքիդ: Յուցու՛ր, թե դուն սերունդն ես Տրդատներու, որք Հռոմի կրկեսները պակուցին, Արշակներու, որք Շապուհները դողացուցին: Դուն ես հայրն ու նոր ծնունդը Գայլ Վահաններու, Դաւիթ-Մեկերներու, Սասունցի Յովնաններու և նոր Դաւիթ Բեկերու, Անդրանիկ--

⁹⁵¹ Նույն տեղում:

⁹⁵² Նույն տեղում, 1919, թիվ 1, էջ 14:

Մուրատներու: Վերցու՛ր ձեռնոցը, բարձրացու՛ր դրօշը հայ անկախութեան, տնկէ՛ Եռագոյնը աճիւնազարդ հայ դրախտին մէջ»⁹⁵³:

ՀՄԸՄ-ն տարբեր հողվածներում անդրադառնում էր հայ ընտանիքներին հետաքրքրող այն հարցին, թե որքանո՞վ էր նպատակահարմար մեզանում հիմնել նաև աղջիկ սկաւտների կազմակերպություններ: Օրինակ՝ «Աղջիկ սկաւտ» վերնագրով նյութում կար նույնիսկ ՀՄԸՄ-ի պաշտոնական պատասխանը. «Երբ կը կազմենք մարդը, բնական է, որ պիտի պատրաստենք անոր համար կինը: Պէտք է աշխատինք, որ ծնողքներ պատիւ համարին իրենց աղջիկները այդ կազմակերպիւններու անդամագրելը»⁹⁵⁴: Պատվաբեր էր անդամակցել ՀՄԸՄ-ին, քանի որ այն, ելնելով ժամանակաշրջանի հրամայականից և հայապահպանության, հայրենիքը հզորացնելու նպատակից, փորձելու էր դառնալ հայ ժողովրդի տարբեր հատվածները միմյանց միացնող գոտի. «Մեզի համար արժէք ունի ամեն անհատ՝ ինչ յարանուանութեան և ինչ կուսակցութեան ալ պատկանի»⁹⁵⁵:

Հանդեսը ճշմարիտ հայրենասիրություն էր համարում ՀՄԸՄ-ին սատարելը և օգնելը, քանի որ այդ համահայկական կառույցը ցանկանում էր պատրաստել «առողջ ու տոկուն երիտասարդութիւն մը, պատրաստ նուիրելու հայրենիքի վերաշինութեան մեծ գործին, պատրաստ՝ հայրենիքի պաշտպանութեան, նախանձախնդիր՝ անոր բարձրացման ու զօրացման»⁹⁵⁶: Ավերված հայրենիքի վերականգնման համար անհրաժեշտ էին հուժկու բազուկներ, հզոր կամք և անխոնջ աշխատանք: «Մարմնակրթանքն ու սքօրներն են, որ պիտի կարենան այս բարեմասնութիւններով օժտուած անհատներ պատրաստել», և արվում էր հետևություն, թե «ամէն հային համար հայրենասիրական պարտք մըն է քաջալերել

⁹⁵³ Նույն տեղում:

⁹⁵⁴ Նույն տեղում, էջ 9:

⁹⁵⁵ Նույն տեղում, էջ 3:

⁹⁵⁶ Նույն տեղում:

մարմնակրթական շարժումը»⁹⁵⁷: 1920 թ. ընթացքում լույս տեսած հոդվածներում այս միտումը առաջնային էր դարձել, և շարունակ մատնանշվում էր, թե հայրենիքը հայ սկաուտի կարիքն ունի, թե հայ սկաուտները պիտի ոչ միայն երկիրը վերակառուցեին, այլև պիտի լինեին հայրենիքը պաշտպանող բազուկներ՝ պատասխանատվություն ստանձնելով կազմել «հայրենիք մը և բարգաւաճեցնել զայն: Այսօր իսկ կը լսենք հայրենահրաւեր փողը... Աւերակ է այդ երկիրը, դուն քու բազուկներովդ պիտի կերտես անոր աւերակ գիւղերն ու քաղաքները, հայ սկաուտ: Ամլացած են դաշտերն ու պարտէզները, դուն արգասաբեր պիտի դարձնես անոնք քու քրտինքովդ: Քեզի կ'սպասեն Հայն ու Հայաստանը»⁹⁵⁸: Մակայն ոչինչ չարժեր անգամ բարգավաճ հայրենիքը, եթէ չուներ «զինք պաշտպանող բազուկներ: Եթէ չենք ուզեր տնտեսապէս և քաղաքականապէս գերուիլ ուրիշներէ, գիտակից քաղաքացիութեան ոգի ներարկենք մեր պատանիներուն, զրահապատ ֆիզիքականով օժտենք զանոնք: Անոնց բազուկներով ցանկապատ հիւսենք հայրենիքին շուրջ»⁹⁵⁹:

ՀՄԸՄ-ն իր նպատակներն ու կատարած աշխատանքները ժողովրդին ներկայացնելու համար էր որոշել Կ.Պոլսում 1919 թ. հոկտեմբերի 25-ից հրատարակել «Հայ սկաուտ» պաշտոնական հանդէսը⁹⁶⁰:

«Հայ սկաուտն» ուներ «Սկաուտական կյանք», «Սկաուտական և մարզական շարժումը Հայաստանի մէջ», «Սկաուտական գիտելիք», «Սկաուտական խաղեր», «Սկաուտի նամակներ», «Սկաուտական լուրեր», «Մարզական կյանք», «Թղթակցություններ գավառներից», «Խորհուրդներ սկաուտներին», ինչպես նաև ՀՄԸՄ-ի գործունեության լուսաբանմանը նվիրված բաժիններ: Արժեքավոր են հանդեսում տպագրված՝ վերոնշյալ ոլորտին վերաբերող լուրերը և հող-

⁹⁵⁷ Նույն տեղում, թիվ 3, էջ 41-42:

⁹⁵⁸ Նույն տեղում, 1920, թիվ 15, էջ 234:

⁹⁵⁹ Նույն տեղում, 1920, թիվ 5, էջ 65:

⁹⁶⁰ Նույն տեղում, 1919, թիվ 1, էջ 14:

վածները: Հիշատակենք Ս. Ուգուլյանի «Մարմնակրթության բնախոսությունը», Վ. Ս. Փափազյանի «Ատլետիզմ» և Ս. Նալբանդյանի «Անցյալ հուշերես» հոդվածաշարերը:

«Սկաուտական կյանք» և «Սկաուտական գիտելիք» բաժիններում պարբերաբար և հանրամատչելի ձևով «Հայ սկաուտը» պատկերացում էր տալիս սկաուտական շարժման, սկաուտի վարքագծի կանոնների և պարտականությունների մասին: «Սկաուտիզմը մասնաւորաբար 11-15 տարեկան տղոց համար է: Այսօր հաստատուած է, թէ քաղաքներում 11-15 տարեկան պատանիները կը սիրեն կանոնաւորուած ազատութիւնը, որ կը կազմէ սկաուտիզմի հիմը», - գրում էր «Սկաուտիզմի մասին» թարգմանական նյութում Պ. Շապոյանը⁹⁶¹: Նա մեկ այլ՝ «Սկաուտի կյանք. սկաուտիզմ» հոդվածում ընթերցողներին տեղեկացնում էր, որ սկաուտական խմբեր էին գործում աշխարհի քաղաքակիրթ բոլոր երկրներում, քանի որ սկաուտությունը պատանիների համար անհրաժեշտ ու հիմնական դաստիարակություն էր համարվում: Հեղինակի համոզմամբ՝ սկաուտիզմը ձգտում էր «երիտասարդին տալ բարոյական, մտաւորական և ֆիզիքական դաստիարակութիւն մը: Ընտանեկան և դպրոցական դաստիարակութիւնները կը միանան անոր և կը պատրաստեն ապագայի իտէալ մարդը»⁹⁶²:

Սկաուտական շարժումը բնութագրելու տեսանկյունից ուշագրավ է Հ. Հինդլյանի «Ի՞նչ է սկաուտությունը իր հիման մեջ» հոդվածաշարը: Այստեղ նա փորձում էր տալ այդ և հարակից հարցերի պատասխանները՝ օգտվելով օտար աղբյուրներից: Հեղինակը պարզաբանում էր, որ սկաուտը (scout) անգլերեն բառ է և նշանակում էր սահմանազուխը պաշտպանող զինվոր ու մշտաբթուն, զգայարանները լավ մարզած կտրիճ: Սկաուտությունը մանկավարժական նոր ուղղություն էր, որի հիմնադիրը անգլիացի գործարար Ռոբերտ Բաունելն էր: Կարևորելով դաստիարակության

⁹⁶¹ Նույն տեղում, 1920, թիվ 15, էջ 235-238:

⁹⁶² Նույն տեղում, 1919, թիվ 3, էջ 34:

դերը մարդու կյանքում և դժգոհ լինելով վերջինիս ավանդական մեթոդներից՝ Ռ.Բաուելը դրանք արմատական բարեփոխումների էր ենթարկել: Սկաուտությունն ուներ որոշակի սկզբունքներ և դրանց հիման վրա մշակված միջոցներ, որոնցով հասնում էր իր առջև դրված նպատակներին: Այսինքն՝ մի կողմից՝ նորահաս սերունդը «ազնուացնել և քաղաքակրթության արդի պահանջներուն համեմատ շինել ֆիզիքական և բարոյական կարգ մը բարեմասնությիւններով օժտելով զայն», մյուս կողմից՝ տղաների դաստիարակության գործը անհրաժեշտ էր հիմնել՝ ելնելով նրանց բնախոսական-հոգեբանական պահանջմունքներից և «տղան դաստիարակել՝ զայն հրապուրող միջոցներով»⁹⁶³: Ընդ որում, սկաուտական շարժումն, ունենալով ընդհանուր սկզբունքներ և մեթոդներ, պիտի յուրահատուկ գծերով առանձնանար ամեն ազգի համար. «Սկաուտիզմը կը ջանայ լաւ զինուորներ կազմել: Ան կը կազմէ վստահելի և լաւ քաղաքացիներ»⁹⁶⁴: Հայրենիքի վերաշինության գործում ՀՄԸՄ-ի հույսը երիտասարդության վրա էր. «Ջանանք առողջ ու զուարթ, ձեռներեց և կորովի երիտասարդութիւն մը պատրաստել»⁹⁶⁵:

Սկաուտական շարժումը մեզանում հիմնելու ՀՄԸՄ-ի ջանքերը կարճ ժամանակում տվել են գոհացուցիչ արդյունքներ: Մեկ տարվա ընթացքում ՀՄԸՄ-ն 25 մասնաճյուղ էր բացել Կ.Պոլսում և շրջակա մի շարք գավառներում, հայկական որոշ գաղթօջախներում և իր մարզիչներից չորսին ուղարկել էր Հայաստան, որտեղ նույնպես, պետական հոգածության ներքո, ցանկանում էին հիմնել ու զարգացնել սկաուտական շարժումը՝ ոգևորվելով ՀՄԸՄ-ի հաջողություններով և ձեռքբերումներով: «Հայ սկաուտ» հանդեսը լուսաբանում էր այս գործընթացները՝ փորձելով դառնալ ՀՄԸՄ-ի մասնաճյուղերն իրար կապող կամուրջ: Այդ կարգի նյութերը կարելի է համարել ժամանակագրային բնույթի: Դրանցով հնարավոր է կազմել, օրինակ՝ Հայաստանի 1-ին հանրապետությունում սկաուտական կազմակերպությ-

⁹⁶³ Նույն տեղում, 1919, թիվ 2, էջ 20-22:

⁹⁶⁴ Նույն տեղում, էջ 19-20 (Բաուել Ռ., «Սկաուտական շարժումը և ապագա քաղաքացին»):

⁹⁶⁵ Նույն տեղում, 1919, թիվ 3, էջ 42:

յան հիմնադրման ու գործունեության ժամանակագրությունը⁹⁶⁶: Ըստ այդմ 1919 թ. դեկտեմբերի մեկի համարում լուր էր տպագրվել այն մասին, որ Երևանում կազմվել էր հայ արիների առաջին խումբը, և Հայաստանի վարչապետ Ա. Խատիսյանին առաջարկվել էր գլխավորել այն, իսկ սկաուտապետ Հ. Նազարյանի ցանկության հիման վրա հարաբերություններ էին հաստատվել ՀՍԸՄ-ի հետ⁹⁶⁷: Հայաստանի կրթության և արվեստի մինիստրության բժշկա-առողջապահական բաժնի պետ Հ. Արծրունու դիմում-խնդրանքին ի պատասխան՝ ՀՍԸՄ-ն Երևան էր ուղարկել 3 մարզիչ (Վահան Չերազ, Տիգրան Խոյյան, Օննիկ Յազմաճյան), ովքեր միացել էին այնտեղ արդեն աշխատող իրենց մյուս մարզիչ ընկերոջը՝ Եզնիկ Քաջունուն: Հայաստանի լուսավորության նախարարությունը և խորհրդարանը աջակցել են սկաուտական շարժմանը՝ գիտակցելով ու համակարծիք լինելով ՀՍԸՄ-ի հետ ռազմավարական նշանակության այն հարցում, որ սկաուտիզմը նպաստում էր հայոց նորաստեղծ բանակի հզորացմանը, իսկ բանակը «ազգի մը գրահն է: Ան է, որ կը պարտադրէ ազգերուն յարգել ուրիշ ազգերը, ճանչնալ անոնց իրաւունքը: Արդար իրաւունք մը բանակով մը կարելի է պաշտպանել: Հայ քաղաքացի, վճարէ՛ բանակին քու պարտքդ, որ չլսես քու զաւակներուդ ստրկութեան ձայնը և քու աղօղիկներուդ բռնաբարումի աղտը»⁹⁶⁸:

Բանակի կայացմանը և սկաուտական շարժման զարգացմանը նպաստում էին ՀՍԸՄ-ի Կ.Պոլսի կենտրոնական վարչության ու Հայաստանի համապատասխան կառույցների ջանքերով անցկացվող համահայկական մրցումները և օլիմպիական խաղերը: Որոշվել էր համատեղ ուժերով սկիզբ դնել Մասյաց խաղերին, որոնք հայկական եռագույնի ներքո պիտի անցկացվեին կամ Արարատյան, կամ Ավարայրի դաշտավայրերում: Դրանց ընթացքում հայ սկաուտները պիտի մրցեին ոչ միայն օլիմպիական, այլև՝

⁹⁶⁶ Նույն տեղում, 1919, թիվ 3, էջ 33, էջ 41, 1920, թիվ 5, էջ 75, թիվ 9, էջ 137, թիվ 16, էջ 249, թիվ 19-20, էջ 289, 304- 306:

⁹⁶⁷ Նույն տեղում, 1920, թիվ 8, էջ 121:

⁹⁶⁸ Նույն տեղում, 1920, թիվ 8, էջ 121:

ազգային խաղերում: Հաղթողները պարգևատրվելու էին «Մասյաց քաջեր» պատվանշաններով⁹⁶⁹:

Մարզական հաջողություններին զուգընթաց՝ հայ սկաուտները զբաղվել են բարեգործությամբ: Օրինակ՝ նրանք «Ղալաթիոյ եկեղեցոյ շրջափակին և Սլիստարին մէջ» բացել էին առաջին անվճար դեղատունը և շարժական հիվանդանոցը, որտեղ 2 ամսվա ընթացքում խնամել էին 1500 գաղթականի⁹⁷⁰: Սկյուտարում նրանք մասնակցել էին որբահավաքության աշխատանքներին: «Գաւառներէն մեր մասնաճիւղերէն եկած լուրերն ալ ոգետորիչ են: Հոն ևս կը սարքեն մրցումներ և խաղեր, որոնք յոյս և քաջալերանք կուտան տարագրութենէ վերադարձած բեկորներուն»⁹⁷¹, - պատմում էր «Հայ սկաուտը»: Նրա կարծիքով՝ ՀՄԸՄ-ի մասնաճյուղերի բացումը և սկաուտական շարժման տարածումը պայմանավորված էին դրանց անհրաժեշտությամբ: Խթանիչ հանգամանքներից էր այն, որ մուտքի գումար և անդամավճար չէին վերցնում կարիքավորներից, որոնց ՀՄԸՄ-ն տրամադրում էր հագուստ և մարզագգեստ⁹⁷²: «Չենք ըսեր, թէ բոլորովին անթերի է մեր գործը», բայց կարճ ժամանակի համար «արդիւնքն ինքնին շատ մեծ է: Մենք նոր ուժ և կորով կ'առնենք աւելի լայն քայլեր անելու դէպի առաջ մեր ազգային վերածնունդի արշալոյսը առողջ և պողպատէ սերունդով մը դիմաւորելու համար», - վերոնշյալ խմբագրականը եզրափակում էր «Հայ սկաուտը»⁹⁷³:

Սկաուտական շարժումը շարունակում էր ընդլայնել շրջանակները և մեծացնել ձեռքբերումները: Ասենք՝ 1919 թ. դեկտեմբերի 16-ի համարում ներկայացված «Իզմիրյան թղթակցությունը» տեղեկացնում էր Իզմիրում գործող հայ սկաուտների «Քաջաց բանակի»

⁹⁶⁹ Նույն տեղում, էջ 132-134:

⁹⁷⁰ Նույն տեղում, 1919, թիվ 1, էջ 7-9:

⁹⁷¹ Նույն տեղում:

⁹⁷² Նույն տեղում:

⁹⁷³ Նույն տեղում:

մասին⁹⁷⁴: Հեղինակ Ջավեն Հաբեթյանը գրում էր, թե իսկական քաջերի բանակ էր Իզմիրի սկաուտական 8-րդ բանակը, որտեղ ընդգրկված էին Ազգային կեդրոնական որբանոցի 50 որբ Բաֆֆի Կյուրճյանի շնորհիվ: Եղեռնից մազապուրծ եղած այս պատանի որբուկները վերածվել էին քաջարի, բարեսիրտ ու կարեկից հայ արիների⁹⁷⁵: Հայ սկաուտները մասնակցել էին 1919 թ. օգոստոսի 31-ին անցկացված օլիմպիական տարեկան խաղերին և արժանացել «օտար զինուորական պետերու իրական գնահատումի»⁹⁷⁶: «Հայ սկաուտի» լուրերի բաժնում զետեղված մեկ այլ թղթակցությունից պարզվում էր, որ ՀՍԸՄ-ն 3 ներկայացուցչով (Արտաշես Գավառյան, Ժիրայր Խորասանճյան, Գրիգոր Հակոբյան) մասնակցել էր 1919 թ. հոկտեմբերի 7-ին անգլիական սկաուտական կենտրոնակայանում գումարված սկաուտական միջազգային ժողովին⁹⁷⁷:

1920 թ. ՀՍԸՄ-ն մտադրվել էր նոր հիմքերի վրա դնել սկաուտական շարժումը, քանի որ կազմակերպությանն անդամակցողների քանակը գնալով աճում էր: «Հայ սկաուտն» անդրադառնում էր այդ ուղղությամբ ՀՍԸՄ-ի գործադրած ջանքերին: Հանդեսում տպագրված լուրերից մեկում Արշակ Հակոբյանը պատմում էր ՀՍԸՄ-ի սկաուտական հանձնախմբի՝ 1920 թ. հունիսի 20-22-ին կայացած 2-րդ նիստի և այնտեղ ընդունված որոշումների մասին⁹⁷⁸: Դրանք էին. «Սկաուտական խումբերը հինգ խմբակէ աւելի չեն կրնար պարունակել, սոյն սկաուտական խումբերը կ'ունենան անջատ սկաուտական խորհուրդներ, կազմուած խումբին տասնապետներէն և փոխխմբապետներէն, և որոնց կը նախագահէ խմբապետը: Սկաուտական խորհուրդին գործն է կազմակերպել խումբը, զբաղիլ անոր մասնագիտական (թէքնիք) գործերով, ապահովել

⁹⁷⁴ Նույն տեղում, 1919, թիվ 4, էջ 50:

⁹⁷⁵ Նույն տեղում:

⁹⁷⁶ Նույն տեղում, 1919, թիվ 1, էջ 8:

⁹⁷⁷ Նույն տեղում, էջ 16:

⁹⁷⁸ Նույն տեղում, 1920, թիվ 17-18, էջ 287:

կեդր. յանձնախումբին կողմէ՝ գալիք հրահանգներուն կիրարկումը, որոշել կիրարկման եղանակը, կազմակերպել արշաւներ, դասախօսութիւններ, պատրաստել տեղեկագրեր եւ այլն: Սկաուտական խորհուրդի մէջ վեթօի իրաւունք ունի խմբապետը, որ կ'ստորագրէ բոլոր հրամանները և տեղեկագրերը: Սկաուտական մօտիկ խումբեր կը կազմեն շրջան մը»⁹⁷⁹:

1920 թ. «Հայ սկաուտի» հաղորդած հավաստի տվյալներով «սկաուտներու ներկայ թիւն է՝ Պոլիս՝ 200, Իզմիր՝ 300, Գահիրէ և Ալեքսանդրիայ՝ 200, Բորդ-Սայիտի գաղթավայրու մէջ՝ 250: Այժմ ՀԲԸՄ Մերսինի և Տէօրթ Եօլի որբանոցներուն սկաուտներու թիւը 300 է»⁹⁸⁰: Նույն թվականին Ադանայում «կազմուած էր սկաուտական սպայակոյտ մը»⁹⁸¹, որի հաջողություններով հպարտանում էր «Հայ սկաուտը»՝ պատմելով Աբգարյան վարժարանի սրահում նրանց կազմակերպած ցուցադրական հանդես-մրցույթի մասին⁹⁸²:

Հրատարակության արդեն 1-ին տարում բազմաթիվ նամակներում հայ սկաուտների ծնողները, անվանի սկաուտները և մտավորականները ողջույնի ու շնորհակալության խոսքեր էին հղում «Հայ սկաուտին» և ՀՄԸՄ-ին: Օրինակ՝ Զավեն Հաբեթյանի կարծիքով ՀՄԸՄ-ն առաջնորդում էր դեպի «բարոյականի Արարատը անմահ ցեղի մը քաջ զաւակները»⁹⁸³:

«Հայ սկաուտը» հավատարիմ է մնացել իր հիմնական նպատակներին, որոնց իրագործման համար մինչև վերջին համարը կոչ է արել բոլոր մասնաճյուղերին գործել միասնաբար⁹⁸⁴:

⁹⁷⁹ Նույն տեղում:

⁹⁸⁰ Նույն տեղում, 1920, թիվ 5, էջ 73-74:

⁹⁸¹ Նույն տեղում:

⁹⁸² Նույն տեղում, 1920, թիվ 15, էջ 243-244:

⁹⁸³ Նույն տեղում, 1919, թիվ 2, էջ 23:

⁹⁸⁴ Նույն տեղում, 1920, թիվ 11, էջ 169:

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Արխագիա-264	Ատաբազար-
Ագ-Հիսար-64	18,22,62,63,64,65,68,71,76,77,79,8
Ադանա-	1,82,83,92,235
22,56,79,106,150,153,156,157,158,	Արարատ-142,284,293
159,160,172,223,224,225,293	Արարատյան դաշտավայր-290
Ադրբեջան-263	Արաքս-123
Աթինա-149	Արձակ-105,106
Ալաշկերտ-202,203,204,219	Արձեշ-53,105
Ալեքսանդրապոլ-3,27	Արմաշ-22,63,64,65
Ալեքսանդրիա-293	Ափիոն-167,173
Ալիս-196	Արևմտյան Հայաստան-
Ալմալու-65	20,21,22,25,32,44,86,113,135,156,
Ալջավազ-53	178,214,226,233,249,261,266,273
Ադբալ-219	Արևմտյան Եվրոպա-274
Ադթամար-28,57	
Ամառիձ-208	Բաբերդ-201,202,203,205,206
Ամասիա-	Բաթում-158
17,18,22,127,146,187,188,190,192,	Բալկաններ-32
193,195,294	Բաղդադ-246,251
Ամերիկա (ԱՄՆ)-	Բաղեշ-19,200
54,150,151,175,248,258,260,264,2	Բասեն-247
74	Բաքու-3
Այգեհատ-173	Բերձոր-105
Այգեստան-28	Բեյրութ-151
Այնթապ-22	Բեռլին-226,231
Անատոլու (Անատոլիա)-	Բեսարաբիա-173
43,87,93,260	Բերա-214
Անգղ-113	Բիթլիս-49,219,220
Ապրի-208	Բոսնիա-87
Ասիա-196	Բոստոն-9,17,26,85
Ասլանբեկ-63,64	Բրզնիկ-128
Ավարայր-85,290	Բուլանուխ-53,203,208,220
	Բուլղարիա-212,260
	Բուխարեստ-235

Գայլ-187
Գավառ-219
Գատը գյուղ-64
Գարամուրսալ-64
Գարա-Չոպան-210
Գարատերե-163
Գեյլե (Կեյլե)-63
Գերմանիա-111,232,260
Գընճըլար-65
Գլըճ-65
Գյումուշխանե-148
Գոնիա-19
Գրքագաճ-94
Գուղջիբե-165

Դավոա-128
Դեր-Ձոր-241
Դերջան-247
Դիարբեքիր-45,241,245
Դյորթյոլ(Տեօրթ Եօլ)-223,293
Դպրեվանք-61

Եալակ-Տերե-64,65
Եալովա-64
Եափալթուն-131
Եզիպտոս-173
Եղեսիա-19
Եհնի-խան-121
Ենի Չարշը-214
Եոմուրա-
150,162,163,166,167,168,170,175,
176
Եվրոկիա-22,187
Եվրոպա-
20,35,52,196,223,230,231,232,233,
234,262,274

Երզնկա-19,22,93
Երևան-27,265,290
Եփրատ-240

Զարա-119
Զիլե-127,128,130,142,187
Զիմառա-198
Զմյուռնիա-21,159,232

Էլևի-150,163
Էնկյուրի-241
Էշմե-64,65
Էտիրնե-93
Էրզրում-3,219

Ըղձաձոր-200

Թամգարա-163
Թավրիզ-3
Թարսուս-223
Թեհրան-144
Թեքմեն-131
Թիֆլիս-3,8,173,216
Թոքատ-118,135,146,147
Թուրքիա-
3,4,22,30,31,32,33,34,35,37,39,41,
42,43,44,45,46,49,50,51,54,55,62,6
9,70,72,87,88,89,90,91,
93,94,105,106,107,109,112,117,12
0,122,143,151,153,156,160,161,17
4,175,176,190,194,199, 207,
208,209,210,214,215,219,220,226,
227,236,239,240,242,253,260,261,
271,272,273,278,285

Ժնև-173,232

Իզմիտ-
62,63,64,77,82,85,86,89,90,91,92
Իզմիր-
3,17,18,24,64,93,94,95,97,98,99,10
1,102,103,104,108,109,114,211,21
2,291,292,293,294

Լազիստան-148
Լաթար-209
Լեռնապար-27
Լեսանլը-131
Լիբանան-15,17,173
Լոզան-269
Լոնդոն-104
Լոռի-173
Լսհոնք-203

Խալիլ-Չավուշ-210
Խաղտիք-148
Խաչ-գյուղ-65
Խառակոնիս-40,105
Խասկալ-61,64
Խարբերդ-
19,22,49,127,192,211,241
Խիզան-219
Խնուս-209,210,219,247
Խոյ-150
Խոյթ-219
Խորզում-40
Խորհրդային Հայաստան-
260,270,271
Խորհրդային Ռուսաստան-
265,269

Կալաֆկա-169
Կալկաթա-64

Կահիրե-17,293
Կան-198
Կարին-
8,17,22,45,49,71,150,152,197,198,
199,202,203,247,248,294
Կարճկան-105
Կարս-27
Կելիեկուզան-220
Կելիկենման-220
Կեմերեկ-131
Կելվե (Գելվե)-63,64
Կելվե-Էշմե-65
Կելվե-Սթասիոն-64
Կեսարիա-18
Կեոբալ-210
Կեովենտուկ-210
Կիլիկիա-
22,131,156,160,173,225,226,264
Կիրասուն-18,149,166
Կովկաս-54,151,173,274
Կ. Պոլիս-
3,4,5,8,10,11,17,20,21,22,26,49,50,
51,52,63,64,67,70,71,82,85,89,91,9
2,93,97,99,112,117,135,
141,143,144,151,152,154,173,183,
190,198,211,212,216,223,234,235,
236,241,245,247,248,251,252,255,
258,259,260,263,264,265,266,267,
268,272,273,274,283,284,287,289,
290,293,294
Կովտուն-134

Հալեպ-241
Համալ Պաշը-214
Համշեն-163
Հայաստան-
26,34,36,61,107,148,150,151,190,2

18,232,235,237,250,263,264,265,2
66,268,269,270,281,285,
287,289,290

Հայաստանի 1-ին
հանրապետություն-
4,61,151,238,268,281,289

Հայաստանի
Հանրապետություն-5,285

Հայոց Ձոր-113

Հնդկաստան-262

Հողդար-115,142

Հռոմ-260,285

Հունաստան-260,264

Ձիթող-209

Ղազիմաղարա-143

Ղալաթիա-71,97,291

Ղարակիով-131

Ճատտեսի-81

Մագրի-գյուղ-266

Մալաթիա-238

Մալիե-192

Մանազկերտ-219

Մանիսա-211

Մասիս-283

Մարաշ-22

Մարբուճըլար-81

Մարզվան-22,187,188,193

Մարմարաճըզ-91

Մեծ Նոր-գյուղ-64

Մերտեկեոզ-64,73,78

Մերսին-223,293

Միջագյուղ-61,64,65

Մոկս-105

Մոսկվա-173

Մոսկան-219

Մուղրոս-

26,198,236,239,242,251,258,285

Մուշ-45,49,53,144,173,175,220

Նիկոմիդիա-

17,62,63,64,68,69,71,72,74,77,78,7

9,80,81,82,89,294

Նորսուզ-219

Շահպատին-210

Շապին Գարահիսար-187

Շվեյցարիա-150

Շուշի-27

Չազմազճըլար-85

Չամուր-190

Չանկըրի-241

Չենկիլեր-65

Չեպտնի-131

Պաղչեճիկ-126

Պապը Ալի-81

Պարտիզակ-

19,62,63,64,65,73,75,77,82,92

Պլովդիվ-3,212

Պյունյան-Համիդ-131

Պոլի-241

Պոնտոս-148

Պորտ Սայիդ (Բորդ Սայիտ)-
293

Պուհրան-131

Ռիզե-149

Ռոդոսթոն-106,107

Ռումի-187

Ռուսինիա-87,235,260
Ռուսաստան (Ռուսիա)-
87,111,113,175,208,209,263,272,2
74

Սալախանե-249
Սամսոն-127,148,149,152
Սամսուն-22
Սապանջա-64
Սասուն-45,129,150,173,220
Սարը-Օղլան-131
Սարվորի-210
Սեբաստիա-
17,18,21,115,116,117,119,120,121,
122,123,124,125,126,127,128,129,
130,131,132,133,134,135,136,137,
138,139,140,141,142,143,144,187,
198,294
Սեն-99
Սիբիր-235
Սիվաս-
118,121,126,127,138,139,194
Սիրիա-17,173,260
Սկյուտար-291
Սդերդ-219
Սյուրմենե-167
Սոֆիա-199
Սպեր-247
Սվազ-21,127
Ստամբուլ-112
Ս.Դոմինիկ կղզի-138
Սև ծով-149
Սևր-269

Վան-
17,18,21,24,26,27,28,29,30,33,37,3
8,39,40,41,45,46,47,52,53,54,55,57

,58,59,60,61,62,102,105,113,144,1
47,150,219,220,233,249,294
Վանք-169
Վառնա-8
Վասպուրական-
16,20,21,26,27,45,49,54,150
Վենետիկ-20
Վիեննա-5,84

Տաճկաստան-36
Տարոն-21
Տարսուն-93,96,129
Տենիզլի-93
Տենտիլ-131
Տեռնկել-64
Տերիննե-65
Տիգրանակերտ-49
Տրապիզոն-
3,17,18,22,148,149,150,151,152,15
6,159,160,161,164,165,168,169,17
1,172,173,174,178,181,
182,183,184,186,294
Տրիպոլի-149
Տրոնա-163

Ունիե-149
Ուրմիա-150
Ուրֆա-241

Փարիզ-
17,61,97,99,199,212,231,232,283

Քարիատ-119
Քարցի-65
Քիլիս-241
Քղի-208
Քրդստան-35

Քուրդբեկե-63,64

Օսմանյան կայսրություն-
86,148

Օսմանյան Թուրքիա-
21,25,107,110,111,144,169,172,18
3,245,253

Օվաճըզ-62,63,64,73,92

Օրդու-149,150,164,165

Օրթագյուղ-63

Ֆերիզլի-65

Ֆիլիպե-3

Ֆրանսիա-261

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

- Աբգարյան-293
Աբեյյան Հ.-82
Աբրահամյան Գևորգ-94
Ադամյան-83
Ազարյան-202
Ազրայել Բ.-80
Ալիսյան Ա.-118,122,134
Ալփիար Հ.-80
Ակինյան Արամ-188
Ակնունի Է. (Խ.Մալումյան)-
93,110,111,112,114,213,280
Ահարոնյան Ավետիս-
84,86,93,213
Աճեմյան Տիգրան-276
Ա.Մ.-233
Ամիրա-93,111,112
Այվազյան-132
Այվազյան Արտաշես-128
Անդրանիկ-139
Անդրանիկ (գորավար)-191
Անդրանիկ-Մուրադներ-286
Անդրեասյան Նշան-272
Անտոն (Զավարյան Սիմոն)-
174
Անտոնյան Հակոբ-274
Անցորդ-32,37
Անուշավան-38
Անումյան Մ.-239
Աչք Եհովայի (Զարդարյան
Ռուբեն)-212
Ասատուրյան Կարայիս-188
Ասատուրյան Ղազար-127
Ասաֆ-50,233
Ասլան-233
Ասլանենց Արամ-138,139,140
Ասլանյան Մանուկ-233,235,236
Ասպետ-93
Աստուրյան Խ.-233
Ավազյան Հովհ.-60
Ավազյան Ք.-252
Ավետիսյաններ-113
Ավո-170
Ավտլ-դայր-157
Ատոմ (Շահրիկյան
Հարություն)-213,218
Ատրունի Արամ-197,198
Ատրուշան-80
Արաբո-114
Արագ-65
Արապյան Գալուստ-20,22,37
Արգոս-65
Արզուման Օննիկ
(Արզումանյան)-
22,23,81,233,283
Արթին-139
Արլո-216
Արծնյան-202
Արծրունի Հ.-290
Արծրունի Վահրամ-93,99
Արմա-232
Արմեն Շ.-209,210
Արմենյան Վարդերես-188
Արշակներ-285
Արսեն քահանա-158
Բ.Ա.-232
Բաբաջանյան-204
Բաբկեն-191
Բաբլոյան Մ.-6
Բագրատունի Հակոբ-190

Բալասանյան Գրիգոր-84
Բալյան Համբարձում Պ.-93
Բալուցյան Հ.-119
Բաղդասարյան Կորյուն
աբեղա-261
Բաչուկյան Ա.-65
Բաս Ա.-65
Բասմաջյան Աննա-132
Բարսեղ-208
Բարսեղյան-21
Բարսեղյան Գեղամ-212,213
Բարունակ-45
Բարունակյան Գ.-96,97
Բառեղ Ռոբերտ-288,289
Բեհաեդդին Շաքիր-13
Բերբերյան Շահան-272,273
Բլբուլ Զարեհ-80,83

Գաբրիկյան Կարապետ-118,135
Գաբրիել քահանա-133
Գազազյան Խաչիկ-188
Գալեմբերյան Զարուհի-274
Գալստյան Համբարձում-143
Գալ Վահաններ-285
Գասպարյան Շահեն
ծայրագույն վարդապետ-252
Գավալճյան Խաչիկ-80
Գավանոզյան Արտաշես-292
Գավաֆյան Գեղամ-202,272,273
Գարագաշյան Մկրտիչ-169
Գ.Գ.-118
Գեղացյան Զուլալ-161
Գիսակ-65
Գլգճյան Սարգիս (Շերուկ)-237
Գյուլնազարյան Խ.-262
Գնունի Զարեհ-95
Գոլանճյան Է.-212

Գ.Ս.-280
Գույումջյան Մանուկ-204
Գուտենբերգ-22
Գևորգ Մեսրոպ-
237,272,273,274,282
Գևորգյան Պողոս-272,273

Դանիելյան Մ.-170,171
Դավթյան Ե.-85
Դավիթ Բեկեր-285
Դավիթ Միերներ-285
Դավիթյան Ս.-182
Դարբին-65
Դարբինյան Ահարոն-188,191
Դարբինյան Ռ.-10,11,213,230
Դերձակյան Օննիկ-55
Դիոկղետիանոս-81
Դուրյան արքեպիսկոպոս-277
Դուրյան Ղևոնդ եպիսկոպոս-
250

Եկվոր (Զավարյան Միմոն,
Օհանյան Սմբատ)-174
Ենովք Արմեն-237,274
Եորգա Նիկոլա-236
Եսայան Զաբել-79,212
Եսայան Սեդրակ-160
Եվգինե-139
Երանոսյան Ա.-134
Երկաթ Արսեն-182
Երովխան (Սրմաքեշխանյան
Երվանդ)-274
Եփրեմ խան-144

Զավարյան Միմոն (Օհանյան
Սմբատ)-94,129,173,174,213

Չավեն(Պատրիարք)Տեր-
Եղիայան-
246,247,248,249,250,251,252,253,
254,256,257,258,259,260,261
Չավեն Տիգրան-112
Չարդարյան Ռուբեն-
8,10,86,211,213,214,230,277,279,2
80
Չարդարյան Վ.Պ.-85
Չարիֆյան-82
Չեյթինճյան Երվանդ-169
Չիհնի Մուստաֆա-156
Չոհրապ Գ.-213,277,280
Չոհրապ-Կարո-279
Չորա-174,176,181

Էժտահար (Չարդարյան
Ռուբեն)-212
Էմին Մեհմեդ-141
Էյնաթյան Գալուստ-233
Էպիլիդաթյան Դավիթ-94
Էս-Սե-80
Էսաճանյան Լևոն-80

Թաթուլ-202,204,208
Թալեաթ-238,239,241
Թաղիանոսյան Երվանդ-
262,263,266
Թանտրջյան Կ.-233
Թապազյան Ս.-86
Թեոդիկ (Լաբճինճյան
Թեոդորոս)-23,79,237,277
Թեֆիկ-240
Թիրյաքյան Հայկ (Հրայ)-
22,212,213,233
Թյոտատյան Գասպար-188
Թղթովենց Վահան-80

Թոսփաթ Օննիկ-188
Թորամանյան Թորոս-141
Թորգոմ Եպիսկոպոս-127,141
Թորգոմյան Լևոն-128
Թոփայլան Հասմիկ-128
Թոփչյան Եղիշե-197
Թոքաճյան Վահե-198
Թոքաճյան Ս.-94
Թոքատեցի Աբգար-21
Թուրունջյան Պողոս-61
Թուլումպաճյան Հարություն-
188
Թումանյան Հովհաննես-
57,58,59,60,261,262,263,264,265,2
66,267
Թումանյան Ն.-262

Ժամկոչյան-21
Ժամկոչյան Վահան-65
Ժանգ-65
Ժիրայր-191

Իբրանոսյան ծայրագույն
վարդապետ-195
Իզմիրյան Հակոբ-188
Իհսան-241
Ինճեյան Մատթեոս
ծայրագույն վարդապետ-97,99
Իշխան (Վանի Իշխան,
Միքայելյան Իշխան, Պողոսյան
Նիկոլ)-27,28,29
Իսահակյան Ավ.-213,261
Իսրայելյան Ա.-174,175
Իփեքյան Գասպար-213
Իքս-233

Լաբճինճյան Թեոդորոս
 (Թեոդիկ)-237
 Լազ Հ.-169
 Լազյան Գ.-10
 Լանիս Լևոն-188
 Լուսավորիչ Գրիգոր-163
 Լուսապարոնյան Հրաչյա-199
 Լևոն Շանթ-276,277
 Լևոնյան Գ.-5,6

 Խաժակ Գ.-213
 Խալտունի Ա.-203
 Խայրետի-38
 Խանգեղյան Ավետիս-22
 Խանջյան Խոսրով-233
 Խաչատրյան Ա.-213
 Խաչերյան Հակոբ-64
 Խաչքար-93
 Խառատյան Ա.-249,251
 Խատիսյան Ա.-290
 Խզմալյան Թ.-174
 Խոյյան Տիգրան-283,290
 Խոջոյան Մկրտիչ-150
 Խորասանճյան Ժիրայր-283,292
 Խորենի Վ.-232
 Խորթունյան-96
 Խորիկյան Արմենակ-145
 Խորիկյան Տիգրան-139
 Խոանյան Վահան-61
 Խրիմյան Մկրտիչ-20,21
 Խուդինյան Գ.-8
 Խուշպուլյան-184
 Խուրշուրյան Լ.-7

 Ծերուկ (Գլգճյան Սարգիս)-237
 Ծիրկաթին-80

Կայծակ (Մկրտիչ
 Պարասյան)-191,274
 Կայծակ Ռ.-182
 Կայծունի Լ.-188,196
 Կապուտիկյան Բարունակ-
 29,233
 Կապուտիկյան Մանվել-233
 Կարինյան Ա.-82
 Կիրակոս-242
 Կիրակոսյան Ա.-6
 Կիրակոսյան Ջոն-250
 Կ.Բ.-232
 Կյուրճյան Մ.-213,277
 Կյուրճյան Րաֆֆի-292
 Կոմիտաս-277,280
 Կոմսի Գ.-205
 Կոստյան Հայկակ-30
 Կորադո-82
 Կռող-81
 Կրտոտյան Խաչատուր-137
 Կուկունյան Սարգիս-94

 Հաբեթյան Ջավեն-292,293
 Հազարապետյան Անանիա
 ծայրագույն վարդապետ-203
 Հակոբ-208
 Հակոբյան Ա.-8,9
 Հակոբյան Արշակ-292
 Հակոբյան Գ.-174
 Հակոբյան Գրիգոր-283,292
 Հակոբյան Լևոն-283
 Համբարձումյան Հ.-213
 Համբարձումյան Հ.Մ.-93,106
 Համիդ Ա.-
 11,30,67,153,154,155,169

Հայկազն Պարույր
 (Մազմանյան Հովհաննես)-
 182,183
 Հայկազնյան Ավետիս-188
 Հայկազնյան Մենեքերիմ-188
 Հասան-250
 Հեթանոս-82
 Հինդյան Հովհաննես-
 272,273,283,288
 Հովհաննես Ասպետ-274
 Հովհաննիսյան Էդ.-8
 Հովհաննիսյան Սուսաննա-262
 Հովնանյան (Հովհաննես)-
 21,188
 Հովսեփյան Արտաշես
 (Մալխաս)-150
 Հովսեփյան Մարիամ-199
 Հովսեփյան Մելիք-93
 Հովսեփյան Մելքոն-80,84,101
 Հորոբ-140
 Հրահատ Ա.-113
 Հրայր-65
 Հրանտ-160
 Հրաչ (Թիրյաքյան Հայկ)-212
 Հրացայտ-80
 Հուս-119

Ղազարյան Ղազար Ս.-93
 Ղազերյան Հովհ.-96
 Ղուկասյան Ավետիս-135
 Ղուկասյան Թամար-135

Ճերմակյան Զարմայր-188
 Ճիզմեճյան Հայկ-283
 Ճուլոյան Հակոբ (Սիրունի
 Հակոբ)-235

Մազմանյան Հովհաննես
 (Պարույր Հայկազն)-182
 Մաթոսյան Հովսեփ (Շահեն)-
 182
 Մաժան-188
 Մալխաս (Հովսեփյան
 Արտաշես)-
 150,151,153,154,155,156,157,160,
 161,170
 Մալումյան Խաչատուր (Է.
 Ակնունի)-213
 Մահմուդ 2-րդ-20
 Մամիկոնյան Վարդան-85
 Մանթաշյան Հարություն-65
 Մանուկյան Հ.-213
 Մանուկյան Հմայակ-25,29,30,61
 Մանուկյան Ս.-159
 Մառ Ջորջ-196
 Մավյան Նշան-188
 Մատթեոս կաթողիկոս-97
 Մարալ-197,205
 Մարգալետ-93,107,108,151
 Մարկոս-242
 Մարմարյան Ա.-52
 Մարտիկյան Վրթանես-235
 Մարտիկներ-113
 Մարտիրոսյան Ն.-8,9
 Մաքսապետյան Արմենակ-29
 Մելիտոսյան Հակոբ-64
 Մելոյան Ղ.-80,83
 Մելքոնյան Աշոտ-148,149
 Մելքոնյան Ռ.-254
 Մենորդ-177,178
 Մեսիա-246
 Մեծատուրյան Տիգրան-188
 Մեսրոպ-203
 Մերճանով Գրիգոր-284

Միաձինյան Լ.Ս.-22
 Միլտոնյան Բ.-101
 Միհրան Չ.-119
 Մինասյան Հակոբ-122,123
 Մինասյան Ս.-213,277
 Միսաքյան Շավարշ-
 22,198,199,212,230,235,236,237,2
 74
 Միսքճյան Սուրեն-80
 Միտհաթ-241
 Միրապո-37,39
 Միքայելյան Իշխան (Պողոսյան
 Նիկոլ Վանի Իշխան)-
 16,27,28,53,54,60,61
 Միքայելյան Քրիստափոր-173
 Մխիթարյան Գուրգեն-233,236
 Մխիթարյան Հովհ.-58
 Մխիթարյան Օննիկ-
 26,28,30,93,105,106
 Մկրտայան Աղասի-65
 Մ.Հ.-233
 Մհեր-65
 Մյուֆետտիշի Պայտար-
 131,132
 Մյուֆիտ-241
 Մշակ-80
 Մշո Գեղամ (Տեր-
 Կարապետյան)-213
 Մոզյան Լ.-213
 Մոզյան Պողոս-118
 Մոսկովյան Վահան-118,122
 Մարյան-202
 Մուշեղ եպիսկոպոս-158
 Մուստաֆա-208
 Մուրադ (վարժապետ)-82
 Մուրադյան Աբրահամ-83
 Յազըճյան Նուբար-23
 Յազըճյան Պետրոս-94
 Յաշա-176
 Յազմաճյան Օննիկ-290
 Նազարյան Հ.-290
 Նազարյան Հրանտ (Ալփիար
 Հ.)-80
 Նազրմ-238,241
 Նալբանդյան Միսակ-283,288
 Նաթալի Շահան-80,85
 Նելլա-233
 Ներսո-188
 Նորայր-83
 Ն.Ս.-232
 Նուրի Աբդյուրահման-241
 Նուրյան Կարապետ-272
 Նևրուզ-27
 Շահբազ Բարսեղ-151,213
 Շահբազյան Սողոմոն-123
 Շահեն Ատոմ-22,214
 Շահեն Ենոք-82
 Շահինյան Գառլո-283
 Շահինյան Օ.-85
 Շահնուր Ա.-118,147
 Շահնուր Արտեմ-80
 Շահրիկյան Հարություն
 (Ատոմ)-213,217
 Շահրիման Վահան-233,237
 Շամտանճյան Միքայել-
 274,277,278
 Շանթ Լ.-213
 Շապոյան Պ.-288
 Շապուհներ-285
 Շիրակունի Ա.-232
 Շիրինյան Արթին-128

Շիրվանզադե-138,139
Շիրվանյան Արմենակ-188

Չարգ Արամ (Վտարանդի)-
237,274
Չաուշ Գևորգ-113
Չաքրյան Առաքել-258
Չերազ Վահան-290
Չերքեզով Ու.-85
Չիթունի Տիգրան-188,285
Չիլյան Կարապետ-64
Չիլյան Մ.-233
Չիֆթե Սարաֆ Օննիկ-274
Չկամյան Ա.-138,139,140
Չոպանյան Արշակ-212
Չուգասզյան Միհրան-119

Պազպազյան Աշոտ-64,75,88
Պալեոզյան Նշան-188
Պանիրյան Պարզև-233
Պապիկյան Հակոբ-224
Պարթևյան Սուրեն-86
Պարոնյան Ստեփան-94
Պարսամյան Կ.Ա.-
21,115,121,122,132,137,145
Պարսամյան Սկրտիչ
(Կայծակ)-93,237,274
Պարսամյան Մերուժան-23,274
Պարույր-201,203,206,209
Պեզճյան Զենոբ-254
Պետոներ-113
Պետրոսյան Հովհ.-6
Պիպեռճյան Ա.-81
Պ.Մ.-154
Պողոսյան Նիկոլ (Միքայելյան
Իշխան, Վանի Իշխան) -27
Պոտուրյան Անդրանիկ-92

Պուլուտյան Հ.-82,83

Ջենալ-242
Ջնար Վ.-182
Ջրբաշյան Տիգրան-233
Ջևեթ-57

Ռիվարեց-233

Ս.-233
Սալամանյան Արմենակ-188
Սահակ-203
Սահակ Էֆենդի-128
Սահակյան-138
Սահակյան Շավարշ
ծայրագույն վարդապետ-
135,136
Սայեղյան արքեպիսկոպոս-254
Սապիթ-241
Սասունցի Հովնաններ-285
Սարգիս-38
Սարգիսյան Հակոբ Ղ.-64
Սարգիսյան Միմոն Ղ.-64
Սարոբդի-65
Սարունի Սարգիս-244
Սաֆրաստյան Արամ-233
Սեբաստացի Սուրադ-147
Սեբեթյան Կարապետ-65
Սերայտարյան Արմենակ-127
Սերասի եղբայրներ-22,150,182
Սերենկյուլյան Հայկ-272
Սերենկյուլյան Վարդգես-280
Սերոբ (Աղբյուր)-113,114,191
Սիամանթո-80,86,213,223,277
Սի-Սակ-65
Սիրունի Հակոբ (Ճուլյան)-
10,11,80,198,212,235,236,274,283

Սլաք-188
Ս.Կ.-233
Սյունի-177
Սյունի Լևոն-128
Սոֆյան Թորոս-64
Սվաճյան Միհրան-246
Ս.Տ.-174
Ստեփանյան Սեպուհ-272
Ստվեր-65
Սրապյան-188
Սրենց Սուրեն-80,81,213
Սրվանձտյանց Գարեգին-21
Սրվանձտյանց Վահան
(Յոլակ)-14
Սուլեյման Նազիֆներ-240
Սևակ Ռ.-213
Սուրհանդակ-65

Վազգեն 1-ին-235
Վազգեններ-113
Վազրիկ-174,175
Վահան-65
Վահե-174,175
Վաղարշակ-65
Վանարյան Արտաշես-236
Վանի Իշխան (Միքայելյան
Իշխան, Պողոսյան Նիկոլ)-27
Վանիկ-25,232
Վարանդյան Մ.-9,10,193,213
Վարդան Լևոն-249
Վարդանյան Անդրանիկ-10
Վարդանյան Գ.-8,9
Վարդանյան Հայկ-21
Վարդանյան Մեսրոպ-188
Վարդանյան Միհրան-119
Վարդանյան Վահան-122

Վարուժան Դանիել-
80,81,84,86,118,141,142,147,213,2
77
Վաչագան-174
Վաքուր Մ.-232
Վեհունի Արսեն ծայրագույն
վարդապետ-250
Վերլեն-182
Վոլտեր-115
Վռամյան Արշակ (Դերձակյան
Օննիկ)-55,58,213
Վ.Վ.-232
Վտակյան Ա.-233
Վտարանդի (Չարգ Արամ)-
237,274
Վրացյան Միմոն-
5,10,13,14,17,27,175,176
Վրույր-80
Տամլամյան Գևորգ-96
Տասնապետյան Հ.-8
Տատուրյան Գրիգոր-83
Տարագիր-93,113,114
Տարոնի Առյուծ-114
Տեմիրճիբաշյան Եղիա-274
Տեր-Եղիայան Զավեն
արքեպիսկոպոս-245
Տեր Թողիկ-166,167
Տեր-Թովմասյան Սահակ-13
Տեր-Խաչատուրյան Արտաշես-
13,15,16
Տեր-Կարապետյան Գեղամ
(Մշո Գեղամ)-151,154,155,213
Տեր-Մարգարյան Միհրան-61
Տեր-Ներսիսյան Հրաչյա-283
Տերոյենց Գևորգ (Գ.Տ.)-119
Տերտերյան Հարություն-150
Տիճյան Վահե-93,95

Տ.Կ.-138
 Տոլստոյ Լ.-85
 Տոնիկյան Մանասե-64
 Տոստուրյան Գրիգոր-119
 Տրդատներ-285

 Յոլակ (Վահան
 Սրվանձտյանց)-94,182
 Յոլբ Վ.-174,178

 Ուզունյան Ս.-288
 Ուշագլյան Կարո-283

 Փայլակ-118,132
 Փաշայան Կարպետ-212,217
 Փարլազյան Փայել-141
 Փափազյան Դավիթ-13
 Փոլադ Հ.Ս.-115,145,151,166,168
 Փիլիկյան Հովհաննես-64
 Փափազյան Միհրան-
 64,104,106
 Փափազյան Ներսես-213
 Փափազյան Ստ.-70
 Փափազյան Վահան-29
 Փափազյան Վահրամ-82
 Փափազյան Վահրամ Ս.-
 283,284,288
 Փափազյան Փիլոս-197
 Փոթորիկ-182

 Քաջունի Եզնիկ-290
 Քարուկյան Խաչիկ-93,96

 Քեմալ Նամրզ-85,86
 Քեշիշյան-93
 Քեշիշյան Ք.-283
 Քիսակ-65
 Ք.Ս.-232
 Քյոմուրճյան Երեմիա-21
 Քյուփեյան Սիմոն-96
 Քյուրքյան Արմենակ-182,188
 Քյուրքյան Հարություն-
 13,14,15,17
 Քյուֆեճյան Հակոբ-64
 Քոթոթ-61
 Քրիսյան Հակոբ-283,284

 Օդաբաշյան Սահակ
 վարդապետ-135
 Օգանյան Շավարշ-188
 Օթելլո-82
 Օհանյան Սմբատ-173
 Օհանջանյան Սարգիս
 (Ֆարհատ)-212
 Օշական Հակոբ-267
 Օշին-65
 Օսկանյան Խաչատուր-20
 Օտյան Երվանդ-237,246,274
 Օրիոն-36,48

 Ֆալաք-185
 Ֆարհատ (Օհանջանյան
 Սարգիս)-212
 Ֆերիտ-254
 Ֆրանկյան Ե.-232

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Արևմտահայ գավառի ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերական մամուլը 1909-1915 թթ.	20
Վանի «Աշխատանք» շաբաթաթերթը (1910-1915 թթ.)	26
Նիկոմիդիայի «Բյուրանիա» շաբաթաթերթը (1910-1912 թթ.)	62
Իզմիրի «Աշխատանք» պարբերականը (1910-1915 թթ.)	93
Սեբաստիայի «Հողդար» շաբաթաթերթը (1910-1914 թթ.)	115
Տրապիզոնի «Խարիսխ» շաբաթաթերթը (1909 թ.)	148
Տրապիզոնի «Գեղջուկ» ամսաթերթը (1909-1910 թթ.)	173
Տրապիզոնի «Պոնտոս» և «Շարժում» պարբերականները (1910 թ.)	182
Ամասիայի «Ապառաժ» պարբերականը (1911 թ.)	187
Կարինի «Ալիք» պարբերականը (1914 թ.)	197
Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթը (1909-1915 թթ.)	211
«Ազատամարտ» գրական հավելվածը (1910-1915 թթ.)	229
«Ուսանող» և «Երկունք» ամսաթերթերը	231
Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթը (1918-1924 թթ.)	235
«Ճակատամարտի» ամսօրյա հավելվածները	272
Կ. Պոլսի «Շանթ» հանդեսը (1911-1915 թթ. և 1918-1919 թթ.) ...	274
Կ. Պոլսի «Հայ սկաուտ» հանդեսը (1919-1922 թթ.)	283
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ	294
Բովանդակություն	309

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԱՐԻԱՄ ՎՌԱՄԻ

**ՀՅԴ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԻՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ՄԱՍՈՒԼԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ
1909-1915 ԹԹ. ԵՎ 1918-1923 ԹԹ.**

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարանգոյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 22.04.2016 թ.
Տպաքանակը՝ 150 օրինակ

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՂԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.aademhisory.am>